

ԷԶՄԻԱԾԻՆ



Թ.
2024




ՉԼ. ՏԼԻԻ

ԲԱՄԻՆ

ՊԼՇՏՕՆԿԱՆ ԱՐԱՆԻՐ
ԼԻՆԵՆՆԵ ՀԼՅՈՑ ԿԼԹՈՂԻԿՈՍԻԹԵԼՆ
ԸՆՅԻ ԼԹՈՒՈՅ ՄԻՈՅ ԷԶՐԻԼԾՆԻ

ՍԵՊԱՐԿԵՆ

2024
Վ. ԷԶՐԻԼԾՆԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ Գեորգ Մադոյեան

Լեզուատնական խմբագիր՝ Նարէ Սարգսեան

Տեխնիկական խմբագիր՝ Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ՝
Տ. Մկրտիչ եպս. Պոռշեան,
Տ. Գեորգ եպս. Սարոյեան,
Տ. Շահէ ծ. վրդ. Անանեան,
Տ. Ռուբէն վրդ. Չարգարեան,
Տ. Յուսիկ աբղ. Սմբատեան,
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան,
Ազատ Բոզոեան,
Վահէ Թորոսեան,
Կարէն Մաթեւոսեան





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Bishop Mkrtich Proshyan,
Bishop Gevorg Saroyan,
Proto-Archimandrite Shahe Ananyan,
Archimandrite Ruben Zaragaryan,
Rev. Fr. Husik Smbatyan,
Fr. Ararat Poghosyan,
Azat Bozoyan,
Vahe Torosyan,
Karen Matevosyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Епископ Мкртич Прошян,
Епископ Геворг Сароян,
Протоархимандрит Шагэ Ананян,
Архимандрит Рубен Заргарян,
Иеромонах Иусик Смбатян,
Иерей Арарат Погосян,
Азат Бозоян,
Ваге Торосян,
Карен Матевосян**



Լրանում են «Էջմիածին» գիտական պարբերականի 80- եւ Գէորգեան հոգեւոր ճեմարան-Աստուածաբանական համալսարանի 150-ամեակները: Մէկը հիմնուել է 1874-ին՝ Գէորգ Դ. Քերեստէճեան հայրապետի ջանքերով, միւսը բացուել է 1944-ին՝ Գէորգ Զ. Զորէքչեանի յառաջածեռութեամբ: Ժամանակային ճշգրտութեանը կառչելու դէպքում տարեդարձերը տարբեր պահերի պիտի նշուէին, տարբեր ամիսների եւ օրերի աղերսակցուէին:

Վերջին հարիւրամեակում իբրեւ ուսումնական տարուայ սկիզբ ընդունուած է եղել սեպտեմբերը, եւ դրա հետ կապուած կրթական հաստատութիւնների ամեակները եւս հիմնականում նշուել են սեպտեմբերին: Ուստի յաճախ նաեւ ճեմարանական տարեդարձերն այդ տրամաբանութեամբ են կազմակերպել՝ մէկ եւ կէս հարիւրամեակի ընթացքին՝ երբեմն համընկեցնելով եկեղեցական տարբեր տօների, իսկ երբեմն պահոցներից հանելով իշխանութիւնների թոյլտուութեան օրը եւ այն դարձնելով շրջափուլի խորհրդանիշ: Եւ կարող է հաւանական թուալ, որ Ամսագրի համար եւս իբրեւ տօնախմբելու օր դիտուի համապատասխան պետական-կուսակցական գործչի մակագրութեան ամսաթիւը: Սակայն միանշանակ է, որ այս ենթադրութեան պատասխանն անշուշտ պիտի լինի բացասական. Ամսագրի եւ ճեմարանի պատմութեան ընթացքին եւ պետական-կուսակցական գործիչները, եւ իրենց մակագրութիւնները մոռացութեան են դատապարտուած: Առաքելական Եկեղեցու այս օղակների տօնախմբելի-խորհրդանշական օրերն անհամեմատ աւելի վաղ պէտք է որոնուեն:


Ինչ խօսք՝ դիւանական պահոցներն ստուգելով յիշարժան-կրեւոր թուականներ կարելի է շատ յայտնաբերել Ամսագրի եւ ճեմարանի

համար: Սակայն միշտ եւ առաջին հերթին պէտք է ի մտի ունենալ, որ ո՛չ Ճեմարանը, ո՛չ Ամսագիրը թղթերի, դիմումների ու ստորագրութիւնների շնորհիւ չեն ձեւաւորուել, այլ նրանք ծնունդն են վառ երազների ու լուսաւոր տեսիլների, ծնունդն են այն պայծառ գաղափարների, որ Հայ Առաքելական սուրբ Եկեղեցին փայփայել է դարեր շարունակ՝ խաւարի, չարի, աւեր ու աւարի դէմ պայքարելով ու յաղթելով լուսաւորութեամբ, կրթութեամբ եւ գիտութեամբ:

Ուստի սեպտեմբեր ամսին Ճեմարանի եւ Ամսագրի տարեդարձին համապատասխանող օր դիտարկելիս հարկ է յիշել, որ հայ դպրոցի եւ դպրութեան, կրթութեան ու հայրենի գիտութեան ցանկացած տարեդարձ առաջին հերթին կապոււմ է Հայ Եկեղեցու երկու մեծանուն սուրբերի՝ սուրբ Սահակի եւ սուրբ Մեսրոպի գործունէութեանը: Առանց Սահակ-Մեսրոպեան վերածննդի չէին լինի ո՛չ հայրենի դպրութիւնը, ո՛չ իսկ գիտութիւնն ազգային: Հետեւաբար սեպտեմբերեան աղիւսակում դժուար է պատկերացնել Գիտական ամսագրի եւ Հոգեւոր ճեմարանի տարեդարձին առաւել պատշաճող օր, քան սուրբ Սահակ Հայրապետի ծննդեան տարեդարձն է¹, որ թերեւս երբեւէ կընդունուի իբրեւ Սահակ եւ Մեսրոպ սուրբերի յիշատակի եւ նրանց լուսաւոր տեսիլքին ծառայելու կոչուած միաւորների՝ ուսումնական եւ գիտական օղակների տօնախմբման օր:

¹ Կենսագրի վկայութեամբ «Այն տարում, երբ մեռաւ Պարսից Վռամ արքան, եւ թագաւորեց քրիստոնեաների դառն հալածիչ Յազկերտ Երկրորդը, խռովուեց Հայոց աշխարհը, եւ խոր ծերութեան հասակում սուրբ Սահակն առանձնացաւ Բագրեւանդ գաւառի Բլուր, կամ Բլրոցաց գիւղ կոչուող շէնում, ուր եւ երանելին հասաւ այն սահմանին, երբ պիտի կանչուէր: Եւ դա եղաւ Յազկերտի առաջին տարում: Օրերով եւ վաստակով լեցուն հայրապետը, առաջացեալ՝ որպէս երկարակեաց ցորեն, ամփոփուեց երկնից արքայութեան շտեմարանում՝ տեղափոխուելով իր անձկալի Քրիստոսի մօտ՝ փրկչական 440 թուականին, նաւասարդ ամսուայ վերջին օրը, որ իններորդ օրն է սեպտեմբեր ամսուայ՝ իր իսկ ծննդեան օրը»։ տե՛ս «Ազգային սուրբեր», Գիրք Ա. «Սուրբ Սահակ եւ սուրբ Մեսրոպ», էջմիածին, 2024, էջ 45–46, հմմտ. ՄԿՐՏԻՁ ՎՐԿ. ԱԻԳԵՐԵԱՆ, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, որ կան ի հին Տօնացուցի Եկեղեցւոյ Հայաստանեայց, հտ. Բ., Վենետիկ, 1811:





**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՍԸ
ՄՅՈՒՈՒՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

(Սուրբ էջմիածին, 28 սեպտեմբերի, 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Որ ո՛ր օձցի ի սմանէ երկիւղած լիցի յԱստուծոյ
եւ աներկիւղ ի հակառակորդէն»
(Կանոն Սրբալոյս Միւռոնի օրհնութեան):

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Փառք ենք վերառաքում առ Բարձրյալն Աստված, որ շնորհը պարգեւեց Մեզ Վարազա Սուրբ խաչի տոնի նախօրեին՝ Սուրբ Գեւորգ զորավարի հիշատակի օրը, կատարելու Սրբալոյս Մյուռոնի օրհնությունը, որը անցնող տարիների աղետաբեր իրադարձությունների պատճառով անհնար եղավ իրականացնել: Թող Աստծու բարեգութ կամքով նորօրհնյալ Սրբալոյս Մյուռոնը երկնապարգեւ բարիքներ բերի մեր կյանքից ներս, հոգեւոր ուժ ու վերհառնումի զորություն՝ պատերազմի արհավիրքներ ու կորուստներ կրած մեր ժողովրդին:

Սիրելիներ, Սրբալոյս Մյուռոնի օրհնությունը մեզ հիշեցնում է նվիրական օրերը հայոց դարձի: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի ձեռամբ, բիբլիական Արարատի վեհապանծ հայացքի ներքո, մեր ժողովուրդը մկրտվեց եւ օծվեց մեր Տիրոջ կողմից օրհնված եւ Սուրբ Թադեոս առաքյալի միջոցով Հայաստան բերված սուրբ յուզով եւ մեկ դարձավ Քրիստոսով ու իր Սուրբ Եկեղեցիով: Ազգս հայոց շնորհը ստացավ լինելու Աստծու սեփական ժողովուրդ եւ առաջինը աշխարհում քրիստոնեությունը հռչակելու պետական կրոն: Հավատակերտ այդ ժամանակներ-

րից ի վեր փրկության սուրբ լեռն Արարատ եւ Միածնաէջ Մայր Տաճարը դարձան սրբազան եւ անշնչելի խորհրդանիշ մեր հավատքի ամրության եւ հայոց հավերժ լինելության:

«Ով օծվի Մյուռոնով, երկուղած պիտի դառնա Աստծուց եւ անվախ՝ թշնամուց»: Մյուռոնօրհնության աղոթքի ազդու այս խոսքերն են այսօր մեծ ուժականությամբ հնչում ի լուր ամենքիս: Մեր հայրերի այս պատգամը ուղեկցել է մեր ժողովրդին պատմության ողջ ընթացքում, զորացրել ապրելու Աստծու սիրո երկուղով եւ արիացրել թշնամաց դեմ պայքարներում, քաջալերել լինելու պաշտպանը սրբազան արժեքների, մեր ինքնության եւ նվիրյալը հայրենիքին ծառայության:

Մյուռոնը տեսանելի նշանն է Սուրբ Հոգու ներկայության: Սուրբ Մյուռոնի դրոշմով աստվածային օրհնության աղբյուրն է բացվում անհատի եւ ժողովրդի կյանքում: Մյուռոնով օծյալը արժանի է դառնում աստվածային երկնառաք շնորհների, նորոգվում բարին խորհելու եւ արարելու, ապրելու Աստծու երկուղով եւ անվախ՝ ընդդեմ չարի: Սուրբ Մյուռոնի կնիքը հաստատումն է Քրիստոսի հետ միության եւ Սուրբ Եկեղեցուն անդամագրության, այլեւ ազգային ինքնության եւ առհավատչյալն առ Աստված հավատարմության:

Սրբալույս Մյուռոնը դարեդար միմյանց է շաղկապել աշխարհասփյուռ մեր ժողովրդի զավակներին, միավորել հայրենիքն ու սփյուռքը: Սուրբ Մյուռոնով մենք մեկ ազգ ենք եւ մեկ Եկեղեցի: Այսօր էլ Սուրբ Մյուռոնը, նվիրապետական Աթոռների գահակալների, թեմակալ առաջնորդների միջոցով ընծայվելով աշխարհասփյուռ մեր ժողովրդին, վերստին ամրապնդում է ի հոգեւորս անլուծանելի մեր միասնականությունը: Մյուռոնը դարձել է հայության երակներում հոսող արյուն, որ հոգեւոր ներուժով զորացնում է ազգին արիությամբ դիմագրավելու փորձությունները, ինչպես եւ մերօրյա մարտահրավերները՝ ըստ մեր հայրերի աղոթական հորդորի. «Մյուռոնով օծյալը երկուղած է միայն ու միայն Աստծուց, եւ անվախ՝ թշնամիներից»:

Սիրելիներ, աշխարհն այսօր կրկին փոթորկված է հակամարտություններով ու հակառակություններով, որոնք խաթարում են ներդաշնակությունը ընտանեկան կյանքում, մարդկային հարաբերություններում եւ հասարակության մեջ սերմանում թշնամանք ու անհանդուրժողություն, հրահրում պատերազմ, սփռում ավեր ու արհավիրքներ: Մեր երկիրն ու ժողովուրդը նույնպես գտնվում են անվտանգային լրջագույն

սպառնալիքների եւ աղետներից ու վշտագին կորուստներից վերհանումի հրամայականի առջեւ: Մենք հավատում ենք, որ աշխարհն անտարբեր չէ ցավի ու բռնության նկատմամբ, հավատում ենք, որ մարդկային սրտերում չեն ցամաքել սերն ու կարեկցանքը, արդարություն ու իրավունքի գերակայություն հաստատելու ձգտումը: Մյուռուհնորհունության նվիրական այս արարողությունը պատեհ առիթ ունենալով՝ վերստին դիմում ենք միջազգային հանրությանը եւ մեր քույր եկեղեցիներին, ի դեմս մեզ աղոթակից եկեղեցական եւ դիվանագիտական ներկայացուցիչների, որպեսզի ազդու միջոցներ գործադրվեն զսպելու Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները եւ ուժի դիրքերից ներկայացվող նորանոր պահանջները, ինչպես եւ վերադարձնելու Հայաստանից զավթված սահմանամերձ տարածքները, պաշտպանելու բռնի տեղահանված արցախահայության ոտնահարված իրավունքները, ազատ արձակելու գերեվարված հայորդիներին եւ յուրացումից ու ոչնչացումից փրկելու Արցախի հայկական հոգեւոր-մշակութային ժառանգությունը: Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, այս բարդ իրավիճակի կարգավորման գործում հիմնական պարտավորությունն ու պատասխանատվությունը մերն է, հարկ է համախմբվել, զերծ պահել հայրենի մեր երկիրը նոր ցնցումներից ու կորուստներից, փարատել ապագայի շուրջ առկա տագնապներն ու մտահոգությունները, վերատեսուծյան ենթարկել սխալ ու ազգավնաս ընթացքները, առավել ամրապնդել Հայաստան-սփյուռք հարաբերությունները, ներքաղաքական կյանքում սկիզբ դնել առողջ երկխոսության եւ ելքի ուղիներ գտնել հայրենիքում մեր ժողովրդի ապահով ու անվտանգ կյանքի վերականգնման՝ մեզ ուղեկից դարձնելով արդարությունը, խիզախությունն ու ազնվությունը: Այս պայմաններում առ Աստված ապավինությունն ու հույսը խարիսխ եւ զորություն են՝ մեզ պատուհասած արհավիրքներից վերհանումի եւ զորեղ հայրենիքի կերտման: Արդ, սիրելիներ՛, թող այս նոր մյուռուհն լինի հույսի եւ վերհանումի մյուռուհն, լուսաշող վկայություն ազգային ու հայրենական մեր կյանքը վերընձյուղելու վճռականության եւ ներքին ու արտաքին մարտահրավերների հաղթահարմամբ մեր բարօր գալիքը կառուցելու հաստատակամության:

Հայրապետական Մեր հորդորն ու պատգամն է աշխարհասփյուռ Մեր զավակներին՝ մյուռուհնադրոշմ պահել մեր կյանքի ընթացքը, հաստատուն մնալ մեր պետության շահերի պաշտպանության դիրքերում եւ չվտանգել ազգի ապագան, քանզի ով օժված է Սրբալույս Մյուռուհնով,

չի կարող ուրանալ անկախ հայրենիք ունենալու իր հայրերի երազները, հրաժարվել սեփական պատմությունից: Ով օժված է Մյուռնոնով, չի կարող մերժել իր նախնյաց ժառանգությունը, նսեմացնել սրբագործված արժեքները, եղծել իր ազգային դիմագիծն ու իղձերը: Ով օժված է Սրբալույս Մյուռնոնով, չի կարող անարգել ու արհամարհել հայրենակից ու բարեկամ իր քույրերին ու եղբայրներին, քանզի ասված է. «Ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպես կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա. Հովհ. Դ. 20): Ով օժված է Սրբալույս Մյուռնոնով, կոչված է դառնալու ճշմարտության առաջամարտիկ, բարիքի կերտող եւ սիրո քարոզիչ: Եւ վերջապես, ով օժված է Սրբալույս Մյուռնոնով, նա երկյուղած պիտի լինի միայն ու միայն Աստծուց, եւ աներկյուղ՝ թշնամիների ու սպառնալիքների առջեւ, քանզի, ինչպես ասում է Սուրբ Առաքյալը, «Աստծու տկարն ավելի զորեղ է, քան մարդկային զորությունը» (Ա. Կորնթ. Ա. 25):


Հայրապետական Մեր հորդորն է ձեզ, սիրելի՛ արցախահայեր, աննկուն եւ անվհատ դիմագրավեք նեղություններն ու դժվարությունները: Արցախյան ոճրագործությունը իրականացվել է ոչ միայն ձեր, այլեւ մեր ողջ ժողովրդի հանդեպ: Ազգովի հետեւողական պիտի լինենք հայրենի բնօրրանում ազատ ու արժանապատիվ ապրելու ձեր իրավունքի պահանջատիրության մեջ: Այս սուրբ խորանից Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ՝ հայցելով, որ երկնային շնորհները հեղվեն ձեր կյանքից եւ ընտանեկան հարկերից ներս: Որպես Հայրապետ Ամենայն Հայոց՝ հավատում ենք մեր ազգի ներքին ուժականությանն ու մեր ժողովրդի վերհառնումին, մեր լուսավոր ու հաղթական գալիքին:

Մյուռնոնօրհնության հոգենորոգ այս առիթով Մեր սերն ու բարեմաղթանքներն ենք բերում արարողությանը մասնակից եկեղեցական, պետական, քաղաքական, դիվանագիտական գործիչներին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրյալ ազգային բարերարներին եւ ուխտավոր հավատացյալներին: Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք հայտնում Մյուռնոնօրհնության կնքահայրությունը ստանձնած ազգային մեծ բարերար տիար Սամվել Կարապետյանին, ով իր նշանակալի ավանդն է բերել ազգային եւ հայրենական մեր կյանքի շենությանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտառությունը: Աստծու ամենաառատ օրհնություններն ու մշտանորոգ հաջողություններ Ձեզ, սիրելի՛ բարերար տիար Կարապետյան, եւ Ձեր բարեպաշտ ընտանիքին:





Աղոթում ենք Երկնավոր մեր Հորը, որ Սուրբ Հոգու շնորհներով աշխարհում առատանան հավատո գործերը, սերն ու բարին, եւ զորանան խաղաղության ու համերաշխության ուղիները: Թող Սուրբ Հոգու շնորհաց հանապազ հեղումով անվտանգ ու աներեր լինի մեր հայրենիքը, բարեզարդ՝ համայն մեր ժողովրդի կյանքը, պայծառ ու անսասան՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Թող Սուրբ Մյուռոնի կենարար լույսով հավերժաշող մնա Լուսավորչի կանթեղը Հայոց աշխարհում այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՎԱՍԸ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԾՍԱՆ ԱՌԻԹՈՎ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, սեպտեմբերի 29, 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տեղիդ յորում կաս դու ի դմա՝ երկիր սո՛ւրբ է»
(Եւրեմ. Գ. 5):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Տիրոջ ողորմած կամքով միասնական աղոթակցությամբ կատարեցինք Քրիստոսահիմն Մայր Տաճարի վերածման արարողությունը: Փառք եւ գոհություն ենք մատուցում Ամենակալին, որ նորոգության երկար աշխատանքներից հետո այլեւս ամրակայված ու բարեզարդված եւ այսօր նոր մյուռոնով վերածված Մայր Տաճարը վերստին իր դռներն է բացում հայաստանաբնակ եւ աշխարհասփյուռ մեր հավատավոր զավակների, ուխտավորների եւ այցելու հյուրերի առջեւ:

Նվիրական այս պահին մեր հոգում արձագանքում է մեծ մարգարեին՝ Աստվածատես Մովսեսին ուղղված Ամենակալ Տիրոջ խոսքը. «Սուրբ է այն տեղը, ուր կանգնած ես» (Եւրեմ. Գ. 5): Բարձրյալի օրհնությամբ սուրբ է հայրենի մեր երկիրը, ուր ջրհեղեղից հետո Աստված ընդունեց տապանակիր Արարատի հովանու ներքո Նոյ Նահապետի առաջին ընծայաբերությունը եւ ուխտ հաստատեց մարդկության հետ՝ ասելով. «Այլեւս չեմ անիծի երկիրը մարդկանց գործերի համար» (Ծննդ. Ը. 21): Սուրբ է Արարատյան այս երկիրը, ուր քաջազուն ու ազատատենչ հայոց Նահապետ Հայկը հաղթեց բռնակալ Բելին եւ խորտակեց չարի զորությունը: Սուրբ է այս տեղը, ուր, Հայոց առաքելապատիվ Հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, Աստծու Միածին Որդին երկնքից իջավ եւ լուսազարդելով այս նվիրական վայրը՝ հաստատեց համայն հայության հոգեւոր կենտրոնը, սրբություն սրբոց միածնաէջ Մայր Տաճարը: Հիրավի, Սուրբ Էջմիածինը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անգին պարգեւն է մեր

ազգին ու Աստծու անսպառ օրհնությունների մատուցված աշխարհասփյուռ հավատավոր մեր ժողովրդին:

Սուրբ Էջմիածնից ճառագող երկնային լույսով ու շնորհներով է շողարձակել հավատքը ազգիս զավակների սրտերում եւ ամրապնդվել սերը հայրենիքի հանդեպ: Հայոց սրբօրրանի ներշնչանքով են ստեղծվել հայոց գիրն ու դպրությունը, ոգի ու խիզախություն առել Ավարայրի քաջերը: Սուրբ Էջմիածնով են ոգեշնչվել Սարգարապատի հերոսները, եւ նրա օրհնաբեր կամարների ներքո են մխիթարություն ու հանգստություն գտել փորձությունների ու նեղությունների ենթարկված, այլեւ Ցեղասպանությունը վերապրած մեր ժողովրդի զավակները: Այս նվիրական սրբավայրում է նաեւ մշտավառ պահվել տեսլականը մեր անկախ պետականության վերակերտման, որը եւ իրականություն է դարձել մեր ժողովրդի միահամուռ կամարտահայտություն մեր աննկուն պայքարով:

Տերունահաստատ Սուրբ Էջմիածինը՝ լուսավորչակերտ Մայր Տաճարով, հավաստիքն է Աստծու հետ մեր հավիտենական ուխտի, դարավոր վկան առ Աստված ու հայրենին նվիրումով ապրելու մեր համընդհանուր վճռականության, պայծառ փարոսը ազգային-եկեղեցական մեր անդաստանի: Արդար ու ճշմարիտ է՝ Սուրբ Էջմիածինը հոգեփրկչական ու ազգապահպան իր ծառայությամբ դարձել է հիմնասյունը եւ անառիկ միջնաբերդը հայոց ինքնության ու լինելության, խորհրդանիշը մեր ազգի միասնականության եւ Արարատ սուրբ լեռան պես մեր հարատեւության:

Սուրբ Էջմիածինը Աստծու մշտնջենական ներկայությունն է մեր կյանքում, աներեր ու անհաղթելի: Պատմության հոլովույթներում Հայոց Եկեղեցին՝ Սուրբ Էջմիածին հոգեւոր կենտրոնով, բազմիցս ենթարկվել է հարձակումների եւ հալածանքների, սակայն հավատի անպարտելիությամբ հաղթահարել է դժվարություններն ու մարտահրավերները: Պատմական անբեկանելի ճշմարտություն է՝ մարտնչել Սուրբ Էջմիածնի դեմ նշանակում է մարտնչել հայոց ինքնության եւ գոյության դեմ, հարված հասցնել հայոց պետականությանը եւ հայ կյանքը պարպել ազգային ու հոգեւոր բովանդակությունից: Սուրբ Էջմիածնի առաքելությունը արժեգրկելու որեւէ քայլ՝ նշանակում է փորձել տկարացնել մեր ազգին, խարխլել հիմերը անկախ ու ինքնիշխան կյանքի, որի ջատագովն ու պաշտպանն է Հայոց Եկեղեցին: Սուրբ Էջմիածնի հանդեպ աշխարհասփյուռ հայության որդիական ջերմ սիրով ու նախանձախնդրությամբ է ամուր մեր հայրենիքը, զորեղ եւ անկոտրում՝ միաբանությունը մեր ժո-

ղովրդի: Քրիստոսի կողմից հիմնադրված ոսկեխարիսխ այս սրբավայրը մշտապես լինելու է ազգային ու հոգեւոր կյանքի առանցքը, քանզի Արարատահայաց Սուրբ Էջմիածինը Աստվածադրոշմ է, Սուրբ եւ անկորնչելի:

Սիրելիներ, Հայոց Հայրապետները ազգիս հավատացյալ զավակների ամբողջանվեր հոգածությամբ բոլոր ժամանակներում պահպանել, նորոգել ու վերակառուցել են Մայր Տաճարը, որպեսզի այն դարեդար առաջնորդի համայն հայությունը փրկության ճանապարհով, հարատեւ մնա անխախտ վեմը մեր մշտավառ հավատքի եւ հոյակերտ վկան Քրիստոնյա Հայաստանի: Վերածյալ այս սրբավայրը մեր հավատքին նոր ամրություն է հաղորդելու, բազուկներին՝ զորություն, մտքերին՝ պայծառություն եւ սրտերին՝ լավատեսություն, որով պիտի դիմագրավենք նորօրյա փորձություններն ու աղետաբեր վտանգները:

Հոգենորոգ այս պահին Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում համայն մեր ժողովրդի զավակներին, որ այսօր մեծագույն ուրախություն եւ հոգեւոր մխիթարություն են ապրում Աստծու Տաճարի վերածման ու վերաբացման առիթով: Հայրապետական Մեր պատգամն է ձեզ, հավատավոր ժողովուրդ հայոց, մեր բարեպաշտ նախնյաց նմանությամբ հայրենյաց եւ Սուրբ Էջմիածնի սիրով պաշտպանենք մեր երկիրն ու մեր սրբությունները: Հույսով ու լավատեսությամբ լծվենք մեր կյանքի վերելքին ու առաջընթացին՝ այն խարսխելով արդարության, ճշմարտության, ազնվության վրա: Ամենուր մեզանում զորացնենք ազգանվիրումի, եղբայրսիրության ու համերաշխության ոգին: Մերժենք մեզանից անտարբերությունը, անհանդուրժողությունն ու քինախնդրությունը: Զերծ պահենք մեր պատմությունը կեղծիքներից ու խեղումներից:

Համախումբ հոգ տանենք մեր հայրենիքին՝ գիտակցությամբ, որ հայրենի ինքնիշխան մեր երկիրն է երաշխավորը մեր ինքնության պահպանման եւ ազգային իղձերի ու երազների իրականացման: Կրթենք մեր զավակներին ազգային նկարագրով, մեր լուսամիտ հայրերի հավատքով ու քաջարի ոգով, որ մեր ապագան լինի բարօր ու հաղթական: Արդ, ապրենք ու գործենք հոգեւոր արթնությամբ, մեր պետությունը, մեր ազգային կյանքը զորացնելու վեհ ու պայծառ տեսլականով:

Գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում մեր եկեղեցու մեծանուն բարերարներին, որոնց ազնիվ ընծայաբերումներով հնարավոր եղավ իրականացնել Տաճարի ամբողջական վերանորոգման աշխատանքները: Մեր օրհնությունն







ու գնահատանքը՝ հավատալով որ Մեր զավակներին, որ տարիներ շարունակ իրենց լուման են ներդրել այս կարեւոր գործում եւ համբերությամբ սպասել այս բաղձալի օրվան: Ձեր վարձքը մարգարեի ազդարարած պարգեն է՝ ըստ Աստծու խոստման. «Խաղաղություն պիտի տամ այս տեղին, հոգու խաղաղություն՝ որպէս փրկություն բոլոր նրանց, ովքեր կաշխատեն վերականգնել այդ տաճարը» (Անգե Բ. 10):

Հայրական ջերմ զգացումներով Մեր գնահատանքն ենք բերում Մայր Տաճարի նորոգությունը իրականացրած վաստակաշատ, բազմահմուտ շինարարին, ճարտարապետներին, նկարիչ վերականգնողներին եւ ներգրավված մյուս մասնագետներին, ովքեր բարեխղճորեն կատարեցին իրենց աշխատանքը:

Վերածյալ այս Տաճարից, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի եւ Սուրբ Տրդատ արքայի բարեխոսության հայցով, Մեր անդրանիկ աղոթքն ենք առ Աստված բարձրացնում հայրենի մեր երկրի, աշխարհի խաղաղության համար, խնդրում Աստծու ողորմությունն ու զորակցությունը հարազատ բնօրրանից բռնի տեղահանված արցախահայությանը, անհայտ կորած եւ տակավին գերության մեջ գտնվող մեր զավակներին: Հայցում ենք, որ հավատքով ու հույսով զորացալ եւ սիրով միասնական ազգս հայոց աստվածահաճո իրագործումներով շենացնի ու պայծառացնի ազգային-եկեղեցական մեր կյանքը, եւ թող Միածնի Իջման Սուրբ Սեղանից շողարձակող օրհնություններն ու շնորհները սփռվեն համայն մեր ժողովրդի կյանքին այժմ եւ հավիտյանս. ամեն:





**Տ. ԱՐՇԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ
ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(Սեպտեմբերի 15, 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այլ ինձ՝ քա՛ն լիցի պարծել, բայց միայն ի խա՛ն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»

(Գաղ. 2. 14):

Քույրեր եւ եղբայրներ,

Այսօր սպասված օր է՝ Տիրոջ Սուրբ Խաչի Վերացման տոնը. իրադարձություն, որն առանձնակի ջերմություն ու ներշնչանք է հարուցանում հոգեւոր եւ ազգային մեր կյանքում:

Այս օրերին համընդհանուր հանգստություն ու սրբություն է, կարծեք, իջնում մարդկանց հոգիներին: Սուրբ Խաչի Վերացման այս տոնին մեր մտքերը եւս վերանում են դեպի երկինք, մեր հայացքները՝ մխրճվում պատմության խորքերը. վերապրում ենք Սուրբ Խաչի նվիրագործման սուրբ հիշատակները:

Շուրջ 2000 տարիներ առաջ էր, երբ հեթանոսաց Առաքյալ Պողոսը Փոքր Ասիայի Գաղատիա քաղաքի նորադարձ քրիստոնյաներին ուղղած իր նամակում անվիճարկելի համոզվածությամբ հայտարարում է. «Քա՛ն լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի համար» (Գաղ. 2. 14):

Աշխարհի մարդկանց համար խիստ տարօրինակ է Պողոս Առաքյալի պարծանքը: Ինչպե՞ս կարելի է պարծենալ փայտե գործիքով: Հին աշխարհում հույները պարծենում էին իրենց արվեստով ու գիտությամբ, հռոմեացիներն իրենց խիզախությամբ ու հզորությամբ, մինչդեռ քրիստոնյաների համար պարծանք դարձավ ընդամենը Խաչը. մի գործիք, որ ծառայում էր ընդամենը մահվան դատավճիռներ իրագործելու համար:

Այն, անհաղորդ մարդկանց տարօրինակ է թվում Քրիստոնյաների հաշի պարծանքը: Իհարկե, տարօրինակ կթվա, եթե Տիրոջ խաչելության եւ մահվան պատկերները հասկացվեն որպես պատմական լեգենդի դրամատիկ դրվագաշարեր, մինչդեռ հաշը այն ամենն է, ինչ բնութագրում է Քրիստոնեությունը: Խաչն ամբողջացնում է հանուն մարդկության Աստծու Որդու անմեկնելի զոհաբերությունը: Սուրբ Խաչն Աստվածորդու տառապանքն է, Նրա չարչարանքները, Նրա կրած կամավոր զրկանքներն ու նվաստացումները, Նրա մահը եւ, վերջապես, Նրա Հարությունը:

Այսպես է, որ Քրիստոնյայի կյանքը հաշի ճամփորդություն է, Քրիստոնյայի կյանքը անհոգնաբեկ նմանություն է Քրիստոսի կերպարին: Չկա հաշ՝ չկա Քրիստոնեություն, չկա հաշի ճանապարհ՝ չկա քրիստոնեական կյանք:

Քույրեր եւ եղբայրներ,

Մենք ամենքս թերանում ենք առ Խաչն մեր ճամփորդության մեջ, մեզ ծանր է թվում մեզ վիճակված բեռը, մենք կքում ենք Աստծու եւ մարդկանց հանդեպ մեր սերն արտահայտելու հանձնառության ներքո: Տկարանում ենք ու ընկրկում, քանի որ փշոտ է հաշի ճամփան: Այն ընդգրկում է մեր կյանքի բոլոր ոլորտները, այն փոխզիջումներ չի՝ ճանաչում. Քրիստոսի հաշով պիտի շաղախված լինեն մեր մտածումները, հունցված՝ մեր խոսքերը, եւ դրոշմված՝ մեր գործերը:

Դժվար չէ՝ արդյոք հաշը դարձնել առանցք մեր մտքի, մեր խոսքերի ու գործերի: Արդարեւ, դժվար է, չափազանց դժվար: Աղոթախոս Նարեկացին անգամ իր ողջ սրբության եւ աստվածաշնորհության մեջ խոստովանում է.

«Չեմ դադարելու դարձյալ դատելուց դատապարտյալիս,
եւ փարկոճելու անձս հանցապարտ դառն խոսքերով,
Իբրեւ չարագործ անհամոզելի, փրկությունից զուրկ...»

Ս. Գրիգոր Նարեկացի,

Մատյան ողբերգության, (Բան է.)

Սրբության առջեւ մեղապարտի զինաթափվածության նույն հառաչանքով է Աստծուն դիմում նաեւ Ներսես Շնորհալի Սուրբ Հայրապետը՝ խոստովանելով սեփական մեղքերը.

«Քննող գաղտնյաց, մեղանշեցի Քո առջեւ կամա եւ ակամա, գիտությունս եւ անգիտությունս, թողություն շնորհիր մեղավորիս, քանզի

ծնունդիցս մինչեւ այսօր մեղանչել եմ Աստվածությանդ առաջ իմ զգալարաններով եւ մարմնիս բոլոր անդամներով», (Ս. Ներսես Շնորհալի, Հաւատով խոստովանիմ, (Ը. 8):

Լինել խաչի ճամփորդ՝ չի նշանակում լինել հրեշտակ եւ կամ անմեղ: Լինել խաչակիր՝ չի նշանակում ունենալ մաքրամաքուր անցյալ ու անարատ համբավ: Լինել խաչի ճամփորդ՝ նշանակում է լինել մարտիկ մեղքի դեմ պայքարում, նշանակում է երբեք չհամակերպվել մեղքի ու հանցանքի հետ, նշանակում է ամեն օր ու ամեն ժամ ջանալ ձերբազատվել մեղքի, հանցանքի պատանդառությունից, նշանակում է ընկնելուց հետո միշտ ձգտել վեր կենալ, կքելուց հետո ուղղել կորացած մեջքը, մեղանչելուց հետո չմթազնել սուրբ դառնալու տեսիլքը:

Համակերպվել մեղքի ու սխալի հետ՝ նշանակում է կորցնել դեպի խաչ տանող ճամփան: Համակերպվել մեղքի ու սխալի հետ՝ նշանակում է խփել սեփական դագաղի վերջին ու վճռական մեխը: Աստված մեզ չի դատապարտելու միայն նրա համար, որ մենք մեղավոր ենք: Մենք դատապարտված ենք լինելու միայն մեկ պատճառով՝ որ չենք ձգտել հաղթահարելու մեղքը, չենք ջանացել ընթանալու խաչի ճանապարհով, մեղքից հրաժարման ճանապարհով, մաքրագործման ճանապարհով, եւ վերջապես չենք ջանացել ընդառաջ գնալու Աստուծու շնորհին, որով կարող էինք միայն սրբանալ ու փրկվել, ինչպես ասում է նույն Առաքյալը. «Փրկությունը ձեզնից չէ, այլ Աստծու պարգեն է» (Եփես. Բ. 8):

Քույրեր եւ եղբայրներ,

Մեր ժողովուրդը դարեր շարունակ խաչի ճամփորդ է, նրա երկարատեւ ճամփորդությունը ուղեկցվել է ճակատագրական փորձություններով՝ այնպիսի մարտահրավերներով, երբ անհնարին է թվացել անգամ կյանքի շարունակությունը: Փառք Բարձրյալին՝ հակառակ բոլոր փորձություններին՝ մեր խաչի ճամփան շարունակվում է նաեւ 21-րդ դարում: Մենք շարունակում ենք պայքարել մեղքի ու սպառնալիքների դեմ, դիմակայել գոյաբանական վտանգներին: Թվում է, սակայն, թե մոլորվել ենք մենք խաչի ճամփորդության մեջ: Թվում է, թե այլեւս խաչը չէ, որով պարծենում ենք մեր կյանքի ճանապարհին:

Կենդանի Աստծու պաշտամունքը փոխարինվում է մարդկանց հանդեպ երկրպագությանը, հոգին խոնարհեցվում է մարմնի առջեւ, ինքնությունը զոհաբերվում է բարեկեցությանը, ազատությունը՝ դարձվում պատրվակ ամենաթողության, եւ աթոռապաշտությունը անփույթ ու անարվեստ ձեռ-

նածուծյամբ փաթեթավորվում հայրենասիրությունյամբ ու սկզբունքայնությունյամբ: Սա չէ՝ հաշի պարծանքը, սա չէ՝ հաշի ճանապարհը:

Սա ճանապարհն է ինքնառնչացման, սա ճանապարհն է ինքնաաստվածացման ու ճանապարհը՝ կռապաշտություն: Անհնար է գտնել Աստծուն՝ առանց հաշի ճամփան բռնելու: Անհնար է ճանաչել Քրիստոսին՝ առանց խաչելությունը վերապրելու: Անհնար է հասնել երջանկության՝ առանց Աստծուն ձգտելու: Երջանկությունը դրախտի վերհուշն է աշխարհային կյանքում: Հնարավոր չէ հասնել երջանկության Աստծուն ու սեփական ինքնությունն ուրանալու ճանապարհով, հնարավոր չէ երջանկության հասնել ամենօրյա խարդավանքներով ու բռնություններով, այլոց նկատմամբ առավելություն հաստատելու մոլուցքով:


Քույրեր եւ եղբայրներ,

Մենք կոչված ենք համերաշխության, կոչված ենք միաբանության, բայց այնպիսի համերաշխության ու միաբանության, որի ամրոցի աշտարակներին ծաղկում է հաշը եւ երկրպագվում հաշյալը: Զկա համերաշխություն՝ առանց հոգեւոր, բարոյական ու գաղափարական ընդհանրության: Երբ Համերաշխությունն ու Միաբանությունը նոսրանում են եւ սերը ցամաքում, ծնվում է Հանդուրժողականությունը. մի բան, որ անսեռ է եւ անգույն, Հանդուրժողականությունը, որ եղբայրն է Անտարբերության, բայց անպատկառ համառությունամբ ձգտում է բազմել Սիրո գահավորակին:

Հաշի ճամփորդը անհանդուրժող է մոլության հանդեպ, անհանդուրժող վնասարարության եւ հայրենաքանդումի հանդեպ: Արդ, վերադառնանք հաշի ճանապարհ, մարտնչենք մեղքի ու հանցանքի, ոչնչացման ու արհավիրքի դեմ: Խաշը դարձնենք մեր պարծանքն ու պատվարը, հրաժարվենք մահաբեր դեղատոմսերից, ձերբազատվենք պարտադրվող կեղծ ընտրություններից: Խաշի հանդեպ հանձնառությունն ու պատասխանատվությունն են քրիստոնյայի կյանքի առանցքը: Այսպես պիտի ապրենք մեր կյանքը, եւ, ձայնակից մեր սրբազան հայրերին, Պողոս Առաքյալի նման ի լուր աշխարհի հայտարարենք. «Քա՛վ լիցի, որ մենք պարծենանք այլ բանով, քան Մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով»:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեւեանդ. Ամէն:





ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ

ՊԱՐՏԱՎՃԱՐ

Սկիզբը՝ 2023 թ. թիվ Դ., է., Թ., ԺԱ., 2024 թ. թիվ Ա., Ը.

Գ Լ Ո Ւ Խ Թ .

ԽՐԱՏԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ ԵՒ ՀՈՐԴՈՐԱԿՆԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅՈՑ
ԱԶԳԻՆ՝ ԶԳՈՒՇԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅԼԱԴԱՎԱՆ ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐԻՑ
ՈՒ ՄԱՆԱՎԱՆԴ ԸՄԲՈՍՏԱՄԻՏ ԿՈՐՍՅԱՆ ՈՐԴԻՆԵՐԻՑ

Մեր խոսքի ընթացքն այսուհետ ուղղենք դեպի մեր օրհնաժառանգ Հայոց ազգը՝ մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի եւ սուրբ ու քրիստոսաէջ էջմիածնի Աթոռի հարազատ եւ լուսածնունդ որդիները, որոնց եւ դիմում ենք ցավակցաբար, անախտ մտքով ու ճշմարիտ սիրով: Քանի որ, ահա, կարճառոտ եւ դյուրառճ խոսքերով ձեզ ցույց տվեցինք Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու ճշմարիտ հավատն ու մաքրամաքուր դավանությունը, նաեւ՝ Սուրբ Գրքի վկայությունը եւ նախնիների ավանդությունը հավաստեցինք, որ դա այն նույն հավատը եւ դավանությունն էր, որն աշխարհում քարոզեցին Քրիստոս ու Նրա առաքյալները եւ ավանդեցին իրենց հետեւորդ նախնի սուրբ հայրապետներին, ու այն հաստատվելով՝ կանոնակարգվեց երեք սուրբ ժողովով, եւ նրանց միջով անցնելով էլ՝ մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի եւ նրա օրհնյալ շառավիղների միջոցով ուղիղ գծով ավանդվեց Հայաստանյայց Եկեղեցուն: Մեր հեռավոր, երանելի նախնիներն այդ նույն հավատը եւ դավանությունը անարատ ու անշեղ պահելով՝ ավանդեցին մեզ, եւ այդպիսով նրանք «ազատվեցին» իրենց պարտքից: Ահա եւ մենք էլ մեզ մեր այդ պարտքից «ազատելու» համար այդ նույն հավատն ու դավանությունը անարատ եւ անփոփոխ կերպով ավանդեցինք մերայիններին: Ուրեմն, ձեզ գրում եմ հայտնապես ճշմարիտը, որպեսզի ես

նույնպես «ազատվեմ» իմ պարտքից: Եթե մեր ազգից որեւէ մեկը շեղվի այս հավատից ու ապստամբի մեր Եկեղեցու դեմ, այդպիսով մեծապես մեղանշած կլինի եւ նզովքի կենթարկվի ու կդատապարտվի թե՛ հոգով եւ թե՛ մարմնով: Որովհետեւ այդպիսի մեկն ինքնակամորեն մաքառում է Սուրբ Հոգու ճշմարտության դեմ, որով խոսեցին նախնի սուրբ հայրերը: Այդպիսի վարմունքն աններելի մեղք է՝ համաձայն Քրիստոսի խոսքի: Արդ, մի կո՞ղմ թողնենք ուրիշներին, որոնք ի սկզբանե էլ մեզնից տարբերվում են ազգությանմբ, լեզվով, դավանությանմբ եւ կրոնով, որոնց մենք ոչինչ չունենք ասելու, այլ առավելաբար պարտավորված ենք նրանց ընդունելու որպես եղբայրներ անցնելու համար, որ քրիստոնյա են, եթե իհարկե նրանք էլ մեզ ընդունեն ճշմարիտ սիրով, ու ոչ թե նենգությանմբ: Բայց մենք ասելիք ունենք ապականված եւ ուրացող անցնելու մարդկանց, որոնք նախնիներից իրենց ծագումով հայազուն են եղել, սնվել ու աճել են Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու ծոցում եւ հավատով են լուսավորվել մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի շնորհիվ, սակայն այնուհետեւ թողել են իրենց ազգն ու Եկեղեցին, ուրացել իրենց Սուրբ Լուսավորչի հավատը՝ ոտնահարելով նրա այդքան սարսուռի չարչարանքներն ու երախտիքները, եւ ուրիշների կողմն են անցել (թեպետ նույնիսկ առանց նրանց հետեւելու): Եւ դա ո՞չ մեկ ուրիշ պատճառով, քան միայն մարմնական հեշտասիրության եւ պարապասիրության համար: Այդպիսիների մասին հավաստի վկայություն տալով՝ Սուրբ Պողոսն ասում է. «Օհ, լալով եմ ասում Քրիստոսի խաչի թշնամիների մասին, որոնց վախճանը կորուստ է, որոնց աստվածն իրենց որովայնն է, եւ փառքը՝ իրենց ամոթը, որոնք միայն երկրավոր բաներն են խորհում» (հմմտ. Փլպ. Գ. 18–19): Իսկ ի՞նչ ասենք որոշ սուտ եւ մոլորության վարդապետների, մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի այգու խառնակիչ, նենգավոր ու չար մշակների, լիրբ եւ կատաղի զավակների մասին: Այդպիսիք զուրկ են հայրենիքից եւ աղքատ՝ մարմնական բոլոր պետքերից, բոլորովին դատարկ հոգեւոր ու մարմնավոր բարիքներից եւ շնորհներից, լիովին անպիտան ու անարժան նույնիսկ սեղանի փշրանքներին՝ իրենք գռեհիկ ու գռեհիկների զավակներ լինելով: Նրանք ամեն տեսակի ապականությանից եւ աշխարհի պես-պես տառապանքները կրելուց հարկադրված՝ եկել-մտել են Սուրբ Գրիգորի այգին, այսինքն՝ հայրապետական Աթոռի հովանու ներքո, մուտք գործելով վանքեր կամ հարելով այս կամ այն վարդապետին՝ ծառայության անցել, որպեսզի գոնե մի պատառ հաց գտնեն ու այդպես ապրեն: Սակայն հոգեւորապես եւ մարմնավորապես

«գիրանալով» ու «հարստանալով»՝ նրանք իսպառ ուրանում եւ մոռանում են բոլոր շնորհներն ու շնորհատուներին, եւ Հուդայի նման, պատառը վերցնելով, դուրս են գալիս ու այնուհետեւ սկսում են նույնիսկ քամահրել եւ ծաղրել իրենց երախտավոր ծնողներին ու շնորհատու Եկեղեցուն: Դա էլ դեռ բավական չէ, իրենք, երկնքից ընկած լինելով, ջանում են ուրիշների քղանցքներից բռնած՝ նրանց էլ իրենց հետ ցած գլորել:

Արդ, թեպետ Սուրբ Պողոսն այդպիսիների խլացած ականջներին զանգի նման հնչեցնում է իր այս խոսքերը՝ գոչելով. «Հիշեցե՛ք ձեր առաջնորդներին, որոնք ձեզ Աստծու խոսքն ասացին: Նայելով նրանց կյանքի ընթացքի վախճանին՝ հետեւո՛ղ եղեք նրանց հավատին» (Եբր. ԺԳ. 7): Սակայն նրանք, խլացած լինելով, չեն լսում թովիչ ճարտարախոսի ձայնը:

Սակայն մենք հիշենք մեր ազգի առաջնորդ ու առաջին լուսավորիչ Սուրբ Թադեոս առաքյալին՝ Քրիստոսի հավատարիմ մշակին եւ մեր այգու սրտացավ պահապանին, որը նաեւ Հուդա է կոչվում: Տեսնենք, թե նա ինչ է ասում հավատի մասին ու ինչ է պատվիրում մեզ՝ իրեն հետեւողներին: Նա, մարգարեական հոգով գիտենալով, թե հետին ժամանակներում ինչ էր տեղի ունենալու մեր ազգի ներսում այդ նենգավոր մշակների ու սուտ վարդապետների կողմից, իր ընդհանրական թղթում հորդորական խոսքերով դիմում է մեզ՝ ասելով. «Իմ սիրելիներ, հարկ համարեցի գրել ձեզ եւ աղաչել, որ պայքարեք այն հավատի համար, որը մի անգամ ընդմիշտ ավանդվեց ձեզ՝ սրբերիդ եւ ընտրյալներիդ.... քանի որ ձեր մեջ սողոսկեցին ամբարիշտ մարդիկ, որ մեր Աստծու շնորհը վերածեցին անկարգության» (հմմտ. Հուդ. Ա. 3–4): Այսպիսով՝ մեր սուրբ առաքյալը կամենում է ասել, թե «հարկավոր էր, որ ես նախապես ձեզ գրեի եւ զգուշացնեի, իմ սիրելի՛ ժողովուրդ եւ Հայոց ազգի թե՛մ, որ պինդ պահեք այն հավատը, որը մենք ու մեր հետեւողները ավանդեցին ձեզ՝ Հայաստանյայց ընտրյալ ու սուրբ Եկեղեցուդ: Եւ հանուն այդ հավատի պայքարելով՝ մինչեւ իսկ նահատակվեք, բայց մի՛ խաբվեք որոշ խաբեբաններից ու սուտ վարդապետներից, որոնք որպես մարմնավոր դեւեր սպրդում են ձեր մեջ: Քանի որ նրանք ամբարիշտներ են, այսինքն՝ սուտ, նենգավոր եւ ճշմարտությանը հակառակ, որովհետեւ Աստծու շնորհը անկարգության վերածեցին, որովհետեւ աստվածային շնորհն ու վարդապետության կոչումը, որն ընդունել էին, գործադրեցին իրենց անօրինությունների համար: Քանի որ նրանք ընդունեցին ճշմարիտ Վարդապետի՝ Քրիստոսի անունը, սակայն ստությունն ու խաբեությունը հե-

տեւեցին: Նրանք պարտավոր էին հաստատուն մնալ իրենց հավատի մեջ եւ մյուսներին էլ նույնը քարոզել, սակայն իրենք մոլորվեցին ու մյուսների համար չար օրինակ եւ գայթակղեցնողներ եղան: Կաթը կերան ու բուրդով զգեստավորվեցին, սակայն այնուհետեւ գայլի փոխարկվելով՝ հոտին հոշոտեցին եւ մոլորեցրին»:

Հարցնենք մեր երանելի առաքյալին, թե՝ «ո՞վ մեր սուրբ եւ երախտավոր, մեզ ի՞նչ նշան ցույց կտաս նրանց տարբերակելու համար, որպեսզի ճանաչենք այդպիսիներին»: Երանելին մեզ նշան է ցույց տալիս՝ ասելով, թե «նրանք բանասարկուներ են, այսինքն՝ կեղծավորներ ու խաբեբաներ, իրենց սերերով՝ խարդախությամբ մասնակից լինելով ձեր ուրախությանը, որպեսզի անպատկառորեն իրենք իրենց պարարտացնեն, նրանք, որ երեսպաշտություն են անում իրենց սեփական շահի համար» (հմմտ. Հուդ. Ա. 12, 16):

Տեսե՛ք, սիրելի ա՛զգ Հայոց, որ մեր երանելի առաքյալը մարգարեական հոգով այնքան ճշմարտապես է նախաճառում այդպիսի խաբեբա սուտ վարդապետների բարքի մասին, որպես թե այդ ամենն իր ժամանակներում է եղել, եւ ինքն էլ ականատես է եղել դրան: «Այդպիսիների նշանը, — ասում է, — սա՛ է. այդպիսիք չարախոս են, կեղծավորներ ու խաբեբաներ, նրանք միամիտ մարդկանց առերես իրենց սիրելի ու բարեկամ են ցույց տալիս, սակայն դուք մի՛ հավատացե՛ք նրանց, քանի որ նրանց սերը խարդախությամբ ու նենգավորությամբ է լեցուն: Այդ ամենը նրանք իրենց օգտի համար են անում, որպեսզի ձեզ կեղծավորաբար հավատացնելով՝ խաբեն, իսկ իրենք անպատկառորեն պարարտացնեն իրենց անձերը»: Այդպիսի պատկեր էլ մենք, ահավասիկ, հայտնապես տեսնում ենք ներկա ժամանակում, քանի որ նրանց արհեստը հենց այն է, որ խաբեբայական պես-պես հնարքներով մոլորեցնեն մեր ազգի պարզամիտներին, վերցնեն ունեցվածքն ու կորստյան մատնեն հավատը եւ հոգին:

Դարձյալ ասա՛ մեզ, ո՞վ Սուրբ Թադեոս՝ Քրիստոսի առաքյալդ եւ Հայոց լուսավորիչդ, նրանք ինչի՞ են նմանվում ու ի՞նչ են կոչվում: Երանելին պատասխանում է, թե՝ «նրանք անշուր ու հողմակոծ ամպեր են, պտղակորույս ծառեր՝ կրկնակի մեռած եւ արմատախիլ եղած, ծովի կատաղի ալիքներ, որ միշտ փրփրում-թափում են իրենց սեփական ամոթը, եւ մոլոր աստղեր» (հմմտ. Հուդ. Ա. 12—13):

Լա՛վ լսիր, ո՞վ ազգ Հայոց, եւ մեր սրբազան առաքյալից ուսանի՛ր այդպիսի սուտ ու մոլորության վարդապետների եւ մեր միջից ըմբոստա-

ցած կարգազանցների որպիսության մասին, քանի որ ինքը՝ առաքյալը, Սուրբ Հոգուց նախապես ուսանած լինելով, պատմում է նաեւ մեզ, որպէսզի գիտենանք եւ զգուշանալով՝ հեռու մնանք այդպիսիներից՝ իբրեւ թունավոր զեռուններից: «Նրանք, — ասում է, — անջուր ու հողմակոծ ամպեր են»: Ամպն այն ժամանակ է գովելի եւ պիտանի, երբ երկրի վրա անձրեւ է հեղում՝ այն ոռոգելու եւ ցամաքած վայրերը դալարեցնելու ու զովացնելու համար: Իսկ ահա անջուր ամպը բոլորովին անպիտան է, քանի որ այն միայն դատարկաբար որոտում է եւ որեւէ օգուտ չի տալիս: Այդպիսի ամպը նույնիսկ հողմերի «ձեռքին» է խաղալիք դառնում, եւ նրանք այդ ամպին տեղաշարժում են իրենց կամեցած ցանկացած ուղղութեամբ: Այդպէս նաեւ այդ խաբեբա, մոլորության վարդապետները, ըստ Սուրբ Սարգիս Շնորհալու խոսքի, վարդապետի կերպարանք ունենալով՝ միայն «որոտալ» են կարողանում, այսինքն՝ բանսարկու եւ կեղծավոր խոսքերով իրենք իրենց գիտուն ու ուղղափառ են ցույց տալիս, սակայն իրականում բոլորովին անմասն են կենդանի Զրի ճշմարտությունից: Այդպիսիք ավելի շուտ ջանքեր են գործադրում մատաղ տունկերը չորացնելու եւ ցամաքեցնելու, քան թէ ծաղկեցնելու համար: Եւ իրենք էլ, ասես դեւից հողմակոծված լինելով, մշտապես այս ու այն կողմ են ընկնում եւ անդադար ծփում ու հալածվում են՝ որեւէ մի տեղում հանգիստ չգտնելով: «Պտղակորոյս ծառեր են, — ասում է, — կրկնակի մեռած եւ արմատախիլ եղած»: Ծառն այն ժամանակ է գովասանքի արժանի, երբ իր ճիշտ ժամանակին պտուղ է տալիս, իսկ եթե ոչ՝ այն հատվելու եւ հուրը նետվելու է ենթակա: Նույնպէս եւ սրանք, թեպէտ «վարդապետ» են կոչվում, սակայն վարդապետութեան պտուղ չունեն, այլ որպէս փշատերեւ՝ մոլորութեան հրին մատնվելու համար են սահմանված, եւ իրենց հետ էլ այրում եւ ապականում են իրենց հանդիպող մարդկանց հոգիներն ու հավատը: «Կրկնակի մեռած», — ասում է, այսինքն՝ մեռած են հոգով եւ ապականված՝ մարմնով, չորացած՝ հավատով ու գործերով: Եւ «արմատախիլ եղած», այսինքն՝ պոկված ու հեռացած իրենց բուն արմատից՝ հավատից եւ Եկեղեցուց, հայրենի երկրից, ազգից ու ընտանիքից՝ անբույն եւ անտուն լինելով: Այդպիսիք անմիաբան են մեկ ազգի ու մեկ ժողովրդի, մեկ հավատի եւ մեկ Եկեղեցու մեջ. նրանք որեւէ մի ազգի կամ Եկեղեցու հետ համաձայն չլինելու եւ որեւէ մեկին չպատկանելու պատճառով ամենքին ատում են, մերժում ու հակառակվում, չնայած որ նրանց լրբությունն իրենց թույլ չի տալիս որեւէ բան զգալ կամ գիտենալ:

Եւ նրանց լրբությունն այն աստիճանի է փակել ու կուրացրել նրանց մտքի տեսողությունը, որ նրանք երբեւէ չեն խորհում եւ չեն մտածում ու ոչ էլ բացարձակապէս ամաչում են այն բանի համար, որ իրենց նախնիները, որոնք ուսուցանել եւ կարգ ու կանոն են սահմանել, իրենցից շատ ավելի հեռու են գտնվում: Հարց է առաջանում, թե սրանք ո՞ր եկեղեցում են մկրտվել կամ սկսել իրենց ուղին, որտե՞ղ եւ ումի՞ց են առել իրենց աստիճանն ու կարգը, ո՞ր ժողովրդի եւ ո՞ր թեմի վրա են կարգվել, ի՞նչ պայմանով ու ի՞նչ ուխտով, այժմ որտե՞ղ են շրջում եւ ո՞ր եկեղեցի են մտնում ու պաշտամունք մատուցում (չնայած որ այդպիսիք ո՛չ եկեղեցի են մտնում եւ ո՛չ էլ պաշտամունք են մատուցում): Նրանք, հիրավի, մեր հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի «անառակ որդիներն» են, որոնք լքելով Լուսավորչի բարեբեր, ողորմած ու առատաշնորհ տունը՝ Հայոց ազգը, գնացել ու հարել են ուրիշներին՝ նրանց խոզարածները դառնալով:

«Եւ նրանք, — ասում է դարձյալ, — ծովի կատաղի ալիքներ են, որ միշտ փրփրում-թափում են իրենց անձերի ամոթը»: Քանի որ ծովի ալիքների նման որեւէ բանից չեն խորշում ու չեն սանձվում. ո՛չ կշտամբանքից են պատկառում, ո՛չ խրատներն ու հորդորներն են լսում եւ զգաստանում, ո՛չ Աստուծոյ են երկնչում եւ ո՛չ էլ մարդկանցից ամաչում, ո՛չ նկատում են նախնիների երախտիքները, ո՛չ ծնողների բարերարությունը ու ոչ էլ մտածում են իրենց երախտավորների մասին, այլ մոլեգին ու փրփրած ծովի նման՝ իրենց մոլորեցուցիչ չարիքները հեղում են միամիտների մտքերի վրա:

Եւ ինչպէս մոլար աստղեր՝ իրենց ընթացքի մեջ կանոն ու սահման չունեն. ո՛չ հատուկ տեղ ունեն, ո՛չ թեմ, ո՛չ եկեղեցի ու ո՛չ էլ մի որեւէ ժողովուրդ՝ բացարձակապէս նման չլինելով մեկ ազգի պատկանող վարդապետներին ու առաջնորդներին: Այլ նրանք մշտապէս մոլորված ու թափառական են, սահում եւ սողոսկում են մի տնից դեպի մյուս տունն ու մի ծակից մյուս ծակը՝ փախչելով լուսից եւ հայտնությունից: Իսկ այն մասին, թե նրանց վախճանը որտե՞ղ է լինելու, առաքյալն ասում է՝ «որոնց համար է պահված հավիտենական խավարի վիհը»: Եւ որպէսզի չկարծենք, թե մարդկանց մեջ նրանց նմանվող օրինակներ չլինելու պատճառով էր, որ նրանք համեմատութեան մեջ դրվեցին անկենդան իրերի հետ, ուստի առաքյալը նրանց համեմատում է նաեւ մարդկանցից վերցված օրինակների հետ՝ նմանեցնելով թե՛ գործերով եւ թե՛ ունեցած վախճանով: «Վայ նրանց, — ասում է, — որովհետեւ Կայենի ճանապարհով

ընթացան, ըստ Բաղաամի մոլորության՝ սայթաքեցին վարձի հետեւից ընկնելով, եւ կորան Կորխի պես՝ իրենց ըմբոստության պատճառով» (հմմտ. Հուդ. Ա. 11): Կայենի ճանապարհն այս էր. նա նախանձեց իր բարեպաշտ եղբորը, խաբելով տնից հանեց ու սպանեց նրան: Իսկ երբ Աստված Կայենին զղջալու պատգամ տվեց, նա ոչ միայն չհնազանդվեց, այլեւ լրբաբար պատասխանեց: Մարդկանց մեջ էլ կան այդպես վարվողներ, որոնք ընկնում են Աստծու եւ իրենց ծնողների աչքից, քանի որ նախանձում են բարեպաշտությանը ապրող իրենց եղբայրներին, որոնք հարատեւում են հավատի եւ իրենց նախնի հայրերի հանդեպ հնազանդության մեջ: Այդ իսկ պատճառով էլ այս կայենանման մարդիկ միշտ ջանում են նրանց խաբելով դուրս հանել տնից, այսինքն՝ Եկեղեցուց ու հավատից, եւ սպանել: Այդպիսիք Եկեղեցու առաջնորդների կողմից նախատվելուց ու խրատվելուց հետո էլ ավելի են լրբանում եւ առավել անհնազանդ են դառնում: Բաղաամը հանուն կաշառքի կամեցավ անիծել Աստծու ժողովրդին: Այդպես էլ սրանք հանուն իրենց որովայնի ու մարմնական հեշտասիրության՝ անարգում եւ ուրանում են հավատն ու իրենց Եկեղեցին: Կորխը հակառակվեց Մովսեսին՝ իր առաջնորդին, անարգեց նրան ու տարբերվող խունկ մատուցեց: Այդպես էլ սրանք, ընդդեմ իրենց նախնի հայրերի ու առաջնորդների, մի նորագյուտ հավատ են քարոզում եւ անարգում են նրանց: Ահա այդ պատճառով է առաքյալն այսպես ասում, եւ վերոբերյալ օրինակների նմանողությամբ՝ նաեւ այդ օրինակներին հետեւողները պիտի ժառանգեն հավիտենական «վայ»-ը:

Իմ սիրելի՛ ազգ Հայոց, այս երանելի ու սուրբ առաքյալ Թադեոսը, մարգարեական հոգով կանխապես գիտենալով, որ ավելի ուշ ժամանակներում մեր ազգի ներսում այսօրինակ խաբեբաներ եւ սուտ վարդապետներ են երեւան գալու, որպես սրտացավ եւ քաջ հովիվ՝ ամենայն ջանասիրությամբ ու հոգածությամբ զգուշացնում է մեզ՝ թվելով այդ չար օրինակները եւ երկարաշունչ խոսքերով մեկ առ մեկ պատմելով նրանց որպիսության մասին: Եւ առավել մեծ հոգածություն ցուցաբերելով է, որ մյուս բոլոր պատվերները մի կողմ թողնելով՝ այս մի պատգամն է ամենից առավել անհրաժեշտ համարում, ուստի իր ամբողջ նամակում հենց այս միտքն է արծարծում եւ ճառում է այդօրինակ մարդկանց խաբեությունների մասին, որպեսզի մենք գիտենանք ու զգուշանանք այդպիսի խաբեբաներից: Ուստի նրանց մասին երկար-բարակ խոսելուց հետո, մեզ վստահեցնելով իր նախահոգածության եւ մարգարեական կանխազ-

գացության հարցում, հավելում է անում՝ ասելով, որ «ոչ թե միայն ես եմ ձեզ զգուշացնում այդ մոլորեցնողների մասին, այլեւ մեր մյուս առաքյալ եղբայրները նույնպես կանխապես հայտնում են ձեզ, որպեսզի դուք գիտենաք ու զգուշանաք»: Առաքյալն ասում է. «Հիշեցե՛ք, իմ սիրելիներ, մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի առաքյալների կողմից նախապես ասված խոսքերը, որոնցով ձեզ ասում էին, թե՝ «Վերջին ժամանակներում պիտի լինեն ծաղրող մարդիկ, որոնք պիտի ընթանան իրենց ամբարշտություններով»: Հիշեցե՛ք նրանց խոսքերն ու զգուշացե՛ք այդպիսիներից. նրանք նշավակելի շնչավոր էակներ են, որոնք, սակայն, չունեն Հոգին» (հմմտ. Հուդ. Ա. 17–19): Ասել է թե՝ մի՛ կարծեք, որ նրանք բանական, հոգեւոր մարդիկ են, քանի որ նրանք նախատինքի են արժանի եւ անամոթ են, լոկ շնչավոր, սակայն անբանական ու անհոգի էակներ, որովհետեւ ո՛չ մեռածների հարությանն են հավատում, ո՛չ դատաստանին եւ ո՛չ էլ գործած արարքների քննությանը:

Սուրբ առաքյալների՝ Պետրոսի, Պողոսի եւ Հովհաննեսի խոսքերն ասվածի վկայությունն են եւ մեզ հորդորում են հիշել մեր սուրբ առաքյալներին: Քանի որ Սուրբ Պետրոսն իր Ընդհանրական նամակում (որը գրում էր սփռված հեթանոսներին, որոնցից անվանապես հիշատակում է նաեւ Կապադովկիայում, այն է՝ Առաջին Հայքում ապրողներին, որոնց կոչում է սուրբ եւ ընտրյալ ազգ՝ թագավորությամբ ու քահանայությամբ, Աստծու սեփական ժողովուրդ, որն արժանացել է Տիրոջ ողորմությանը եւ կանչվել է դեպի Նրա հանդեպ հավատքի սքանչելի լույսը) ասում է, թե՝ «Բայց նախ այս բանն իմացե՛ք, որ վերջին օրերին պիտի գան արհամարհողներ, ծաղրողներ, որոնք պիտի ընթանան ըստ իրենց ցանկությունների» (Բ. Պետր. Գ. 3): Եւ քանի որ սրբազան առաքյալները մեկ Հոգով էին խոսում, ուստի ամենքն էլ միանման են մարգարեանում ու պատմում ապագայում հայտնվող խաբեբաների որպիսության մասին. չէ՞ որ ինչպես Սուրբ Թագեոսն այդպիսիներին «արհամարհողներ» եւ «ծաղրողներ» կոչեց, այդպես էլ այս մի առաքյալն է նույն կերպ կոչում: Քանի որ ասում է՝ «նրանք արհամարհողներ են»՝ Սուրբ Գիրքը, բոլոր Եկեղեցիներին, օրենքներն ու կանոններն անարգողներ եւ ծաղրողներ, քանի որ ամենքին արհամարհում ու մերժում են, որպեսզի որեւէ մեկին չհետեւեն եւ որեւէ մի լծի տակ չմտնեն, ինչպես որ, ահավասիկ, տեսնում ենք: Քանի որ իրենց հարազատ ազգի Եկեղեցին, կանոններն ու արարողությունները չեն պահպանում եւ չեն ընդունում. եկեղեցիներ չեն

գնում ու ծիսակարգեր չեն կատարում եւ պահքն էլ չեն պահում՝ ասելով, թե «մենք ֆրանկ ենք», սակայն ֆրանկների կանոններն էլ չեն ընդունում ու չեն պահպանում՝ նրանց էլ ասելով, թե «մենք հայ ենք» (այդ մասին իր տեղում դեռ կխոսենք): Ուրեմն, ըստ մարգարեի, այս ամբարիշտները ո՛չ այսպիսին են ու ո՛չ այնպիսին, այլ նման են փոշու, որին դիվական հոգմն այս եւ այն կողմ է փչում: Ուրեմն, ժողովրդական առակի համաձայն, նրանք այն կենդանին են, որը, երբ թռչելու կարիք է լինում, ասում է՝ «ես ուղտ եմ», իսկ երբ նրան «հրավիրում» են բեռնակրության, ասում է՝ «ես թռչուն եմ»: Սրանք ո՛չ տաք են եւ ո՛չ սառը, այլ գաղջ, որը ենթակա է փսխման: Դրա պատճառն այն է, որ նրանք մի որեւէ ազգի ու օրենքի հավանություն չեն տալիս եւ չեն հետեւում, ուստի եւ այսպիսիները բոլոր ազգերի կողմից էլ մերժելի ու փսխելի են:

Եւ ապա, այս խաբեության վարդապետներին նմանեցնելով սուտ մարգարեներին, Սուրբ Պետրոսն ասում է, որ «ինչպես հնում ժողովրդի մեջ սուտ մարգարեներ կային, այդպես էլ ձեր մեջ պիտի հայտնվեն սուտ վարդապետներ, որոնք սպրդեցնելով՝ կորստաբեր հերձվածներ պիտի ներմոծեն, եւ բազում հավատուրացներ էլ կգնան նրանց անառակությունների հետեւից» (հմտ. Բ. Պետ. Բ 1–2): Քանի որ, հիրավի, Աստվածաշունչ Գրքում շատ տեղերում է գրված, որ երբ Աստծուց առաքված ճշմարիտ մարգարեները ժողովրդին քարոզում էին, թե՝ «մեղքերից հեռո՛ւ մնացեք, հե՛տ կանգնեք շարից, պահեցե՛ք Աստծու օրենքը եւ այլն, հակառակ դեպքում՝ Աստված կպատժի ձեզ», այդ ժամանակ հայտնվում էին սուտ մարգարեներն ու ասում էին՝ «դրանք սուտ են ասում եւ թուլացնում են պատերազմողների սրտերն ու ձեռքերը, որովհետեւ Աստված ողորմած է եւ չի պատժի ձեզ», ու այդպես շարունակ»: Ահավասիկ, այդ նույն բանը տեսնում ենք նաեւ նոր ժամանակներում, քանի որ ողջ Սուրբ Գիրքը եւ մեր Աստված Քրիստոս ու Նրա սուրբ առաքյալները, այլեւ նախնի սուրբ հայրերը՝ ամենքը միաբերան քարոզում եւ մշտահունչ գոչում են հավատացյալների ունկերին՝ հեռո՛ւ մնալ մեղքերից ու ամեն տեսակի սխալ ընթացքներից, գործած մեղքերի համար անմիջապես զղջալ եւ ապաշխարել ու թողության արժանանալ: Նույնպես եւ Աստծու օրենքների ու պատվիրանների միջոցով է մեզ քարոզվում անհողդողդ մնալ, քաջաբար հարատեւել աղոթքի, ողորմության եւ պահեցողության մեջ, հնազանդ լինել ու հպատակվել Եկեղեցու եւ Եկեղեցու գլուխ կանգնած առաջնորդների կանոններին ու մյուս բոլոր բարի

գործերի մեջ արի եւ հաստատուն մնալ, որպեսզի արժանանանք Աստծու արքայությանը: Ապա թե ոչ՝ պիտի արժանանանք մեղավորների համար պատրաստված դժոխքին, քանի որ՝ «Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան օրը» (Բ. Կորնթ. 2. 2), իսկ հանդերձյալ կյանքում արդար դատաստանի միջոցով յուրաքանչյուր գործի համար հատուցում է լինելուն՝ առանց ողորմության: Այսպէս են քարոզում աստվածային բոլոր գրքերն ու ճշմարիտ վարդապետները:

Իսկ ահա այն խաբեբա, սուտ վարդապետներն ու նեոի աշակերտները, տնից տուն մտնելով, միամիտների ականջներն են լցնում, թե՛ «ձեր այդ վարդապետները խաբում են ձեզ ու զրկում են աշխարհի վայելքներից. Աստված այս աշխարհը մեզ համար է ստեղծել, որպեսզի մենք վայելենք այն: Աստված Իր ստեղծած արարածին դժոխք չի տանի այն բանի համար, որ այդ արարածն օգտվել է աշխարհի վայելքներից, որովհետեւ Աստված ողորմած է ու ներում է այն ամենը, ինչ մենք անում ենք: Եւ կերակուրն էլ չի կարող պղծել մարդուն. ինչ որ դնում են ձեր առաջ, կերէ՛ք: Եւ երիտասարդների, գեղեցիկների, ծերերի, թագավորների ու զինվորների համար պահքը գոյություն չունի. նրանք պարտավոր են ուտել, որպեսզի առողջ մնան: Ինչ որ կամենում ես, արա՛, միայն թե Քրիստոսին երկու բնություններով ընդունիր՝ եւ հնազանդվիր Պապին, որովհետեւ նա հրաման ունի, եւ մեզ եւս իշխանություն է տրված՝ մեղքերին թողություն տալու: Բացի այդ՝ գոյություն ունի քավարան, որում դու կարող ես արդարանալ եւ Արքայություն գնալ»: Ա՛յս է մոլորեցնող վարդապետների քարոզությունը:

Եւ այսպիսի քարոզները մշտապես հավանել են թուլամորթ ու մարմնապաշտ անձերը, որոնց մասին առաքյալն ասում է, թե «բազում հավատուրացներ եւ թերահավատներ կգնան նրանց անառակությունների հետեւից»: Քանի որ այդպիսի խաբեբաները, ինչպես ասում է առաքյալը, պոռնիկներին հատուկ աչքեր ունեն՝ անհողորդ անձանց անդադար գայթակղելով՝ մեղքի մեջ գցելու համար, եւ նրանց՝ այդ անեծքի որդիների սրտերն էլ լեցուն են ագահությամբ: Նրանք, ուղիղ ճանապարհը թողած, մոլորվեցին՝ Բաղաամի ճանապարհով ընթանալով: Այլեւ Պետրոսը, Թադեոսի նմանությամբ, նրանց կոչում է «ցամաքած աղբյուրներ եւ մրրիկից քշված մառախուղներ, որոնց համար են պահված խավարի աղջամուղջները հավիտյան» (հմտ. Բ. Պետ. Բ. 17): Նա՛ թադեոսը, սրանց «անջուր ու հողմակոծ ամպեր» է կոչում, իսկ սա՛ Պետրոսը, «մրրիկից քշված մա-

ռախուղներ», եւ այս երկուսն էլ այդպիսի խաբեբաների վերաբերյալ ասում են, թե նրանց համար հավիտենական հուրն ու վիհն է պատրաստված: Եթե լավ մտածես, կարող ես գլխի ընկնել, թե երկու առաքյալներն ինչպես են տեղին եւ նույնանման նշաններ տալիս ու թե ինչպես են ստուգապես պատմում այդ խաբեբաների որպիսության մասին:

Նրանց նման նաեւ Սուրբ Պողոսն է ասում՝ «Բայց Սուրբ Հոգին հայտնապես ասում է, թե վերջին ժամանակներում ոմանք պիտի հեռանան հավատից եւ իրենց ուշադրությունը պիտի դարձնեն մոլորեցնող ոգիների վրա եւ դեւերի վարդապետությունների վրա՝ կեղծավորներ եւ ստախոսներ, որոնց խղճմտանքը խարանված է (հմմտ. Ա. Տիմ. Դ. 1).... որ ունեն աստվածապաշտության կերպարանք, սակայն ուրացել են նրա գորությունը (Բ. Տիմ. Գ. 5): Տէս, թե այս երանելին նույնպես ինչպիսի նշան է տալիս այդպիսի խաբեբաների մասին՝ ցույց տալով նաեւ նրանց գործերը: «Քանզի նրանց մեջ կան այնպիսիք, — ասում է, — որ մտնում են տնից տուն եւ գերում են մեղքերով ծանրաբեռն կանանց, որոնք տարված են պես-պես ցանկություններով... Նրանք են, — ասում է, — որ միշտ ուսանում են, բայց երբեք չեն կարող հասնել ճշմարիտ գիտությունը.... Նրանք ապականված մտքով մարդիկ են, անպետք՝ հավատի մեջ (հմմտ. Բ. Տիմ. Գ. 6–8).... Նրանք խոստովանում են, որ գիտեն Աստծուն, բայց իրենց գործերով ուրանում են Նրան. պիղծ են, անհնազանդ եւ ամեն բարի գործի համար՝ անպետք» (Տիտ. Ա. 16).... Բայց նրանք ավելի առաջ գնալ երբեք չեն կարող, այլ իրենք մշտապես մոլորված են եւ մոլորեցնում են ուրիշներին: Քանի որ, — ինչպես ասում է, — այդպիսի խաբեբաները չեն հետեւում ողջամիտ վարդապետությանը, այլ իրենց ցանկությունների համաձայն են գործում»: Եւ այսպիսով մեզ ցույց տալով նրանց ինչպիսին լինելը՝ մեկ այլ տեղում էլ մեզ խրատում է զգուշանալ այդպիսիներից՝ ասելով, թե «նույն բաները ձեզ գրելն ինձ համար ձանձրալի չէ, իսկ ձեզ համար մեծ ապահովություն է: Զգուշացե՛ք շներից, զգուշացե՛ք չար մշակներից» (Փլպ. Գ. 1–2): Եւ մեկ ուրիշ տեղում դարձյալ՝ «իմացե՛ք, որ շեղված են այդպիսիք եւ մեղանշում են՝ իրենք իսկ դատապարտելով իրենց» (հմմտ. Տիտ. Գ. 11):

Նրանց հետ համաձայնում է նաեւ Սուրբ Հովհաննեսը՝ ասելով. «Որդյակներ, վերջին ժամանակն է: Եւ ինչպես լսել էք, Նեոլր գալու է. բայց արդեն իսկ եկել են բազում նեոներ. դրանից էլ կարող ենք իմանալ, որ վերջին ժամանակն է: Եւ թեպետ այդ նեոները մեր միջից ելան, բայց մեզնից

չէին, որովհետեւ, եթե մեզնից լինեին, ապա մեր մեջ էլ կմնային, ուրեմն իմացե՛ք, որ նրանք մեզնից չէին, այլ նեոեր էին, եւ նեոից՝ առաքյալներ (հմմտ. Ա. Հովհ. Ա. 18–19): Եւ դուք մի՛ հավատացե՛ք նրանց եւ նրանց տուն մի՛ ընդունե՛ք ու ողջուն մի՛ տվե՛ք նրանց, եւ ով նրանց ասի՝ ողջո՛ւյն, մասնակից կլինի նրանց չար գործերին» (հմմտ. Բ. Հովհ. Ա. 10–11):

Ուրեմն իմացե՛ք, իմ սիրելի՛ ազգ Հայոց, ա՛յն, որ այս երանելի առաքյալներն այսպիսի միաձայն ու նույնամիտ խոսքերով ասում են այդ բոլորը ու շտապում են զգուշացնել մեզ, մի՛ կարծեք, թե այդ ամենը հասարակ մեղավորների եւ անօրենների կամ այլազգիների ու անհավատների մասին են ասում, այլ հատկապես մեր մեջ եղող այն ըմբոստամիտ ուրացողների՝ մասին եւ մանավանդ, անտարակույս, նրանց մասին են ասում, ովքեր խաբեբա լինելով՝ թաքցնում են իրենց ինքնությունը եւ որպես սուտ կարգադրիչներ՝ մոլորեցնում են ամենքին: Խոսքը ոչ միայն մեր միջից ապստամբածների մասին է, այլ տարբեր ազգերի այն «անհայրենիք» ներկայացուցիչների, որոնք մի ծակից մյուս ծակը դեգերելով՝ խաբում են միամիտ մարդկանց ու նրանց պարզ մտքերը պղտորելով՝ կորստյան են մատնում: Հայտնատես նշաններով եւ օրինակներով այդ մասին են վկայում այդ կորստյան մատնվածների հատկույթունները, նրանց բարքերն ու գործերը, որոնցով նրանք առանց որեւէ տեսակի տարակուսանքի հետեւում են նշալ խաբեբաներին ու ինքնութենազուրկ սուտ առաջնորդներին: Այստեղ խոսքը հենց այդպիսիների՝ մասին է ու ոչ թե այլօրինակ մեղավորների եւ անհավատների: Որովհետեւ այդպիսի խաբեբաների եւ ուրացողների մասին ոչ միայն այս շորս սուրբ առաքյալները, այլ նաեւ բոլոր նախնի երանելի հայրապետներն են ասել եւ ասում առաքյալներին համակարծիք խոսքեր՝ իրենք էլ ուսանած լինելով Քրիստոսից, Որն ասում է. «Զգո՛ւյշ եղե՛ք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարների զգեստներով, բայց ներսից հափշտակող գայլեր են» (Մատթ. է. 15):

Նույնպես եւ ես, որպես ավանդ ժառանգելով Քրիստոսից, Նրա սուրբ առաքյալներից ու մանավանդ եւ հատկապես մեր առաջին լուսավորիչ Սուրբ Թադեոս առաքյալից ու մեր նախնի սուրբ հայրերից՝ այժմ ձեզ՝ Սուրբ Թադեոս առաքյալի, մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի եւ էջմիածնի քրիստոսաէջ Աթոռի հարազատ զավակներիդ եմ ավանդում՝ ասելով, թե զգո՛ւյշ եղե՛ք ոչխարամորթ գայլերից, այսինքն՝ հայախոս, հայակերպ, բայց հայուրաց խաբեբաներից, մեզնից հեռացած «ախթարմա» կոչե-

ցյալներից ու խիտամոլներից եւ մանավանդ մեր Եկեղեցու դեմ ապստամբած սուտ կարգադրիչներից ու սուտ վարդապետներից: Եւ մի՛ հավատացե՛ք նրանց կեղծավոր ու սուտակասպաս շողոքորթություններին, քանի որ նրանք ամբողջովին ապականված են, ու թույնով են լեցուն թե՛ իրենք, թե՛ իրենց խոսքերն ու թե՛ իրենց գրությունները: Նրանք բոլորովին հակառակ են մեր երանելիների շավիղներին ու գրություններին, մաքուր հավատին, կարգերին եւ կրոնին ամեն կերպ խոչընդոտողներ ու արատավորողներ են՝ դեմ լինելով մեր սուրբ Եկեղեցուն: Եւ ամեն ինչով վնասաբեր են նաեւ ձեզ համար՝ թե՛ հոգեւոր իմաստով եւ թե՛ մարմնավոր: Քանի որ նրանք թունալի փշեր եւ ապականիչ որոմներ են, որոնք չարի սերմից բուսնել են մեր Սուրբ Լուսավորչի այգում: Նրանք, ինքնին հոգով ու մարմնով ապականված լինելով, անդադար ջանում են նենգավոր խոսքերով եւ գրություններով ու այլօրինակ պես-պես, դիվաշունչ խաբկանքներով մեր ազգի միամիտներին իրենց հետ ապականեցնել հոգով եւ հավատով: Եւ մանավանդ՝ այն անեծքի որդիներն ու հուդայանման, ուրացող սուտ վարդապետները, որոնք ի սկզբանե մեր սուրբ Եկեղեցում ծնվելով ու սնվելով ըստ հոգու եւ ըստ հավատի՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչից ու նրա հաջորդներից եւ էջմիածնի Սուրբ Աթոռից են իրենց աստիճանը՝ պես-պես շնորհներ ու հոգեւոր իշխանություն ստացել, ինչի շնորհիվ էլ ժողովրդի մեջ մտնելով՝ իրենց ունեցած արժանիքների համեմատ շատ ավելի մեծ չափով պատվեցին եւ փառավորվեցին ու «րաբբի, րաբբի» կոչվեցին, չնայած նրան, որ իրենք գռեհիկների ու մուրացողների զավակներ էին: Եւ այս Սուրբ Աթոռի անունով՝ նրա գահակալի հրամանով ու գրով [Քահանայության արժանանալով]՝ նրանք մեր օրհնյալ ազգի հարազատ եւ լուսածին զավակներից վերցրել են մարմնավոր ունեցվածք ու անհրաժեշտ ամեն բան, ինչի շնորհիվ էլ հարստացել եւ ուռճացել են մարմնավոր իշխաններից էլ ավելի: Եւ այսքան բարերարություններն ու այսքան պես-պես հոգեւոր եւ մարմնավոր բարիքներն ստանալուց հետո, երբ գիրանում, «հաստանում» ու ամեն ինչով ուռճանում են՝ ըստ Սուրբ Գրքի, այդ ժամանակ թողնում են սուրբ հավատը եւ դավանությունը, որն ընդունել էին Սուրբ Գրիգորի ու նրա շառավիղների կողմից: Այսպիսիք ուրանում են նրա Աթոռն ու նրա հաջորդներին, որոնցից այդքան շատ հոգեւոր շնորհներ եւ պարգևներ էին ստացել, ինչի շնորհիվ էլ այդչափ մեծ պատվի են արժանացել ու փառավորվել են ժողովրդի կողմից: Նրանք, սակայն, ուրանում եւ հրաժարվում են իրենց

ըստ մարմնի պարարտացնող ու հարստացնող Սուրբ Եկեղեցուց եւ Հայոց ազգից, ու Հոռապի նմանողությամբ՝ վերցնելով պատառը՝ դուրս են ելնում: Իսկ այնուհետեւ նույնիսկ սկսում են ծաղրի ենթարկել մեր Եկեղեցին եւ ազգը՝ մինչեւ իսկ «հերձված» կոչելով մեզ: Այդպիսիներն իրավացիորեն կոչվում են «անեծքի որդիներ» ու «կորստյան զավակներ»: Նրանք արժանի են դատապարտության՝ ըստ Սուրբ Գրքի վճռի, թե՛ «Չար ծննդի ատամները եւ ժանիքները սուսեր են» (Հմմտ. Առակ. Լ. 14)՝ իր ծնողներին ու երախտավորներին խաժատելու եւ վիրավորելու համար.... «նրա լույսը պիտի հանգչի, նրա աչքերի բիբերը պիտի զգան խավարը» (Առակ. Ի. 20): Արդ, մարմնավոր ծնողները, որոնք, ըստ մարմնի, իրենց զավակների լինելիության պատճառն են, իրավունք ունեն եւ կարող են նրանց զրկել իրենց հայրենի ժառանգությունից, անեծքներով արտաքսել տնից ու հայրական անունը խլել այդպիսի զավակներից, որոնք ուրանում, ապստամբում եւ անարգում են իրենց ծնողներին: Նույնպես նաեւ հոգեւոր ծնողները, որոնք իրենց զավակների լինելիության հոգեւոր պատճառներն են, իրավունք ունեն եւ կարող են այդ զավակներին զրկել հոգեւոր ժառանգությունից, այսինքն՝ հոգեւոր շնորհներից ու աստիճաններից, եւ անեծքներով մեր ազգից ու Եկեղեցուց հեռացնել ու արտաքսել այնպիսի ուրացող եւ ապստամբ զավակներին, որոնք այդչափ շնորհներն ու երախտիքներն ընդունելուց հետո ուրանում են իրենց շնորհատու ծնողներին եւ բարերարներին ու մերժում եւ անարգում են նրանց հավատն ու Եկեղեցին: Ահա այսպես՝ նրանք իրավամբ ենթակա են անեծքների՝ մերկացվելու բոլոր տեսակի հոգեւոր կարգերից ու շնորհներից, որովհետեւ այդպիսիք, մեր Եկեղեցուց ծնվելով, նրա շնորհներով սնվելով ու զարգանալով, ուրանում են այդ նույն Եկեղեցուն եւ ապստամբում են նրա դեմ: Ու մանավանդ դառնում են սուտ-առաջնորդներ եւ մոլորության վարդապետներ: Խոսքը հատկապես նրանց մասին է, ովքեր առանձնահատուկ շնորհներ ու երախտիքներ են ընդունել իրենց բազմերախտ ծնողից՝ էջմիածնի Սուրբ Աթոռից:

Քանի որ Աստված նույնպես, որ ըստ ամենայնի ողորմած եւ ներողամիտ է, թեպետ բարկանում է բոլոր մեղքերի պատճառով ու բոլոր մեղավորների վրա՝ վշտանալով եւ նեղսրտելով, սակայն առավելաբար բարկանում է ուրացողների ու երախտամոռների վրա: Դա հայտնապես ծանուցվում է Նսայի մարգարեի միջոցով, քանի որ Իսրայելի որդիները, որոնք այդքան հատուկ հրաշքներ էին տեսել ու այդքան բարերարու-

թյունների էին արժանացել, բոլոր ազգերի միջից հենց իրենք, վայելելով Աստծու այդչափ սերն ու երախտիքները, թեպետ այդքանից հետո բազմաթիվ ձեւերով մեղանշում էին Աստծու օրենքների դեմ, սակայն Տերը մշտապես ներում էր նրանց, բայց երբ հրեաներն իսպառ լքեցին եւ ուրացան Նրան ու սկսեցին կուռքերին պաշտել, այդժամ Աստված, հայտնելով իր առավելագույն վշտանալն ու բարկանալը նրանց այդ վարմունքի պատճառով, իր գանգատն է ուղղում ո՛չ թե ստեղծվածներից որեւէ մեկին, այլ համայն երկնքին եւ երկրին՝ հոգոց հանելով ու գոչելով. «Ասիր, երկինք, եւ ականջ դիր, երկիր.... Զավակներ ունեցա եւ մեծացրի, իսկ նրանք ինձ անարգեցին» (Եսայի Ա. 2): Եւ այնուհետեւ այդ ուրացողներին այգու հետ համեմատելով՝ վիրավորված սրտով պատմում է իր գործած բարերարությունների եւ այգու ապերախտության մասին, իսկ հետո իրավացիորեն արժանի պատիժ է սահմանում: «Արգավանդ մի տեղում,— ասում է,— այգի տնկեցի, ցանկապատեցի, որպեսզի բոլոր կողմերից ազատ մնա, բարձր ձողեր կանգնեցրի, որպեսզի մարդկանց աչքին փառավոր երեւա, եւ իմ ամպերին պատվեր տվեցի, որ միշտ անձրեւ տեղան նրա վրա, ու մնացյալ այն ամենը, ինչ որ պետք էր, արեցի: Այնուհետեւ սպասեցի, որ խաղող բերի ինձ, բայց ինձ փուշ բերեց: Արդ, քանի որ այս այգին այսքան՝ ապերախտ գտնվեց իմ հանդեպ, ուստի ես արդարությամբ պիտի դատեմ նրան: Նախ,— ասում է,— կքանդեմ նրա ցանկապատը, որպեսզի անցորդների ոտքի կոխան լինի այն, ապա կպատվիրեմ իմ ամպերին, որ այլեւս չանձրեւեն այնտեղ» (տե՛ս Եսայի Ե. 1—6): Ահավասիկ, հայտնապես երեւաց, որ ուրացողներն ու երախտատյացները, իրավամբ, պատժի են արժանի՝ ըստ աստվածային վճռի: Արդ, սուլնանման իրավացի գանգատ ունի նաեւ մեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը՝ ուղղված այն որոշ ուրացող զավակների ու փշաբեր այգիների դեմ, որոնց նա հավատով ծնեց եւ Սուրբ Հոգու շնորհներով տնկեց՝ պարարտացնելով իր Եկեղեցում. վսեմացրեց հոգեւոր ու մարմնավոր փառքով եւ պես-պես շնորհներով ու իր հաջորդների ձեռքով եկեղեցական աստիճանների արժանացրեց նրանց համայն ժողովրդի համար՝ հաճելի ու փառավոր դարձնելով ամենքի աչքին: Եւ ցանկապատեց, որպեսզի ամբողջովին հեռու լինեն աշխարհական զբաղումներից, ամեն տեսակի աշխարհիկ հոգսերից ու պակասություններից, իսկ ամպերին էլ, այսինքն՝ իր ժողովրդին, «կանոնակարգեց» եւ պատվեր տվեց, որ մշտապես անտրտունջ «անձրեւեն» նրանց վրա, այսինքն՝ հավուր պատշաճի

հոգան նրանց բոլոր տեսակի մարմնավոր պակասություններն ու կարիքները, որպեսզի նրանք որեւէ մի կարոտություն չունենան: Ու այդքանից հետո միայն մնում էր, որ նրանք քաղցր խաղող պտղաբերեին, սակայն նրանք դառն փուլ «ընծայաբերեցին»: Այսինքն՝ [մեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը] սպասեց, որ նրանք հարատեւեն հարազատության սիրո ու իր սահմանած կանոնների եւ իր հաջորդների հրամանների նկատմամբ հնազանդության մեջ՝ որպես մխիթարություն իր Եկեղեցուն ու ժողովրդին, սակայն նրանք դրա փոխարեն փուլ «ընծայեցին» [Հայոց առաջին հայրապետին]: Քանի որ արհամարհեցին եւ ուրացան նրա բերած հավատն ու սահմանած կանոնները, ապստամբեցին եւ անարգեցին նրա Աթոռը, Եկեղեցին, նրա հաջորդներին ու իրենց առաջնորդներին, եւ դեռ ավելին՝ նրա ժողովրդին վիրավորողներ, մոլորեցնողներ ու գայթակղեցնողներ եղան:

Այդ պատճառով էլ նա, այսինքն՝ մեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը աներեւութապես եւ երեւելիորեն իր հաջորդների միջոցով, ահավասիկ, իրավացի պատիժ է սահմանում այդօրինակ ուրացողների նկատմամբ: Ասել է թե՛ նախ քանդում է նրանց շուրջ կանգնեցրած ցանկապատը, այսինքն՝ նրանցից վերցնում է քահանայության եւ եպիսկոպոսության բոլոր կարգերն ու աստիճանները, որպեսզի դրանք այլեւս պահապան չլինեն նրանց, այլ որպեսզի այդ ուրացողները բոլոր տեսողների կողմից ոտքի կոխան լինեն եւ «խրատ դառնան» ամենքի համար: Իսկ այնուհետեւ էլ [մեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը] ամպերին, այսինքն՝ ձեզ բոլորիդ, որ նրա հարազատ որդիներն ու հրամանակատար եւ յուրադավան ժողովուրդն եք, պատվիրում է՝ այլեւս անձրեւ չտեղաք նրանց վրա: Այսինքն՝ այսուհետեւ նրանց հանդեպ սեր, բարեկամություն ու ողորմություն չցուցաբերեք եւ այդպիսի հայրանարգ ու ծնողուրաց զավակների հետ հաղորդակից չլինեք ո՛չ խոսքով, ո՛չ գործով եւ ո՛չ էլ նյութական օժանդակությամբ՝ բացի այն անխուսափելի շփումից, որը կարող է պատահել աշխարհական խոսակցությունների տեսքով՝ վաճառականներին հատուկ տուրեւառության նմանողությամբ: Դա էլ թույլ եմ տալիս միայն խիստ անհրաժեշտության դեպքում:

Ուրեմն եթե մեկը պատկանում է մեր ազգին, որ լուսավորչակրոն եւ միաբնադավան է, ու եթե հնազանդ է մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչին եւ նրա հաջորդներին ու բոլոր հայերի հոգեւոր ծնող ու առաջնորդ Սուրբ էջմիածնի հարազատ Աթոռի հրամանակատարը եւ հնազանդ որ-

դին է, այդպիսի մեկը պարտավոր է իր մտքում անխախտ պահել մեր այս պատգամն ու այն կատարել ամենայն հնազանդությամբ:

Քանի որ նա, ով իշխանություն ունի տալու, կարող է նաեւ հետ վերցնել: Ահավասիկ մենք՝ տվողներս, մեր բոլոր տվածները, որ շնորհել ենք թե՛ մենք ինքներս, թե՛ մեր այն նախնիների ձայնին անսալով, որոնց հաջորդներն ենք մենք, եւ թե՛ մեր եպիսկոպոսների միջոցով, մենք այդպիսի ուրացողներից հետ վերցրինք մեր տված այդ բոլոր կարգերը՝ առաջին աստիճանից մինչեւ եպիսկոպոսություն, ու նրանց մերկացնելով եկեղեցական բոլոր կարգերից՝ նրանց վերստին դարձրինք գոհճիկ աշխարհականներ, ինչպիսին որ նախկինում էին: Քանի որ նրանք ուրացան Եկեղեցուն եւ իրենց կարգատուներին, ուստի իրավունք չունեն մեր կարգուկանոնի համաձայն առաջնորդվելու եւ «կարգավար» կոչվելու, այլ ըստ իրենց նոր հավատի էլ թող որ նոր կարգ ընդունեն ու ապա միայն «կարգավար» կոչվեն: Իմ սիրելի՛ ազգ, դու նույնպես պարտավոր ես սա իմանալ:

Ուրեմն նա, ով զանց առնելով մեր գրածը, այսուհետեւ հաղորդակից լինի մեր դեմ ապստամբած այդպիսի ուրացողների ու մանավանդ սուտ եւ կարգուրաց չեպիսկոպոսների հետ, իսկ մոլորության վարդապետներին էլ սիրով ու բարեկամությամբ, որպես առաջնորդ համարելով ընդունի, օթեւան տա եւ հյուրընկալի կամ որեւէ կերպ, ինչպիսին էլ որ այն լինի, օգնություն ցույց տա նրանց, այդպիսի մեկը հայտնապես հակառակ ու թշնամի է մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչին եւ նրա հաջորդներին ու նրա Աթոռին եւ մանավանդ նրա հավատին ու կանոններին: Այդպիսի մեկը, ըստ Սուրբ Հովհաննեսի, արժանի գործակիցն է վերոնշյալ ուրացողների շար գործերին՝ նրանց հետ անեծքի ենթակա դառնալով:

Այսքանը բավական է՝ սահմանելու համար Աստծու եւ աստվածայինի հանդեպ սուրբ հավատը:

ՈՐՊԵՍ «ՎՃԱՐՈՒՄ» ԳՐՔԻՍ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

ԵՒ ՈՐՊԵՍ ՍԿԻՋԲ՝ ԵՐԿՐՈՐԴԻ

«Պարտավնար» կոչվող բաղձալի այս գրիս

Սույն հատորը առաջին

Ուպես «վնար» հատուցվեց,

եւ սահմանելով հավատն օգտակար՝

Բացահայտեց մեզ այն բավականաբար:
 Եւ ստույգ նշտությամբ այն զատորոշեց
 Չար ապստամբների աղանդը վատթար:
 Ուզեմ այս գրքի խրատով կրթվեն
 Ճշմարտությունն իրենց սրտում կկրեն,
 Եւ թե հմտանան ու ճարտար լինեն,
 Հերձվածների խոսքերը բոլոր
 Թյուր ու անհարմար պիտի համարեն:
 Եւ թե ձեր մտքին խոսքերն այս իշխեն՝
 Որպես կառավար,
 Պիտի ընթանաք սույն շավիղով դուք
 Միշտ անմոլար:

Այժմ սկսվում է հատորը երկրորդ,
 Որը նշմարիտ խոսքեր է ուղղում ձեր խղճմտանքին
 Ու պատգամում է, որ սուրբ հավատի՛ն լինեք դուք լծորդ՝
 Եւ ոչ թե ուրիշ պես-պես բաների:
 Որպեսզի շինի թե՛ լինենք շարին բաժնեկից,
 Այլ այս խոսքերի խրատին հլու՝
 Հաղորդ մենք լինենք մշտապես բարուն:
 Իսկ խիղճը որպես հանապազ խայթող
 Հատուկ է բոլոր մարդկանց, եւ նրանք,
 Ուզեմ խղճով են կամեն առաջնորդում,
 Չեն անում թյուր ու մոլար ոչ մի գործ,
 Իսկ նա, ով իր խղճին դեմ է դուրս ելնում,
 Ամեն մոլության տուն է նա դառնում:

Գրաբարից փոխադրությունը՝

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

ԵՒ ԳԵՒՈՐԳ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



ՂԱՍԱՅՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՊԱՐԶ ՂԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ¹

Սկիզբը՝ թիվ է. Ը.

ԺԴ. Առարկում են՝ հիմնվելով Թովմա Ափինացու խոսքի վրա, թե «որոշ էակներ զանազանվում են միմյանցից կա՛մ նյութով, կա՛մ հակադրության միջոցով»², իսկ երեք Որդին եւ Սուրբ Հոգին զանազանվում են միմյանցից, ապա՝ ոչ նյութով, ֆանի որ աննյութ են [նրանք], այլ տարբերվում են հակադրության միջոցով: Հակադրությունը, ըստ Արիստոտելի, լինում է չորս տեսակի՝ նյութական, հակասական, ունական եւ առնչական³, իսկ նյութականը չի վերաբերում Աստծուն, ֆանի որ աննյութ է նա: Հակասականը եւս չի պատշանում նրան, որովհետեւ միշտ ճշմարիտ է: Ունականը եւ պակասականը համապատասխան չեն, ֆանի որ որեւէ բան ո՛չ պակասում է, ո՛չ ավելանում եւ ո՛չ էլ նորովի է ձեռք բերվում Աստծու գոյության մեջ, այլ ինչ-որ կա, ինքն է, որովհետեւ, ըստ Պրոկլի⁴, երեք ինչ-որ բան ավելանում է, ուրեմն պակաս էր⁵, իսկ Աստծու պարզ էության վրա չի կարող ինչ-որ բան ավելանալ: Ուրեմն տարբերվում են միայն առնչությամբ կամ հատկությամբ:

Պատասխանում եմ՝ ասելով, որ Աքվինացին, այս ասելով, սաստիկ սխալվում է, որովհետեւ, ըստ նրա, բոլոր էակները տարբերվում են կա՛մ

¹ ՀԱԿՈՒՔ ՊԱՏՐԻԱՐԳ ՆԱԼՅԱՆ, Գիրք կոչեցեալ վէմ հաւատոյ, Կ. Պոլիս, 1733, էջ 15–57 (այսուհետ՝ Վէմ Հաւատոյ):

² ՄՄ ձեռ. 68, 107, 118, 119, 120, 462, 559, 560, 561, 1782, 1960, 1963, 2335, 2515, 2998, 3018, 3470, 3475, 3640, 3641, 3649, 3920, 3936, 3938, 3964, 5009, 6589, 6610, 6596, 6696, 6760, 7067, 7262, 8444, 9121, 10051, 10067, 10639 եւ այլն:

³ Հմմտ. «...Մատենագրութիւնք», 1833, հատկապէս՝ «Ստորոգութիւնք Արիստոտելի», «Յաղագս Հակակայց», էջ 396–403:

⁴ Նկատի ունի հույն փիլիսոփա եւ մաթեմատիկոս, նեոպլատոնականության ներկայացուցիչ, անտիկ փիլիսոփայության վերջին նշանավոր իմաստասեր Պրոկլ Դիագորասին (412–485 թթ.):

⁵ *Слѣа Прокл, Платоновская Теология, изд. подготовил Л. Лукомский, Санкт-Петербург, 2001, кн. II, гл. 2, էջ 114, եւ՝ անդ, кн. II, гл. 7, էջ 135–136, ինչպես նաեւ՝ անդ, кн. III, гл. 20, էջ 205: Վերոնշյալ իմաստասերի սույն եւ այլ աշխատությունների հայերեն թարգմանությունները տես ՄՄ ձեռ. 96, 110, 119, 126, 873, 874, 932, 1012, 1157, 1500, 1687, 1702–1710, 1765, 1822–1833, 1918, 1934, 2050, 2051, 2190, 2297, 2303–2306, 2333, 2347, 2350, 2552, 2553, 2573, 3016, 3028, 3186, 3214, 3277, 3392, 4015, 4524 եւ այլն, ինչպես նաեւ՝ «Գրգուկ որ կոչի Պատճառաց...», հրատ.՝ Գ. ՍԵՐԱՍՏԱՅԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ, Կ. Պոլիս, 1750:*

նյութով, կամ հակադրությամբ, սակայն հրեշտակներն էականեր են, բայց չեն զանազանվում նյութով, որովհետեւ աննյութական են, ոչ էլ՝ առնչությամբ կամ հատկությամբ: Նրանք կարող են տարբերվել միմյանցից փառքով, պայծառությամբ, սպասավորությամբ եւ շնորհներով: Նաեւ՝ Հայր Աստծու միջոցով տարբերվում են հայրությունն ու բխողությունը, սակայն ունեն առնչական հակադրություն: Նույն ձեւով մարդկային հոգիներն են զանազանվում միմյանցից, այլ՝ ոչ նյութով եւ ոչ էլ հակադրությամբ: Այսկերպ Որդին ու Սուրբ Հոգին են տարբերակվում միմյանցից, սակայն ոչ թե միմյանց դեմ եղած, այլ միմյանց հանդեպ ունեցած [առնչական] հակադրությամբ, որովհետեւ մեկը զանազանվում է ծնելիությամբ, իսկ մյուսը՝ բխողությամբ, քանզի նրանց Անսելմոս⁶ վարդապետն ասում է, թե «Որդին եւ Սուրբ Հոգին, հիրավի, գոյություն են Հորից, սակայն զանազանվում են իրենց կերպով՝ մեկը՝ ծնվելով, մյուսը՝ բխելով»⁷, որովհետեւ դրանով են տարբերվում միմյանցից, իսկ եթե այլ բանով չեն տարբերվում Որդին ու Հոգին, ապա սրանով զանազանվում են բավարար չափով, որովհետեւ Սկոթոս նրբագույն վարդապետը իր Գ. գրքի գ. խնդրում ասում է, թե «Իրականում, Սուրբ Հոգին ոչ սակավ կերպով է զանազանվում նաեւ Որդուց, եթե չի սկզբնավորվում Նրանից»⁸, եւ Անսելմոսից վկայություն բերելով՝ ավելացնում է. «...եթե ինչ-ինչ պատճառներով Որդին եւ Սուրբ Հոգին լինեին բազմակի, ապա սրանով կլիներին տարբեր. մեկը կգոյանար ծնվելով, մյուսը՝ բխելով»⁹:

⁶ Հեղինակը նկատի ունի միջնադարյան կաթոլիկ աստվածաբան, սքոլաստիկայի հիմնադիրներից, փիլիսոփա Անսելմ Քենթրերցուն (1033–1109 թթ.): Կաթոլիկ եկեղեցին սույն աստվածաբանին սրբադասել է 1494 թ. (նրա կյանքի ու գրական ժառանգության առնչությամբ առավել մանրամասն տե՛ս F. S. SCHMITT, S. Anselmi Cantuariensis Archiepiscopi Opera Omnia, Stuttgart-Bad Cannstatt: Friedrich Fromann Verlag, 1968, եւ՝ S. NISKANEN, The Letter Collections of Anselm of Canterbury, Brepols: Turnhout, 2011, *ինչպես նաեւ*՝ “Anselm of Canterbury: The Major Works”, ed. by B. Davies & G. R. Evans, Oxford: Oxford University Press, 1998, ու T. Williams, Anselm: Basic Writings, Indianapolis: Hackett Publishing Company, 2007: *Հմմտ.* <https://plato.stanford.edu/Archives/Sum2019/entries/anselm/>, *ինչպես նաեւ*՝ “The Cambridge Companion to Anselm”, ed. by B. Davies & B. Leftow, Cambridge: Cambridge University Press, 2004 եւ այլն):

⁷ Տե՛ս ANSELM OF CANTERBURY, De processione Spiritus Sancti (The Procession of the Holy Spirit), trans. by J. Hopkins & H. Richardson, “Complete Philosophical and Theological Treatises of Anselm of Canterbury”, Minneapolis, MN: Banning, 2000, էջ 467–468, էջ 469 եւ էջ 474 (*այսուհետ՝ ANSELM OF CANTERBURY, De processione Spiritus Sancti, 2000*):

⁸ *Հմմտ.* ՄՄ ձեռ. 70, 121, 122, 123, 124, 125, 171, 172, 1238, 1960, 4027, 6478:

⁹ *Հմմտ.* ANSELM OF CANTERBURY, De processione Spiritus Sancti, 2000, էջ 474, *ինչպես նաեւ* ՄՄ ձեռ. 70, 121, 122, 123, 124, 125, 171, 172, 1238, 1960, 4027, 6478:

ԺԵ. Առաքելում են՝ վկայակոչելով, թե Սուրբ Հոգին անվանվում է սեր, իսկ եթե միայն բխում է Հորից, ուրեմն սերը լինում է միակողմանի, այդ իսկ պատճառով բխում է նաև Որդուց, որպեսզի կապ լինի Հոր եւ Որդու միջև:

Պատասխանում եմ՝ Սուրբ Գրքում, բնավ, միայն Սուրբ Հոգին չէ կոչվում սեր, այլ բազում հատվածներում՝ [Երրորդություն] երեք անձերը՝ ըստ այնմ, թե՝ «Աստված սեր է. եւ ով սիրո մեջ է ապրում, բնակվում է Աստծու մեջ, եւ Աստված բնակվում է նրա մեջ» (Ա. Հովհ. Դ. 16): Ուրեմն, եթե բովանդակ Երրորդությունը, սեր լինելով, մեկ այլ սեր է բխեցնում, ապա Երրորդությունը վերածվում է չորրորդության, կամ, բոլորի անունը վերաբերելով մեկ անձին, Երրորդությունը, ըստ Սաբելի չարափառության, դառնում է մեկ անձ:

Իսկ թե ասում են, որ այդ պատճառով Որդին պետք է բխեցնի սեր, որպեսզի համագոյ լինի Հորը, ապա Հոգին եւս պետք է Որդի ծնի, որպեսզի համագոյ լինի Հորը, եւ, Որդուն համագոյ լինելու պատճառով, պետք է բխեցներ Ինքն Իրեն, կամ՝ մեկ այլ հոգի, իսկ այդպես Երրորդությունը կլիներ չորրորդություն: Եթե բխեր Ինքն Իրենից, ապա բխվողը մեկ այլ անձ կլիներ կամ չէր լինի: Եւ եթե լիներ տարբեր մի անձ, ապա կտրոհեր Ինքն Իրեն, իսկ եթե այլ անձ չլիներ, ուրեմն չէր զանազանվի, որովհետեւ մեկը չի կարող զանազանվել ինքն իրենով, եթե ոչ՝ մյուսի համեմատությամբ: Ինչպես Դավիթ Փիլիսոփան է ասում իր «Յաղագս մեկնութեան Պերիարմենիաս» երկում՝ առնչակցությունները չեն կարող տարբերվել ինքնըստինքյան, այլ այս կամ այն բանի հարաբերությամբ¹⁰: Իսկ եթե Սուրբ Հոգին բխեցներ Ինքն Իրեն, հարկավոր էր, որպեսզի Որդին եւս ծներ Ինքն Իրեն, որն առասպել է:

Իսկ ընդդեմ նրանց, ովքեր ասում են, թե Սուրբ Հոգին շաղկապ է Հոր եւ Որդու միջև, կասեմ, որ շաղկապը լինում է երկու տեսակի՝ միջանկյալ ու միավորական: Արդ՝ Սուրբ Հոգին միջանկյալ շաղկապ չէ, քանի որ Որդին է միջանկյալ շաղկապ Հոր եւ Հոգու միջև: Եւ սա չենք համարում

¹⁰ Իրականում վերոնշյալ միտքն արտահայտել է Արիստոտելը (հմմտ. տե՛ս «...Մատենագրութիւնք», 1833, հատկապես՝ «Ստորոգութիւնք Արիստոտելի», «Յաղագս Առնչի», էջ 378, ամբողջական հատվածը տե՛ս էջ 378–385), իսկ Դավիթ Անհաղթն այն մեկնել է ոչ թե իր «Յաղագս մեկնութեան Պերիարմենիաս» երկում, այլ՝ Արիստոտելի ստորոգությունների մեկնությունը նվիրված աշխատության մեջ (անդ, «Ստորոգութիւնք Արիստոտելի թարգմանեալ եւ մեկնեալ ի Դավթէ», պրակք ԺԲ., էջ 421–422, ինչպես նաեւ՝ անդ, «Յաղագս Հակա-կայց», պրակ Բ., էջ 427–428 եւ պրակ Ե., էջ 434):

իրերեւ ելողական կապ, որովհետեւ Որդին չի ելնում Սուրբ Հոգուց, այլ ասում ենք՝ ըստ անունների հերթականության:

Նաեւ չենք անվանում միավորական շաղկապ, որովհետեւ եթե հոգին ու մարմինը միավորվում են անձի միությանմբ, ապա Երրորդությունը միավորվում է ոչ թե անձի, այլ՝ բնության միությանմբ:

ԺԶ. Առարկում են՝ ասելով, թե Որդին պատկերն է Հոր, իսկ կատարելությունը ծնողին նմանությունն է, ուրեմն՝ Հորը նմանվելու պատճառով բխեցնում է Սուրբ Հոգուն:

Պատասխանում եմ՝ նման ձեւով աննմանություն են ներմուծում Հոր եւ Հոգու միջեւ, որովհետեւ Սուրբ Հոգին չի ծնում Որդուն: Սակայն, Հոր պատկեր լինելու պատճառով, [Որդուց] պետք է ծնվեր մեկ այլ որդի, քան թե բխեր հոգի, քանի որ մարդկային ծնունդների ժամանակ հայրը հոգի չի տալիս ծնված երեխային, բայց ծնված որդին անվանվում է հոր պատկեր: Նաեւ՝ Հոր պատկեր լինելն անհրաժեշտ նախապայման չէ, թե Որդին պետք է ժառանգի Հորը պատկանող մեկ ուրիշ հատկություն, այլ պետք է ունենա Իր հատկությունը, որովհետեւ պատկեր լինելու համար բավական է ծնունդ լինել նույն բնությունից:

Ալբերտոս Մեծն ասում է, թե՝ «ամեն տեսակի ելողության մեջ ծնունդն է կատարելագույնը, որովհետեւ ծնվածն ամեն բանով նման է համարվում իր ծնողին, որը չի ընդունում ուրիշ տեսակի ելողություն»¹¹: Եթե ծնվածը պետք է ամեն կերպով նմանվի ծնողին, ապա Որդին եւս պետք է լինի անծին ու անսկիզբ, որը, սակայն, մեծագույն սխալ է: Նաեւ՝ եթե բխողական զորությունը Հայր Աստծուն ամբողջովին նմանվելը Որդու կատարելությունից է, ապա պետք է, որ Հայրը նախապես ունենար այդ բխողությունը եւ հետո միայն՝ ծներ Որդուն, որին եւ կհաղորդեր բխողական զորություն, քանզի եթե մեկը դեռեւս չունի ինչ-որ հատկություն, ապա դրա հանդեպ չի կարող լինել նմանություն, որովհետեւ նրա ունեցած հատկությունից է ստեղծվում նմանություն, չնայած որ ծննդյան եւ բխման միջեւ չկա ժամանակ. ինչպես արեգակն առանց լույսի եւ ջերմության չի համարվում արեգակ, թեպետ լույսն ու ջերմությունը արեգակից են, սակայն որքան արեգակը արեգակ է, այնքան ժամանակ էլ դրանք նրա հետ են, եւ դրանք նրանից են, եւ ոչ նա՝ դրանցից:

¹¹ «Համառոտութիւն Աստուածաբանութեան...», 1715, գիրք Ա., գլ. Ե., էջ 15–16:

Նաեւ ասում են, թե Հայրը նման է մտքին, Որդին՝ խոսքին, իսկ Սուրբ Հոգին՝ կամքին, սակայն խոսքը, ըստ արտաբերման ձեւի, առաջ է գալիս կամքից, այլ ոչ թե կամքը՝ խոսքից. եւ, սրան համապատասխան, պիտի ասեն, թե Որդին ելնում է Հոգուց, որը, սակայն, մեծագույն սխալ է:

ԺԷ. Պնդում են, որ եթե մի հատկություն հակադիր չէ որեւէ անձի, ուրեմն անհնարին չէ, իսկ [Սուրբ Հոգու] բխումը Որդուց հակադիր չէ Որդու անձին, հետեւաբար բխում է [Նրանից]:

Պատասխանում եմ՝ ինչ-որ մեկին անհակադիր ամեն բան չէ, որ պետք է պատկանի նրան, որովհետեւ երկու որդի ունենալը ո՛չ հակադիր է Հորը, ո՛չ էլ անհնարին է Նրա համար, ուրեմն գոյություն ունեն Նրա մեջ: Նաեւ՝ եթե Սուրբ Հոգին Աստված է, ապա ոչնչով անկարող չէ Նրանից, հետեւաբար կարող է որդի ծնել, հետեւաբար ծնում է, կամ՝ [Նրանից] կարող է այլ հոգի բխել, ուրեմն բխում է: Սակայն նմանատիպ խոսակցություններն առավել շատ վտանգավոր են ունկնդիրների, քան թե խոսողների համար, որովհետեւ վնասակար է Սուրբ Հոգու մասին Աստվածաշունչ գրերի վկայությամբ չհաստատված ամեն բան ընդունել հավատի փոխարեն, քանզի Պողոս առաքյալից եւս հիմար անօգուտ խնդիրներից հեռու մնալու պատվեր ունենք. «Բայց հիմար եւ անմիտ վեճերից խուսափիր. իմացիր, որ դրանցից կռիվներ են ծնվում» (Բ. Տիմ. Բ. 23), իսկ եթե ինչ-որ մեկն արհամարհում է այսպիսի խնդիրները, ուրեմն ոչինչ չգիտի նա. «Իսկ եթե մեկն այլ բան ուսուցանի եւ չանսա մեր Տեր Հիսուս Քրիստոսի ողջամիտ խոսքերին եւ այն վարդապետությանը, որ աստվածաշնորհության համապատասխան է, այդպիսին գոռոզամիտ է եւ ոչինչ չգիտե, այլ բռնված է հակառակության խոսքեր եւ խնդիրներ առաջացնելու հիվանդությամբ» (Ա. Տիմ. 2. 3): Եւ թող Աստված սուրբ առաքյալների աղոթքով ի Քրիստոս մեր եղբայրներին շնորհի զգոնության հոգի, որպեսզի, այսպիսի խնդիրներից հրաժարվելով, հետեւեն մեր Տիրոջ անսխալ վարդապետությանը, ըստ որի՝ ճշմարտության Հոգին, որ ելնում է Հորից (Հովհ. ԺԵ. 26), թող նրանց բերանից չվերացնի Քրիստոսի ճշմարիտ խոսքերը. ամեն:

ԺԸ. Հակաճանաչում են՝ ասելով, որ Սուրբ Հոգին բխում է Հորից ու Որդուց՝ ոչ որպես երկու, այլ՝ որպես մեկ սկզբից. այսպես օրինակ՝ եթե վառենք իրար դեմ դրված երկու մոմ, ապա արդյունքում կտեսնենք մեկ կրակ: Եւ ինչպես Որ-

դիմ, ունենալով երկու ծնունդ, չի կոչվում երկածին, այլ՝ միածին, այնպես եւ Սուրբ Հոգին, բխելով երկուսից, չի կոչվում երկաբուխ:

Պատասխանում եմ՝ եթե այն երկու մոմերը լինեն մեկ ամբողջություն, ապա, որպես արդյունք, կցուցանեն մեկ կրակ, իսկ եթե մեկն առաջին է, իսկ մյուսը՝ նրանից սկսյալ, ուրեմն Սուրբ Հոգին եւս պիտի լինի անսկիզբ ու սկսյալ, որը սխալ է, որովհետեւ ավելի հարմար է, որ մի կանթեղը վառի երկու, քան՝ երկուսը մեկ, քանզի կարծում են, թե մեկը բավարար չէ երկուսը վառելու համար: Սակայն սա սխալ է, որովհետեւ Նա, Ով կարողանում է գոյացնել Որդուն, կարող է գոյացնել նաեւ Սուրբ Հոգուն, այդ իսկ պատճառով Որդին ամբողջապես ծնվում է որպես Խոսք, իսկ Սուրբ Հոգին բխում է՝ որպես սեր եւ կամք, որով սիրում է Որդուն: Սակայն Հոգուն կամքի տեղ դնելը սխալ է, քանի որ Հայրը Որդուն հայտնում է որպես ակամա եւ բնութենական ծնունդ, իսկ երբ ասում են, թե կամքով է ծնել, ապա ծնունդը դառնում է կամային, այլ ոչ բնութենական:

Ապացուցում են, որ ծնվում է նաեւ կամքից, իսկ քանի որ Հոգին կոչվում է կամք, ապա Որդին կանվանվի կամքից ծնված, որը սխալ է: Սակայն նմանատիպ ձեւակերպումը նպատակահարմար է, քանի որ Հայր Աստված ունի երկու կարողություն՝ ծնողական եւ բխողական. ծնողական կարողությունից Խոսքի ձեւով սկզբնավորվեց Որդին, իսկ բխողական կարողությունից կամքի ու սիրո ձեւով բխեց Սուրբ Հոգին: Նրանց դեմ, ովքեր ասում են, թե ինչպես Որդին, ունենալով երկու ծնունդ, չի կոչվում երկածին, այնպես եւ Հոգին, ունենալով երկու բխում, չի անվանվում երկաբուխ, ասելի է, որ նույն Բխողը բխում է կամ բնությունից, կամ էլ՝ անձից, սակայն չի բխում [միայն] բնությունից, որովհետեւ բնությունը՝ առանց անձի, կլիներ անբաժանելի, մանավանդ որ աստվածային բնությունը, համաձայն աստվածաբանների կանոնի, ոչ ծնում է, ոչ էլ՝ ծնվում: Եթե Հոգին բխում է անձից, ապա, լինելով երկու անձից, Ինքն էլ պետք է լինի երկու անձ, որովհետեւ աստվածային կատարելությունից չի ծնվում անիրական ինչ-որ բան, այլ՝ անձ: Բացի այդ՝ Սուրբ Երրորդության մեջ, բացառությամբ Հոր, ոչ ոք չունի երկու հատկություն, իսկ եթե Սուրբ Հոգին լիներ երկուսից, կունենար երկու հատկություն, եւ, ըստ այնմ, լինելով երկուսից, ամբողջությամբ կկոչվեր առավել ու նվազ. առավել՝ երկու հատկություն ունենալու, եւ նվազ՝ մեկից ոչ բավականաչափ բխում հանդիսանալու պատճառով. նաեւ՝ ներքուստ ստորադասված կլիներ երկու իշխանության եւ, ըստ Մակեդոնի չարափառության, կլիներ ծառա ու պաշտոնատար:

Եթե մեկն ասի, թե երկուսից գոյանալու պատճառով կոչվում է ծառա, հետեւաբար մեկից գոյանալով՝ կկոչվի մեկի ծառա, ապա կասեմ հետեւյալը, որ ինչպես Որդին, ըստ բնության կերպի, ծնվելով Հորից, չի կոչվում ծառա, քանի որ որդեգրության շնորհով չէ որդի, այնպես եւ Սուրբ Հոգին, ըստ կամքի կերպի, բխելով Հորից, չի համարվում ծառա, որովհետեւ մարդու կամքը նրա ծառան չէ, ոչ էլ մարդու սերն է նրա պաշտոնատարը: Այսպես՝ Սուրբ Հոգին, բխելով Հորից, չի համարվում ծառա, որովհետեւ ազատ Հայրը չի ծնում եւ չի բխեցնում ծառայական բնություն: Ինչպես մարդկանց պարագայում խոսքն ու կամքը նշաններն են նաեւ բնության եւ անձնիշխանության, այնպես էլ Որդին ու Սուրբ Հոգին, ծնվելով եւ բխելով Հորից, չեն կոչվում ծառա, այլ մեկին անվանում է Որդի, որպեսզի չընկալվի որպես ծառա, իսկ մյուսին՝ Հոգի, որպեսզի Հորից փշվելու պատճառով չկարծեն, թե դատարկ եւ ունայն շունչ է կամ անիրական ու անկենդան մի բան, որովհետեւ կենդանի Հորից բխում է կենդանի շունչ եւ անձնավոր Հոգի: Ինչպես մտքից ծնվածը կոչվում է խոսք ու ծնունդ, իսկ մարդու շնչածը անվանապես չի համարվում որդի, այլ հոգի, այնպես եւ Հորից ծնվածը կոչվում է Որդի, իսկ շնչվածը՝ իսկական Սուրբ Հոգի, սակայն մարդու շնչի նման անվանապես չէ միայն կոչվում հոգի, որովհետեւ մարդուց շնչվածն անձնավոր հոգի չէ, այլ ներս ընդունված օդի արտամղում՝ օդացնդելի եւ ունայն կերպով: Իսկ Հայրական շնչումն այդպիսին չէ, այլ իր պարզ բնության եւ ամենակարողության շնորհիվ Նրանից շնչվածը լինում է անձնավոր Հոգի՝ այնպես, ինչպես վառված ճրագն այլ տեսակի ճրագ է դառնում հատկությամբ, այլ ոչ բնությամբ: Սակայն պարզապես ասվում է, որ Հոր հավիտենական ծնողությունից ծնվածը կոչվում է Աստծու Որդի, իսկ Մարիամը ոչ թե այդ նույն, այլ ըստ մարդկային բնության ծնեց Որդուն, որովհետեւ եթե Հոր բնությունից նույն ծնվածը աստվածությունամբ ծնվեր նաեւ մորից, ապա Մարիամը կլիներ աստվածային բնության մայր, եւ, հետեւապես, Քրիստոս կլիներ երկածին, որովհետեւ միեւնույն անձն ու բնությունը, ըստ մեկ պարզ գոյացության, ծնված կլիներ երկուսից: Այսպես եւ Սուրբ Հոգին, եթե նույն ձեւով բխեր երկու սկզբից, կլիներ երկաբուխ, չնայած որ ասում են, թե բխում է իբրեւ մեկ սկզբից: Իսկ եթե այդ երկու անձերը լինեին մեկ անձ, ապա Սուրբ Հոգու համար կարելի էր ընդունել մեկ սկիզբ, սակայն այդ դեպքում Երրորդությունը կվերածվեր երկրորդության, որը մեծ սխալ է:

Եթե տարբեր է Հոր անձը, եւ տարբեր՝ Որդունը, եւ երկուսից բխում է հավասարապես, ապա Սուրբ Հոգին, ուզած թե չուզած, կկոչվեր երկաբուխ: Քանի որ Որդին ունի երկու ծնունդ, ապա հնարավոր է [դավանաբանական] վեճ առաջանար՝ կապված նրա հետ՝ ինչպես է, որ չի կոչվում երկածին, քանզի ապացուցման կարիք ունի ասվածը: Իսկ Սուրբ Հոգու առնչությամբ նմանատիպ վեճ չառաջացավ Եկեղեցու ծոցում՝ ինչպես է, որ լինելով երկուսից՝ Սողոմոնն անվանվում է միածին (Իմաստ. է. 22), որովհետեւ Սուրբ Եկեղեցին, միայն Հորից ճանաչելով Սուրբ Հոգու բխումը, չվիճարկեց Նրա միածնությունը [կամ միաբխությունը]:

Նաեւ ասում են, թե ինչպես հորից եւ մորից ծնված զավակը չի անվանվում երկածին, այլ՝ միածին, այնպես եւ Հոգին, լինելով երկուսից, չի կոչվում երկաբուխ: Չնայած ստորակարգ օրինակ է, սակայն պետք է ասեմ հետեւյալը, որ Հայրն է մանկան սերմը, իսկ մայրը՝ անդաստանը, իսկ սերմից ու արտից աճեցված ցորենը չի անվանվում անդաստանի որդի, այլ՝ ցորենի, քանի որ անդաստանը գործակից է պտղաբերության:

Արդ՝ ասում են նաեւ, թե ո՛վ է սերմը, եւ ո՛վ՝ անդաստանը, որովհետեւ եթե Հորը համարում են իբրեւ սերմնատու, ահա այդ սերմից ծնվածն զգենում է սերմի նույն կերպարանքը, այլ ոչ անդաստանի, իսկ եթե Որդուն անվանում են անդաստան, ուրեմն Որդին պետք է լինի Սուրբ Հոգու բխմանը գործակից: Եթե զգենում է նաեւ Նրա կերպարանքը, որը նույն կերպարանքն է Հոր միջոցով, ապա կերպավորվածը կերպավորվում է երկրորդ անգամ, կամ Հայրը սկզբնավորում է անկերպ մեկին, իսկ Որդին կերպավորում է անկերպին, որը, սակայն, մեծ մոլորություն է: Եթե Հայրը բնության զորությամբ կերպավորում է՝ բխելով Հոգուն եւ ծնելով Որդուն, ուստի ինչպես Որդու ծնունդը, բացի իրենից, կարիք չունի մեկ այլ կերպավորողի, այնպես եւ Սուրբ Հոգու բխումը, բացի իրենից, կարիք չի զգում ուրիշ կերպավորողի:

ԺԹ. Առարկում են՝ հիմնավորելով, թե Որդին ուղարկում է Հոգուն (հմմտ. Հովհ. Ժե. 26), իսկ առաքողն իշխանություն ունի առաքվողի վրա. բացի այդ՝ Որդին, որպես տեւ, չի ուղարկում Սուրբ Հոգուն, քանի որ համապատասխան է նրան ինչ-որ արժանապատվություն ունի Սուրբ Հոգու նկատմամբ, որովհետեւ բխեցնում է նրան:

Թեպետ այս խնդրին անդրադարձանք սկզբնամասում, սակայն կրկին պատասխանում ենք՝ ասելով, որ մի է Սուրբ Երրորդության ներ-

գործուծությունը, իսկ եթե առաքումն ընկալեն իբրեւ ներգործություն, այն ժամանակ Հայրը նույնպես կառաքվի. եթե առաքումը հասկանան իբրեւ նոր վիճակ՝ այնտեղ, որտեղ կար սկզբում, ապա այդ դեպքում չի ուղարկվի երբեք, այլ կլուսավորի, որովհետեւ, ըստ Սբ. Եւագրիոսի, «Աստված այնտեղ է, որտեղ հայտնի են դառնում Նրա գործերը»¹², այդ իսկ պատճառով կարիք չի զգացվում այլ տեսակի առաքման, որովհետեւ Սբ. Գրիգոր Աստվածաբանն իր գրքում գետեղած՝ Սուրբ Հոգուն նվիրված ճառում ասում է, թե «Հոգին, որ գիտի քարոզվող ամեն բան, շնչում է, ուր կամենում է, եւ որքան կամենում է: Առաջնորդում է, խոսում է, առաքում է եւ սահմանում է»¹³, իսկ Ներսես Շնորհալին, հղելով նրան, ավելացնում է. «Տեր է առաքող եւ սահմանող, տաճար է կերտում Ինքն իր համար, առաջնորդում է, զորացնում. ինչպես որ կամենում, այնպես եւ բաժանում է շնորհները»¹⁴: Հետեւաբար, եթե ուղարկում է, ապա նվազ չէ Որդուց, որովհետեւ Նա ուղարկում է նաեւ Որդուն. ինչպես Եսայի մարգարեն է ասում. «Տիրոջ Հոգին ինձ վրա է, դրա համար իսկ Նա օծեց ինձ, ուղարկեց ինձ՝ ավետարանելու աղքատներին...» (Եսայի ԿԱ. 1), ուրեմն պիտի ասեն, թե ծնում է Որդուն: Իսկ եթե ասեն՝ ոչ թե ծնվելու, այլ վերցրած բնության պատճառով է ասում «ուղարկել» բառը, կասեմ, որ ոչ թե բխման, այլ շնորհներ տալու պատճառով է նաեւ Սուրբ Հոգին անվանվում Որդուց առաքված: Եւ եթե պարզապես նկատեն խոսքի իմաստը, կարող են հասկանալ, որ Որդին առաքում է Սուրբ Հոգուն՝ ոչ թե բխման, այլ՝ համակամության պատճառով, որովհետեւ Հոգին կամենում է գալ, Որդին, իր հերթին, նույն բանն է կամենում, հետեւաբար Որդու կամքի բարեհաճության համար է ասում, թե առաքվում է Նրանից: Նաեւ՝ Քրիստոս չասաց, թե Իրենից է առաքելու, այլ՝ Իր Հորից, այդ իսկ պատճառով մարգարեի բերանով չասաց, թե Իմ Հոգին է ինձ վրա, այլ՝ Տիրոջ, այսինքն՝ Հայր Աստծու Հոգին: Իսկ թե ասեն, որ Նա կոչվում է նաեւ Որդու Հոգի՝ ըստ այն խոսքի՝ «եթե մեկը Քրիստոսի Հոգին չունի, նա նրան չի պատկանում» (Հռոմ. Ը. 9), ապա կասեմ, որ չի ասում Խոսքի Հոգին,

¹² Զ. Մ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄԵԱՆ, նշ. աշխ., 2022, «Կիրակոս Վարդապետի եզնկեցույ Յաղագս Եւագրեայ Վեց հարիւրացն արարեալ վերլուծութիւն», ԽԴ. բան, էջ 256:

¹³ Տէս "Patrologiae Graecae", t. XXXVI, Oratio XXXI. XXIX, էջ 167 (լատ.), էջ 168 (հուն.): Հմմտ. սույն փոխադրության 11-րդ ծանոթագրության շրնկ.:

¹⁴ «Շարակնոց», էջ 434 («Կանոն սրբոյ Պէնտէկոստէին», եօթներորդի աւուրն, էջ 431–434):

այլ՝ Քրիստոսի: Կատարվի, ուրեմն, թե բխում է մարդկային բնությունից, որովհետեւ «Քրիստոսը» անունն է միավորության, բայց ոչ աստվածային պարզ բնության, եւ ինչպես Պողոս առաքյալն է ասում, «...նրանք, որ առաջնորդվում են Աստծու Հոգով, նրանք են Աստծու որդիներ» (Հռոմ. Ը. 14): Այս խոսքին համապատասխան՝ Քրիստոս առաջնորդվում է Սուրբ Հոգուց եւ [գործում է] Սուրբ Հոգով, իսկ նրանք, ովքեր առաջնորդվում են նույն Հոգով, Աստծու որդիներ են կոչվում շնորհի միջոցով, ինչպես Քրիստոս՝ բնությամբ, իսկ Քրիստոսի մարդեղության ընթացքում, որով մենք հասանելի դարձանք Նրա շնորհներին, Սուրբ Հոգու առավել տարածման պատճառով Սուրբ Հոգին անվանվում է Քրիստոսինը, քանի որ, ըստ Պողոս առաքյալի, Իր Հոգուց տվեց մեզ (հմմտ. Ա. Թեսալ. Դ. 8). հայտնի է, որ լիությունը է ընդունել Հոգին, իսկ, ըստ Ալեքսանդր Մեծի, «հղության պահին լցվեց Սուրբ Հոգով»¹⁵, հետեւաբար զարմանալի չէ, որ մյուսներին եւս տալիս է նույն Հոգուց: Բացի այդ՝ առաքում չի նշանակում նվաստություն, իսկ եթե այդպես չէ, ուրեմն Պետրոս առաքյալը եւս պետք է նվաստ համարվի, քանի որ մյուս առաքյալներից ուղարկվեց Սամարիա (հմմտ. Գործք. Ը. 14): Բայց ինչպես մարմնանալու պատճառով է «առաքված» ասում Որդուն եւ չի խոսում ծննդյան մասին, որովհետեւ հավիտենական ծնունդ է Հորից, եւ, ըստ տարբեր ներգործության, տարբեր իմաստներ ունի «առաքում» բառը, այնպես եւ Սուրբ Հոգին, երկրի վրա Իր շնորհի ներգործման պատճառով, կոչվում է Հորից եւ Որդուց «առաքված»: Նաեւ՝ ինչպես Որդին ուղարկվեց մարմնանալու նպատակով, եւ մարմնանալու պատճառով համարվում է «առաքված» Հորից եւ Սուրբ Հոգուց, այնպես էլ Սուրբ Հոգին «առաքված» է կոչվում մարմնավոր եւ հրաձեւ կերպով, որովհետեւ եթե չուղարկվեր մարմնական կերպով, թերեւս առաքյալները կարող էին մտածել, թե չկատարվեց Քրիստոսի խոստումը. ինչպես Հայրն աղափնու կերպարանքով Հորդանան գետի վրա ուղարկեց Սուրբ Հոգուն, այնպես էլ Որդին առաքեց՝ հրեղեն լեզուների տեսքով:

Քրիստոսի առաքման վերաբերյալ Մատթեոսի Ավետարանում առկա՝ «ինչպես Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում» (Մատթ. ԻԸ. 18)

¹⁵ Տե՛ս «Համառոտություն աստուածաբանության...», 1715, գիրք Դ., գլ. Ե., էջ 238: Հմմտ. անդ, գիրք Ա., գլ. Ե., էջ 16, եւ գիրք Դ., գլ. Զ., էջ 243, ինչպես նաեւ՝ անդ, գիրք Դ., գլ. Է., էջ 246, եւ գիրք Դ., գլ. Ժ., էջ 252:

խոսքերի մեկնության հատվածում Հովհաննես Ծործորեցին հետևյալն է ասում. «Ինչ վնաս կա «Աստված՝ Աստծուց ուղարկված» ասելու մեջ, ինչը [Հոր եւ Որդու] միավորությունն ու համակամությունն է նշանակում, այլ ոչ հակասությունը»¹⁶: Հետեւաբար, Որդու կողմից Սուրբ Հոգու ուղարկվելը նույնպես նշանակում է Որդու հետ Նրա ունեցած համակամությունը, քանի որ Գրիգոր Աստվածաբանն իր գրքում ասում է. «Այլ Մխիթարիչ կուղարկեմ ձեզ (Հմմտ. Հովհ. ԺԴ. 16): Եւ որպեսզի չստացվի այնպես, թե Աստծուն իբրեւ հակառակ հասկանա ինչ-որ մեկը, կամ թե՛ ուրիշ մեկի իշխանությամբ է խոստում տալիս, ասում է՝ «ուղարկելու եմ Իմ անունից»: Աղաչանքը թողնելով՝ առաքումն անխաթար պահեց, այնուհետեւ ուղարկվելու է Իր պատիվը, եւ հետո գալու է Հոգու իշխանությունը»¹⁷: Ուրեմն պարզ է, որ «ուղարկվելու է» կամ «ուղարկելու եմ», եւ «գալու է» բառերի կիրառմամբ մատնացույց է անում Սուրբ Երրորդության համակամությունը: Սակայն Որդու եւ Սուրբ Հոգու համար սկիզբ հանդիսացող Հոր պարագայում օգտագործվում է ոչ թե «առաքվել», այլ միշտ՝ «առաքել» տարբերակը, չնայած որ ամեն տեղ բարեհաճությամբ անբաժանելի էր Որդուց եւ Սուրբ Հոգուց: Եւ ինչպես Որդին, խոստացված լինելով մարգարեներին, չի կոչվում ծնունդ Սուրբ Հոգուց, այնպես եւ Հոգին, առաքվելով, չի համարվում բխում Որդուց: Սակայն Քրիստոսի մարդեղությունամբ Սուրբ Հոգու շնորհի ծավալման պատճառով Նա անվանվում է «տրված» եւ «առաքված», որովհետեւ Քրիստոսի միջնորդությամբ արժանի դարձանք Նրա շնորհներին, եւ ինչպես Պողոս առաքյալն է գրում Տիմոսին ուղղած թղթում, «...նորոգությամբ Սուրբ Հոգու, որ Աստված թափեց մեզ վրա առատությամբ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով» (Տիմ. Գ. 6):

Ի. Առարկում են՝ ասելով, թե Սուրբ Հոգին փառավորում է Որդուն, իսկ եթե որեւէ մեկը փառավորում է մյուսին, ապա պարզ է, որ ինչ-որ բան ընդունել է նրանից, իսկ Սուրբ Հոգին ինչ-որ ստեղծված բան չի վերցնում Որդուց, այլ՝ անստեղծ, հետեւաբար Նրանից վերցնում է Իր անձն այնպես, ինչպես՝ Հորից:

¹⁶ Հմմտ. Հովհաննես Ծործորեցի, *Մեկնություն Մատթեոսի Ավետարանի*, պրակ Բ. (ԺԹ.-ԻԸ.), Ս. էջմիածին, 2010, էջ 439:


¹⁷ Տե՛ս «Patrologiae Graecae», t. XXXVI, Oratio XXXI. XXVI, էջ 163 (լատ.), էջ 164 (հուն.): Հմմտ. սույն փոխադրության 11-րդ ծանոթագրության շրնկ.:

Պատասխանում եմ՝ նրանց խոսքերը հօգս ցնդելու համար բավական է վկայակոչել Քրիստոսի այն խոսքը, որն ասաց խաչելությանը մոտ շրջանում, թե՝ «Հայր, փառավորիր Ինձ» (հմմտ. Հովհ. ԺԲ. 28), որին ի պատասխան՝ [երկնքից] եկած ձայնն ասաց. «Եւ փառավորեցի, եւ դարձյալ պիտի փառավորեմ» (Հովհ. ԺԲ. 28): Ուրեմն պետք է ասեն, թե Հայրը ծնվում է Որդուց, որովհետեւ փառավորում է նրան: Արդ՝ Հայր Աստված Որդուն փառավորեց Հորդանանում եւ խաչի վրա, Որդին փառավորեց Հորը՝ նրա գործերը կատարելով երկրի վրա, Սուրբ Հոգին էլ փառավորեց Քրիստոսին՝ նրա վրա իջնելով Հորդանանում եւ հանուն նրա հանգչելով առաքյալների դասերի վրա, որով էլ ճանաչվեց Սուրբ Երրորդության համակամոթյունը:

Շարունակությունը՝ հաջորդիվ

Գրաբարից փոխադրեց եւ ծանոթագրեց
ՅՈՒՆԿ ՍՐԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ





ԴԱՎԻԹ ԱՆՎԱՆ ՍՏՈՒՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԿԱՊԸ ՀԱՅՈՑ ՆԱԽԱՅԱՅՅԱՆ ՕՐԱՑՈՒՅՑԻ ՀԵՏ

Սկիզբը՝ թիվ Ը.

3. ԴԱՎԻԹ ԱՆՎԱՆ ԿԱՊԸ ՆԱԽԱՅԱՅՅԱՆ ՕՐԱՑՈՒՅՑԻ ՀԵՏ

Մենք քննեցինք Դավիթ անվան կառուցվածքին, ծագմանը եւ նախնական կամ ելակետային իմաստին վերաբերող հարցերը: Այժմ փորձենք հասկանալ, թե ի՞նչ կարող է նշանակել «Փոփ ժամանակը» կամ «Փոփ տեղությունը», եւ որքան փոքր ժամանակի/տեղության մասին է խոսքը՝ ելակետ ունենալով բառարմատի առաջին եւ հիմնական իմաստը՝ «Տարի», նաեւ «ժամանակ», «ժամանակահատված»:

Այս բառիմաստները հուշում են, որ Դավիթ անունը սերտորեն շաղկապված պետք է լինի օրացույցի հետ, որն ի թիվս այլ գործառույթների, ժամանակի չափման գործիք է: Այս ամենը բոլորովին զարմանալի չի թվա, եթե հիշենք մեր երկու երախտավորների կարծիքները. Հովհ. Թումանյանը գրում է. «Հայկական էպոսը հայտնի է Սասունցի Դավիթ կամ Սասմա ծռեր (Սասունի խենթեր) անունով: [Բայց ամեն մի լուրջ բանասերի համար պարզ է, որ դա Հայկի առասպելն է]»¹: Իսկ Ղ. Ալիշանը նշում է, որ Հայկն էլ մեզանում «առաջին տոմարագիրը կրսուի, որ է ժամանակի եւ տարւոյ չափ ու շրջան որոշող»²: Այդ է վկայում նաեւ պոլինեզիական Tafaki-ի անշափ գեղեցիկ կարմիր դեմքի գովերգումը, ինչը վկայում է նրա արեգակնային (լուսնային) բնույթի մասին:

¹ Հովհ. Թումանյան, Հայկական էպոսի բառարանից, ԵԺԺ, հտ. VIII, Երեւան, 1999, էջ 255:

² Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 119:

Հայոց դիցավեպի Դավիթին զուգադրելով Աղեղնավոր համաստեղության (նաեւ Լուսնթագ մոլորակի) հետ՝ Գրիգոր Բրուտյանն այն կապել է հայոց Նախահայկյան օրացույցի հետ՝ դրան վերագրելով տարեպտույտի մի հատված³: Արդ տեսնենք, թե Դավիթ անվան՝ առաջարկվող ստուգաբանությունը բացահայտվող բառիմաստներն առնչվում են արդյոք Նախահայկյան օրացույցի իրակություններին:

Քննելով հայոց Նախահայկյան օրացույցին վերաբերող տեղեկույթը՝ Գր. Բրուտյանը հանգել է հետևյալ կարծիքին. «Այսպիսով, մինչև Հայկ նահապետի Հայաստան գալը Հայաստանում կիրառուել է մի օրացոյց (Նախահայկեան օրացոյց պայմանական անուամբ), որի տարին պարունակել է միայն 300 օր, բաղկացած 10 ամիսներից: ...Տարուայ 300 օրերից յետոյ եղել է մի ժամանակահատուած, որ դուրս է համարուել տարուց: ...տարուց դուրս մնացած ժամանակամիջոցը տեւել է 65–70 օր»⁴:

Այսինքն՝ պարզվում է, որ հայոց Նախահայկյան օրացույցում տարին բաժանված է եղել երկու անհավասար մասերի. մեծ՝ $10 \times 30 = 300$ օր եւ փոքր՝ 65–70 օր: Կարծում ենք, որ Դավիթ անունն իր «փոքր տեսողություն/ ժամանակահատված» իմաստով միանգամայն հարմար է գալիս տարվա այս փոքր՝ 65–70-օրյա հատվածին, քանի որ անվան տալ/տալ արմատի իմաստն է «տարի», «ժամանակահատված»: Այդ է ցուցանում նրա անունը: Մեր այս կարծիքը լրացուցիչ փաստարկներով հիմնավորելու հարցում անչափ կարեւորվում է անվան երկրորդ, բազմիմաստ բաղադրիչի դերը:

Հիշեցնենք, որ պոլինեզիական Tafaki//Tahaki դիցանվան երկրորդ՝ հավայերեն *akī* «կծել, պոկել» բաղադրիչին համապատասխանում է ռապանուի եւ այլ լեզուների *ati* արմատը՝ հետևյալ իմաստներով. *ati*₁, *aati*, *hati*₁, *hahati* (ha-hati), *ʻatihatī* (hati-hati) «ջարդել, կոտրել, կտրել, պատռել, խզել», որի տառացի զուգահեռները գրաբարյան առ/հատ արմատներն են՝ «կտրելը», «կտոր», «հատուած»⁵ եւ «հատուկտոր» իմաստներով⁶: Ըստ այդմ՝ Դավիթ անվան նախնական՝ Tafaki//*Tafati

³ Գր. Բրուտյան, Հայկական «Սասնայ ծռեր» դիցավեպի մի դրուագի ժամանակի որոշման փորձ, «Էջմիածին», 2021, Ժ., ԺԱ.: Գր. Բրուտյան, Հայկական «Սասնայ ծռեր» դիցավեպի մի դրուագի ժամանակի որոշման փորձ, «Էջմիածին», 2021, ԺԲ., էջ 72–85:

⁴ Գր. Բրուտյան, Հայկական օրացույցը իր սկզբնաղբյուրներից մինչև մեր օրերը, Երեւան, 2018, էջ 140–141:

⁵ ՀԱՅ, հտ. 3, էջ 51:

⁶ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 450: Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 314:

անվանաձեւը (հավելված 1) հնարավոր է ստուգաբանել հետեւյալ երեք իմաստային նրբերանգներով.

1. «Տարուց հատված/զատված», «պոկված» կտոր՝ ժամանակ-ա-հատված,

2. «Տարին կտրող/հատող» ժամանակահատված եւ

3. «Տարվա հատված, կտոր», այն է՝ «ժամանակ-ա-հատված»:

Այս երեք ստուգաբանություններն էլ ոչ միայն գոյության իրավումն ունեն, այլեւ սերտորեն առնչվում են Նախահայկյան օրացույցի պարբերաշրջանի վերոնիշյալ արտատարեկան հատվածին: Այսպես՝

1. այն տարուց հատված՝ կտրված/զատված/պոկված ժամանակ է, քանի որ սա տարվա 10 ամիսներից դուրս մնացած, նրանից պոկված/զատված/կտրված ժամանակահատվածն է եւ տարվա մեջ չի համարվել (փաստացի արտատարեկան ժամանակահատվածն է)⁷,

2. տարվա այս փոքր՝ 65–70-օրյա ժամանակահատվածը տարին հատող (կտրող) ժամանակն է, հին եւ նոր տարիների միջեւ ընկած, դրանք իրարից բաժանող ժամանակահատվածն է,

3. այն տարեպտույտի մի հատված է (հատուկտոր), ինչպես ենթադրում էր Գր. Բրուտյանը⁸:

Այսպիսով, պոլինեզիական Tafaki/Tahaki դիցանվան երկրորդ՝ *aki* կամ *ati* բաղադրիչներն իրենց իմաստային երեք նրբերանգներով նույնպես առնչվում են Նախահայկյան օրացույցի տարեշրջանի համեմատաբար փոքր՝ 65–70-օրյա ժամանակահատվածին՝ հավաստելով ստուգաբանության ճշմարտացիությունը: Սա երկրորդ, լրացուցիչ փաստարկն է առ այն, որ Դավիթ անունն իր «փոքր տեւողություն/ժամանակահատված» իմաստով իսկապես առնչվում է Նախահայկյան օրացույցի տարեպտույտի 65–70-օրյա ժամանակահատվածին:

Շարունակելով մեր պրպտումները՝ պարզում ենք, որ ռապանուերեն *ati* արմատն ունի նաեւ *ati*3 ե) («վտանգ», «վտանգավոր», «հեռավոր», «անդրշիրիմյան, հանդերձյալ», «անդրաշխարհային» իմաստներ: Վերջինիս բնիկ հայերեն համարժեքն է անտ/անդ «վաղ, այն ժամանակ» արմատը՝ ն-ի հավելումով, որից ունենք գրաբարյան անդէն, անդանոր, անդուստ

⁷ Գր. Բրուտյան, Օրացույց հայոց, էջմիածին, 1997, էջ 416:

⁸ Գր. Բրուտյան, կական «Սասնայ ծռեր» դիցավեպի մի դրուագի ժամանակի որոշման փորձ, «էջմիածին», 2021, ԺԲ., էջ 72–85:

(անտուստ), անտի (անդի), վերջինից էլ՝ Բ-ի հավելումով՝ անդր- (անդր, անդրէն, անդրաշխարհ, անդրադարձ «ետ դարձող, վերադարձ»)՝⁹ Համեմատել նաեւ ԲԻՐ. (ՊԼ. ՆՆ. ԵԼԳ. ՎՆ.) անդեն(ի), անդենական, անդլեն «այն աշխարհը, հանդերձյալ աշխարհ», «հանդերձյալ կյանք», (Պրտ. Ախց. Արբ. Մրշ.) անդի, անդին «այն կողմը, մյուս կողմը», «այն աշխարհը, հանդերձյալ կյանքը»¹⁰:

Այսպիսով՝ Դավիթ անունը վերոհիշյալ իմաստներից զատ կարող է ունենալ նաեւ «վտանգավոր ժամանակահատված» եւ «հանդերձյալ կյանքի, անդրաշխարհային կյանքի ժամանակահատված» իմաստներ: Ուշագրավ է, որ այս ստուգաբանությունը եւս ոչ միայն սերտ կապ ունի Նախահայկյան օրացույցի կարճ ժամանակահատվածի հետ, այլեւ վերաբերում է բացառապես հենց այդ ժամանակահատվածին, քանի որ «Ըստ, այսպէս կոչուած, «Նախահայկեան» օրացույցի, տարի է համարուել միայն այն ժամանակահատուածը, որի ընթացքում գիշերային երկնքում երեւացել է Հայկն (Orion) համաստեղութեան առաջնորդ աստղը (α Հայկին, α Orionis, Betelgeuze, Հայկին ուսն, կամ ձեռն արեւելեան), որ համապատասխանել է Հայկի երկնային կերպարի աջ ձեռքին: Այս ժամանակամիջոցը տեւել է 300 օր: ...Մնացեալ ժամանակը (65–70 օր) համարուել է տարուց դուրս»: Ասել է, թե այս օրացույցում «...տարի է համարվել միայն այն ժամանակահատվածը, որի ընթացքում պաշտվող գլխավոր աստծու աստղը երեւացել է (եղել է երկնքում), իսկ այն ժամանակահատվածը, երբ այն երկնքում չի դիտվել (իմա՛ եղել է Անդրաշխարհում), համարվել է տարուց դուրս: Ինչպէս որ օրացույցի առաջնորդ գլխավոր աստվածը 70 օր եղել է այս աշխարհից դուրս՝ Անդրաշխարհում, այնպէս էլ դրան համապատասխան ժամանակահատվածը համարվել է կյանքի սովորական ժամանակից՝ Տարուց դուրս»¹¹: Այսպիսով՝ «անդրաշխարհային, անդրշիրիմյան կյանքի ժամանակահատված» իմաստը եւս անմիջական կապ ունի տարեպտույտի վերոհիշյալ հատվածի հետ:

Իսկ ի՞նչ կապ կարող է ունենալ արտատարեկան ժամանակի հետ *atē*₃ արմատի «վտանգ», «վտանգավոր» իմաստը: Այս հարցին կարելի է

⁹ ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Հայերէն բացատրական բառարան, հտ. 1, Երեւան, 1945, էջ 107:

¹⁰ «Հայոց լեզվի բարբառային բառարան», հտ. 1, Երեւան, 2001, էջ 57:

¹¹ ԳՐ. ԲՐՈՒՏԵԱՆ, Օրացույց հայոց, էջմիածին, 1997, էջ 400:

պատասխանել՝ անմիջական կապ, քանի որ սա հերոսի կյանքի ամենավտանգալից հատվածն է, անդրաշխարհում գտնվող հերոսի կյանքին ամեն ընդհանուր վտանգ է սպառնում. հիշենք Դավթի՝ Մսրա Մելիքի փորած հորում հայտնվելը (պոլինեզիական Տաֆակին օվկիանոսի հատակին սպառնացող վտանգները, որոնցից նրան փրկում է մորական տատը):

Պարզվեց նաեւ, որ վերոհիշյալ ռապան. *ati*₁/*hati*₁ «կոտրել, կտրել» եւ *ati*₃ «վտանգ», «վտանգավոր», «անդրշիրիմյան, հանդերձյալ» արմատներից բացի՝ ունենք նաեւ *ati*₂ արմատ՝ «վրեժ», «վրեժ լուծել», «վրիժառու» իմաստով: Ռապան. *ati*₂ «վրեժ լուծել», «վրիժառու» բառի գրաբարյան տառացի գուգահեռը բնիկ հայերեն առել «ատել, չսիրել, զգվիլ» բառն է (բխեցվում է հ.-ե. **odi*- «ատել» արմատից)¹²: Ինչ վերաբերում է ռապանուերեն *ati*₂ արմատի «վրեժ լուծել», «վրիժառու» իմաստներին, դրանք եւս անմիջական կապ ունեն վերոհիշյալ ժամանակահատվածի հետ. հայտնի է, որ արտատարեկան կոշված ժամանակահատվածը պաշտվող Աստծու «Անդրաշխարհում գտնուելու (շուրջ երկամսեայ) ժամանակն է, երբ ինքը, բնականաբար, չի երեւում երկնքում եւ «զբաղուած» է Անդրաշխարհում գործելով սխրանքներ, որոնց շնորհիւ հաստատւում (վերահաստատւում) է բնականոն կարգը ողջ Տիեզերքում՝ ամբողջ մնացեալ ժամանակի համար»¹³: Սա քաջագործությունների, սխրանքների, վրիժառության, թշնամիներից վրեժ լուծելու ժամանակն է. հիշենք, որ պոլինեզիական Տաֆակին նույնպէս իջնում է Ամդրաշխարհ՝ իր հորը կուրացնողներից վրեժ լուծելու եւ նրան Լույս աշխարհ հանելու համար, հաղթում է չար ոգիներին եւ հրեշներին:

Ի մի բերելով պոլինեզիական առասպելական հերոսի Tafaki/Tahaki եւ հայերեն Դավիթ անվան գուգադրման ու վերլուծության արդյունքները՝ եզրահանգում ենք.

ա) հայերեն Դավիթ անվան հնագույն ձեւը հայերենի բարբառներում պահպանված Տավիթ/Տաւիտ տարբերակն է, որը ստուգաբանվում է երկու բնիկ հայերեն բաղադրիչներով. Տաւ (բրբ. *ṭaw*) /տեւ «Ժամանակ» + -իտ (-իթ) «փոքր» եւ, ըստ այդմ, նշանակում է «Տեւ (ողություն) փոքր» կամ, որ նույնն է՝ «փոքր տեւ (ողություն)»,

¹² Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 82:

¹³ Գր. ԲՐՈՒՏԵԱՆ, Օրացոյց հայոց, էջմիածին, 1997, էջ 299, 327, 418 – 420:

բ) անվան երկրորդ՝ բազմիմաստ բաղադրիչի իմաստային վերլուծության մեջ ստացված հնարավոր յոթ ստուգաբանությունները (փոքր ժամանակահատված, տարին հատող/կտրող ժամանակահատված, տարվա մի հատված/կտոր, տարուց հատված, պոկված, զատված ժամանակահատված, անդրաշխարհային, անդրշիրիմյան ժամանակահատված, վտանգավոր ժամանակահատված, թշնամիներից վրեժ լուծելու, վրիժառության ժամանակահատված) բնութագրում են Նախահայկյան օրացույցի տարեշրջանի փոքր՝ 65–70-օրյա արտատարեկան ժամանակահատվածը, ինչը դժվար է համարել սոսկ պատահական զուգահեռություն:

Դավիթ անվան մասին մեր քննությունն ամբողջական չէր կարող լինել, եթե չհիշեինք, որ տարածված կարծիքի համաձայն, երբայցեքերեն Դավիթ անվան իմաստը թարգմանաբար նշանակում է «սիրելի, սիրեցյալ»: Մեզ հայտնի չէ, թե ինչպես է ստուգաբանվում այն երբայցեքերենով կամ ստուգաբանվում է արդյոք, եւ անվան հատկապես ո՞ր արմատն է նշանակում «սիրելի» կամ «սիրեցյալ», այդ պատճառով մենք ձեռնպահ կմնանք որեւէ կարծիք հայտնելուց: Սակայն փաստն ինքնին հետաքրքիր էր եւ դարձավ մեր փնտրտուքների հաջորդ առարկան, ինչը հանգեցրեց հիրավի անսպասելի արդյունքների, այն է՝ հայոց Նախահայկյան օրացույցի հետ առավել խորքային ընդհանրությունների բացահայտման:

Ինչպես նշվեց, ռապանուերեն *Ati*₂ «վրեժ լուծել», «վրիժառու» բառի գրաբարյան տառացի զուգահեռը բնիկ հայերեն առել «ատել, չսիրել, զզվիլ» բառն է: Այսինքն՝ Դավիթ անվան երկրորդ՝ *Ati* բաղադրիչը, որի իմաստային նրբերանգների հետ կապված բոլոր հնարավոր ստուգաբանությունները բազմաթիվ ընդհանրություններ էին ցուցաբերում Նախահայկյան օրացույցի իրողությունների հետ, «կտրել, հատել», «անդրաշխարհային», «վտանգավոր», «վրեժ լուծել» եւ այլ իմաստներից բացի ունի նաեւ երբայցեքերեն տարբերակի ճիշտ հակառակ իմաստ՝ «ատել, զզվիլ»: Հստ այդմ՝ հայերեն Դավիթ անունը պետք է ունենար նաեւ «ատելի, զզվելի ժամանակ» իմաստ:

Բնականաբար ցանկություն առաջացավ պարզելու, թե «սիրելի, սիրեցյալ» իմաստը ի՞նչ բառով/բառերով է արտահայտվում ռապանուի լեզվում եւ, ի զարմանս մեզ, պարզվեց, որ այն արտահայտվում է նմանահունչ *ate* արմատով: Այս արմատն առանձին կիրառություն չունի ռապանուերենում, առկա է միայն կրկնավոր բարդության տեսքով. ռապանուերեն *ateate* (*ate-ate*) «սիրելի», «սիրեցյալ», «ցանկալի»: Այս արմատի տա-

ռացի զուգահեռը նույնպես բնիկ հայերեն ատել բառն է, այս դեպքում՝ հակադարձ իմաստով:

Այսպիսով՝ ստացվում է մի հակասական ու անհեթեթ իրավիճակ, քանի որ եթե մենք ճիշտ ենք, ապա անունը պիտի նշանակի ոչ միայն «տարվա փոքր, տարին հատող, տարուց հատված/զատված, անդրաշխարհային», «վտանգավոր», «վրիժառույթյան» ժամանակ, այլև միաժամանակ ե՛ւ «սիրելի», ե՛ւ «ատելի» ժամանակահատված:

Սակայն այս հակասությունը վերանում է, երբ անդրադառնում ենք նույն՝ Նախահայկյան օրացույցի արտատարեկան ժամանակի մասին Գր. Բրուտյանի մեկնաբանություններին: Ահա թե ինչ է գրում այդ մասին հեղինակն իր դեռեւս անտիպ գրքում. «Ընդհանրապես, տարեմուտի եւ տարելի (տարուայ աւարտի, տարուայ վերջի) մասին այսօրուայ մեր պատկերացումները պէտք է բաւական տարբեր լինեն Նախահայկեան օրացոյցի ժամանակուայ համապատասխան պատկերացումներից: Բանն այն է, որ այսօր մեզ համար դրանք ժամանակի առանցքի միեւնոյն կէտի (միեւնոյն ակնթարթի) երկու տարբեր կողմերն են: ...Նախահայկեան օրացոյցի մէջ տարեմուտն ու տարելը իրարից էապէս տարբեր իրողութիւններ են: Իրօք, Նախահայկեան օրացոյցում տարելին անմիջապէս չի յաջորդում տարեմուտը, այլ դրանց միջեւ կայ արտատարեկան ժամանակահատուածը, որ 60–70 օր տեւողութիւն ունի: Այսինքն, այստեղ սրանք ժամանակային առումով իրարից շատ տարբեր իրողութիւններ են: Նախահայկեան օրացոյցում տարելն ու տարեմուտը իրարից տարբեր են նաեւ բովանդակային, գաղափարական առումներով: Տարելը, բացի հին տարուայ աւարտը նշանակելուց, նշանակում է նաեւ արտատարեկան ժամանակի՝ արգելքների շրջանի, Անդրաշխարհի հետ կապուած ծէսերի, սգոյ օրերի սկիզբը: Սրան հակառակ՝ տարեմուտը բացի նոր տարուայ սկիզբը նշանակելուց նշանակում է նաեւ գլխաւոր պաշտօնող էակի յարութիւնը, ծնունդը (Մութ աշխարհից Լոյս աշխարհ դուրս գալը), դրա աստղի առաջին ծագումը, կեանքի նոր շրջանի սկիզբը, ամուսնութեան, ապագայի գուշակութիւնների, ուրախութեան, ժամանակի սկիզբը: Հէնց այստեղից էլ գալիս է տարեմուտին իրար շնորհատրելու, բարեմաղթութիւններ անելու աւանդոյթը: Այսինքն՝ տեսնում ենք, որ Նախահայկեան օրացոյցում տարեմուտն ու տարելը իրարից սկզբունքօրէն տարբեր իրողութիւններ են: Այս ամենի հետ մէկտեղ՝ խորհային առումով տարելն ու տարեմուտը հէնց նոյն Նախա-

հայկեան օրացոյցում իրար շատ սերտ շաղկապուած, իրար կից իրողութիւններ են»¹⁴ (ընդգծումը. – Լ. Ս.):

Փաստորեն Նախահայկյան օրացույցի այս ժամանակահատվածում իրար միահյուսված են եղել երկու հակադիր մասեր՝ մանվան եւ հառության խորհուրդներով եւ, ըստ այդմ էլ, իրար են միախառնված երկու հակադիր զգացումներ. նախ՝ տխրությունը եւ սուգը պաշտվող էակի կամ Աստծո՝ անդրաշխարհում հայտնվելու, «մահանալու» պատճառով (իմա՝ «ատելի» ժամանակ) եւ, այնուհետեւ, որքան մոտենում է տարեմուտը՝ խինդն ու ուրախությունը նույն էակի կամ Աստծու ակնկալվող վերակենդանացման, հարության, վերածննդի առիթով (իմա՝ «սիրելի» ժամանակ):

Ուրեմն, ինչպես որ Նախահայկյան օրացույցում տարեւն ու տարեմուտը, սուգն ու ուրախությունը «իրար շատ սերտ շաղկապված, իրար կից իրողություններ են», այդպես էլ թե՛ «ատելի», թե՛ «սիրելի» նույնահունչ մակդիրները միաժամանակ կիրառելի են Նախահայկյան օրացույցի արտատարեկան ժամանակահատվածի բնութագրման համար:

Ի հավելումն նշենք, որ ռապանուերեն նույն *atē* արմատը նշանակում է նաեւ «ցավ», «վիշտ», խորհրդանշելով նախ՝ պաշտվող էակի Անդրաշխարհում հայտնվելու բերումով մարդկանց զգացած ցավն ու վիշտը, որի պատճառով այն ատելի, զգվելի ժամանակ է, իսկ *ate* արմատն ունի «պար», «երգ», «պարել» իմաստ, որից ունենք նաեւ ռապանուերեն *ate atua* «Աստծուն նվիրված հիմն»՝ խորհրդանշելով պաշտվող էակի ակնկալվող մոտալուտ վերակենդանացման, հառության առթիվ երգերը, պարերը եւ Աստծուն նվիրված հիմների կատարումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով լեզվական եւ մշակութային տարբեր ոլորտներին վերաբերող քննարկված փաստերը՝ կարելի է արձանագրել, որ պոլինեզիական առասպելական հերոս Tafaki-ն իր բնութագրի մի շարք ընդհանուր գծերով եւ կենսագրության նմանատիպ դրվագներով համեմատելի է հայոց դիցավեպի երրորդ ճյուղի անվանադիր Դավթի հետ, ինչը բավարար հիմք է ստեղծում Tafaki/Tavaki - Դավթի համարժեքության հիմնավորման համար: Ըստ այդմ, լեզվաբանական տեսակետից արդարացված է

¹⁴ Գր. ԲՐՈՒՏԵԱՆ, Վաղ բրոնզի դարի հայկական օրացույց ըստ Քեթիի քրեղանի զարդապատկերների (անտիպ):

պոլինեզիական լեզուների տվյալների միջոցով հայերեն Դավիթ անվան ստուգաբանության փորձը:

Հայերեն Դավիթ անունը, ինչպես եւ ենթադրվում էր, բաղկացած է դավ արմատից եւ -իթ վերջածանցից: Անվան նախածեւը հնագույն պոլինեզիական լեզուներում (Tafaki) եւ հայերենի բարբառներում պահպանված, խուլ պայթականով սկսվող Տաւիտ/Տավիթ տարբերակն է: Անվան խուլ պայթականով սկսվող տաւ/տավ արմատը հայերենում այլեւս առանձին կիրառություն չունի, սակայն տաւ₁ «Տարի», «Ժամանակ», «Ժամանակամիջոց» իմաստներով պահպանված ենք գտնում ռապանուի լեզվում՝ ի թիվս հայերենում առանձին չգործածվող՝ 31 այլ բնիկ հայերեն բառերի¹⁵:

Վերջինիս ձայնդարձային տարբերակները բնիկ հայերեն տեւ¹⁶/տիւ ժամանականիշ արմատներն են, իսկ շնչեղ պայթականով տարբերակը՝ բրբ. թավ¹⁷ «որեւէ բան անելու հարմար ժամանակը» բառը:

Դավիթ անվան -իթ վերջավորությունը հանգում է նախապոլինեզերենից ավանդված համապոլինեզիական բառապաշարի իti «փոքրիկ» բառին (հավայ. *aki* «կծել, կրծել, պոկել»//ռապան. *ati* «կտրել, հատել» բառերի՝ առանձին կիրառություն եւ բառիմաստ ունեցող ռապանուերեն իti, հավայերեն իki ձայնդարձային տարբերակներին՝ «փոքր» իմաստով: Վերջիններս, ըստ կատարված հետազոտության արդյունքների, ունեն բնիկ հայերեն տառացի զուգահեռներ՝ -իտ եւ -իկ նույնածագում եւ նույնիմաստ վերջածանցներ:

Արդյունքում՝ հայերեն Դավիթ անունը ստուգաբանվում է երկու բնիկ հայերեն բաղադրիչներով. գրաբարյան *Տաւ/տեւ/տիւ «Ժամանակ» եւ -իտ¹⁸ (-իթ) «փոքր» եւ նշանակում է «տեւ(ողություն) փոքր» կամ «փոքր տեւ(ողություն)», ինչով համադրելի է դառնում նախահայկյան օրացույցի տարեշրջանի փոքր՝ 65–70-օրյա հատվածին:

Դավիթ անվան պոլինեզիական զուգահեռի՝ Tafaki/Tahaki անվան *aki/ati/hati* բաղադրիչն ունի նաեւ «կտրել, կտրել, հատել, ջարդել» իմաստներ (հայերեն տառացի զուգահեռները՝ ատ/հատ), ուրեմն եւ՝ անձնանվան իմաստը կարելի է հասկանալ «Տարին կտրող/հատող, կտրած/հատած եւ տարուց պոկված/հատված/զատված» իմաստնե-

¹⁵ Հմմտ. անվան Դաուիթ/Դավուիթ ձեւերը:

¹⁶ Հմմտ. անվան Դեվիդ ձեւը:

¹⁷ Հմմտ. անվան Թավիթ ձեւը:

¹⁸ Հմմտ. անվան Տաւիտ ձեւը:

րով: Իմաստային այս բոլոր նրբերանգները եւս համադրելի են նույն ժամանակահատվածին:

Անվան պոլինեզիական զուգահեռի՝ Tafaki/Tahaki անվան *aki/ati* բաղադրիչն ունի նաեւ «անդրշիրիմյան, հանդերձյալ», «անդրաշխարհային», «վտանգ», «վտանգավոր» իմաստներ (հայերեն զուգահեռներն են՝ անտ/անդ եւ անդր-), հետեւաբար անձնանունը կարելի է ստուգաբանել նաեւ որպէս «անդրշիրիմյան, անդրաշխարհային ժամանակ», «վտանգավոր, վտանգալից ժամանակ», ինչն առավել եւս համադրելի է Նախահայկյան օրացույցի փոքր կամ արտատարեկան ժամանակահատվածին:

Ռապանուներեն երկու նմանահունչ՝ *ati*₃ «վիշտ», «ցավ», «վրեժխնդիր լինել», «վրիժառու» (տէս հայերեն ատել, ատելի) եւ *ate*₃ «երգ», «պար», «հիմն Աստծուն», որից՝ *ateate* (*ate*) «սիրելի», «սիրեցյալ» բառերի միջոցով իրականացված ստուգաբանությունը հանգեցնում է անձնանվան առավել խորքային իմաստների եւ Նախահայկյան օրացույցի արտատարեկան ժամանակաշրջանի հետ անմիջական կապի բացահայտմանը:

Դավիթ անձնանվան՝ բացահայտված իմաստների ողջ համախումբը ճշտիվ համապատասխանում է հայոց Նախահայկյան օրացույցի 65–70-օրյա հատվածին, որը

1. տարվա համեմատաբար փոքր հատվածն է,
2. տարին կտրող/հատող ժամանակահատվածն է,
3. տարվա կտր/հատված է,
4. տարեշրջանից դուրս՝ հատված, զատված, պոկված (իմա՝ արտատարեկան) ժամանակահատվածն է,

5. օրացույցի առաջնորդ աստծու անդրաշխարհում, հանդերձյալ աշխարհում գտնվելու (իմա՝ նրա աստղի՝ երկնքում չդիտվելու) ժամանակահատվածն է,

6. դրա հետ կապված՝ ցավի, վշտի ժամանակահատվածն է,
7. վտանգավոր, վտանգալից ժամանակահատվածն է,
8. թշնամիներից վրեժ լուծելու, վրիժառության, նրանց հաղթելու եւ վերածնվելու, իույս աշխարհ ելնելու ժամանակահատվածն է,

9. ատելի (պաշտվող էակի մահվան՝ անդրաշխարհ գնալու), միաժամանակ նաեւ

10. սիրելի (Աստծու վերակենդանանալու, հարուժյուն առնելու, վերածնվելու) ժամանակահատվածն է,

11. երգի, պարի, պաշտվող էակին նվիրված հիմների կատարման ժամանակն է:

Այսպիսով՝ Դավիթ անունն ունի բնիկ հայկական ծագում, անվան բացահայտված իմաստների ամբողջությունն իր բոլոր տարբերակներով համապատասխանում է հայոց Նախահայկյան օրացույցի պարբերաշրջանի արտատարեկան՝ 65–70-օրյա փոքր հատվածի բնութագրիչներին, ինչը, կարծում ենք, լիովին բացառում է պատահական զուգահեռաբանությունների հնարավորությունը:

Դավիթ անվան վերոբերյալ բազմաթիվ իմաստներից երկուսը՝ «գեղեցկատես» եւ «սիրելի, սիրեցյալ», փոխանցվել եւ պահպանվել են նաեւ այլ ժողովուրդների մոտ, որպես ընդամենը մեկ հատկանիշի արձանագրում, առանց այն կրող առարկայի/երեւույթի (տվյալ դեպքում՝ տարեպտույտի) որոշակիացման:

Դավիթ անվան կապը Նախահայկյան օրացույցի պարբերաշրջանի արտատարեկան ժամանակահատվածի հետ եւ այդ անվան միջոցով վերջինիս համակողմանի ու համապարփակ բնորոշումը գտնում ենք միմիայն հայերենի իրողությունների միջոցով: Սա այդ անվան եւ երեւույթի հայկական ծագման ակնառու ապացույց է, զի ըստ հների՝ «անվանել առարկան նշանակում է հանաչել եւ մատնանշել նրա բոլոր հատկանիշները», ինչին ակնատես ենք հայկական տարբերակում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Տաֆակին պոլինեզիական առաջնորդի կատարելատիպն է եւ նրա անունը, ինչպես նշվել է, դարձել էր հասարակ անուն, լավագույն առաջնորդների անվանն ավելացվող մակդիր՝ որպես գերագույն գովասանք: Ինչպես նշում է Կ. Լուոմալան, «Առաջնորդների պարտավորությունները, արտոնություններն ու տիտղոսները հաճախ կապվում են Տաֆակիի անվան հետ»¹⁹ (ընդգծումը.— Լ. Ս.): Բնական է ենթադրել, որ եթե առաջնորդների տիտղոսները հաճախ կապվում են Տաֆակիի անվան հետ, ապա ժամանակի ընթացքում այն կարող էր ձեռք բերել պարզապես առաջնորդի որեւէ տիտղոսի իմաստ, ասենք՝ «կալվածատեր», «իշխան»:

Հաշվի առնելով պոլինեզիերեն *aki/ati* համարժեքությունը եւ, ի հետեւանք դրա՝ *Tafaki/Tafati* (Տաֆակի/Տաֆատի) նույնությունը՝ անհիմն

¹⁹ Տե՛ս К. Луомала, նշ. աշխ. էջ 176:

չէ ենթադրել, որ անվան Tafati (Տաֆատի) տարբերակից է օրինաչափորեն ծագում ցայժմ չստուգաբանված թավադ «վրացի կամ հայ իշխան, կալվածատեր»²⁰ բառը, որի նախնական իմաստն ըստ ամենայնի եղել է «ամենադրական հատկանիշներով օժտված, սիրված առաջնորդ»:

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

Դավիթ անվան փաղաքշական Տաւօ/Դաւօ ձեւը թերեւս միակն է, որ կազմված է միայն արմատից՝ ռապանուերեն *Tau* – հայերեն *Տաւ/Տաւօ/Դաւօ*: Հր. Աճառյանի վկայությամբ՝ «Հին ժամանակ կային փաղաքշական ձեւեր՝ Դաւթակ, Դաւթուկ, ավելի ուշ՝ Դաւթիկ, որոնք այժմ չկան»²¹: Ենթադրում ենք, որ Դաւթակ, Դաւթուկ եւ Դաւթիկ ձեւերի երկրորդ բաղադրիչները կամ

ա) հանգում են վերականգնված նախաավստրոնեզերեն **itik* «փոքր» բառին՝ նախաձայն *i*-ի անկումով՝ **itik > tik* (թիկ), որի մեջ ենթադրում ենք նվազական մասնիկների կրկնակի գործածություն՝ *it + ik = itik*, կամ, որ առավել հավանական է,

բ) գործ ունենք նվազական մասնիկների կրկնակի գործածության դեպքի հետ՝ պոլինեզերեն *iti*(իտ/-*(ի)թ*) + *aki*(-ակ/-ուկ/-իկ) = հայերեն -թակ/-թուկ/-թիկ:

Եթե պարզվի, որ ճիշտ է երկրորդ տարբերակը, դրանից կարելի է եզրակացնել, որ անձնանվան այս ձեւերի առաջացման ժամանակ

1) արդեն տեղի էր ունեցել *iti*-իտ/-իթ նվազական-փաղաքշական մասնիկի բառիմաստի մթազնում եւ այն այլեւս չէր գիտակցվում որպես այդպիսին, այդ պատճառով էլ հավելվել են *aki*-ակ/-իկ/-ուկ նույնիմաստ մասնիկները, կամ էլ

2) գործ ունենք իմաստի սաստկացման նպատակով մասնիկների կրկնակի գործածության դեպքի հետ²²:

Ինչպես տեսնում ենք, Դաւ-(ի)թ-ակ, Դաւ(ի)թ-ուկ եւ Դաւ(ի)թ-իկ ձեւերում -իթ նվազական մասնիկը սղվել է մինչեւ մեկ հնչյուն՝ (ի)թ > -թ: Չի բացառվում, որ նույնը կարող էր տեղի ունենալ նույնածագում եւ նույնիմաստ -իկ մասնիկի հետ՝ -(ի)կ > -կ:

²⁰ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հտ. 2, Երեւան, 1972, էջ 144:

²¹ Հր. Աճառյան, ձնանունների բառարան, հտ. Ա., Երեւան, 1942, էջ 23:

²² Նույն տեղում, էջ 22:

Հետաքրքիր է այս տեսանկյունից դիտարկել հայկ բառը, որի մասին Հր. Աճառյանն ասում է. «ՀԱՅԿ «փոֆ», գիտէ միայն Բառ. երեսմ. էջ 175, որի հետ համատ. նաեւ հայ «հսկայ»... Անշուշտ մեր ազգի եւ մեր նախահոր անունն է, բայց թե որտեղից է առնում այս իմաստները, յայտնի չէ»²³: Տեղին ենք համարում հիշեցնել երջանկահիշատակ Հովհ. Կարապետյանի կարծիքն այդ մասին. «Աւանդութեան համաձայն ընդունուած է կարծել, որ հայ էթնոնիմը ծագում է Հայկ անձնանունից, որը բացարձակապէս չի համապատասխանում իրականութեանը: Հայերէնի Հայկ անձնանունը ծագում է հէնց հայ էթնոնիմից եւ նշանակում է հայ, այսինքն՝ այստեղ առկայ «կ» վերջածանցը իրականում եղել է «իկ» (ընդգծումը. — Լ. Ս.), (չշփոթել «իկ» նվազական մասնիկի հետ), ուստի եւ նախկինում ոչ թե Հայկ, այլ Հայիկ՝ հայիկ ձեւից, որը եւ նշանակում է հայ, հայ ժողովրդին պատկանող անձնաւորութիւն, որից եւ՝ հայիկական > հայկական, ինչպէս ունենք՝ պարսիկ, ռուզիկ, արմենիկ, խափշիկ, տաճիկ, հնդիկ, պահլավիկ.... Նկատենք, որ Համշէնի բարբառում Հայկ անձնանունը մինչեւ օրս էլ յայտնի է որպէս Հայիկ»²⁴:

Մենք համամիտ ենք Հովհ. Կարապետյանի կարծիքին՝ մեկ վերապահումով. հայիկ, պարսիկ, հնդիկ եւ այլ էթնոնիմների -իկ վերջածանցը եւ -իկ նվազական մասնիկն այս դեպքում ոչ թե հակասում են իրար եւ չպետք է «շփոթել», այսինքն՝ նույնացնել, ինչպես մտածում է հարգարժան հեղինակը, այլ նույնն են, նույնածագում են եւ ստույգ այս պարագայում մատնանշում են հայ մեծ հանրույթի մեկ անդամին, այն է՝ փոֆր մասնիկին՝ անձին տրվող անուն, հայիկ > Հայկ, ինչպես որ պարսիկ նշանակում է պարսից մեծ հանրույթի մի փոֆրիկ մասնիկ՝ մեկ անձ, նույնը՝ հնդիկ, պահլավիկ, խափշիկ, խուժիկ, նաեւ՝ հայիկ եւ այլն:

Վերոշարադրյալից հանգում ենք այն հետեւության, որ Հայկ անձնանունը ծագում է ՀԱՅ էթնոնիմից՝ -իկ փոքրացուցիչ մասնիկի հավելումով, շեշտելու համար, որ այն տրվում է Հայ մեծ էթնոսի մի փոֆրիկ մաս կազմող ընդամենը մեկ անհատի կամ մեկ անձի. Հայ + -իկ = հայ-իկ (տէս նաեւ հնդիկ, պարսիկ, խափշիկ, պահլավիկ եւլն), -(ի)կ վերջածանցի նախաձայն ի-ի սղումով՝ հայ(ի)կ = Հայկ զարգացումով եւ նշանակում է հայ մեծ հանրույթի մեկ, իմա՝ փոֆր մասնիկին/անձին տրվող հատուկ անուն:

²³ Նույն տեղում, էջ 30:

²⁴ Հ. ՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Սեպագիր տեղանուններ Հայկական լեռնաշխարհում եւ հարակից տարածքներում, հտ. 1, 1, Երեւան, 1988, էջ 174:

Այս ենթադրության ճշմարտացիության օգտին խոսող կողմնակի փաստ կարելի է համարել Դաւթակ եւ Դաւթիկ անձնանունների հետ համադրելի Հայկակ եւ Հայկիկ անձնանունների գոյությունը, որոնց մեջ ակնհայտ երեւում է նվազական մասնիկների կրկնակի կիրառությունը:

Վերոհիշյալ էթնոնիմների եւ -իտ վերջածանցով կազմված էթնոնիմների միջեւ իմաստային տարբերություն չկա, քանի որ, ինչպես ցույց տրվեց, երկուսն էլ սերում են նույն արմատի տարածներից (*iki/iti* «փոքրիկ»): Պարզապես -իկ բաղադրիչով կազմված էթնոնիմներում այն պահանջ է նախնական «փոքրիկ» իմաստը, որպես որեւէ հանրության պատկանող փոքր միավոր, իսկ -իտ բաղադրիչով կազմվածներում հասկացվում է որպես տվյալ հանրությանը պատկանող մեկ անձ, որն իրականում նույնպես այդ հանրության փոքրիկ մասնիկն է:

Հ.Գ. Հոգևածը վաղուց հանձնված էր տպագրության, երբ մեր ուշագրությունը գրավեց հետաքրքիր մի տեղեկույթ Վերին Նավերի դամբարանաբլրի IԱ թվագրված դամբարանում գտնված «Դավթի աստղի» պատկերով բրոնզե գլխիկի մասին:

Հեղինակը՝ հնագետ Հ. Սիմոնյանը գրում է, որ այս դամբարանի պեղումները «...բացառիկ արժեքավոր հայտնագործությունների հիմք հանդիսացան, որոնք էապես լրացնում են մեր պատկերացումները Հայաստանի՝ միջինից ուշ բրոնզի անցման փուլի վերաբերյալ (Ք. ա. XVI–XV դդ.): Գտածոներից առանձնապես արժեքավոր է երկու հավասարասրուն եռանկյունիներից ձևավորված վեցաթեւ՝ «Դավթի աստղի» պատկերով բրոնզե գլխիկը, որի բաժանմունքներում ագուցված են եղել տարբեր գույների շաղախե ներդրումներ (մի հատվածում պահպանվել էր կարմրավուն փխրուն նյութ): Ժամանակին օրգանական նյութի վրա ամրացված այս եզակի գտածոն չունի իր զուգահեռը: Վեցաթեւ աստղի պատկերով, սակայն փոքր-ինչ այլ հորինվածքով բրոնզե դաշույնի գլխիկ հայտնաբերվել է Վրաստանում՝ Ցավգլեկի № 62 դամբարաններում...: Այն տեսակետը, որ այս զարդանախշը բնորոշ է եղել հնդեւրոպական զարդարվեստին եւ հետագայում, շատ ուշ փոխառել են հրեաները, իր հավաստումն է ստանում Վերին Նավերի գտածոյով»²⁵ (ընդգծումը. – Լ. Ս.):

²⁵ Հ. ՍԻՄՈՆՅԱՆ, Բրոնզի դարի արքայական դամբարաններ Արագածոտնում, «Հայագիտությունը եւ արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական մի-

Սա այն դեպքերից է, երբ հնագիտական նյութը հաստատում է լեզվաբանական ստուգաբանության միջոցով ստացված եզրահանգումները:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Դյուցազնավեպ, էպոս, օրացույց, տարի, ժամանակահատված, փոխառել են հրեաները:

РЕЗЮМЕ

Имя главного героя третьей главы армянского эпоса Давид' (Դավիթ) до сих пор не подвергалось этимологическому анализу. Гр. Ачарян считал причастие -իթ [-it'], значение и происхождение которого неизвестны, препятствием к этимологии имени Давид'. Роль древних полинезийских языков, сохранивших значимые преформы таких частиц при раздельном употреблении, неоценима для восстановления значения таких частиц, лишенных своего лексического значения в армянском языке. Не менее важен тот факт, что популярный полинезийский мифический герой, имеющий много характерных и биографических сходств с Давид', носит похожее имя (Тафаки/Тахаки). Этимологическое исследование показывает, что имя Давид' образовано от временного корня տաւ/տավ [tav/tav], который больше не употребляется отдельно в армянском языке, в то время как он сохранился в рапануйском языке (tau «год», «период времени»). Исконно армянскими параллелями последнего являются временные слова տեւ/տիւ [tev/tiv] и диалектное թավ [t'av]. Преформа проблемного суффикса -իթ [-it'] в имени является фоно-флективным вариантом ití («маленький») протополинезийского atí, входящего в общеполинезийский словарь atí («резать», «пересекать»). Значения первого компонента имени «год», «период времени» предполагают его связь с календарем. Этимологическое исследование показывает, что все 11 значений второго многозначного компонента имени характеризуют внегодовой период протогайкского календарного цикла. Связь имени Давид с внегодовым периодом протогайкского


календарного цикла и углубленное и всестороннее определение последнего с этим именем может быть выявлено только с помощью армянских реалий. Это является явным доказательством армянского происхождения этого имени и явления.

SUMMARY

The name of the titular hero of the third chapter of the Armenian epic, Davit' (Դավիթ), has not been etymologically analyzed yet. Hr. Acharian considered the participle *-իթ* [-it'], the meaning and origin of which is unknown, to be an obstacle to the etymology of the name Davit'. The role of the ancient Polynesian languages, which preserved the meaningful preforms of such particles with a separate use, is invaluable in order to restore the meaning of such particles deprived of their lexical meaning in Armenian. No less important is the fact that a popular Polynesian mythical hero with many characteristic and biographical similarities to Davit' bears a similar name (Tafaki/Tahaki).

The etymological examination shows that the name Davit' is formed from the *inui/inui* [taw/tav] temporal root, which is no longer used separately in Armenian, while it is preserved in the Rapanui language (*tau* “year”, “time period”). The native Armenian parallels of the latter are the temporal words *inlu/unlu* [tev/tiv] and dialectal *ṛəui* [t'av]. The preform of the problematic suffix *-իթ* [-it'] in the name is the phono-inflectional variant *iti* (“small”) of the Proto-Polynesian *ati*, which is part of the Pan-Polynesian vocabulary *ati* (“to cut”, “to cross”).

The meanings of the first component of the name “year”, “time period” suggest its connection with a calendar. The etymological examination reveals that all 11 meanings of the second polysemous component of the name characterize the extra-annual period of the Proto-Haykian calendar cycle. The connection of the name Davit' with the extra-annual period of the Proto-Haykian calendar cycle and the in-depth and comprehensive definition of the latter with that name can be revealed only with the help of Armenian realities. This is a clear proof of the Armenian origin of that name and phenomenon.



ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, պրոֆեսոր

ԻՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԻ ՆԱՅԱՆԳՈՒՄ 1915 Թ. ԱՊՐԻԼԻ ՍԿԶԲԻՆ. ԱՎԱՆՑԻ (ԱՐՃԵՇ), ԱՐԾԿԵԻ (ԱԼՁԱՎԱԶ) ԵՒ ԲԵՐԿՐԻԻ ԿՈՏՈՐԱՍՏԵՐԸ¹

Ճատախի 1915 թ. մարտի 29-ի պայթյունավտանգ դեպքերից հետո, Վանի նահանգապետ Ջեւդեթը շարունակում էր իր հարաբերությունները Վանի հայ ղեկավար շրջանների հետ եւ իր «եղբայրական» երաշխիքներն էր տալիս Վանի հասարակական-քաղաքական գործիչներից մեկին՝ դաշնակցական Ա. Վուսմյանին՝ համատեղ ուժերով հայերի եւ քրդերի միջեւ խաղաղություն հաստատելու ճանապարհին: Սակայն ապրիլի 1-ին նրա հրամանով Վանի հայկական թաղերի մեջ գտնվող Համուդ աղայի զորանոցը, որ մինչ այդ դատարկ էր, միանգամից սպառնալիքներ, եւ այնտեղ տեղավորվեցին Ջեւդեթի հետ Բաշկալեից եկած 150 չերքեզները, ռազմաճակատից բերված 2000 հոգուց բաղկացած միլիի (ազգային. – Ա. Հ.) կանոնավոր զորամասերը, տարբեր տեղերից հրավիրված քուրդ հեծյալ եւ հետեւակ հրոսակախմբերը: Բացի այդ՝ տեղական կառավարությունը պաշտոնապես զինում է քաղաքի եւ արվարձանների 15–80 տարեկան մահմեդական տղամարդկանց²: Պատմական վավերագրերը հաստատում են, որ իշխանություններն ընդհանուր առմամբ Վանի հայության դեմ են կենտրոնացնում շուրջ 6000 զինյալներ՝ չհաշված աշխարհագրորդ, 12 թնդանոթ եւ 2 գնդացի³:

Զբաղարարվելով դրանով՝ Ջեւդեթը Վանի ոստիկանապետ Վեֆիկ բեյի միջոցով հրամայում է 20–45 տարեկան զինվորացու բոլոր հայերին եւ 18–20 տարեկան նորակոչիկներին երեք օրվա ընթացքում ներկայանալ հաշվառման՝ հակառակ դեպքում սպառնում էր, որ «անսաստողները» մահվան կդատապարտվեն, իսկ նրանց ընտանիքները կաքսորվեն Բաղ-

¹* Ստացվել է՝ 2.04.2024, գրախոսվել է՝ 5.04.2024: Էլ. հասցե՝ avharutunyan@mail.ru:

² Տե՛ս Օ. Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն, Վանի հերոսամարտը. Հերոսամարտը 1915 ապրիլի 7–1915 մայիսի 3, Սոֆիա, 1930, էջ 38:

³ Տե՛ս Վասպուրական. Վան-Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի տասնեւհինգամեակի առթիւ. 1915–1930, Վենետիկ – Ս. Ղազար, 1930, էջ 30:

դադ էլ Սիրիա: Այդ մասին Վանի երիտասարդներից մեկը՝ Պ. Բագրունին հիշում է. «Ժողովուրդը չափէն աւելի լիւում է կատարում իրողութիւնները տեսնելով: Ախտիկի, Աւարիկի, Հասան-Թամրանի, Հագարայի, ինչպէս եւ թուրք բանակին մէջ գտնուող հայ զինուորներու ջարդէն ետք այլեւս ամեն ինչ պարզ է, կուզուի նոյն վիճակը ստեղծել նաեւ հայութեան կեդրոնի-Վանի մէջ եւ Վանի հայութեան երիտասարդ շրջաններու մէջ յուզումը եւ ջղագրգռութիւնը վերին աստիճանի է: Որոշած ենք ընդառաջ չերթալ կառավարութեան եւ նոյնիսկ առաջնորդարանի կողմէ եղած յորդորներուն ու յայտարարութեանց, քանի որ պաշտօնապէս ստոյգ մահուան գիրկն է, որ պիտի տանին մեզ»⁴:

Ելնելով ստեղծված ոչ հուսադրող իրավիճակից եւ զգաստանալով մանավանդ Շատախի դէպքերից հետո՝ Վանի հայութիւնն ազգային մարմիններից ու կուսակցական ղեկավարներից պահանջում է վերսկսել ընդհատված ընդհանուր խորհրդակցությունները: Արդյունքում, որոշում է ստեղծել 14 հոգուց բաղկացած միջկուսակցական մի մարմին՝ Քաղաքական ժողով, որի քննությանն են հանձնվում Վանի հայ ազգաբնակչության բոլոր խավերի ու հոսանքների խնդիրները: Այդ կառույցում ընդգրկվում են Վանի բոլոր դասերի եւ խավերի, ազգային մարմինների եւ առաջնորդարանի աչքի ընկնող ներկայացուցիչները, ՀՅԴ, Սահմանադիր ռամկավար եւ ՍԴ հնչակյան կուսակցությունների պարագլուխները, այդ թվում՝ ռամկավարներից՝ Հովսեփ Գուլումճյանը, Ռուբեն Հովնանյանը, դաշնակցականներից՝ Իշխանը, Արամ Մանուկյանը, Գեւորգ Զիտեչյանը, հնչակներից՝ Հրանտ Գալիկյանը, Խաչատուր Զրբաշյանը, վաճառականներից՝ Ավետիս Թերզիբաշյանը եւ ուրիշներ:

1915 թ. ապրիլի 1-ին Քաղաքական ժողովն Այգեստանի Նորաշեն թաղամասի ս. Աստվածածին եկեղեցում խորհրդակցություն է հրավիրում Վանի առաջնորդական տեղապահ Եզնիկ վարդապետ Ներկարարյանի ղեկավարությամբ եւ քննում փախստական զինվորների հարցը: Միաձայն որոշվում է շարունակել իշխանությունների համար առիթներ չստեղծելու քաղաքականությունը եւ գոհացում տալ կուսակալի պահանջներին: Նախատեսվում է մի նոր պատվիրակություն (կազմը՝ Ա. Թերզիբաշյան, Գ. Զիտեչյան եւ Ա. Վոսմյան) ուղարկել պատրվակ որոնող կուսակալի մոտ, կրկին անգամ փորձելու համաձայնության եզրեր գտնել նրա հետ՝

⁴ Ա. ԴՕ, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թթ., Երեւան, 1917, էջ 154, Հ. ԿՈՍՅԵԱՆ, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիւնները, Երեւան, 1992, էջ 24:

բավարարել նրա պահանջները եւ երաշխավորությամբ ու մաս-մաս օսմանյան բանակին տրամադրել ամրաշեն զինվորներ, որոնք պետք է մեկնեին Արճեշ եւ աշխատեին ճանապարհների շինարարության վրա «թէկուզ նրանք դահնի ձեռքը մատնուին»⁵։ Վահե Թաշճյանը, կատարելով միանգամայն ճիշտ հարցադրում, նշում է. «Այս պայմաններում մէջ պէ՛տք էր շարունակել ամէլիները անգէն վիճակով ուղարկել ռազմաճակատ»⁶։

Քաղաքական ժողովը Վանի առաջնորդական տեղապահ Եզնիկ վարդապետին հանձնարարում է ապրիլի 2-ին հրապարակել մի կոչ, որով 18—45 (50) տարեկանները պետք է ցուցակագրվեին եւ կատարեին իրենց քաղաքացիական պարտքն օսմանյան պետության հանդեպ։ Կոչում մասնավորապես նշվում էր. «Հայ հասարակութեան, Օսմանեան պետութեան ներկայ պատերազմին մէջ, կառավարութեան վերջին կարգադրութեան համաձայն, Հայոց զինուորական ծառայութիւնը երկրագործական աշխատութեան եւ ճամբաներու շինութեանց յատկացուած ըլլալով եւ ձմեռուան եղանակին սոյն աշխատութիւնն թոյլատու չլինելու եւ այլն կարգ մը պատճառներով, հայ զինուորացունեին մէկ մասը իրենց պարտականութեան գլուխ չէին գտնուած։ Արդ՝ երկրագործական եւ ճամբայի աշխատութեանց եղանակը արդէն սկսած եւ մանաւանդ, վստահ, որ կառավարութիւնը եւ ազգը ամեն միջոցներ խորհած են պաշտպանելու զինուորներու կեանքը, պատիւը եւ տունը մնացած ընտանիքը, ջերմապէս կը յորդորենք, որ մեր ազգային ժամ առաջ ընդ առաջ երթան կառավարութեան պատուէրին եւ փութան կատարել իրենց ֆալաֆացիական պարտականութիւնը։

Աղօթարար

1915, Ապրիլ 2

Վան-առաջնորդարան

Առաջն[որդական] փոխ[անորդ] Վանայ

Եզնիկ վրդ [արդապետ] Ներկարարեան»⁷։

Ըստ էության՝ կոչը խաբեություն էր եւ դավաճանություն հարազատ ժողովրդի հանդեպ։ Քաղաքական ժողովը եւ մասնավորապես իշխող դիրք գրավող դաշնակցությունը, աչքաթող անելով ժողովրդի հորդորները, շարունակ շեշտում էին հարմարվելու, համակերպվելու սկզբունքը եւ

⁵ Անդ։

⁶ Վ. ԹԱՇՃԵԱՆ, Իշխանը. Վանա իշխանի կեանքն ու գործունէութիւնը, Երեւան, 1994, էջ 178։

⁷ «Աշխատանք», Վան, 1915 թ. ապրիլի 4, թիւ 15=214, նաեւ Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հտ. ԺԱ., Պէյրուս, յունուար, 2015, էջ 296։

բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ էր համարում խոհականությունն ունենալ, բավարարել կառավարության պահանջները եւ ժամանակ շահել:

Ակամայից հարց է առաջանում՝ հանուն ինչի էր դաշնակցության եւ առաջնորդարանի այդ նվաստացումն ու համակերպումը, ուր մնացին նրանց՝ սերնդե-սերունդ ներարկած հեղափոխական-հայրենասիրական դաստիարակությունը եւ ներշնչանքը, ուր օրվա համար էին այն զենքերն ու զինամթերքը, որ նրանք պահում էին իրենց աչքի լույսի պես: Այս առիթով «Վարագ»-ը նկատում է. «Ուրիշ ի՞նչ մեծ նուաստացում եւ յիմարութիւն՝ քան նետել կամ թափել զէնքերը ու երթալ անգէն կոտորուիլ իբրեւ թրքական բանակի ամրաշէն բանուոր: Ամենախիստ զգուշութիւնը մի՞թե երբեմն ամենամեծ անզգուշութիւնը չէ: Ինչու չիղել 1896-ի եւ չխրատուել անկէ երբ գործը նոյն թուրքին հետ է: Ինչո՞ւ մոռնալ 1908-ը...»⁸:

Եւ վերջապես ամենակարեւորը. եթե դաշնակցությունն իրոք 1912 թ. մայիսի 5-ից իր կապերը խզել էր իթթիհատի հետ, ապա ինչո՞ւ չէր ապստամբում: Որքանով էին ճիշտ ըստ կարելիւն ժամանակ շահելու եւ նվազագույն զոհերով դուրս գալու նրա հուսահատական փորձերն ու մարտավարությունը, երբ երիտթուրքերն արդեն ի գործ էին դրել արեւմտահայոց ցեղասպանության քաղաքականությունը:

Ըստ էության՝ այլ կերպ էր մտածում Վանի երիտասարդությունը, որը դաշնակցության հիմնական ուժը հանդիսանալով, դեմ էր «խոհեմութեան» կարգախոսին եւ կոչ էր անում ինքնապաշտպանության: Նա ըմբոստացավ իր ղեկավարության վարած զգոնության քաղաքականության դեմ, հանդես բերեց արիություն եւ դիմադրական պայքարի կորով, նշելով, որ «սարեր, ձորեր անարգ խայտառակ մահուան փոխարէն հոս նամուսով կը մեռնին»⁹: Նրանք վստահ էին, որ «կառավարութիւնը դաւեր է լաւում, նա անվերջ դէպքեր է ստեղծում եւ ջարդերի պատրաստութիւններ է տեսնում», հետեւաբար «չալիտի խաբուեմք. կառավարութեանը վստահիլ այլեւս յանցանք է, ինչ լինելու է, թո՛ղ լինի»¹⁰: Սակայն կացությունը ծանր էր, քանի որ դրված էր մի ամբողջ ժողովրդի գոյության խնդիրը, եւ յուրաքանչյուր առիթ կարող էր ահալոր ջարդերի պատճառ դառնալ: «Յամառիլ եւ

⁸ «Վարագ», բացառիկ, նուիրուած Մեծ Եղեռնի եւ Վանի հերոսամարտի 50-ամեակի տարեդարձներուն, 1915–1965, 1965 թ. ապրիլ, թիւ 49, էջ 102:

⁹ Հ. ԿՈՍՈՅԵԱՆ, նշ. աշխ., էջ 25:

¹⁰ Օ. ՄԻԻԹԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 43:

շարունակել զիջումներու նամապահը,— գրում է Օ. Մխիթարյանը,— յիմարութիւն մըն էր, որ վայել չէր ո՛չ Դաշնակցութեան եւ ո՛չ ալ Վանի ռազմունակ երիտասարդութեան»¹¹:

Կոչն իրականացնելու համար ընտրվում է հատուկ մասնախումբ, որը պետք է սկսեր 18–45 տարեկանների ընդհանուր ցուցակագրումը եւ ապրիլի 6-ին զինվորացուների առաջին խումբը՝ շուրջ 500 հոգու՝ Ա. Թերզիբաշյանի ու Հ. Գուլումճյանի ուղեկցությամբ հանձնել կառավարությանը¹²: Սակայն, այս եւ նմանատիպ այլ կոչերն ու զիջումներն այլեւս արդյունք չունեցան, քանի որ կուսակալն անվերապահորեն պահանջում էր, որ Այգեստանի եւ Քաղաքամեջի զինվորական հաշվառման տակ գտնվող 4000 հայ զինվորներն առանց երաշխիքի ներկայանային «ծառայության»¹³: Ինչպես Հ. Մորգենթաուն է մատնանշում, զորակոչիկներին ուղղակիորեն ցանկանում էին կոտորել՝ հայ բնակչության ցանկացած դիմադրություն գլխատելու համար¹⁴:

Բազում հարցերի պատասխանն ստանալու ակնկալիքով Վանի երիտասարդությունը 1914 թ. ապրիլի 2-ին Այգեստանում գտնվող «Աշխատանք»-ի խմբագրատանը հանդիպում ունեցավ Իշխանի, Արամի եւ Օսմանյան խորհրդարանի պատգամավոր, Վանի դաշնակցության Արեւմտյան բյուրոյի անդամ՝ Ա. Վռամյանի հետ: Հատկանշական է ժողովի ժամանակ Ա. Վռամյանի տված բացատրությունն իր, Արամի եւ Իշխանի վրա բարդված մեղադրանքների առիթով. «Դուք կը խօսիք կառավարութեան դաւադրութեան մասին: Այո՛, ես գիտեմ, որ օր մը իմ դիակը փռուած պիտի մնայ Այգեստանէն Քաղաք տանող ճամբուն վրայ: Գիտեմ, որ այն 500 ամեյլները, զոր մենք խոստացել ենք տալ առաջին առթիւ, դէպի անստոյգ ապագայ մը, թերեւս դէպի մահը կ'առաջնորդենք, բայց... մենք չպիտի սկսենք, մենք չպիտի տանք ազդանշանը: Եւ, վերջապէս, մենք համոզուած ենք ձեզ հետ, որ հակառակ մեր բոլոր զիջումներուն եւ խաղաղասիրական ձգտումներուն՝ օր մը անհրկու փոթորիկը պիտի պայթի մեր գլխուն: Այդ օրերը մօտեցած են... Բայց մեր ամբողջ նպատակն է քիչ զոհերով ազատիլ այս վիթխարի հարուածեն... Թո՛ղ Վռամեան մը չըլլայ, թո՛ղ Իշխան մը սպանուի, թո՛ղ 500 ամեյլներ

¹¹ Անդ:

¹² Տէս Յոնեշեր ԱՐՄԵՆԱԿ ԵԿԱՐԵԱՆԻ, Գահիրէ, 1947, էջ 185:

¹³ Հատ միս Նեփիր՝ 3000 զինվոր: Տէս Ճ. ՊՐԱՅՍ ԴԵՐԿՈՄՍ, Անգղիական կառավարութեան կապույտ գիրքը Հայկական Մեծ Եղեռնի մասին (1915–1916), Կ. Պոլիս, 1919, էջ 71:

¹⁴ Տէս H. MORGENTHAU, Ambassador Morgenthau's story, New-York, 1926, էջ 298:

անստոյգ կամ անխուսափելի մահուան ենթարկուին, թո՛ղ ամբողջ գաւառ մը նոյնիսկ հուրի ու սուրի տակ ոչնչանայ... Բայց թո՛ղ փրկուի մեծամասնութիւնը, թո՛ղ կարենայ հողոսպրիլ հայութիւնը իբրեւ ազգային հաւաքականութիւն... Միայն վերջին բոլակին, երբ այլեւս ոչ մէկ նամբայ կը մնայ, եւ թշնամիի սուրը կը երկարի ամբողջ հայ ազգի պարանոցին առհասարակ, այն ատեն ոչ ոք պիտի մեղադրէ ձեզ, եթէ դուք եւս դիմէք ձեր առաջարկած ինքնապաշտպանութեան գէնիին եւ պաշտպանէք ինքզինքնիդ ու ձեր ազգութիւնը...»¹⁵:

Հ. Կոստյանը, փորձելով արդարացնել Վանի դաշնակցական գործիչների գործելակերպը, նշում է. «Մեր առաջնորդները կ'ըմբռնէին Ձեկտէթի խաբկանքները, ինչպէս նաեւ ամուր պահանջներում աստառը, բայց իրենց կեանքի գնով անգամ կողմնակից էին համաձայնութեան, հաշտութեան բոլոր միջոցներու սպառումն: Զոհել ինչ որ կարելի է, ժողովրդի գոյութիւնը գէթ մէկ օր, մէկ ժամ անգամ երկարացնելու համար,— այս էր իրենց տեսակէտը»¹⁶:

Սակայն 500 զինվոր գիտակցված եւ կամավոր կերպով զոհելը չի իրականանում Բերդակի դեպքի պատճառով, իսկ դրանից հետո դաշնակցությունը «բացում է աչքերը» եւ հաշվի նստում Վանի մյուս կուսակցությունների, ազգային մարմինների ու խմբերի հետ՝ հասկանալով, որ պետք է դիմել ինքնապաշտպանության: Արդյունքը լինում է այն, որ Քաղաքական ժողովը որոշում է գումար հավաքել եւ զենք գնելու նպատակով այն բաշխել կուսակցություններին¹⁷:

1915 թ. ապրիլի 2–4-ին Վանում դեռ բաց էին դպրոցները, խաչ-փողոցի, Արարքի խանութները եւ քաղաքի շուկան, որի պաշտպանության եւ հսկողության, ինչպես նաեւ գիշերային անցուղարձին հետամուտ լինելու համար 1914 թ. նոյեմբերից կառավարության թույլտվությամբ եւ կարգադրությամբ կազմվել էր 15 հոգուց բաղկացած պահակախումբ՝ ոստիկանապետի գլխավորությամբ¹⁸: Սակայն կուսակալը նոր զորամասեր է մտցնում քաղաք, դրանք տեղավորում զորանոցներում, Զիտեչյանների տանը (ուր այդ օրերին Ֆրանսիական հյուպատոսություն էր, իսկ ավելի վաղ այն Վանի նահանգապետերի բնակարանն էր): Սրա արդյունքում Քաղաքամեջի ու շրջանների հետ հարաբերությունները դժվարանում են: Երկրի համար այդ վճռական պահին հարմար առիթի սպասելով՝ Թ. Զե-

¹⁵ Օ. ՄԽԻԹԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 36–37:

¹⁶ Հ. ԿՈՍՏՅԱՆ, նշ. աշխ., էջ 25–26:

¹⁷ Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 188:

¹⁸ ՏԵՍ Հ. ԿՈՍՏՅԱՆ, նշ. աշխ., էջ 28:

դեթը դեռ փորձում էր խաբել Ա. Վռամյանին, իսկ նրա միջոցով՝ վան-վասպուրականցիներին: Նա փորձում էր հավաստիացնել, որ կատարվող զորաշարժերն «արժեք» չունեն, որ իր վերաբերմունքը հայերի հանդեպ բարյացակամ է, եւ ինքը շարունակելու է հոր՝ ալբանացի Թահիր փաշայի հայասեր քաղաքականությունը: Սակայն նա իր հաշիվների մեջ սխալվում է, քանի որ Վանի հայությունը, առանձնապես երիտասարդությունը, միշտ զգոն էր եւ աչալուրջ հետեւում էր դավադիր նահանգապետի բացահայտ եւ ծածուկ բոլոր գործողություններին:

Ապրիլի 4-ի կեսօրին ընդհատվեցին հարաբերությունները Վանի Այգեստան եւ Քաղաքամեջ թաղամասերի միջեւ, եւ երիտասարդությունն սկսեց նախապատրաստվել զինված ինքնապաշտպանության: Փորձելով շեղել հայերի ուշադրությունը նախապատրաստվող դավադրությունից, Զեւդեթն ապրիլի 6-ին, երկուշաբթի օրը, դիմեց խորամանկության եւ հրաման տվեց, որ ամեն մարդ խաղաղ իր գործով զբաղվի՝ հավաստիացնելով, թե «ամեն ինչ հանդարտ է»: Սակայն նույն օրն սկսվեց Վասպուրականի ամենամեծ քաղաքներից մեկի՝ Արճեշ-Ականցի ջարդ ու թալանը:

Արճեշի, Արծկեի եւ Բերկրիի կոտորածները կարծես՝ Հայոց ցեղասպանության պատմության անտեսված էջերից են:

Արճեշի գավառը՝ յուր Արճեշ-Ականց կենտրոնով¹⁹ գտնվում էր Վանա լճի հյուսիս-արեւելյան ափին: Գավառի 51 (ըստ Վանի շրջանային վարչության զեկուլցի՝ 42)²⁰ գյուղերում ապրում էր 1303 տուն հայ՝ 10313 հայ ազգաբնակչությամբ, իսկ Արճեշ գյուղաքաղաքն ուներ 304 տուն հայ եւ 700 տուն թուրք բնակչություն²¹:

Արճեշը Հիրճից հետո Վանի նահանգի երկրորդ բնակավայրն էր, որը դառնում է թուրքական կառավարության կազմակերպած բարբարոսություններից ամենաշատ տուժած բնակավայրերից մեկը, որի կրած վնասներն ահռելի էին թե՛ մարդկային եւ թե՛ գույքային կորուստների առումով: Դրա պատճառները երկուսն էին. ա) այն, որ հայերն այստեղ քրդերի եւ թուրքերի հետ համեմատած կազմում էին փոքրամասնություն եւ բ) Արճեշի հայերը չափազանց մեծ հավատ են տածում իրենց կայմակամ Ալի Ռիզա (Իրզա) բեյի նկատմամբ, որը թուրք պաշտոնյային հատուկ խո-

¹⁹ Արճեշն իր մեծությամբ եւ կարեւորությամբ Վանի նահանգի երկրորդ մեծ քաղաքն էր Վանից հետո:

²⁰ Տե՛ս «Աշխատանք», Վան, 1915 թ. յուլիսի 15, թիւ 33–232:

²¹ Տե՛ս «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1924 թ., դեկտեմբեր, թիւ 2, էջ 78–79:

րամանկությունը կարողացել էր այնպես խաբել գավառի հայությանը, որ բնավ ենթադրել իսկ չէին կարող, որ նրա օրոք կարող էր հայկական կոտորած կազմակերպվել:

Ոճրագործ կուսակալը գավառի հայության բնաջնջումը նախատեսում է սկսել ապրիլի 6-ին՝ գավառի գյուղերից ու հեռավոր շրջաններից: Դեպքերից արդեն 3–4 օր առաջ հայտնի է դառնում ջարդերի կազմակերպման ծրագիրը, որն իրագործվում է մեծ հմտությամբ: Փրկվածների միահամուռ վկայությամբ այն բաղկացած էր չորս կետից. ա) նախատեսվում էր բնաջնջել գավառի հայության ամբողջ արական սեռը՝ սկսած պատանիներից մինչև զառամյալ ծերունիներ, բ) այրիացած կանանց, աղջիկներին եւ երեխաներին բաժանել իրար մեջ, գ) որբացած հայ մանուկներին թուրքացնել եւ դաստիարակել մահմեդականության ոգով եւ դ) կողոպտել, այրել եւ ոչնչացնել հայերի տնտեսությունը²²: Արտառոց տմարդի բնազդով իրագործվեցին ծրագրի հատկապես առաջին, երկրորդ եւ չորրորդ կետերը: Ինչպես հետագայում իր զեկուցագրում կնշեր Մուշում գերմանական առաքելության ներկայացուցիչ, ծագումով շվեդուհի՝ օրիորդ Ալմա Յուհանսոնը «Թուրքիայի կառավարությունը հրաման էր արձակել, որ հայերը (խոսքը Վանի հայության մասին է. – Ա. Հ.) հանձնեն իրենց զենքերը, որին հայերը մերժողական պատասխան էին տվել, հայտարարելով, որ կարող է դրանց անհրաժեշտությունը զգացվի: Դա իսկական ջարդերի պատճառ դարձավ: Հայերով բնակեցված բոլոր գյուղերը հրկիզվեցին: Թուրքերն արդեն պարծենում էին, որ ազատվել են բոլոր հայերից: Ես իմֆս դա լսեցի պաշտոնյաներից, նրանք հրեմում էին այն մտքից, որ բոլոր հայերը բնաջնջվել են»²³:

Դեռեւս ապրիլի 2–4-ը օնբաշի (տասնապետ. – Ա. Հ.) Ալիի եւ ոստիկանապետ Աբդուլահի միջոցով Ականց քաղաքում են հավաքում գավառի՝ Բանոն, Բերդակ, Օրորան, Աշսրաֆ, Գանձակ, Բերդաշ գյուղերի, ինչպես նաեւ Աբաղայի թվով 800 (ըստ «Кавказ» թերթի՝ 1000)²⁴ հայերին «ամալիե թաբուրներ»-ի՝ բանվորական գումարտակների անվան տակ Դիարբեքի տեղափոխելու պատրվակով: Սակայն ապրիլի 6–7-ը նրանց 50-ական խմբերով դուրս են բերում քաղաքից եւ կոտորում: Բանն այն է,

²² Տե՛ս «Աշխատանք», Վան, 1915 թ., յուլիսի 15, թիւ 33–232:

²³ Ա. Յոհանսոն, Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի Հայոց պատմությունից, Երեւան, 2008, էջ 42:

²⁴ Տե՛ս «Кавказ», Тифлис, 1915, 8 июля, № 153:

որ զորակոչի նկատմամբ կասկածանք ամենեւին չկար, քանի որ հայերի հետ միաժամանակ հավաքագրում էին նաեւ թուրքերին ու քրդերին: Կոտորվածների մեջ էին Աբաղալյի առաջնորդական փոխանորդ տեր Եղիշեն, վաճառականներ՝ Նիկողոս էֆենդի Շալաջյանը, իր տղան Սարգիսը, փրոդ՝ Հարությունը, Նշան, Խոսրով եւ Սերոբ էֆենդիները²⁵:

Այն քաղաքացիները, որոնք ազատ էին «ամալյա» («համալար»՝ բանվորական – Ա. Հ.) գումարտակների ծառայությունից, նույն օրը կայմավամի անունով մեկ-մեկ կանչվում են ոստիկանություն եւ ձերբակալվում:

Ավետման նախորդ օրը՝ երկուշաբթի ապրիլի 6-ի վաղ առավոտյան կառավարության մունետիկը Քաջբերունիների երբեմնի նստավայր, 2078 հոգի բնակչություն ունեցող Ականցի (Արճեշի) հայերին ազդարարում է, որ 15 տարեկանից բարձր բոլոր հայ տղամարդիկ (ըստ ռուսական աղբյուրների՝ 10-ից՝ 80 տարեկան)²⁶՝ համաձայն սուլթանական իրադեհի, հավաքվեն հյուրմեթում (կառավարության տուն. – Ա. Հ.) եւ կշլանում (զորանոցում. – Ա. Հ.): Միաժամանակ փողոցներում շրջելով եւ տները մտնելով՝ ժանդարմներն սկսում են հայերին քշել դեպի «հյուրմեթ», որովհետեւ հրամայված էր «մութը ընկնելուն պէս բոլորը տուններնին ֆաշուին»²⁷: Ընդհանուր առմամբ հավաքվում է 400-ից ավելի հայ տղամարդ (ըստ Հ. Մորգենթաուի՝ 500)²⁸: Նրանց բոլորին՝ 8–10 հոգանոց խմբերով, տանում են քաղաքից դուրս՝ Խարկին գյուղի մոտ եւ իրար կապկպելով գնդակահարում: Իսկ դիակները լցնում են գետը, կամ ծածկում ավազով: Այդ մասին դեպքերի վերապրած ականատես՝ որմնադիր Սիմոնը հիշում է. «Յանկարձ դուռը բացուեցաւ եւ շէմֆին վրայ երեսաց ֆաղաֆալետը՝ Ալի էֆենդին: Նա մեզմէ 11 հոգի դուրս հանեց, կողֆ կողֆի կարգով շարեց միջանցին մէջ եւ պարանով բոլորի թելերը իրար կապեց: Մեզմէ յետոյ ութ հոգի ալ դուրս հանեցին եւ նմանապէս կապեցին: Երբորդ խումբը կազմեցաւ ինը հոգիներէ: Կարգով իրար կը կապէին այնքան մարդ, որքան որ պարանը կը բաւէր: Երբ այս գործողութիւնը վերջացաւ, բանտապետը դարձաւ հոն գտնուող 8–10 ժամտարմներուն եւ ըսաւ. «Պունլար սիզէ թէսլիմ էթտիք. կէօթիւրին

²⁵ Տէս Ա. Դ 0, նշ. աշխ., էջ 175:

²⁶ Տէս «Кавказское слово», Тифлис, 1915, 29 апреля, №96:

²⁷ Օ. Մ Խ Թ Ա Ր Ե Ա Ն, Վանի ինքնապաշտպանութիւնը, «Հայրենիք ամսագիր», Բոստօն, 1924 թ., դեկտեմբեր, թիւ 2, էջ 79:

²⁸ Տէս «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները», Կ. Պոլիս, 1919, էջ 247:

կշլայեա» (ասոնց ձեզ կը յանձնենմ, տարէ՛ք զօրանոցը): Ժամտարմները մեզ, երեմ շարժ հայերուս, 28 հոգի առջեւները ձգեցին եւ բշեցին... Քաղաքէն դուրս հանելով՝ մեզ բշեցին դէպի Խարկին գիւղը՝ քաղաքէն կէս ժամ հեռու: Գիւղին տակ հեղեղատ մը կայ, որու մէջէն կը հոսի փոքրիկ առու մը. հեղեղատը կը կոչուի Դարա-Զամին: Յանկարծ ժամտարմները մէկ կողմ քաշուեցան, հրացաններու բերանները մեզ ուղղեցին եւ կրակեցին...»²⁹:

Կոտորածն իրականացվում է Արճեշի կայմակամ Ալի Ռիզա բեյի եւ բերդապետ Ալի էֆենդիի մեղսակցությամբ: Փրկվում է լոկ 24 հոգի՝ այդ թվում հրաշքով ազատված որմնագիր Սիմոնը³⁰, որ ապրիլի 8-ին ապաստանում է Դիարբեքում գտնվող ռուսական բանակի զորանոցում³¹: Կովկասի փոխարքային կից դիվանագիտական հարաբերությունների գծով աստիճանավոր Ստոլիցյան նշում էր, որ «Դիարբեքից Հայոց ազգային բյուրոն այսօր ստացել է հետեւյալ հեռագիրը. առավոտյան Դիարբեքից եկած 23 տղամարդիկ, որոնք փախել էին Արճեշից եւ Սոսումոնից, պատմում են ռուսականության ձեռքով այնտեղի հայերի գլխովին գնդակահարության ու կոտորածի մասին, որ կատարվում է թուրքական իշխանությունների կարգադրությամբ»³²:

Ռուսական բանակի գեներալ Ն. Օգանովսկին փաստում է, որ Արճեշի կոտորածների ժամանակ քրդերը ներխուժում էին հայկական տները, բռնաբարում կանանց ու աղջիկներին, իրենց հետ տանում էին երիտասարդներին, իսկ մնացածներին եփում էին կաթսաների մեջ, գցում էին թոնիրը, ոտքերին հագցնում էին շիկացած պայտեր եւ ենթարկում էին այլ տանջանքների ու ծաղրուծանակի³³: Այդ մասին անդրադարձ է կատարում նաեւ «Աշխատանք» պարբերականը, որը մասնավորապես վկայակոչում է. «Կը մտնէին տուները, իրենց ձեռքովը ուզածնին կը վերցնէին, կանանց զարդեր եւ թանկարժէք իրեր կը թալլէին: Բռնաբարութիւններ ալ կատարեցին կանանց վրայ»³⁴:

²⁹ «Յիշատակագիր Վանայ ինքնապաշտպանութեան դէպքերուն (1915 ապրիլ-մայիս) (Օտար եւ հայ պաշտօնական վաւերագրերէ քաղուած)», Կ. Պոլիս, 1919, էջ 72-75:

³⁰ Տէս Ա. ՎԵՐ. ԿՕՐԿԻՋԵԱՆ, Վասպուրականի հերոսամարտը 1915 ապրիլ 7 - 1915 մայիս 7, Յոյս եւ Լոյս, Պէյրուս, 1965, էջ 66-68:

³¹ Տէս Ա. - ԴԹ, նշ. աշխ., էջ 170-171:

³² Հայերի ցեղասպանութիւնը Օսմանյան կայսրութիւնում, փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու Մ. Ներսիսյանի խմբագրութեամբ, Երեւան, 1991, էջ 338:

³³ Տէս «Русские ведомости», Москва, 1915, 9 мая, № 105:

³⁴ «Աշխատանք», Երեւան, 1916 թ. հուլիսի 23, թիւ 24:

Ապրիլի սկզբին Արճեշի 13 000-ից ավելի հայ ազգաբնակչությունից 50-ական խմբերով կոտորվեց 3000 հայ³⁵։ Հստ ամերիկացի պատմաբան Ժոզեֆ Գրինի զոհվեց ավելի քան 4000 մարդ, որոնցից շուրջ 2500-ը՝ տղամարդ էին³⁶։ Այլ տվյալներով՝ կոտորածներին զոհ դարձան 4542 հայեր³⁷։ Հնդ որում սրախողխող են լինում 2378 տղամարդ եւ երիտասարդ, առեւանգվում ու գերեվարվում են 518 կին ու աղջիկ, անհետ կորում է 693, իսկ հիվանդություններից մահանում է 953 մարդ³⁸։ Գավառի 10 գյուղերի (Անձավ, Փերոմար, Քոքն, Դատալու, Զեւէ, Կարաշալու, Շավդեան, Գեւկան, Գոմեշվան, Կրագոմ) հայ ազգաբնակչությունն ամբողջովին անհետանում է³⁹։ 1915 թ. հուլիսին կենդանության նշույլ կար միայն Ականց, Կտրած քար, Խարկեն, Բլուրմակ եւ Օրորան գյուղերում⁴⁰։

Ականցի կոտորածներին զուգընթաց ապրիլի 6-ին համընդհանուր ջարդ սկսվեց նաեւ Արծկե (Ալշավազ) գավառում, որի վարչական կենտրոնը՝ Արծկե գյուղաքաղաքն էր⁴¹։ Այստեղ ժանդարմները, «միլիսներ»ը եւ տեղական քուրդ խուժանը գյուղերի վրա հարձակվեց միաժամանակ։ Այդ գյուղերից էր 48 տուն հայ բնակչություն ունեցող Նորշնջուղ գյուղը, որտեղից 40 տղամարդ, խուսափելով կոտորածներից, ապաստան գտավ հարեւան Բիթլիսի նահանգի Մանազկերտ գավառի հայ եւ քուրդ ազգաբնակչություն ունեցող Կզըլ-Յուսուֆ գյուղում։ Ապրիլի 13–14-ին, երբ Ալշավազի կոտորածներն ավարտվել էին, գավառի կայմակամի հրամանով տեղ հասած երկու տասնյակ ժանդարմները Նորշնջուղում պատսպարված 40 հայերին իրար կապկպելով գուղից դուրս տարան եւ հայտնի ձեւերով բոլորին սպանեցին⁴²։

Մանազկերտի առաջնորդական փոխանորդ Հովհաննես քահանա Տեր-Ավետիսյանը Անենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանին

³⁵ Տէս ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.23, թ. 1–14։

³⁶ Տէս REV. JOSEPH K. GREENE D. D., *Leavening the Levant*, Boston, New-York, Chicago, 1916, էջ 45։

³⁷ Տէս «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1924, դեկտեմբեր, թիւ 2, էջ 78։

³⁸ Տէս Ա. ԴՕ, նշ. աշխ., էջ 186–188։

³⁹ Տէս Օ. ՄԽԻԹԱՐԵԱՆ, Վանի ինքնապաշտպանութիւնը, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1924 թ., դեկտեմբեր, թիւ 2, էջ 78։

⁴⁰ Տէս «Աշխատանք», Վան, 1915 թ. յուլիսի 15, թիւ 33–232։

⁴¹ Արծկե, թուրքերեն՝ Ալշավազ, «Աղջեւազ, Աղլի ջեւուզ – անվանի ընկույզ», քանի որ քաղաքում շատ էին ընկույզի ծառերը։ Տէս Մ. ՔԵՇԻՇՅԱՆ, Արծկեի փրկված հայ բեկորը, Երեւան, 2014, էջ 22։

⁴² Տէս Ա. ԴՕ, նշ. աշխ., էջ 189։

ուղղված 1915 թ. մայիսի 28-ի իր նամակում ներկայացնում է Արծկեի (Ալջավազի) եւ Ականցի (Արճեշի) կոտորածների զարհուրելի պատկերը: «Հիշյալ գավառակներու մէջ ալ էրիկ մարդ չեն թողուցեր, ամենքն ալ սուրեւանցուցեր են, գեղանիներն գերի տարեր են հետերնին, իսկ անպետները փախած Բաղնոցի կողմերը կթափառին...

Արծկեի վիճակը

– Նորշենդ ունի 45 տուն հայ բնակիչ, սպանուած է 123 մարդ:

– Գզլիսուֆ 5 տուն հայ բնակիչ ունի, զոհերու թիւն է 5: Իսկ բուն Արծկեի քաղաքէն այժմ 2 հոգի միայն ազատուեր են:

– Սփանշելագործի վանքի զոհերու թիւն է 26. սպանուած է նաեւ վանքի վանահայրը՝ Եղիշէ վրդ. եւ վանքի բոլոր սրբոթիւններն ալ կողոպտեր են: Արծկեի միւս գիւղերը ամայի ըլլալու համար մինչեւ հիմա մարդ չկրցի դրկել, յետոյ միւս գիւղերու վնասները կգրեմ, երբ ստուգելու ըլլամ:

Արտիշու (Ականց) վիճակը

– Գրակոմ ունի 33 տուն հայ բնակիչ, զոհերու թիւն է 61, գերիներու թիւը 13:

– Զիրաֆլու 25 տուն հայ բնակիչ ունի, սպանուած են 50 մարդ, գերի տարուած 15 կին ու աղջիկ:

– Քոշեր 50 տուն բնակիչ ունի, զոհ տուեր են 107 անձ, գերի տարուած 22 հոգի:

– Նորշեն-բնակիչ 24 տուն հայ, սպանուած է 62 հոգի, գերի 5 հոգի, իսկ Ականց գիւղաքաղաքի զոհերու թիւը, ռուսներու պաշտօնեաներու տեղեկութիւններուն նայելու ըլլանք, 2300 անձի կհասնի եղեր»⁴³:

Հանրի Պառպին անձամբ լսելով Արճեշի հայկական գյուղերից մեկի 1915 թ. ապրիլյան կոտորածի ականատես, դեռահաս (14-ամյա) հայազգի Սառայի ահաստուտ վկայութիւնը, արձանագրում է. «Զատկի խթման իրիկունն էր: Թուրքերը մեր գիւղին մէջ խուժեցին, ...զինուած էին. այրերը հաւաքեցին, լինին եզերքը տարին, իրար կապեցին եւ հրացանի բռնեցին: Այս գործողութիւնը տեսեց, կէս օրէ վերջ ժամը մէկէն մինչեւ ժամը հինգ, եւ յաջորդ օրը նորէն ակսաւ: Ամեն իրիկուն, թուրք զինուորները կու գային կիները տեսնել, եւ իւրաքանչիւրին իր ամուսնոյն մարմինին մէկ մասը կը բերէին, ըլլայ ռաբերը, ըլլայ ձեռքերը: Եւ մանրամասնութիւնները կը պատմէին այն եղանակի մասին, որով զանոնք նահատակած էին: Երբ ալ ո՛չ այր եւ ո՛չ ալ մանչ

⁴³ Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Նյութեր հայկական կոտորածների մասին, ՊՐՀ, 1965, թիվ 1, էջ 89:

մնաց, պէյ մը եկաւ գիւղ: Հրաման ըրաւ, որ եկեղեցիի հրապարակին վրայ հաւաքեն բոլոր կիները եւ բոլոր երիտասարդ աղջիկները: Յետոյ հրաման ըրաւ որ ամենմէն ալ բոլորովին հանուին: Երբ ասիկա եղաւ (սպաննեցին զանոնք որոնք մերժեցին), իրենց հասակին կարգովը շարեցին եւ պէյին առջեւէն անցուցին զիրենք: Քննեց զանոնք եւ շօշափեց, ինչպէս անասուններուն կ'ընեն: Մէկ կողմ առին զանոնք զորս մատնանշեց եւ բոլոր միւսները շարեցին...»⁴⁴:

Սարսափելի էր նաեւ Բերկրիի կիրճի (Գյալիի) կոտորածը: Բերկրիին ունէր 110 տուն քուրդ եւ 25 տուն հայ բնակչութիւն⁴⁵: Կենտրոնական կառավարութեան հովանութեամբ էր որ ապրիլի 6–14-ը Բերկրիի կայմակամ՝ Զիա բեյը, որ վանեցի թուրք էր⁴⁶, եւ ոստիկանութեան պետ՝ Ամար բեյը հրամայեցին գյուղերի թուրք եւ քուրդ տանուտերերին կազմակերպել Բերկրիի 40 գյուղերի 7 տարեկանից բարձր 5 հազար հայերի կոտորածը եւ պատժել բոլոր այն մահմեդականներին, որոնք փրկութեան նպատակով կապտսպարեին հայերին⁴⁷: Կոպ-Մահմադ բեկի որդուն համիդեական ալայի՝ գնդի ղեկավար Թահար բեկին Նազարավա գյուղում ճաշելիս գայմագամը թունավորվեց լոկ այն բանի համար, որ նա հայերին թաքցրել էր⁴⁸: Այդ դեպքերի առիթով Շաթրի Հակոբի եւ Շաթրի Սեդրակի այրիացած ու որդեկորույս կանայք հիշում են. «Ապրիլ 7-ին, Աւետման օրը... յանկարծ լուր բերին, որ ժամտարմները շուկային մէջ հայերը կը բռնեն ու կը բանտարկեն: Քիչ յետոյ ժամտարմները սկսան տունները մտնել եւ դուրս քաշել տղամարդիկ: Մինչեւ այդ ատեն մենք լուր չունէինք, թէ գիւղերու մէջ ինչեր կատարուած են: Յետոյ իմացանք, որ գայմագամը եւ ժամտարմայի հրամանատարը զօրով մտած են Պատիկ գիւղը ու Գործոք ու բոլոր տղամարդիկ կոտորած են: Լուր հասաւ նաեւ, որ Բերկրի ձորի մէջ աշխատող հայ զինուորները կոտորուած են եւ դիակները գետը նետուած են: Նման լուրեր մեզ կը բերէին մեզի ծանոթ փրտերը, ասելցնելով որ բոլոր հայերը պիտի կոտորուին: Սարսափը մեզ պատեց: Վազեցինք դէպի բանտ մեր մարդիկ տեսնելու համար, բայց արգիլեցին: Յաջորդ առաւօտ փրտերէն իմացանք, որ մեր մարդիկ կրօնափոխ եղած են, որով անոնց կեանքը պիտի խնայուի: Սակայն մենք մտահոգ էինք, որովհետեւ մեր տղամարդիկ բանտարկուած կը մնային:

⁴⁴ Հ. ՊԱՌՊԻ, *Սարսափի երկրին մէջ. Նահատակ Հայաստան*, Կ. Պոլիս, 1919, էջ 118–119:

⁴⁵ Տէս «Հայրենիք ամսագիր», Բօստօն, 1924, դեկտեմբեր, թիւ 2, էջ 81:

⁴⁶ Տէս Ա. ԴՕ, նշ. աշխ., էջ 179:

⁴⁷ Տէս ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.7, թ.12:

⁴⁸ Տէս Ա. ԴՕ, նշ. աշխ., էջ 181:

Իբր թէ կրօնափոխութեան համար զայնագամը գրած էր վալիին եւ կը սպասէր հրամանի, զանոնք ազատելու համար... Անցան ուր օրեր: Տեսակցութիւն մեր մարդոց հետ արգիլուած էր: Ամեն օր, ամեն կողմէ, մեզի կը հասնէին ջարդերի եւ սպանութիւններու լուրեր: Վայրագութեան ենթարկուած կիներ եւ երեխաներ կառավարութեան դուռը կը դիմէին, բայց կը հալածուէին: Օր մը, Տէր Յուսկան Որդու սարէն բռնեցին ու բանտ բերին 20–25-ի չափ հայեր, որոնք Պատիկ գիւղէն եւ Գործոթէն էին եւ կոտորածէ վախճալով սարերը փախած էին: Բանտարկեալներու թիւը հասաւ 70-ի: Միայն մեր, Բերկրի գիւղէն, 25 տունէն բանտարկուած էին 32 տղամարդ: Ապրիլի 15-ին ժանտարմայի հրամանատարը գիւղերէն վերադարձաւ: Մենք զգացինք, որ սեւ օրը հասաւ: Անցաւ գիշեր մը եւս. սեւ սուգ իջաւ մեզ վրայ: Բանտը դատարկուած էր եւ մեր տղամարդիկ չկային: Բարձրացաւ ընդհանուր լաց ու կոծ: Այս ու այն կողմ կը վազէինք, ծանօթ փրտերուն կը դիմէինք մեր մարդոց մասին լուր առնելու համար: Անոնք ֆարացած էին, պատասխան չէին տար: Կօլօտ Կամուրջ ... փսփսացին մէկ ֆանի փրտեր: Մեզմէ մէկ ֆանիները վազեցին հոն եւ վերադարձան: Կամուրջի ֆարերը թարմ արիւնով ներկուած էին... ամեն բան վերջացած էր... Անցաւ երկու օր. սկսան կողոպուտներ եւ առեւանգումներ. մտնողը կը մտնէր, տանողը կը տանէր. արգիլող չկար: Վայրագութիւնները եւ ռնրագործութիւնները սովորական դարձան: Պատմել սկսան ռնրագործութիւններուն մասնակցող ժանտարմները: Պատմեց նաեւ միլիս Իսօյի Թէլուն, թէ ինչպէս բանտարկուած հայերը իրար կապկպած տարան Կօլօտ Կամուրջին վրայ, գնդակահարեցին, սրախողխող ըրին եւ կամուրջէն վար նետեցին, թէ ինչպէս Գափոյի Փանոսը եւ Յովսէփը կենդանի գետ նետեցին եւ երբ անոնք բռնեցին գետի կամուրջի ֆարերէն, այն ատեն ֆանի մը գնդակներ արձակուեցան եւ երկու եղբայրները խորխորատի մը մէջ անհետացան: Պատմեցին, որ այդ 70 հոգիէն ոչ մէկ անձ կրցաւ ազատուիլ, որ կրնար իբրեւ վկայ պատմել աշխարհին Կօլօտ Կամուրջին վրայ կատարուած եղեռնը... Անկէ յետոյ օրեր շարունակ փրտեր լուր կը բերէին, թէ Տէր Յուսկան Որդու վանքի եւ Փշի-Գումբէթ գիւղի մօտ Բանտի-Մահուն ավիւր նետած էր ասոր կամ անոր դիակը...»⁴⁹:

Բերկրիի գավառի հայերի կոտորածը տեղի ունեցաւ ապրիլի 4–15-ը՝ մեծ մասամբ 16 կմ երկարութեամբ Բերկրիի կիրճում (Գյուլիում): Բերկրի մոտ՝ Բանդիմանու գետի ափին գնդակահարվեց ու գետը նետվեց 1000 հայ:

⁴⁹ «Յիշատակագիր Վանայ ինքնապաշտպանութեան դէպքերուն (1915 ապրիլ–մայիս) (Օտար եւ հայ պաշտօնական վաւերագրերէ քաղուած)», էջ 83:

Միայն Աբաղայի հաշան (հազան) գյուղը, որն ուներ ընդամենը 60 տուն բնակիչ, տվեց 80 զոհ: Իսկ գյուղի տներից միայն մեկը, «Ուստա Մկոյի» տունը տվեց 12 տղամարդ զոհ⁵⁰: Նույն ժամանակահատվածում Բերկրի գավառի (Պստիկ գյուղ եւ Գործոթ) հայերին եւ այնտեղ աշխատող հայ «ամալեաներին»՝ 50–100-ական խմբերով հավաքեցին Բերկրիի «Կոլոտ»՝ քարե ամենանեղ կամրջի մոտ եւ բոլորին կոտորելով գցեցին գետի անդնդախոր կիրճը: Դեպքերի ականատես-վերապրած Աբաղայի Եկամալ գյուղի բնակիչ Մուշեղ Մկրտչյանը հիշում է, որ դիակներն այնքան շատ էին, որ՝ «Բանտի Մահու գետը դեռ չէր կլլած բոլորը, ժամտարմները ժամանակ չէին ունեցած ամենքը գետը նետելու եւ շատ դիակներ հերթի կը սպասէին»⁵¹:

Բացի այդ, հարուրավոր տղամարդկանց միմյանց կապելով գցեցին ջրհորների մեջ ու խեղդեցին, իսկ կանանց եւ երեխաներին լցրին Վանա լիճը եւ մերձակա գետերը «այնպես, որ այդ լճակների եւ գետերի ձկներն այլևս չէին կարողանում մարդիկ ուտել»⁵²:

Միայն 3000 երիտասարդների եւ 3000 երիտասարդ կանանց ու աղջիկների է հաջողվում փրկվել կոտորածներից եւ պատսպարվել Լիմ կղզում⁵³: Ամենայն Հայոց աթոռիկոս Գեւորգ Ե.-ին ուղղված 1915 թ. ապրիլի 14-ի խնդրագրում Լիմ կղզում ապաստանածները նշում էին. «Ազգանագեան զարմի ամենքը մէկ հարուածով յարմատէ կոտորեցան, աւերակ ամայացեալ անապատացեալ երկիր կուլայ... Հինգ տարեկան մանուկէն մինչեւ հարիւրամեայ ծերունին սրախողխող եղան, հարսունք եւ կուսանք միահամուռ գերուեցան, գիւղ եւ դաշտը, լեռ ու ձորը, նկուղ ու հորը լիքն են հայոց դիակներով, գայլեր ու գազաններ յագեցան հայոց արիւնով, գետեր եւ աղբիւրներ կարմիր փոխուած են, սակայն տակաւին մարդ գազան թիւրք կառավարութիւնը չզոհանար, չյագենար, դեռ կը փնտռէ, դեռ կորուն՝ նկուղներէն՝ ձոր ու փոսերէն աղուէսներու պէս դուրս կը հանէ ու կխողխողէ... Ա՛հ, սա (այսինքն՝ Օսմանեան պետութիւնը) փտտած եւ մէջ պարապ մի ծառ էր, ինչո՞ւ ռուսական մի թեթեւ հովն ալ այսքան ուշացաւ: Սահմաններ պարապ են, ուժ չկայ Վանի մէջ, եթէ ռուս կառավարութիւնը զբաղուած է, գէթ երկու կամ

⁵⁰ Տէս անդ, էջ 79–81:

⁵¹ Օ. ՄԽԻԹԱՐԵԱՆ, Վանի ինքնապաշտպանութիւնը, «Հայրենիք ամսագիր», Բօստօն, 1924 թ., դեկտեմբեր, թիւ 2, էջ 81:

⁵² Ե. ԳԵՂԱՄԵԱՆՅ, Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը, մաս 2-րդ, Բաքու, 1915–1917, XX դ., էջ 625:

⁵³ Տէս անդ, էջ 626–627:

երեմ հազար մեր համարին եղբայրներէն մեզ օգնութիւն փութացնելու շնորհ ու գթութիւն թող չզլանայ նոյն ֆրիստոնեայ պաշտպան հօգօ կայսրութիւննեղ-ջիւրներու ոտներով եւ արծուի թելերով»⁵⁴։

Բերկրիի Գործոթ գլուղի կոտորածաների մասին Ռ. Շատիրյանը, որը կամավորական ջոկատների կազմում Բայազետից շարժվում էր Վան, հիշում է. «...Գործոթի ամբողջ ազգաբնակչությունը գոնականհարվել է, մի մասը հրապարակում, մի մասը եկեղեցում, մի մասն էլ տներում։ Դիակների վրայից հանվել է նրանց հագուստը... Մահացածների դիակներն ընկած են փողոցներում, կացարաններում եւ եկեղեցու բեմի վրա։ Ընկած մնալով երկու շաբաթ, ուռած եւ կապտած, այդ դիակները տարածում էին աներեւակայելի գարշահոտություն։ Գյուղում մնացել էր միայն 90-ամյա մի ծեր կին, որը 12 օր անց էր կացրել առանց սննդի։ Թուրքերը միայն նրան էին խնայել, թողնելով նստարանին՝ տասնյակ սպանված մտերիմների եւ ազգականների մեջ»⁵⁵։

Բերկրիում կատարված դաժանությունների մասին սարսափով է արձագանքում ուսու կազակ Ֆ. Ն. Ելիսեևը, որը նշում է, թե Բերկրիի կիրճում «...խիտ եւ արատավորված ընկած էին մարդկանց դիակներ... Պատկերն էլ ավելի սարսափելի էր, քան այն թվում էր վերելից։ Կանայք եւ երեխաները, առանձին-առանձին եւ փոքր խմբերով, հավանաբար ընտանիքներով, փոված էին կիրճի ամբողջ ճանապարհի երկայնքով... Բոլոր մեծահասակները՝ կտրած կոկորդներով էին, տղամարդիկ՝ հետեւում կապած դեմքերով, երեխաները սուր մուրներով գլխից սպանված։ Բոլոր դիակները հրկիզված էին։ Երիտասարդ հայուհիները բռնաբարված էին եւ սառած. մահացել էին ամոթաբեր դիրքերում՝ իրարից հեռացված ոտներով եւ ծոմոված ծնկներով՝ մինչեւ գոտկատեղը մերկացած մարմիններով... Բռնաբարելով կնոջը՝ յուրաքանչյուր ֆուրդ, հավանաբար, միաժամանակ կտրել է իր գոհի կոկորդը։ Պատկերը սարսափելի էր եւ ամոթալի...»⁵⁶։

Բերկրիով դեպի Վան իրենց վերադարձը մոայլ գույներով են ներկայացնում նաեւ ամերիկյան բողոքական քարոզիչներ՝ էրնեսթ Շարրոն եւ Լոնդոնի Լորդ Մեյրի գաղթականների օգնության հիմնադրամի Թիֆլիսի ներկայացուցիչ՝ Բեքհաուսը, նշելով, որ «երբ հասանք Բերկրիի հովիտը... այդ շրջանի մեջ տեսանք թուրքերի եւ ֆրդերի գործադրած սպանդի սարսա-

⁵⁴ «Արարատ», էջմիածին, 1915 թ. փետրվար-մարտ, էջ 150։

⁵⁵ *Տէս Ք. ՍԱՏԻՐՅԱՆԻ, Краткий очерк деятельности армянских добровольческих дружинъ 1914—1916 гг., «Армянский вѣстник», Москва, 1916, № 13, էջ 6։*

⁵⁶ *Տէս Փ. ЕЛИСЕЕВ, Казаки на Кавказском фронте 1914—1917, Москва, 2001, էջ 130։*

փագղու նշաններ: Ես նախապես ամբողջականորեն չէի կարողացել ըմբռնել տեղի ունեցած կոտորածի տարողությունը: Մեր նախկին ուսուցիչներից՝ Կարապետը... կարողացավ ներկայացնել որոշակի մանրամասնություններ, որոնց մասին նախապես չէի լսել, ըստ որի 1915 թ. օգոստոսի 5-ին հինգշաբթի օրը, կեսօրից հետո, մեր խումբը հասավ Բերկրի... Այդ նույն գիշեր նամփան արդեն փակված էր եւ 6000–8000 հայեր, (որոնց մեծ մասը կանայք եւ երեխաներ) մորթված էին ամենայն սառնասրտությամբ... Մոտավորապես 15 մղոն երկարությամբ ձգվող ճանապարհին եւ նրա երկու կողմերում թափված էին ամեն տեսակի հագուստներով, կոշիկներով, գլխաշորերով կմախֆներ, կամ ոսկորներ, կամ գանգեր, որոնք մեկ տարի առաջ մարդ արարածներ էին, տկար արարածներ, որոնք կյանքի այդ խենթ մրցմանն էին կարողացել տոկալ...»⁵⁷:

Կատարված սպանությունների, ներխուժման եւ վայրագությունների առիթով Մանազկերտի առաջնորդական փոխանորդ Հովհաննես քհն. Տեր-Ավետիսյանը Մանազկերտի կառավարական գանձապահ եւ Մուշի առաջնորդական նախկին քարտուղար Նազարեթ Մարտիրոսյանի հետ բողոքեց Մանազկերտի կայմակամ Իբրահիմ խալիլին՝ պահանջելով միջոցներ ձեռք առնել տեղի հայոց պաշտպանության համար: Վերջինս տեղեկացնում է, որ ինքն արդեն այդ մասին հեռագրել է կուսակալին եւ ստացել պատասխան՝ հետեւյալ բովանդակությամբ. «Կայսերական իրադեպով առայժմ Վանի վիլայեթին կը վերաբերի այդ կարգադրությունը եւ Վանի շրջանի ժանդարմները իրատեմ ունին հետապնդել եւ ուր գտնեն իրենց գաւառի հայերը իբրեւ յանցաւորի պատժել, ինչ կը վերաբերի մեր վիլայեթին, քանի որ հայերի կողմից որեւէ խլրտում նկատելի չէ, այդպիսի դէպքեր տեղի ունենալ չեն կարող»⁵⁸:

Կուսակալի պաշտոնական հեռագիրը փաստորեն վկայում է, որ ջարդերը թույլատրված էին սուլթանական հրամանագրով եւ նախապես պաշտոնական վավերացում էին ստացել միայն Վանի նահանգում:

*Արճեշի, Արծկեի, Դատվանի կոտորածների մասին հիշատակություններ են պահպանվել նաեւ բուլղարական դիվանագիտական փաստաթղթերում*⁵⁹:

⁵⁷ Ավելի հանգամանորեն տես «The Missionary Herald», Volume CXIII, London, 1917, February, Number 2, էջ 68–69:

⁵⁸ Ա. Դ0, նշ. աշխ., էջ 190:

⁵⁹ Տես Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո, Երեւան, 1996, էջ 17:

Արճեշի, Ալջավազի եւ Բերկրիի գավառների հայկական կոտորածներն ահարկու էին: Ըստ Ա. Սաֆրաստյանի վկայության (Լոնդոնի «Արարատ» պարբերականի (1916 թ. հունվար)՝ ապրիլի 16–18-ին Արտիշուի (Ականց) եւ Ալջավազի 80-ից ավելի հայկական գյուղերում ընդհանուր առմամբ կոտորածներին զոհ գնաց շուրջ 24 000 հայ⁶⁰:

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի զանգվածային կոտորածներն առաջին հերթին սկսվում են Վանի նահանգից, այն դեպքում, երբ մյուս նահանգներում (բացառությամբ Զեյթունի) տեղի են ունենում ավելի ուշ՝ մայիս-հունիս-հուլիս ամիսներին: Նպատակը՝ օր առաջ Վան-Վասպուրականի հայերին կոտորելն էր, որովհետեւ այդ նահանգն ավելի մոտ էր ռուսական եւ պարսկական սահմաններին, եւ անհրաժեշտության դեպքում ռուսական զորքերը կարող էին գրավել այն: Արճեշի, Արծկեի եւ Բերկրիի ջարդերը, որոնք գործադրվում էին կայմականների, ոստիկանության, ժանդարմերիայի, «միլիսներ»ի եւ մահմեդական խուժանի մասնակցությամբ, իրենց բնույթով միանգամայն տարբերվում էին նախկին կոտորածներից: Դրանք իրականացվեցին՝ ա) արական սեռը ոչնչացնող ջարդերով, բ) երիտասարդ կանանց, գեղեցիկ աղջիկների, մանկահասակ երեխաների գերեվարմամբ եւ գ) բնակչությանը ապրուստի միջոցներից զրկվելով եւ տարափոխիկ հիվանդություններ տարածելով: Զարդերն ուղեկցվում էին նաեւ գույքի, մթերքների կողոպուտներով, առեւանգումներով, ավերածություններով եւ այնպիսի վարպետությամբ ու դավադիր եղանակով, որ համարյա ոչ մի գավառ զերծ չմնաց կոտորածներից եւ գրեթե ոչ ոք չփրկվեց:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Կոտորած, ջարդ, կայմական, ոստիկան, ժանդարմ:

РЕЗЮМЕ

После вспыхнувших 29 марта 1915 г. армяно-курдских столкновений в районе Шатаха, губернатор Вана Т. Джевдет по-прежнему продолжал свои от-

⁶⁰ Տե՛ս Ճ. ՊՐԱՅՍ ԴԵՐԿՈՄՍ, Անգղիական կառավարության կապոյտ գիրքը Հայկական Մեծ եղեռնի մասին (1915–1916), Կ. Պոլիս, 1919, էջ 75:

ношения с армянским руководством Ванской провинции и давал свои «братские» гарантии на пути к установлению мира совместными усилиями между армянами и курдами. Однако 4 апреля отношения общение между районами Вана Айгестан и Кахагаметч были разорваны, и молодежь начала готовиться к вооруженной самообороне.

В годы Первой мировой войны массовые убийства армян в первую очередь начались в провинции Ван, а, в данном случае, в остальных областях (кроме Зейтуна), они произошли позже, в мае-июне-июле. Причина — заблаговременно, организовать истребление армян Ван-Васпуракана, поскольку эта провинция находилась наиболее близко к русским и персидским границам, и русские войска могли в случае необходимости занять ее. Резня армянского населения Арчеша, Арцке и Беркри, произошедшая 6–15 апреля в 1915 году, является одной из забытых страниц истории геноцида армян. Она была осуществлена согласно указу турецкого правительства, при участии каймакамов, полиции, жандармерии и мусульманской толпы и по своему характеру весьма отличалась от предыдущих погромов.

SUMMARY

Following the outbreak of Armenian-Kurdish clashes on March 29, 1915, in the Shatakh region, the governor of Van, T. Cevdet, continued his dialogue with the Armenian leadership of the Van province, offering assurances of reconciliation and peacebuilding through joint efforts between Armenians and Kurds. However, by April 4, relations between Aygestan and Kahagamech districts of Van deteriorated, prompting youth to mobilize for armed self-defense.

During the onset of the First World War, massacres targeting Armenians commenced in the Van province, preceding similar atrocities in other regions (excluding Zeytun), which occurred in subsequent months, namely May, June, and July. The strategic proximity of Van Vaspurakan to the Russian and Persian borders precipitated the government's orchestration of Armenian extermination efforts in anticipation of potential Russian occupation. The massacre of the Armenian populace of Archesh, Artsk, and Berkri from April 6 to 15, 1915, represents a lesser-known chapter in the annals of the Armenian genocide. Executed pursuant to governmental decree, these atrocities involved the collusion of local authorities, police, gendarmerie, and Muslim militias, distinguishing them from earlier pogroms in their scope and method.

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

1932 թ. ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ¹

ՄՈՒՏՔ

Հայոց Եկեղեցու պատմության ընթացքում Ամենայն Հայոց եւ Կիլիկիո կաթողիկոսությունների հարաբերությունները միշտ չէ, որ ընթացել են առանց խնդիրների: Այդ հարաբերությունները հաճախ ունեցել են խիստ լարված բնույթ: Երբեմն խնդիրների լուծման փոխհամաձայնության փոխարեն ընտրվել են սուր միջոցներ: Երկու նվիրապետական աթոռների հարաբերությունների բնույթի վրա ազդեցություն են ունեցել տարբեր արտաքին գործոններ, ինչպես նաեւ գահակալների միջեւ առկա անձնական հարաբերությունները:

Երկու աթոռների հարաբերություններում էական փոփոխություններ տեղի են ունենում Ի. դարի առաջին քառորդում: 1921 թ. Կիլիկիայի հայաթափումը եւ Կիլիկիո կաթողիկոսության տարագրումը², ինչպես նաեւ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումն ու Եկեղեցու հանդեպ իրականացվող քաղաքականությունը էական նշանակություն ունեցան երկու կաթողիկոսությունների եւ նրանց միջեւ հարաբերությունների վրա: Արդեն 1920-ական թթ. սկզբներից այդ փոփոխությունները նկատելի էին, որոնք հատկապես ավելի ջերմացան 1930-ական թվականներին հորեն Ա. Մուրադբեկյանի գահակալության շրջանում:

¹* Ստացվել է՝ 4.08.2024, գրախուսվել է՝ 4.09.2024:

էլ. հասցե՝ hovhannisyanedgar@yahoo.com:

² Տե՛ս E. HOVHANNISYAN, The Restoration of the Catholicosate of the Great House of Cilicia After Exile. Quaestio Rossica, 10 (4), 2022, էջ 1274–1287:

1930 թ. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԱՅՐ ԱԹՈՌ –ԿԻԼԻԿԻՈ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1930 թ. մայիսի 8-ին իննսունամյա հասակում մահանում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենյանցը: Այդ մասին տեղեկացվում են ինչպես Հայոց Եկեղեցու բոլոր թեմերն ու պատրիարքական աթոռներն, այնպես եւ Կիլիկիո կաթողիկոսութունը³: Գեորգ Ե. մահվանից անմիջապես հետո Մայր Աթոռում սկսում են նախապատրաստվել կաթողիկոսական հաջորդ ընտրություններին: Հայտնի է, որ այդ շրջանում Մայր Աթոռի աշխատանքները համակարգում էր Խորեն արք. Մուրադբեկյանը, որը դեռեւս 1923 թ. Մայր Աթոռի միաբանական ժողովում ընտրվել էր Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ: 1930 թ. մայիսի 9-ից⁴ վերջինս, Գերագույն Հոգեւոր խորհուրդի հետ միասին ստանձնում է Մայր Աթոռի կառավարումը: Այդ մարմինն ստեղծվել էր 1924 թ.⁵ կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենյանցի նախաձեռնությամբ Սինոդի փոխարեն⁶: Այն կաթողիկոսի նախագահությամբ պետք է դառնար ոչ միայն Խորհրդային Միության տարածքի թեմերի, այլ նաեւ արտասահմանի թեմերի աշխատանքի համակարգողը: Գերագույն հոգեւոր խորհրդն իր առաջին նիստը գումարել էր 1924 թ. հունվարի 2-ին⁶:

Կաթողիկոսական նոր ընտրությունները հանդիսանալու էին առաջինը Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, ուստի, նախ եւ առաջ, անհրաժեշտ է ստանալ խորհրդային իշխանությունների համապատասխան թույլտվությունը: 500-ամյա ընդմիջումից հետո սա նաեւ առաջին կաթողիկոսական ընտրությունն էր, որ կատարվելու էր, ինչպես գրում է, «Պայքար» օրաթերթը. «...Հայ կառավարութեան մը հաւանութեամբ եւ անոր հովանիին ներքեւ»⁷, այսինքն՝ հայկական պետականության գոյության պայմաններում:

Ուստի ողջ հայության ուշադրությունը սեւեռված էր հայրենիքում նախապատրաստվող համահայկական կարեւորության այդ իրադարձու-

³ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4469, թ. 6, 7-ի շրջերես:

⁴ Տէս ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆ, ԽՈՐԷՆ Ա. Մուրադբեկյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը, «Էջմիածին», Դ.-Ե., 1994, էջ 74:

⁵ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 8, թ. 1–23:

⁶ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 9, թ. 1:

⁷ «Պայքար», Բոստոն, 10 նոյեմբերի, 1932, թիւ 272:

թյան վրա: Սփյուռքահայ հասարակական տարբեր շրջանակներ, հաշվի առնելով խորհրդային իշխանությունների աստվածամբժ գաղափարներն ու հակակեղեցական-հակակրոնական քաղաքականությունը⁸, հաճախ հնչեցնում էին հոռետեսական կարծիքներ եւ մտահոգություններ կաթողիկոսական ընտրությունների վերաբերյալ: Հասկանալի էր, որ ողջ գործընթացն անցնելու էր խորհրդային վերին օղակների թույլտվությամբ եւ վերահսկողությամբ:

Կաթողիկոսի տեղակալ խորեն արք. Մուրադբեկյանը 1930 թ. մայիսի 28-ին Ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու եւ կաթողիկոսի ընտրություններ կազմակերպելու թույլտվություն ստանալու նպատակով դիմում է Հայաստանի խորհրդային իշխանություններին՝ ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահ Ս. Կասյանին եւ Ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանին⁹: Խորեն սրբազանն իշխանություններից խնդրում էր համապատասխան դյուրություններ ստեղծել արտասահմանի պատվիրակների ժամանման համար: Հետաքրքիր է նաեւ, որ վերջինս Գերագույն հոգեւոր խորհրդի անունից խնդրում էր «ժամանակաւորապէս, մինչեւ որ Կաթողիկոսի ընտրութիւնը, պարբերական հրատարակութիւն ունենալ...», որտեղ պետք է «կարեւոր խնդիրներ» արծարծվեին ու լասաբանվեին, որոնց թվում. «ա) Պաշտպանել Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը Ս. Էջմիածնում պահելու անհրաժեշտութիւնը: բ) Հերքելու արտասահմանի հայ թերթերում արծարծուող եւ արծարծուելիք թիւր եւ դիտաւորեալ հայեացքներն ու կարծիքները Աթոռի տեղափոխութեան եւ այլ յարակից եւ հարանման խնդիրների մասին»¹⁰: Այդ շրջանում իսկապես սփյուռքյան որոշ հակախորհրդային դիրքորոշում ունեցող շրջանակներում քննարկվում էին կաթողիկոսական Աթոռի տեղափոխման հետ կապված հարցեր՝ այդ ամենը փորձելով հիմնավորել խորհրդային իշխանությունների հակակեղեցական քաղաքականությամբ եւ Հայոց եկեղեցին քաղաքական նպատակներով օգտագործելու մտահոգությամբ¹¹: Նույն գրութչամբ

⁸ Տէն է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Մարտնչող անաստվածների միություն գործունեությունը խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թթ., «Էջմիածին», հունվար, 2014, էջ 100–107:

⁹ Տէն «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան». «Խորէն Ա. Մուրադբեկեան Կաթողիկոս Ամենայն Հայոց (հոգեւոր գործունէութիւնը 1901–1938 թթ.)», գիրք Բ., կազմող՝ Ս. Բեհբուդեան, Երեւան, 1996, էջ 254–256:

¹⁰ Անդ, էջ 255:

¹¹ Տէն «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», գիրք Բ., էջ 272–275:

սրբազան հայրը խնդրում էր թույլտվություն արտասահմանում հրատարակվող հայկական թերթերն ստանալու վերաբերյալ:

1930 թ. հուլիսին համապատասխան գրույթյամբ Կենտգործկոմից թույլատրում են հրավիրել Ազգային-եկեղեցական ժողով՝ միաժամանակ արտոնելով օտարերկրյա պատվիրակների մոտքը Խորհրդային Հայաստան ԽՍՀՄ գործող կարգավորումներին համապատասխան: Հետաքրքիր է, որ թույլ է տրվում նաեւ, հղում անելով ՀՍԽՀ Սահմանադրությանը, Հայաստանի տարածքում կրոնական գրականության տարածումը, եթե դրանք. «հակախորհրդային նպատակներ չեն հետապնդում», ինչպես նաեւ «ժամանակավոր թերթի» հրատարակումը¹², որը սակայն հետագայում արգելվում է¹³:

Մեկնարկում են նախապատրաստական աշխատանքները: Գերագույն հոգեւոր խորհուրդը 1930 թ. մայիսից¹⁴ անընդհատ նամակագրական կապի մեջ էր Հայոց Եկեղեցու նվիրապետական աթոռների եւ թեմերի առաջնորդների հետ՝ Ազգային-եկեղեցական ժողովի հոգեւոր եւ աշխարհիկ պատգամավորների ընտրության, վերջիններիս հայրենիք ժամանման հարցերի հետ կապված¹⁵: Աշխատանքներ են տարվում նաեւ Հայաստանում եւ Խորհրդային մյուս հանրապետություններում գործող թեմերում պատվիրակների ընտրության ուղղությամբ¹⁶:

Խորեն արք. Մուրադբեկյանը կաթողիկոսի մահվանից կարճ ժամանակ անց Գերագույն հոգեւոր խորհրդի անունից Սահակ վեհափառին հղած նամակներով մանրամասն ներկայացնում է Մայր Աթոռում տիրող իրավիճակը, իր տեղապահ ընտրվելու եւ առաջիկայում Ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու եւ կաթողիկոսական ընտրություններին նախապատրաստվելու մասին¹⁷: Խորեն սրբազանը շուտով Սահակ կաթողիկոսին է ուղարկում Ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու վերաբերյալ կանոնադրությանը՝ հորդորելով Կիլիկիո թեմերում կազմակերպել աշխարհիկ պատգամավորների ընտրությունները, ովքեր թեմական

¹² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 115, թ. 4:

¹³ Տէս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Բ., էջ 278:

¹⁴ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 120, թ. 1–17, գ. 121, թ. 1–6:

¹⁵ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 142, թ. 1–24:

¹⁶ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 148, թ. 1–84:

¹⁷ Տէս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Դ., Տ.Տ. Սահակ Բ. Խապայեան կաթողիկոս Կիլիկիոյ 1891–1940 թթ., կազմող՝ Ս. Բեհրուդեան, Երեւան, 1997, էջ 501–502:

առաջնորդների հետ միասին պետք է հանդիսանային ժողովի պատգամավորներ եւ ժամանեին էջմիածին¹⁸:

1930 թ. հուլիսի 18-ին նվիրապետական աթոռներ ու թեմեր ուղարկված շրջաբերականով տեղեկացվում է, որ խորհրդային իշխանություններից ստացվել է համապատասխան թույլտվություն վեց ամսվա ընթացքում Ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու վերաբերյալ: Շրջաբերականով իրազեկվում է, որ արտասահմանյան պատգամավորները առանց դժվարությունների կստանան խորհրդային Միության մուտքի իրավունք: Տեղեկացվում է նաեւ, որ արտոնվել է. «Կաթողիկոսութեան ընտրութեան շրջանում արտասահմանի բոլոր (ընդգծումը մերն է.— է. Հ.) հոսանքների հայ թերթերի ստացումը»: Շրջաբերականում արձանագրվում է նաեւ հրավիրվելիք Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգը՝ միաժամանակ հորդորելով, որ ընտրված պատգամավորներն անձամբ ժամանեն եւ մասնակցեն ժողովի աշխատանքներին¹⁹:

Մայր Աթոռն անում էր ամեն ինչ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո առաջին կաթողիկոսական ընտրությունները պատշաճ մակարդակով եւ բարձր ներկայացվածությամբ կազմակերպելու ուղղությամբ: Այդ ամենը կնպաստեր եկեղեցու դիրքերի ամրապնդմանը: Կարելու է նշել, որ կաթողիկոսական ընտրությունների հիմնական ծախսերը, արտասահմանից ժամանած պատգամավորների կեցությունը ապահովելու էին Հայաստանի իշխանությունները, քանի որ այդ ժամանակ Մայր Աթոռը չունեւ բավարար նյութական միջոցներ նման ծախսերի համար:

1930 թ. մայիսի 24-ին Մայր Աթոռում կազմված «Հայրապետական ընտրութեան պատգամավորների պատկերացույցի» համաձայն՝ աշխարհում հայություն թվին համապատասխան, Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռներից եւ արտասահմանի ու տեղի թեմերից նախատեսվում էր ընտրել 132 պատգամավորներ, որից 81-ը աշխարհական, 52-ը հոգեւորական²⁰:

Կիլիկիո կաթողիկոսության հինգ թեմերից եւ բուն կաթողիկոսությունից ակնկալվում էր 6 հոգեւորական պատգամավորների մասնակ-

¹⁸ Տե՛ս անդ, էջ 503: ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4469, թ. 7:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 119, թ. 1, շրջերես:

²⁰ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 113, թ. 1—10:

ցուծյուն՝ ի դեմս թեմերի առաջնորդների՝ կաթողիկոս Սահակ Բ. Խապա-
յանի գլխավորությամբ²¹: Նշենք, որ 1930 թ. դրությամբ Կիլիկիո կաթո-
ղիկոսության բարձրաստիճան հոգեւորականների թիվը մեծ չէր, Սահակ
կաթողիկոսից բացի, նրանց թիվը հասնում էր 10-ի²²:

Գերագույն հոգեւոր խորհուրդը 1930 թ. օգոստոսին նոր շրջաբերա-
կանով արտասահմանյան թեմերին հորդորում է արագացնել պատգամա-
վորների ընտրությունը՝ կրկին ընդգծելով պատգամավորների «անձամբ
Ս.էջմիածին գալու եւ մէն-մի պատգամավորի միայն իր ձայնով ժողովին
ներկայանալու անհարժեշտութիւնը», միաժամանակ վստահեցնելով, որ
համապատասխան մոտքի արտոնագիր ստանալու եւ Խորհրդային Միու-
թյան տարածք մուտք գործելու հարցում խորհրդային իշխանությունները
որեւէ դժվարություն չեն հարուցի²³:

Գրեթե բոլոր թեմերում սկսում են հրավիրվել ծխական եւ թեմական
ժողովներ, որտեղ ընտրվում են աշխարհիկ եւ հոգեւոր պատգամավորնե-
րը²⁴: Սակայն հետագայում, տարբեր պատճառներով, ոչ բոլոր պատգա-
մավորներին է հաջողվում ներկա լինել կաթողիկոսական ընտրությու-
ններին, հատկապես խոսքը վերաբերում է արտասահմանյան թեմերի
ներկայացուցիչներին:

Նոր ընտրություններն առաջին անգամ կազմակերպվելու էին Գեւորգ
Ե. Սուրենյանցի 1925 թ. հոկտեմբերի 22-ին հաստատած «Ազգային-եկե-
ղեցական ժողով հրավիրելու յատուկ կանոնադրութեան» հիման վրա²⁵:
Այդ փաստաթղթի 22-րդ հոդվածի համաձայն կաթողիկոսի մահվանից
հետո նոր կաթողիկոսի ընտրությունները պետք է տեղի ունենային ոչ ուշ,
քան վեց ամիս հետո²⁶: Ուստի Ազգային-եկեղեցական ժողովի հրավիրումն
ու նոր կաթողիկոսի ընտրությունը նախատեսվում էր անցկացնել 1930 թ.
հոկտեմբերի 26-ին²⁷, սակայն այն հետաձգվեց շուրջ երկու տարի:

Ինչպես նշվեց, Սահակ Բ. Խապայանն իրազեկվում էր Մայր Աթոռում
տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Վերջինիս հայտ-

²¹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 113, թ. 8:

²² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3977, թթ. 8–9:

²³ ՏՆԱ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 115, թ. 5: Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բաբգէն Ա. Կաթողի-
կոսներու, Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ, թիւ 1, Անթիլիաս, 1999, էջ 306–307:

²⁴ ՏՆԱ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 149, թթ. 1–2, գ. 150, թ. 1–35:

²⁵ ՏՆԱ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 148, թ. 22, շրջերես:

²⁶ ՏՆԱ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 49, թ. 4:

²⁷ ՏՆԱ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3815, թ. 3, գ. 4467, թ. 2, գ. 4469, թ. 5:

նում են, որ ընտրություններն անցկացվելու են 1925 թ. հաստատված վերոհիշյալ կանոնադրության հիման վրա: Խորեն արք. Մուրադբեկյանը Սահակ Բ.-ին է ուղարկում այդ կանոնադրության օրինակը՝ միժամանակ հիշեցնելով կազմակերպել Կիլիկիո Աթոռի ենթակա թեմերից յուրաքանչյուրում մեկ աշխարհական պատգամավորի ընտրություն: Թեմերի առաջնորդների հետ միասին վերջիններս պետք է Ազգային-եկեղեցական ժողովում Կիլիկիո կաթողիկոսության պատգամավորները հանդիսանային²⁸:

Գերագույն հոգեւոր խորհրդի անունից, 1930 թ. հուլիսի 10-ին Սահակ Բ.-ին հղված նամակով Խորեն սրբազանը պաշտոնապես հրավիրում է անձամբ ներկա գտնվելու ընտրություններին. «Ներկայութիւն Ձերդ Սրբութեան աստ՝ ի Մայր Աթոռոջ, յԱզգային-եկեղեցական համագումարի լիցի նաեւ մխիթարութիւն մեծ եւ ուրախութիւն վասն անդամոց Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյս եւ միաբանական Ուխտի Սրբոյ Աթոռոյս», — ասված էր նամակում²⁹: Սահակ կաթողիկոսի Ազգային-եկեղեցական ժողովին ներկա լինելու պարագայում վերջինս ոչ միայն պետք է նախագահեր ժողովը, այլ նաեւ «իւր ձեռամբ» պետք է կատարեր նորընտիր կաթողիկոսի օծումը:

«Վասն անձամբ» ներկա լինելու Կաթողիկոսական ընտրությանը հրավեր է ուղարկվում նաեւ Բաբկեն արք. Կյուլեսերյանին³⁰: Նշենք, որ վերջինս 1931 թ. ապրիլի 25-ին պաշտոնապես ընտրվում է Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս³¹:

Սահակ վեհափառի ընտրություններին անձամբ մասնակցության անհնարինության դեպքում առաջարկվում էր ուղարկել ներկայացուցիչ³²: Սա Հայոց եկեղեցու պատմության մեջ առաջին անգամն էր, երբ Կիլիկիո կաթողիկոսը պաշտոնապես հրավիրվում էր մասնակցելու Ամենայն Հա-

²⁸ Տե՛ս Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի, Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ, թիւ 3, Անթիւրպա, 2002, էջ 47–50:

²⁹ Անդ, էջ 49: «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Դ., էջ 504–505: ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4469, թ. 6, շրջերես:

³⁰ Տե՛ս Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի, էջ 51:

³¹ Տե՛ս Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիւրպա, 1990, էջ 1018:

³² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4469, թ. 6, շրջերես:

յոց կաթողիկոսի ընտրություններին: Նշենք, որ 1925 թ. կանոնադրության համաձայն ի պաշտոնե Կիլիկիո կաթողիկոսությունից Ազգային-եկեղեցական ժողովի անդամներ էին հանդիսանում Սահակ Բ. վեհափառը, Բաբկեն Ա. աթոռակից կաթողիկոսը, Շահե եպս. Գասպարյանը, ինչպես նաև Կիլիկիո թեմերի առաջնորդներ՝ Արտավազդ եպս. Սուրմեյանը, Եփրեմ եպս. Տոհմունին, Եղիշե եպս. Կարոյանը, Պետրոս արք եպս. Սարաճյանը, Խադ եպս. Աջապահյանը³³:

Միաժամանակ Սահակ վեհափառին են հղվում նաև հինգ հրովարտականքներ՝ ուղղված Կիլիկիո Աթոռին ենթակա հինգ թեմերի առաջնորդներին՝ աշխարհիկ եւ հոգեւոր պատգամավորներ ընտրելու առաջարկով³⁴: Շուտով՝ 1930 թ. հուլիսի 22-ին, Գերագույն հոգեւոր խորհուրդը Սահակ կաթողիկոսին է ուղարկում նաև հոկտեմբերի 26-ին հրավիրվելիք Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգը ինչպես նաև խորհրդային իշխանությունների թույլտվության վավերացված պատճենները³⁵:

Այս հրավերները որոշակիորեն զարմանալի էին Սահակ կաթողիկոսի համար, քանզի նախկինում երբեմն նման բան տեղի չէր ունեցել: «Ահա նոր կարեւորագույն խնդիր մը. Հնդհանրական Հայրապետի ընտրութեան խնդիրը: Դարերով Կիլիկիոյ մասնակցութիւնը անտեսուած, դարերով հերձուած համարուած, Գերագոյն հոգեւոր խորհուրդը այս անգամ թեմակալ առաջնորդներին ղրկուած շրջաբերականէն մեզ եւ մեր փոխանորդներուն ղրկելով, յարգոյաբար կը խնդրէ հասցնել ըստ պատկանելեաց»³⁶, — հրավերն ստանալուց մի քանի օր անց գրում է վերջինս Բաբկեն եպս. Կյուլեսերյանին:

Սահակ կաթողիկոսն այդ գրություններն ուղարկում է թեմակալ առաջնորդներին՝ հրամայելով. «պաշտօնական մարմնոց հոտ խորհրդակցելով» արդյունքն անմիջապես հայտնել իրեն³⁷:

Նույն թվականի օգոստոսի 10-ին Խորեն սրբազանին հղված պատասխան նամակում Սահակ կաթողիկոսը հայտնում է, որ համապատասխան գրություններն ու հրահանգներն ուղարկված են թեմեր, եւ եթե տեղերում

³³ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 161, թ. 1:

³⁴ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4469, թ. 6-ի շրջերես:

³⁵ ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4467, թ. 2, գ. 4469, թ. 5:

³⁶ Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բաբգէն Ա. Կաթողիկոսներու, Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ, թիւ 1, Անթիլիաս, 1999, էջ 305:

³⁷ Տէս Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բաբգէն Ա. Կաթողիկոսներու, էջ 305:

հնարավոր լինի հոգալու ընտրված պատգամավորների ճամփորդության ծախսերը, վերջիններս ներկա կլինեն ժողովին³⁸:

Սահակ վեհափառը դժգոհում է, որ 1925 թ. կանոնադրության հոդված 10-ում Կիլիկիո կաթողիկոսության անունը նշված չէ: Այդ կետը սահմանում էր, որ Ազգային-եկեղեցական ժողովի անդամ են հանդիսանում Ս.էջմիածնի միաբանության, Ս.Նրուսաղեմի միաբանության եւ Կ. Պոլսի խառն ժողովի ընտրած՝ մեկական ներկայացուցիչներ³⁹: Իրապես կանոնադրության այդ կետում չէր հիշատակվում Կիլիկիո կաթողիկոսությունը: Սահակ կաթողիկոսի բնորոշմամբ կրկնվում են «Պօլօ-ժէնիէի»⁴⁰ սխալները, եւ այդ «զանցառութիւնը» նկատվում է նաեւ այս կանոնադրության մեջ: Սահակ խապայանը միաժամանակ նշում էր, որ դարերով Կիլիկիո կաթողիկոսությունն Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրություններին չի մասնակցել եւ այդ, իր բառերով. «վէրքը դարմանելու եւ խրամատը լցնելու հոգ տարում չէ»⁴¹: Կաթողիկոսը, մատնանշելով այն հանգամանքը, որ սույն կանոնադրությամբ նախատեսվում է ոչ միայն Կիլիկիո թեմերից պատգամավորների մասնակցությունը, այլ նաեւ վեհափառն անձամբ էր հրավիրվել մասնակցելու ընտրություններին՝ գրում է. «Այս կարկատանը մասամբ կը գոցէ խրամատը, ցորչափ էջմիածնական եւ կիլիկեան եպիսկոպոսներու հինցած եւ մզլտած խտրութիւնը իր գոյութիւնը պահպանէ, վէրքը միայն կոշկոռ կը կապէ, եւ խրամատը մասամբ բաց կը մնայ: Այս խնդիրը գիտեմ թէ ընտրական ժողովը լուծելու անձեռնահաս է. ապագայ եկեղեցական մեծ ժողովին կը պատկանի, յիշեցի, որպէս զի նոյն ժողովին Ազգ.-եկեղեցական Սահամանադրութեան պարագային այս խնդիրն ալ նկատողութեան առնէ, եւ դարերու անլոյծ թողածը լուծէ»⁴²: Սահակ կաթողիկոսը, միաժամանակ ցուցաբերելով կառուցողական մոտեցում, 10-րդ կետի նման ձեւակերպումն, այնուամենայնիվ, համարում է. «զանցառություն» եւ «անն-

³⁸ Տէն Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի, էջ 53:

³⁹ Տէն ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 152, թ. 1:

⁴⁰ Հիւրավի 1836 թ. մարտի 11-ին ընդունված Պոլսի ժողովի մեջ չկար որեւէ հիշատակում Կիլիկիո կաթողիկոսության վերաբերյալ:

⁴¹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4469, թ. 3: Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի, էջ 53:

⁴² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4469, թ. 3: Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի, էջ 53:

շան թերացում»⁴³ ընդծելով, որ այդ ամենը պետք է պատմությանը թողնել. «...Ազգին ներկայ բազմապատառ կացութիւնը կը պարտադրէ այդ պատառները իրարու քով բերել եւ ամբողջութիւն կազմել»⁴⁴:

Թերեւս կարելի է միայն ենթադրել, կանոնադրության 10-րդ կետի ձեւակերպման մեջ Կիլիկիո կաթողիկոսություն անունը չհիշատակվելու պատճառները:

Այսպէս՝ ուսումնասիրելով 1925 թ. «Ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու հատուկ կանոնադրությունը» տեսնում ենք, որ որոշակի հակասություններ կան կանոնադրության 5-րդ, 6-րդ 9-րդ եւ 10-րդ հոդվածների միջեւ: Ըստ այդ կանոնադրության 5-րդ հոդվածի Կիլիկիո կաթողիկոսը եւ Երուսաղեմի ու Պոլսո Հայոց պատրիարքները հանդիսանում էին Ազգային-եկեղեցական ժողովի նախաթոռ անդամներ, իսկ 6-րդ հոդվածով Ամենայն Հայոց կաթողիկոսի հիվանդության դեպքում նախատեսվում էր, որ ժողովը նախագահելու էր Կիլիկիո կաթողիկոսը կամ Երուսաղեմի պատրիարքը: 9-րդ հոդվածի համաձայն էլ Ազգային-եկեղեցական ժողովի անդամ էին հանդիսանում Հայոց եկեղեցու բոլոր թեմական առաջնորդներն ու եպիսկոպոսները: Այսինքն՝ տվյալ հանգամանքով, փաստորեն, որեւէ խտրություն չէր դրվում էջմիածնական եւ կիլիկյան եպիսկոպոսների միջեւ, եւ այս առթիվ Սահակ Բ.-ի մտահոգություններն անտեղի էին:

Հարկ ենք համարում ընդգծել նաեւ, որ կանոնադրությունն Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրություններին նախատեսում էր նաեւ Կիլիկիո կաթողիկոսության աշխարհիկ պատգամավորների մասնակցությունը: Կանոնադրության 13-րդ կետը սահմանում էր աշխարհիկ պատգամավորների ընտրությունը՝ նախատեսելով ամեն 25 հազար հավատացյալի համար մեկ պատգամավոր համամասնությունամբ:

Հետեւաբար անհասկանալի էր թե ինչու կանոնադրության 10-րդ հոդվածում հիշատակված չէր Կիլիկիո կաթողիկոսության անունը: Մոր ենթադրությամբ դա կարող էր լինել անգամ վրիպման արդյունք: Ահա այս հանգամանքն էլ դարձել էր Սահակ կաթողիկոսի դժգոհության պատճառը, որի մասին նա արտահայտվում է վերը հիշատակված նամակում:

⁴³ Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի, էջ 53:

⁴⁴ Անդ, էջ 53:

1930 թ. նոյեմբերի 6-ին գրված պատասխան նամակում⁴⁵, խորեն արք. Մուրադբեկյանն արդարացիորեն տարակուսում է Սահակ վեհափառի հնչեցրած մտքերից: Նախ հերթական անգամ հավաստիացվում է, որ Ա.Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհուրդն իր գործունեության ընթացում «...աշխատել է Հնդհանրական Հայրապետության եւ Կիլիկիոյ կաթողիկոսության միջեւ գոյութիւն ունեցող խրամատը լցնել եւ վերացնել դժգոհութեանց առիթները...»⁴⁶: խորեն սրբազանը, փորձելով փարատել Սահակ կաթողիկոսի անհանգստությունը, գրում է, որ հանգուցյալ Գեւորգ կաթողիկոսը միշտ հատուկ ուշադրություն է նվիրել Կիլիկիո կաթողիկոսությանը եւ սեր ու հարգանք ցուցաբերել Սահակ վեհափառի հանդեպ:

Անդրադառնալով կանոնադրության 10-րդ կետում տեղ գտած, այսպես ասած, «զանցառությունը», խորեն սրբազանը, ընդգծում է այդ կանոնադրության ժամանակավոր լինելը, եւ որ այն իր ուժը պահպանելու է մինչեւ Ազգային-եկեղեցական ժողով գումարելը⁴⁷:

Խորեն սրբազանը միաժամանակ նրբորեն հանդիմանում է Սահակ վեհափառին, որ եթե վերջինս ժամանակին ուղարկեր իր դիտողություններն ու առաջարկները կանոնադրության վերաբերյալ, ապա այն «կը սրբագրուէր»⁴⁸: Նշենք, որ այդ կանոնադրությունը հենց այդ նպատակով դեռեւս 1926 թ. մայիսի 27-ին հատուկ կոնզակով ուղարկվել էր Կիլիկիո կաթողիկոսին, սակայն վերջինս որեւէ դիտողություն կամ առաջարկ չէր ներկայացրել դրա վերաբերյալ:

Խորեն սրբազանը, հակադրվելով Սահակ Խապայանի պնդմանը, գրում է, որ երկու աթոռների միջեւ դարերով գոյություն ունեցած «խրամատը լցուած է ըստ ամենայնի»՝ բերելով իր ասածն ապացուցող մի քանի փաստարկներ: Նախ մատնանշվում են նույն կանոնադրության այն կետերը, որոնք ընդգծում եւ կարեւորում են Կիլիկիո կաթողիկոսության դերն Ազգային-եկեղեցական ժողովի հրավիրման հարցերում: Խորեն սրբազանը նշում է նաեւ, որ երկու աթոռների միջեւ «ամենացանկալի

⁴⁵ ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4469, թ. 14–15:

⁴⁶ Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի, էջ 56: ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4469, թ. 14:

⁴⁷ Տէս Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի, էջ 57:

⁴⁸ ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4469, թ. 14-ի շրջերես:

փոխյարաբերություններն են մշակուած՝ փոխադարձ սիրոյ եւ յարգանքի հիման վրայ», Կիլիկիո աթոռը վայելում է Գերագույն հոգեւոր խորհրդի «խորին յարգանքը», Մայր աթոռից ուղարկված գրություններում Կիլիկիո եպիսկոպոսները կոչվում են «իրենց բարձր աստիճանին համապատասխան տիտղոսներով»⁴⁹: Միաժամանակ խորեն սրբազանը համաձայնություն է հայտնում Սահակ վեհափառի այն պնդմանը, թե երկու աթոռների հարաբերությունները պետք է քննության հարց դառնան Ազգային-եկեղեցական ժողովում: Նամակի վերջում վերջինս հավաստիացնում է, որ Գերագույն հոգեւոր խորհուրդը «ջանացել է դարերով անլուծելի թողածը լուծել գործնականով՝ թողնելով նորա սրբագործումը ազգային-եկեղեցական ժողովին»⁵⁰:

Դատելով խորեն Մուրադբեկյանի վերը նշված նամակում բերված փաստարկներից եւ կանոնադրության հոդվածներում առկա ակնհայտ հակասությունից՝ ուզում ենք ենթադրել, որ կանոնադրության 10-րդ կետում Կիլիկիո կաթողիկոսության անվան բացակայությունը իրապես վրիպման եւ անուշադրության արդյունք է:

Արդեն 1931 թ. մարտի 14-ին Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանը խորեն Մուրադբեկյանին գրում է, որ Սահակ վեհափառը հանձնարարել է իրեն տեղեկացնել, որ ինքը «չէ վշտացած ոեւէ կերպով», միաժամանակ ընդգծելով, որ քանի որ Կիլիկիո եպիսկոպոսների մասնակցությունը «նախընթաց» չունի «երկու Աթոռներու միջեւ ստեղծուած խտրականութիւնը պաշտօնապէս վերացնելէ ետքն է, որ այդպիսի հրաւեր մը գալու էր Կիլիկիոյ եպիսկոպոսներուն, այն ալ Կիլիկիոյ կաթողիկոսին միջոցաւ եւ ոչ թէ առանձին առանձին, ինչպէս որ կ'պահանջէ կարգապահութիւնը»⁵¹: Այսինքն՝ Սահակ խապայանին դուր չէր եկել, որ խորեն Մուրադբեկյանը Կիլիկիո թեմական առաջնորդներին Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու հրավեր է ուղարկել անհատապես: «Ամեն պարագայի մէջ կրնաք վստահ ըլլալ, որ Սահակ կաթողիկոս սառուգիւ չէ վշտացած Ձեզի, այլ ըրած է անվերապահ դիտողութիւն մը, եւ ես վստահ եմ, որ Դուք պիտի հաւատաք իր հաւաստիքին եւ պիտի ջնջէք Ձեր միտքէն վշտանալու եւ վշտացնելու

⁴⁹ ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4469, թ. 14-ի շրջերես, 15:

⁵⁰ ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4469, թ. 14-ի շրջերես, 15: Թղթակցություն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս խորէն Ա. Մուրադբեկեանի, էջ 58:

⁵¹ ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4471, թ. 1-ի շրջերես:

կարծիքը»⁵² (ընդգծումները.— Է. Հ.),— ամփոփում է նամակը Բաբկեն սրբազանը:

Կանոնադրության եւ Կիլիկիո եպիսկոպոսներին ուղղակի հրավիրելու հետ կապված «նեղեալ վիճակն» այնուամենայնիվ լուրջ ազդեցություն չունեցավ երկու աթոռների փոխհարաբերությունների վրա, եւ դեռեւս 1920-ական թթ. ստեղծված ջերմ միջնորոտը պահպանվեց:

Նշենք, որ դեռեւս 1930 թ. օգոստոսի 16-ի թվակիր նամակով՝ հղված Բաբկեն եպս. Կյուլեսերյանին, Սահակ կաթողիկոսն, անդրադառնալով իր հնարավոր մասնակցությանը Ազգային-եկեղեցական ժողովին, գրում է. «Յայտնի բան է, որ մեր ո՛չ միայն ֆիզիքական ուժերը, նաեւ նիւթական անձկութիւնս չը պիտի ներեն այս մանուածապատ, նաեւ մանիշապատ ճամբորդութիւնը ընելը»⁵³: Այսինքն՝ հրավերներն ստանալուց անմիջապէս հետո Ազգային-եկեղեցական ժողովին իր մասնակցության վերաբերյալ Կիլիկիո կաթողիկոսն ուներ որոշակի ձեւավորված դիրքորոշում:

Բաբկեն սրբազանին հղած իր մեկ այլ նամակում Սահակ Բ., ականարկելով Եգիպտոսի «Արեւ» թերթի եւ Բաբկեն սրբազանի դիրքորոշումը Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու վերաբերյալ, գրում է. «Ձեզ նման Եգիպտոսի «Արեւ»-ն ալ կէս բերնով գործնապէս մասնակցութեան պէտքը ցոյց կուտայ նոր կանոնագրութեան այն տրամադրութեան վրայ, որ ի բացակայութեան Կաթողիկոսին՝ Կիլիկիոյ Կաթողիկոսը, կամ Երուսաղէմի պատրիարքը կը նախագահէ Ազգ. եկեղեցական ժողովին»⁵⁴: Սակայն նշում է, որ եկեղեցական խորհրդակցությունը պետք է տեղի ունենա կաթողիկոսի ընտրությունից հետո, որն էլ կվարի այդ նիստը, ապա շարունակելով. «...նախաթող անդամութեան համար չարժեք երկար ու կասկածելի ճամբորդութեան, շատ-շատ ի սէր երազական համագործակցութեան, փոխանորդ մը կարող եմ նշանակել Գեր. Խորհրդոյ անդամներէն կամ Գեր. Թորգոմ»⁵⁵ արքեպիսկոպոսին»⁵⁶: Վերջիններիս հետագա նամակագրությունից եւս ականահայտ է, որ Սահակ կաթողիկոսը ժողովին անձամբ մեկնելու ցանկություն չունեւ⁵⁷:

⁵² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4471, թ. 1-ի շրջերես:

⁵³ Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բաբգէն Ա. Կաթողիկոսներու, էջ 307:

⁵⁴ Անդ, էջ 308:

⁵⁵ Խոսքը Երուսաղէմի Հայոց պատրիարք Թորգոմ արք. Գուշակյանի մասին է:

⁵⁶ Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բաբգէն Ա. Կաթողիկոսներու, էջ 308, 310:

⁵⁷ Տես անդ, էջ 312:

Արդեն նշվել է, որ Գերագույն հոգեւոր խորհրդի կողմից հրավեր ստացել էր նաեւ Բաբկեն եպս. Կյուլեսերյանը⁵⁸: Գարեգին արք. Հովսեփյանն իր հերթին Բաբկեն սրբազանին գրած անձնական նամակով վերջինիս հորդորում էր ոչ միայն ներկա գտնվել Ազգային-եկեղեցական ժողովին, այլ նաեւ ապահովել Կիլիկիո կաթողիկոսության աշխարհիկ եւ հոգեւոր պատգամավորների ներկայությունը⁵⁹:

1930 թ. սեպտեմբերի 4-ին⁶⁰ Խորեն արք. Մուրադբեկյանին հղած պաշտոնական նամակում Բաբկեն սրբազանն Անթիլիասի Դպրեվանքի կազմակերպական գործերով պայմանավորված զբաղվածության պատճառով վստահություն չի հայտնում, որ անձամբ կկարողանա մասնակցել կաթողիկոսական ընտրություններին⁶¹: Բաբկեն սրբազանը նույն նամակում հայտնում է, որ Ազգային-եկեղեցական ժողովին իր ձայնի իրավունքը տալիս է Խորեն արք. Մուրադբեկյանին. «...վասն որոյ աղաչեցի զամենապատիւ տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան...զտէր Խորէն արքեպիսկոպոսն, զի հաճեսցի երեսփոխան իմ լինել ի ժողովի անդ եւ տալ զիմ քուէ որում եւ ինքն կամեսցի»⁶², -ասված էր նամակում: Բաբկեն սրբազանը նույն խնդրանքով դիմում է նաեւ Խորեն սրբազանին հղած անձնական նամակում՝ միաժամանակ հույս հայտնելով, որ նոր հայրապետ կընտրվի հենց վերջինս⁶³: Նույն նամակում Բաբկեն Կյուլեսերյանը գրում է, որ. «Ի նպաստ Մայր Աթոռոյ բաւականին բաներ խօսած եմ հրապարակաւ եւ գրած եմ Սիրնի մէջ», միաժամանակ հույս հայտնելով, որ այսուհետեւ. «Մայր Աթոռոյ եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան միջեւ գոյութիւն ունեցող տխուր իրականութիւնները կչքանան բոլորովին, եւ երկու աթոռներ սիրով կը նուիրուին ի սփիւռս աշխարհի տարածուած հայ ժո-

⁵⁸ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4470, թ. 3-ի շրջերես:

⁵⁹ Տէս Գարեգին Ա. Յովսէփեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943–1952), հտ. Բ., Փաստաթուղթերու եւ նիւթերու ժողովածու, Անթիլիաս, 2017, էջ 24–25:

⁶⁰ Բ. Եղիայան իր աշխատության մեջ նշում է, որ 1932 թ. սեպտեմբերի 4-ին Մայր Աթոռ հղած նամակով Բաբկեն աթոռակից կաթողիկոսը տեղեկացրել է, որ պատրաստ է անձամբ ժամանելու էջմիածին եւ Սահակ կաթողիկոսի անունից մասնակցելու կաթողիկոսական ընտրություններին (տես Բ. ԵՂԻԱՅԱՆ, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914–1972, Անթիլիաս, 1975, էջ 415): Մեզ չհաջողվեց գտնել այդ ամսաթիվով եւ այդ բովանդակությամբ նամակ: Ընդհակառակը՝ 1930 թ. սեպտեմբերի 4-ով թվագրվող մեր մեջ բերած նամակում Բաբկեն աթոռակից կաթողիկոսը վստահություն չի հայտնում Ազգային-եկեղեցական ժողովին անձամբ ներկա լինելու հարցում:

⁶¹ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4470, թ. 1:

⁶² ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4470, թ. 2:

⁶³ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4470, թ. 4:

ղովուրդին պահպանութեան իրենց Մայրենի Եկեղեցւոյն ծոցը համաձայն իրենց պատմական կեանքի փորձութիւններուն»⁶⁴:

Ազգային-եկեղեցական ժողովի հետաձգվելուց հետո եւս իր նամակներում Բաբկեն սրբազանը հավաստիացնում էր, որ Մայր Աթոռում տիրող ոգին խանդավառում է իրեն, եւ որ «...սրտանց կը փափաքիմ գալ Մայր Աթոռ»՝ միաժամանակ ակնարկելով որոշ «իրական արգելքների» մասին, իր ժամանումը հնարավոր դարձնելու տեսանկյունից⁶⁵:

1930 թ. օգոստոսի 17-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի փակ նիստը որոշում է «անպատրաստ» լինելու պատճառով հետաձգել աշնանը նախատեսված կաթողիկոսական ընտրութիւնները, իսկ դրանց հետագա կազմակերպման հարցը մտցնել ՀԱՄԿ(Բ)Կ Կենտկոմ⁶⁶: Նույն թվականի սեպտեմբերի 7-ին Անդրկովկասյան պետքաղվարչութեան նախագահի տեղակալ Լ. Բերիան եւ գաղտնի բաժնի վարիչ Մուղղուսին հայաստանյան իշխանութիւններին ուղարկած գաղտնի զեկուցագրով հայտնում են, որ պետք է կաթողիկոսական ընտրութիւնները թույլ տալ, սակայն Ազգային-եկեղեցական ժողովի հրավիրումը պետք է հետաձգել՝ դրա ընթացքը լիակատար վերահսկելու համար, նպատակ ունենալով, ինչպես ասված է զեկուցում՝ «...Հայ Եկեղեցու վերնախավի վերջնականապես նվաճումը»⁶⁷:

Այսինքն՝ խորհրդային իշխանութիւնները ցանկանում էին ոչ թե չեղարկել կաթողիկոսական ընտրութիւններն, այլ այն դարձնել ամբողջութեամբ վերահսկելի գործընթաց, ինչը հավանաբար վերջիններիս չէր հաջողվել անել սեղմ ժամկետների պատճառով: Ընտրութիւնների հետաձգումն իշխանութիւններին, մի գուցե, հնարավորութիւն կտար նաեւ առաջադրել իրենց համար ընդունելի թեկնածուի: Հետաքրքրական է, որ Բերիայի գաղտնի զեկուցագրում, կաթողիկոսի հնարավոր թեկնածուներին տրված բնութագրումներից հետո, ավելի ընդունելի թեկնածու է դիտարկվում Գեւորգ արքեպս. Զորեքչյանը⁶⁸:

Խորհրդային իշխանութիւնները որոշակի մտավախութիւն ունեին նաեւ առ այն, որ եթե Հայաստանում հնարավորութիւն չտան կաթողի-

⁶⁴ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4470, թ. 4:

⁶⁵ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4471, թ. 1-ի շրջերես, 2:

⁶⁶ Տէս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Բ., էջ 265:

⁶⁷ Տէս անդ, էջ 268–279:

⁶⁸ Տէս անդ, էջ 277–278:

կոսական ընտրություններ անցկացնել, ապա հնարավոր էր Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրություններ տեղի ունենային սփյուռքում, որով խորհրդային Միությունն ամբողջությամբ կկորցներ Հայոց Եկեղեցուն կատմամբ իր վերահասկողությունը: Այս մտահոգություններն արտահայտված էին նաեւ վերը հիշատակված գաղտնի զեկուցագրում, որն ըստ էության ամբողջությամբ բացահայտում է ժամանակի խորհրդային իշխանությունների մոտեցումներն ու պատկերացումները, որոնք որդեգրված էին Հայոց Եկեղեցու նկատմամբ իրականացվող քաղաքականության մեջ: Կարծում ենք, խորհրդային իշխանություններն իրենց քաղաքական հաշվարկներում ի նկատի ունեին նաեւ Կիլիկիո կաթողիկոսության գոյության հանգամանքը, որը կաթողիկոսական ընտրությունների չեղարկման պայմաններում կարող էր այլընտրանք հանդիսանալ էջմիածնին: Ուստի հայրենիքում կաթողիկոսական ընտրությունների անցկացմանը տեղի իշխանությունները չէին կարող բացարձակ դեմ լինել:

1930 թ. սեպտեմբերի 11-ին արտասահման ուղարկված նոր շրջաբերականն իրազեկում է ընտրությունների հետաձգման մասին: Իբրեւ հիմնական պատճառ Գերագույն հոգեւոր խորհուրդը նշում է արտասահմանյան պատվիրակների ԽՍՀՄ մուտքի արտոնագրի ստացման եկարաձգվելը, ինչը կխանգարեր ժողովի ամբողջական կազմով հրավիրմանը: Գերագույն հոգեւոր խորհուրդը միաժամանակ արտասահմանի թեմերին հորդորում է այնուամենայնիվ կատարել Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրություններ եւ ցուցակներն ուղարկել Մայր Աթոռ, իսկ ԽՍՀՄ տարածքի թեմերին՝ դադարեցնել ընտրությունները եւ սպասել նոր հրահանգի⁶⁹:

Քանի որ ընտրությունները հետաձգվել էին, խորեն արքեպս. Մուրադբեկյանը հերթական անգամ հրավիրում է Կիլիկիո կաթողիկոսին անձամբ ժամանել Հայաստան: Վերջինս չէր կամենում այդ պատմական հնարավորությունը բաց թողնել, բայց եւ չէր ցանկանում ընդունել կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու վերաբերյալ Անթիլիասի նախկին մերժումները: Ուստի 1930 թ. նոյեմբերի 6-ին խորեն սրբազանը ոչ միայն կրկին անգամ Բաբեկեն կաթողիկոսին հրավիրում է մասնակցելու Ազգային-եկեղեցական ժողովին, այլեւ հանձնարարում է փորձել հա-

⁶⁹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 115, թ. 6:

մոզել Սահակ կաթողիկոսին, որ անձամբ ներկա գտնվի Ազգային-եկեղեցական ժողովին եւ իր ձեռքով օծի նորընտիր հայրապետին⁷⁰: Սա անչափ կարեւոր աննախագեպ իրադարձություն կարող էր դառնալ էջմիածին-Անթիլիաս հարաբերություններում:

Փաստորեն, Մայր Աթոռը Հայոց Եկեղեցու պատմության մեջ թերեւս առաջին անգամ վճռական եւ անկեղծ ցանկություն ուներ, որ Կիլիկիո հայրապետն անձամբ մասնակցի Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրություններին եւ իր ձեռքով օծի վերջինիս: Եթե Սահակ Բ. այցելությունը կայանար, սա կլիներ Կիլիկիո կաթողիկոսների երբեւէ առաջին մասնակցությունն ընդհանրական կաթողիկոսի ընտրություններին: Սա կդառնար աննախագեպ պատմական իրադարձություն: Այդ իրավիճակը լիովին համապատասխանում էր այն ջերմ մթնոլորտին, որ ձեւավորվել էր Հայոց Եկեղեցու նվիրապետական աթոռների հարաբերություններում տվյալ պահին: Սակայն ինչ-ինչ պատճառներով այդ պատմական իրադարձությունը տեղի ունեցավ մեկուկես տասնամյակ հետո, բոլորովին այլ անձանց մասնակցությամբ եւ հանգամանքներում⁷¹:

1931 թ. մարտի 14-ին Բաբկեն սրբազանը խորեն Մուրադբեկյանին գրում է, որ Սահակ կաթողիկոսը տարիքի պատճառով⁷² այնուամենայնիվ չի կարող նման երկար ճամփորդության մեկնել: Նա միաժամանակ իր ջերմ վերաբերմունքն է արտահայտում Մայր Աթոռի նկատմամբ՝ շեշտելով, որ. «Երկու Աթոռներու անխտրականութեան եւ համագործակցութեան մէջ է այն նոր ոյժը, որուն պէտք ունի մեր Ս. Եկեղեցին վերականգնելու համար ամեն կերպով»⁷³:

Նշենք, որ Հայաստան ժամանելու հետ կապված գոյություն ունեին նաեւ մի շարք այլ խնդիրներ, մասնավորապես խորհրդային Միություն մուտքի արտոնագիր ստանալու հետ կապված, որոնց մասին Բաբկեն սրբազանը հիշատակում է Գերագույն հոգեւոր խորհրդին գրած նամակներում՝ հույս հատնելով, որ խնդիրն այնուամենայնիվ կլուծվի⁷⁴: Սա

⁷⁰ Տէս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4471, թ. 1:

⁷¹ Տէս Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, 1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովը եւ կաթողիկոսական ընտրությունները. Նոր փուլ էջմիածին-Անթիլիաս հարաբերություններում, «ՎէՄ» համահայկական հանդես, ԺԶ. (ԻԲ.) տարի, թիվ 2 (86), ապրիլ-հունիս, 2024, էջ 24-66:

⁷² Սահակ Բ. Խապայանն այդ ժամանակ 82 տարեկան էր:

⁷³ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4471, թ. 1-ի շրջերես:

⁷⁴ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4471, թ. 2:

ցույց է տալիս, որ Անթիլիասում, այնուամենայնիվ, ցանկություն կար որեւէ ձեւով մասնակցություն ունենալ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրություններին: Կիլիկիո կաթողիկոսի Հայաստան ժամանելու հետ կապված գոյություն ունեին նաեւ քաղաքական պատճառներ, որի մասին կիսոսվի հաջորդիվ:

Շարունակությունը՝ հաջորդիվ



ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (1944–1961)

Սկիզբը՝ թիվ Ը.

Բ. ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Թիվ 6

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

«Էջմիածին» ամսագրի հրատարակության ընթացքի մասին

«Էջմիածին» ամսագիրը տպագրվում է Պոլիգրաֆիայի եւ Հրատարակչությունների Վարչության թ. 2 տպարանում: «Էջմիածին» ամսագրի յուրաքանչյուր համար տպարանի ղեկավարի մեղքով եւ մի շարք այլ պատճառներով մեծ ուշացումով է տպագրվում: Որպես կանոն, յուրաքանչյուր համար լույս է տեսնում 6-րդ ամսին, կորցնելով արդիական նշանակությունը: Այսպես, Հայաստանի խորհրդայնացման 25-ամյակին նվիրված ամսագրի 1945 թ. նոյեմբեր-դեկտեմբերի միացյալ համարը միայն 1946 թ. ապրիլի 28-ին լույս տեսավ, չնայած նյութերը տպարան էին հանձնվել 1945 թ. դեկտեմբերի 16-ին: Այսպիսով՝ ամսագրի չորս տպագիր մամուլի տպագրման գործընթացը տեւել է չորս ու կես ամիս, այն ժամանակ, երբ Պոլիգրաֆիայի եւ Հրատարակչությունների Վարչության հետ կնքված պայմանագրով տպարան նյութերի հանձնումից հետո ամսագիրը պետք է տպագրվի 20 օրում: Եթե նկատի ունենանք, որ ամսագրի համարն արտասահմանյան ընթերցողներին է հասնում 2–3 ամիս անց, ապա ստացվում է, որ Հայաստանի խորհրդայնացման 25-ամյակին նվիրված ամսագրի համարը արտասահմանում կստանան հազիվ խորհրդայնացման 26-րդ տարեդարձին:

Այդպիսի վրդովեցուցիչ վերաբերմունքը կրկնվում է եւ «Էջմիածին» ամսագրի մնացյալ համարների առնչությամբ: Ամսագրի 1946 թ. հունվարյան համարի նյութերը տպարան են հանձնվել ապրիլի 2-ին, սակայն տպագրվել են միայն հունիսի 28-ին, փետրվար-մարտի միացյալ համարը հանձնվել է հուլիսի 2-ին, սակայն լույս է տեսել սեպտեմբերի 16-ին,

ապրիլ-մայիսի միացյալ համարը հանձնվել է օգոստոսի 14-ին, սակայն լույս է տեսել նոյեմբերի 1-ին, հունիս-հուլիսի միացյալ համարը հանձնվել է հոկտեմբերի 29-ին եւ 1947 թ. հունվարի 25-ի դրույթամբ դեռեւս պատրաստ չէ:

Տպարանի ղեկավարներն այդպիսի իրավիճակը բացատրում են տպարանի ծանրաբեռնվածությամբ, սակայն այդ միայն մասամբ է ճիշտ, գլխավոր պատճառն այն է, որ «էջմիածին» ամսագրի տպագրությունն անտեսվում է տպարանի ղեկավարների կողմից – նրանք ասում են, որ պարտավոր են տպագրել առաջին հերթին «Սովետական Հայաստան», «Կոմունիստ» եւ «Ագիտատորի բլոկնոտ» թերթերը, երկրորդ հերթին մնացյալ թերթերը՝ «Գրական թերթ», «Ավանգարդ» եւ այլն, երրորդ հերթին «Սովետական գրականություն» ամսագիրը, եւ այդ ամենից հետո եթե ազատ ժամանակ կունենան՝ կարող են տպագրել «էջմիածին» ամսագիրը: Նման վերաբերմունքից պարզ է, որ ամսագրի տպագրման աշխատանքն ամեն անգամ ձգձգվում է, քանզի նշյալ ամսագրերի եւ թերթերի հերթական համարների նյութերը ստանում են անվերջ:

Թերթերից եւ ամսագրերից բացի հաշվապահական բլանկներ, ծրագրեր, հայտարարություններ են տպագրվում, եւ այդ ամենը «էջմիածին» ամսագրից առաջ, որովհետեւ դրանց տպագրությունից տպարանի աշխատակիցներից ինչ-որ մեկն անձնական շահ է ստանում:

Տպարանում, տնօրենից բացի, ինքնազուլիս տնօրինում են նրա տեղակալները, արտագրական բաժնի վարիչը, արտագրամասերի վարիչները եւ հաճախ այս կամ այն պատրվակով ամսագրի տպագրման աշխատանքը դադարեցնում են: Տպագրական արտագրամասի վարիչն ինքնազուլիս հանում է շարվածքը եւ մի կողմ դնում այն պատրվակով, որ արտագրական բաժնի վարիչը մի քանի ըոպե ուշացրել է առանձնատիպը կամ էլ կլիշեն նրան դուր չի եկել: Ստացվում է, որ մեկ համարի տպագրման ընթացքում տասնյակ անգամ աշխատանքը դադարեցվում է: Այսպես, օրինակ, ամսագրի հունիս-հուլիսի վերջին համարը պետք է տպագրվեր դեռ դեկտեմբեր ամսին, դեկտեմբերի 12-ին, բացի սրբագրումից, ամեն ինչ պատրաստ էր, սակայն տնօրեն Դավթյանը կարգադրեց սրբագրումը դադարեցնել եւ «Սովետական գրականություն» ամսագիրը տպագրել, ինչի պատճառով տպագրությունը 15 օրով ձգձգվեց, այն դեպքում, երբ 3 ժամում սրբագրումը հնարավոր կլիներ ուղղել, իսկ երբ կրկին սկսեցին տպագրել, արտագրամասի վարիչը միտումնավոր աշխատանքը ձգձգեց,

օրկան միայն 8 էջ տպագրելով, մինչդեռ 8 էջը 1,5 ժամում կարելի էր տպագրել, արդյունքում ստացվեց այն, որ դեկտեմբերի 30-ից մինչև հունվարի 23-ը 92 էջանոց ամսագիրը դեռ ամբողջությամբ չի տպագրվել: Համարի տպագրությունը դադարեցվել է արտադրական բաժնի վարիչի կողմից, որ տպագրի Հայկական թատերական ընկերության ծրագրերը, երբ կարելի էր տպագրել ուրիշ մեքենայի վրա: Այլ անգամ արտադրամասի վարիչը դադարեցրեց, որպեսզի նոթատետրեր տպագրի եւ երբ ընդամենը 6 էջ էր մնացել, ինչը 1,5 ժամում կարելի էր ավարտել, Գերագույն Խորհրդի նյութերի տպագրման համար տնօրենն աշխատանքը դադարեցրեց: Սակայն, այս դեռ ամենը չէ, այդ համարում հարկավոր էր Կաթողիկոսի դիմանկարը տպագրել: Ամսագրի շապիկի համար տպարանի պահանջած քանակի թուղթ էր բաց թողնվել: Սակայն, հաջորդ օրն արտադրամասի վարիչը հայտարարեց, որ թղթի 130 թերթ չի բավականացնում: Որպեսզի ամսագրի հրատարակությունն այդ պատճառով չհետաձգվի, մենք ստիպված էինք մեծ դժվարությամբ նույն օրն իսկ թուղթը հայթայթել եւ արտադրամասին փոխանցել: Շապիկը տպագրվեց, որից հետո դիմանկարի փոխարեն արտադրամասի վարիչը ինչ-որ նոթատետրերի, ապա՝ այլ նյութերի ընթացք տվեց: 10-օրյա ընդմիջումից հետո, երբ վերջապես դիմանկարի տպագրությանը ձեռնարկեցին, արտադրամասի վարիչի մոտից անհետացավ նրան փոխանցված թուղթը: Այդ գողության պատճառով հունվարի 16-ից 25-ը աշխատանքը դադարեցվեց մինչև հաջողվեց կրկին ստանալ թուղթ եւ այդ էլ՝ ոչ թե տպարանի, այլ՝ խմբագրության հաշվին:

Տնօրինությունը գողերի բացահայտման եւ այդպիսի վրդովեցուցիչ երեւույթների, որ տեղի են ունենում միայն «էջմիածին» ամսագրի նկատմամբ, կանխման համար ոչ մի միջոց չի ձեռնարկում, նրանց համար այդպիսի երեւույթները սովորական են դարձել: Եւ այդ եզակի դեպք չէ — նախորդ համարների տպագրության ժամանակ արտադրամասում մշտապես գողացվում էր ամսագրի թուղթը — երբեմն 400, երբեմն 500 եւ ավելի թերթ եւ մշտապես բացատրում էին նրանով, որ խոտան է ստացվում, իսկ երբ խմբագրությունը պահանջում էր ցույց տալ խոտանված արտադրանքը՝ նրանք մշտապես հրաժարվում էին: Տպարանում անպատիժ ոչ միայն թուղթն են գողանում, այլեւ ամսագրի պատրաստի կլիշեներն են փչացնում, օրինակ երբ 1946 թ. հունվարյան պատրաստի համարը գտնվում էր արտադրամասում, անհայտ մեկը փչացրեց մեծ կլիշեն (51 թերթանոց), տաշող քարով փչացվեց ամսագրի տիտղոսաթերթի

կլիշեն, Հ. Աճառյանի հոդվածի¹ շարվածքը ցրված էր արտադրամասով մեկ: Սակայն, մինչ այժմ տնօրինությունը մեղավորներին ի վիճակի չէ բացահայտել, վերագրում են նրան, որ աշխատողներից մեկը հակակրոնական զգացումներից դրդված է հավանաբար փչացրել կլիշեն, ընդ որում տնօրինությունը անգամ չստանձնեց փչացված կլիշեի պատրաստումը: Խմբագրությունը ստիպված էր կլիշեն կրկին պատվիրել, Աճառյանի հոդվածը նորից գրաշարի տալ եւ այդ ամենի արդյունքում աշխատանքը 10 օրով ձգձգվեց:

Ամսագիրն անորակ է տպագրվում, բազմաթիվ տառասխալներով, նկարները անդուր են ստացվում, չնայած լավ կլիշեների առկայությանը՝ նկարներն երբեմն շուռտիպ տեսքով են տպագրվում: Տպարանի վատ աշխատանքի օրինակ է հունիս-հուլիսյան համարը, որը տպագրական արտադրամասի վարիչի մեղքով այնքան վատ է տպագրվել, որ արտասահմանյան ընթերցողների աչքին խորհրդային տպագրական մեքենաները կարող է վարկաբեկել: Այդ ամենում մեղքի իր մեծ բաժինն ունի եւ արտադրական բաժնի վարիչ Ա. Հախվերդյանը, ով միտումնավոր այդպիսի ակնհայտ անորակ արտադրանք է թույլ տվել, եւ այդ այն պատճառով, որ երբ ամսագիրն Ա. Առաքելյանն է խմբագրել, Հախվերդյանը տեխնիկական խմբագիր եղել է, ինչի համար յուրաքանչյուր համարի դիմաց ստացել է 1500–2000 ռուբլի: Առաքելյանը հազվադեպ է գնացել տպարան եւ ողջ աշխատանքը Հախվերդյանի վրա էր կուտակվել: Հախվերդյանը, իդեպ, կիսագրագետ մարդ է եւ ամսագիրն այդ պատճառով սխալներով լի էր: Երբ այդ գործով Կիսիբեկյանը ժամանակավոր սկսեց զբաղվել, ապա նա 1945 թ. նոյեմբեր-դեկտեմբեր համարի տպագրման մեջ խոշոր բացթողումներ նկատեց, եւ նա ստիպված էր 8 էջ կրկին տպագրել, ինչի պատճառով ամսագրի լույս ընծայումը 12 օրով ձգձգվեց:

Կիսիբեկյանը դրանից հետո Հախվերդյանին այդ աշխատանքից հեռացրեց եւ տպարանում տպագրության նախապատրաստման գործընթացով ինքն էր զբաղվում, արդյունքում հունվար, փետրվար–մարտ եւ ապրիլ–մայիս համարները լավ որակական ցուցանիշներով հրատարակվեցին: Երբ արտասահմանյան գործուղումից Առաքելյանը վերադարձավ, Կաթողիկոսը նրան հանդիմանեց, որ նրա հրատարակած համարները Կիսիբե-

¹ Տե՛ս Հ. Ր. ԱՃԱՌՅԱՆ, Երեք հարց Մեսրոպյան այբուբենի շուրջը, «էջմիածին», 1946, թ. 1, էջ 48–50:

կյանի հրատարակածին որակով զիջում են, որ տպարանում չի լինում, այն դեպքում, երբ Կիսիբեկյանը մշտապես տպարանում է: Առաքելյանը, որպեսզի հերքի Կաթողիկոսի վարկածը, իր մարդու՝ Հախվերդյանի, միջոցով ձգտում էր ապացուցել, որ Կիսիբեկյանի մոտ էլ է վատ արտադրանք ստացվում եւ որ այդ իրենից կախված չէ: Առաքելյանի հանձնարարությամբ Հախվերդյանն արտադրամասի վարիչի հետ ողջ ժամանակ ձգտում էին խաբելով Կիսիբեկյանին հսկողությունից մեկուսացնել: Երբ Կիսիբեկյանը տպարան էր գնում՝ նրա ասում էին, որ այսօր չենք տպագրելու, իսկ երբ հաջորդ օրը կրկին գնում էր՝ ասում էին. «Երեկ Ձեր մեկնումից հետո մեքենան ազատվեց եւ մենք առանց Ձեզ տպագրեցինք»: Հախվերդյանը բոլորին համոզեց Կիսիբեկյանի այդ վերջին համարի աշխատանքն ավելի արագ ինչ-որ կերպ ավարտել, որ կարողանա նորից գործի ստանձնի (հունիս-հուլիսյան համարի հրատարակումից հետո աշխատանքը պետք է Առաքելյանը շարունակեր), իսկ մինչ այդ՝ ըստ ամենայնի աշխատանքը ձգձգում էր: Այսպիսով, բացահայտվում է, որ «Էջմիածին» ամսագրի շուրջ տպարանում ակնհայտ անառողջ մթնոլորտ է ստեղծվել. ամեն անգամ խմբագրությունը ստիպված է ամեն մեկի աղաչել, խնդրել, ինչ-որ բան խոստանալ, որպեսզի աշխատանքը տեղից առաջ գնա:

Կամայական հաշվարկում են եւ տպագրական ծախսերը. Հախվերդյանը, հաստատված չափորոշիչներն արհամարհելով, ծախսերն ողջ ժամանակ ուռճացնում է: Ամեն անգամ խմբագրությունը ստիպված է տնօրենի օգնությանը դիմել, ով մշտապես նրա հաշվարկած գումարը իջեցնում է: Նա մշտապես համառորեն հրաժարվում է բացատրություն տալ, թե ինչպես է ընդհանրապես ամսագրի ծախսերը հաշվարկում:

Սակայն, չի կարելի ամսագրի թողարկման ձգձգման ողջ մեղքը տպարանի վրա բարդել: Դրանում մեղքի մեծ բաժին ունեն էջմիածնի Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամները, ինքը Կաթողիկոսը եւ Ա. Առաքելյանը:

Հոգեւոր Խորհրդի անդամները «Մայր Աթոռ» բաժնի նյութերը ժամանակին չեն ներկայացնում, օրինակ՝ Եղիշե վարդապետն ապրիլ-մայիսյան համարի² համար նյութն անգամ այն ժամանակ չներկայացրեց, երբ բոլոր նյութերը տպարան էին հանձնված, տպագրելով 16 էջ՝ ստիպված էին տպարանում 14 օրով աշխատանքը դադարեցնել, մինչեւ նա այդ նյութը բարեհաճեց ներկայացնել: Նա հունիս-հուլիսյան համարի համար նյութե-

² Տե՛ս «Էջմիածին», 1946, թ. 4–5, էջ 17–18: Անհեղինակ է:

րը³ մեծ ուշացումով եւ ոչ-ամբողջովին ներկայացրեց: Դիտարկենք թեկուզ այսպիսի փաստ. հոլիսի 12-ին էջմիածնում վախճանվեց միաբանության ավագագույն անդամ Մաթեոս վարդապետ Աճեմյանը, Եղիշե վարդապետը միաբանության անդամի մահվան մասին միայն մի քանի բառ գրեց՝ չնշելով անգամ ծննդյան ամսաթիվը: Ընկեր Կիսիբեկյանը մատնանշելով գրվածի անբավարար լինելը, Աճեմյանի կենսագրությունը եւ ֆոտո-քարտը ամսագրում տեղադրելու համար խնդրեց տալ: Երկու ամսվա ընթացքում նա Աճեմյանի ոչ կենսագրությունը, ոչ ֆոտո-քարտը չկարողացավ նրանից ստանալ, անգամ ես անձամբ Կաթողիկոսին ասեցի, որպեսզի ամսագրի համար ուղարկեն այն, ինչն անհրաժեշտ է, սակայն լրիվ անարդյունք: Կիսիբեկյանը, ապարդյուն փորձերից հետո, ստիպված էր խմբակային լուսանկարից կլիշե պատրաստել եւ ամսագրում տեղադրել, առանց կենսագրության եւ մահախոսականի, չնշելով անգամ վախճանված վարդապետի ծննդյան տարեթիվը⁴: Հասկանալի է, թե դրան արտասահմանի եւ տեղական հոգեւորականությունը ինչպես կարձագանքի:

Ամսագիրը էջմիածնի միակ ամսագիրն է, սակայն խմբագրությունը չի կարողանում նրանից պաշտոնական գրագրության, կոնդակների, ուղերձների, շրջաբերականների եւ այլնի պատճեններ ստանալ, որ տպագրի եւ դրանով իսկ էջմիածնի կյանքը լուսաբանի: Այն, ինչ տպագրվում է, շնորհիվ այն բանի է, որ ինչ-որ նյութեր իմ ձեռքն են ընկնում եւ ես փոխանցում եմ խմբագրությանը: Եղել են դեպքեր, երբ Կիսիբեկյանը վերատպել է նյութեր արտասահմանի մամուլից (կոնդակ, ուղերձ, գրագրություն), լուսաբանելով էջմիածնի կյանքը: Իմիջայլոց, արտասահմանյան մամուլի մասին. էջմիածինը ստանում է 28 անուն արտասահմանյան թերթ եւ ամսագիր, սակայն ոչ բոլոր համարներն են կարգավորված եւ հայտնի չէ, թե դրանք որտեղ են կորում: Հաճախ ամսագրի համար արտասահմանից կամ ներքին թեմերից ստացված նյութերը էջմիածնում կորում են:

Ամսագրի աշխատանքի բարելավման նպատակով Կաթողիկոսը վարդապետներից խմբագրական խումբ է կազմել⁵, ովքեր թերթա-ամսագրային

³ Տե՛ս «էջմիածին», 1946, թ. 6–7, էջ 27–29:

⁴ Տե՛ս Տ. Մատթեոս ծալրագույն վարդապետ Աջեմյանի մահը, «էջմիածին», 1946, թ. 6–7, էջ 29: Շատ հակիրճ, անշուք լուսանկարով, անհեղինակ հաղորդագրություն է: Եղել է Ս. էջմիածնի Մայր տաճարի լուսարարը:

⁵ Ամսագրում «Կոլեգիայի» գոյությունը մասին չի հիշատակվում: Կազմը հնարավոր չեղավ ճշտել:

աշխատանքի մասին հասկացություն չունեն, սակայն նրանցից յուրաքանչյուրը ստանձնում է ընթերցելու դեռ չխմբագրված նյութերը, փոխանակ արդեն խմբագրված, տպագրության պատրաստի նյութերը քննարկի: Արդյունքում, նյութերի տպագրությունն ամիսներով ձգձգվում է: Այսպիսով՝ խմբագրական կողեգիտան ամսագրի ժամանակին թողարկումն արհեստական ձգձգում է, ապա հետո սկսում բողոքել, որ ամսագիրը կանոնավոր չի լույս տեսնում:

Հրատարակության աշխատանքը ձգձգում է եւ ինքը Կաթողիկոսն իր չմտածված գործողություններով: Երբ Ա. Առաքելյանին անհրաժեշտ էր արտասահմանյան վիզա ստանալու համար Մոսկվա մեկնել, ես կաթողիկոսին ժամանակավոր աշխատակից Լ. Կիսիբեկյանին երաշխավորեցի: Առաքելյանը Մոսկվա մեկնեց 1946 թ. փետրվարի 20-ին եւ Կիսիբեկյանը ձեռնամուխ եղավ 1945 թ. նոյեմբեր-դեկտեմբերի համարի հրատարակմանը եւ հունվարյան ու փետրվարյան համարների կազմմանը: Առաքելյանը մեկնումից առաջ թողել էր մի քանի չխմբագրված հոդված, իսկ կաթողիկոսին հաղորդել էր, որ ինքը կազմել է 1946 թ. հունվար-փետրվարի համարը, եւ Կիսիբեկյանին մնում է միայն հանձնել տպարան, նա խորհուրդ էր տվել կաթողիկոսին հրաժարվել Կիսիբեկյանից եւ վստահեցրել, որ Հախվերդյանը (տպարանի արտադրական բաժնի վարիչ) գլուխ կհանի աշխատանքից, քանի դեռ ինքը չի վերադառնա Մոսկվայից:

Առաքելյանի թողած նյութերը փոխանցվել էին կաթողիկոսին եզրակացության: Կաթողիկոսը 10 օր անձամբ ծանոթանալով նյութերին, համոզվեց, որ իրականում նյութերը խմբագրված չեն Առաքելյանի կողմից եւ հանձնարարեց Կիսիբեկյանին համարը նորից կազմել: Կիսիբեկյանը ստանձնեց հունվարյան համարն առանձին, փետրվարյանն առանձին կազմումը: Առաքելյանի կազմած նյութերից հունվարյան համարում ընդգրկվեցին միայն երկու հոդված, եւ այն էլ նոր խմբագրությամբ:

Միաժամանակ, Կիսիբեկյանը նոյեմբեր-դեկտեմբերյան համարում ստիպված էր ինչ-ինչ փոփոխություն մտցնել, նոր հոդվածներով լրացնելով, կրճատելով, որոշներ խմբագրելով: Մարտի 14-ին հունվարյան համարը տպարան հանձնվեց: Այդ ժամանակ փետրվարյան համարի նյութը պատրաստ էր, երբ Մոսկվայից Առաքելյանը վերադարձավ: Կաթողիկոսը Նդիշե վարդապետի միջոցով Կիսիբեկյանին իմացնել տվեց, որպեսզի նա հրատարակի միայն նոյեմբեր-դեկտեմբերյան եւ հունվարյան համարները, որից հետո՝ ազատ է, աշխատանքը պետք է շարունակի Առաքելյանը,

որովհետեւ անհայտ էր, թե երբ նա կստանա մուտքի իրավունք: Իմանալով կաթողիկոսի այդ կարգադրության մասին՝ Կիսիբեկյանը փետրվարյան համարի պատրաստի նյութերը պատռեց եւ աղբարկղը գցեց:

Մոսկվայից վերադարձից հետո Առաքելյանը սկսեց Կիսիբեկյանին սադրել: Կաթողիկոսին փոխանցեց, որ Կիսիբեկյանը ակադեմիկոս Մալխասյանի, Շահազիզի հոգվածները հանել է, մինչդեռ իրականում Կիսիբեկյանին այդպիսի հոգվածներ չէին փոխանցվել: Նույնը նա փոխանցեց Մալխասյանին⁶, Աճառյանին, Շահազիզին⁷, Դրամայանին⁸, որպեսզի բոլորին տրամադրի Կիսիբեկյանի դեմ: Իրականում Կիսիբեկյանը հանել էր միայն Դրամայանի «Տրդատի սուրբ» վերնագրով մեկ անգրագետ գրված «պոեմ»⁹, որը Առաքելյանի մոտ տեղադրված էր «Հայագիտություն» ընդհանուր խորագրի տակ եւ «Հայագիտության» հետ ոչ մի առնչություն չուներ:

Հասնելով Կիսիբեկյանի հեռացմանը, Առաքելյանն ամեն կերպ կաթողիկոսին համոզեց իր մեկնումից հետո փոխարինող չվերցնել, խոստանալով 3 համար ավանսով տպագրության նախապատրաստել, ապա՝ հետո մեկնել: Իհարկե, ես նման գործարքի չէի գնա եւ վճռական պահանջեցի, որ կաթողիկոսը խմբագրի ժամանակավոր փոխարինող գտնի, պարզաբանելով, որ առաջին՝ ավանսով անթույլատրելի է ամսագրի համարներ նախապատրաստել, երկրորդ՝ ես համոզված էի, որ Առաքելյանը չի կարող երեք համար նախապատրաստել, այլ միայն կձախողի աշխատանքը: Եւ իրականում Առաքելյանը մեկնումից առաջ մարտ-ապրիլ համարի նյու-

⁶ Տե՛ս Ստ. Մալխասյանի հոգվածները՝ Հավերժացման արժանի հոբելյան, 1945, թ. 5, էջ 43–45: Մեսրոպ Մաշտոցի ծագման մասին, 1946, թ. 2–3, էջ 55–58: Հայերեն եւ արաբերեն Ազաթանգեղոսները, 1946, թ. 11–12, էջ 24–34:

⁷ Տե՛ս Ե. Շահազիզի հոգվածները՝ Հարություն վարդապետ Արամբարյան, 1945, թ. 5, էջ 27–37: Բանաստեղծ Ռ. Պատկանյանի նամակը Գլադստոնին եւ դրա պատասխանը, 1945, թ. 11–12, էջ 63–69: Միքայել վարդապետ Սալլանթյան, 1946, թ. 2–3, էջ 41–47: Գամառ-Քաթիպայի անտիպ նամակներից, 1946, թ. 4–5, էջ 50–53: Շահինյան Մանվել ծայրագույն վարդապետ Գյումուշխանեցի, 1946, թ. 6–7, էջ 50–55: Կարապետ Եզյան, Մկրտիչ Սանասարյան, Լեւոն Տիգրանյան, 1946, թ. 8–10, էջ 60–64, թ. 11–12, էջ 43–53:

⁸ Տե՛ս Ռուբեն վարդապետ (1945 թ.՝ եպիսկոպոս) Դրամբյանի հոգվածները՝ Հովհաննես վանական վարդապետ Տաուշեցի, 1945, թ. 5, էջ 22–26: Մովսես կաթողիկոսը որպես հայրենասեր եւ շինարար, 1945, թ. 1–2, էջ 24–29, Հոգեւոր ճեմարանը, էջ 42–43: Հայրենասիրությունը հրիմյանի երկերում, 1945, թ. 3–4, էջ 25–30, թ. 8–10, էջ 26–31: Ս. Գրիգոր Նարեկացի, 1945, թ. 3–4, էջ 39–47: Մեր ժամանակի դավաճան եւ երկերեսանի Վասակ Այունինները, 1945, թ. 8–10, էջ 53–55: Հայոց կաթողիկոսության դերը պատմական անցյալում, 1946, թ. 6–7, էջ 21–26: Մեսրոպ Մաշտոցի անմահական գյուտը, 1946, թ. 8–10, էջ 32–34:

⁹ Ամսագրում չի տպագրվել:

թեր թողեց (փետրվարը չէր ընդգրկել, հավանաբար, ենթադրելով, որ իբր թե ինքը հունվար-փետրվարի համար նյութերը մինչեւ Մոսկվա մեկնումը ներկայացրել է):

Պարզվեց, որ Առաքելյանի թողած նյութերն անգամ ամսագրի քառորդի հրատարակման համար անբավարար են եւ խմբագրված չեն: Կաթողիկոսը ստիպված էր կրկին Կիսիբեկյանին հրավիրել եւ առաջարկել նրան շարունակել ժամանակավոր փոխխմբագիր աշխատել, սակայն Կիսիբեկյանը հրաժարվեց, բացատրելով, որ ինքը չի կարող այժմ նյութերը նախապատրաստել, որպեսզի կրկին աղբարկղ նետի: Ես ստիպված էի Կիսիբեկյանին երկար համոզել, որպեսզի նա այդ գործը կրկին ստանձնի, ինչին նա դժվարություններ էր համաձայնվեց: Սակայն, դրանից հետո կրկին մարդուն հնարավորություն չտվեցին գործի ձեռնարկել:

Առաքելյանի թողած նյութերն ամբողջ ամսվա ընթացքում ձեռքից ձեռք անցան: Սկզբում այդ նյութերի հետ առանձին-առանձին այսպես կոչված խմբագրական կոլլեգիայի անդամները ծանոթացան, իսկ հետո ինքը կաթողիկոսը եւ միայն մայիս ամսվա վերջին այդ նյութը փոխանցեցին Կիսիբեկյանին, հանձնարարելով նրան կազմել ամսագրի փետրվար-մարտ համարը: Սակայն, Կիսիբեկյանն իրականում ստացավ ոչ թե ամսագրի համարի նյութերը, այլ երեք հոդված եւ այն էլ անհրաժեշտ կերպով չխմբագրված, եւ դրա համար էլ նա դժվարին կացություն մեջ էր, նրան անհրաժեշտ էր կարճ ժամկետի ընթացքում ամսագրի համարը նախապատրաստել:

Այսպիսով, Առաքելյանի անվայելուչ պահվածքի եւ խմբագրական կոլլեգիայի չմտածված գործողությունների շնորհիվ աշխատանքը ձգձգվեց: Վերջապես, 2/VII-1946 թ. համարի նյութերը (փետրվար-մարտյան) հանձնվեցին տպարան: Կաթողիկոսը Սոչի մեկնումից առաջ հանձնարարեց Կիսիբեկյանին կազմել 1946 թ. ապրիլ-մայիսյան եւ հունիս-հուլիսյան համարները, միաժամանակ հայտարարելով, որ օգոստոսից ամսագրի աշխատանքը կրկին դրվելու է Առաքելյանի վրա:

1946 թ. հուլիսի 16-ին Առաքելյանն արտասահմանյան գործողումից վերադարձավ: Էջմիածնի ներկայացուցիչ Եղիշե վարդապետն Առաքելյանին հաղորդեց կաթողիկոսի կարգադրությունը, որ Կիսիբեկյանն աշխատում է ամսագրի հունիս-հուլիսյան համարի վրա, իսկ Առաքելյանը պետք է 1946 թ. հետագա համարների հրատարակությունը ձեռնարկի: Առաքելյանը, որքան էլ տարօրինակ է, արտասահմանյան գործողումից

վերադառնալուց հետո, 5 ամսվա ընթացքում չի բարեհաճել խորհուրդ¹⁰ այցելի եւ հաղորդի, թե երբ է նա մտադիր վերջապես ամսագրի հետագա համարների նյութերը խորհրդի քննարկմանը ներկայացնել: 1946 թ. նոյեմբեր ամսին, երբ ես կաթողիկոսի ուշադրությունն այդ աննորմալ երեւույթի վրա հրավիրեցի եւ հարցրեցի, երբ են իրենք մտադիր ամսագրի հետագա ամիսների նյութերը տպագրության հանձնել, պարզվեց, որ Առաքելյանը հաստատված կարգը անտեսելով, չտալով մեզ քննարկման, 1946 թ. օգոստոս-սեպտեմբեր-հոկտեմբերյան միացյալ համարի նյութերը «շտապել է» կաթողիկոսի հաստատմանը ներկայացնել, որպեսզի մեզ ուղղումներ մտցնելու հնարավորությունից զրկի, չնայած այն բանին, որ Առաքելյանին դեռ ամսագրի հրատարակման առաջին իսկ օրից (1944 թ.) հայտնի էր, որ ամսագրի նյութերը որոշակի «ինստանցիաներում»¹¹ նախապես քննարկվում են եւ մեր դիտողություններից հետո վերջնական խմբագրված նյութը փոխանցվում է կաթողիկոսի ստորագրմանը:

Առաքելյանի այդ քայլի արդյունքում միացյալ համարի նյութերը մեկ ամբողջ ամիս կաթողիկոսի մոտ էին մնացել, որից հետո նա Առաքելյանին հետ է վերադարձրել առաջարկելով նրան առաջնորդող գրել, հետո տալ իրեն ստորագրման: Առաքելյանը չկատարելով կաթողիկոսի ցուցումը, ս.թ. դեկտեմբերի 3-ին բարեհաճեց ամսագրի նշյալ նյութերը խորհրդի քննարկմանն ուղարկել: Դեկտեմբեր ամսին քննարկելով նյութերը համապատասխան ինստանցիաներում եզրակացրեցին, որ այդ եկեղեցական ամսագիր չէ, այլ ավելի ճիշտ «Գիտությունների Ակադեմիայի տեղեկագիր», քանի որ համարում տեղադրել էր ակադեմիկոս Մալխասյանի, ակադեմիկոս Աճառյանի, գիտության դոկտոր Եր. Շահազիզի, պրոֆեսոր Ա. Աբրահամյանի, գիտության թեկնածու Ա. Առաքելյանի ծավալուն հոդվածները եւ բոլոր նյութերը մի հարցի շուրջ են – «Հայ գրերի գյուտի», ընդ որում՝ հակասող հոդվածներ եւ անբավարար խմբագրված:

Առաքելյանը բազմիցս նախազգուշացվել է իմ կողմից, որ ամսագիրը պարտավոր է նախ եւ առաջ հոգեւոր կենտրոն էջմիածնի գործունեությունը, առօրեականության արդի հարցերը լուսաբանել, կաթոլիկ եկեղեցու սաղրանքների դեմ նպատակային հոդվածներ տպել, ցույց տալ հոգեւո-

¹⁰ Նկատի ունի Հայ եկեղեցու գործերով խորհուրդը:

¹¹ Նկատի ունի վերադաս պատկան պետական մարմինները:

րականության վերաբերմունքը արտասահմանյան հայերի ներգաղթին եւ այլն, եւ յուրաքանչյուր համարում հայագիտության, պատմության եւ այլ հարցերի վերաբերյալ նշյալ գիտնականների 1–2 հոդված տեղադրի:

Սակայն, ըստ երեւույթին, այդպիսի հրահանգը չի բավարարում Առաքելյանին, քանզի խմբագրի քրտնաջան աշխատանք է պահանջվում, եւ որպեսզի խուսափի դրանից, նա որոշեց սադրել եւ ինձ, եւ հայտարարել կաթողիկոսին, որ Հովհաննիսյանն ամսագրում հայագիտության հարցերով ակադեմիկոսների, գիտնականների հոդվածներ չի թույլատրում տեղադրել, որ իբր նրանք գրում են անգրագետ հոդվածներ եւ այլն: Վերոնշյալ համարի նյութերը համապատասխան ցուցումներով ս.թ. հունվար ամսվա սկզբում եւս Առաքելյանին վերադարձրեցի եւ վերհիշեցրեցի, որ կաթողիկոսը առաջնորդող է պահանջել գրել, միաժամանակ նախազգուշացրեցի, որ անհրաժեշտ է 1946 թ. նոյեմբեր-դեկտեմբերյան միացյալ համարի նյութերը շտապ նախապատրաստել:

Զգալով, որ 1946 թ. ամսագրի հրատարակությունը տապալել է եւ այդպիսի վիճակ է սպասվում եւ 1947 թ., Առաքելյանը որոշեց ստեղծված իրադրությունից դուրս գալ. նա վստահեցրեց խմբագրական կոլլեգիայի անդամներին եւ էջմիածնի տնտիսորհրդին, որ «էջմիածին» ամսագիրը թանկ է նստում, որ այն անարդյունավետ է եւ ավելի լավ է ամսագրի փոխարեն հրատարակել տարեկան երկու անգամ այսպես կոչված «Տեղեկագիր»: Ցավոք, էջմիածնի միաբանության որոշ անդամներ բաժանում են Առաքելյանի կարծիքը:

Ահա, ամսագրի ոչ ժամանակին թողարկման հիմնական պատճառները:

1947 թ. հունվար ամսվա սկզբում պաշտոնական ընդունելության ժամանակ եւս կաթողիկոսի ուշադրությունը հրավիրեցի ամսագրի հրատարակման գործի այդ զայրացուցիչ փաստերի վրա եւ խորհուրդ տվեցի «էջմիածին» ամսագրի կարգավորման եւ նորմալ թողարկման շտապ միջոցներ ընդունել:

Գեւորգ VI կաթողիկոսը, համոզվելով, որ ամսագրի աննորմալ թողարկման գործում մեղքի մեծ մասը էջմիածնի վրա է ընկնում, ս.թ. փետրվարի 1-ին աշխատանքից հեռացրեց Ա. Առաքելյանին եւ ամսագրի խմբագիր նշանակեց Կիսիբեկյանին: Վերջինս նախապատրաստեց 1946 թ. օգոստոս-սեպտեմբեր-հոկտեմբերյան հերթական համարի նյութերը եւ փետրվարի 25-ին խորհրդի քննարկմանը ներկայացրեց: Համարի նյութերը օրերս կփոխանցվեն տպարան: Ներկայումս Կիսիբեկյանը նախապատրաստում է

1946 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համարի նյութերը, ապա կձեռնարկի 1947 թ. հունվար-փետրվարյան համարի կազմմանը:

Այսպիսով, մինչև ս.թ. մարտի վերջը տպարան կհանձնվի իրար հետեից ամսագրի 3 համար: Բնականաբար թիվ 2 տպարանը չի կարողանա ապահովել բոլոր 3 համարների թողարկումը: Դրա համար նպատակահարմար էմ գտնում հանձնարարել ամսագրի մեկական համարի տպագրությանը առանձնաբար թ. 1, թ. 2 եւ թ. 3 տպարաններում, դրանով իսկ ապահովելով 1947 թվականին ամսագրի հետագա նորմալ թողարկումը:

Միաժամանակ հաղորդում էմ, որ Կաթողիկոսը խնդրում է թույլատրել ավելացնել ամսագրի տպաքանակը 2.000 օրինակի՝ 1.500 օրինակի փոխարեն, նկատի ունենալով արտասահմանյան ընթերցողների մեծ պահանջարկը:

Հաղորդելով շարադրյալը խնդրում էմ ցուցումներ:

Հայկ.[ական] ԽՍՀ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

Հովհաննեսյան [ստորագրություն]

[1947 թ. հունվարի 25]¹²

ՀԱՍ, ֆ. 1, ց. 27, գ. 54, թթ. 10–24: Մեքենագիր: Բնագիր: Թարգմ. ուսու.:

Թիվ 7

ՅՈՒՑԱԿ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ԵՒ ԱՄՍԱԳՐԵՐԻ, ՈՐՈՆՔ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ՍՏԱՆԱԼՈՒ «ԷՋՄԵՒԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ¹³

1. ԹԵՐԹԵՐ ԵՒ ԱՄՍԱԳՐԵՐ, ՈՐՈՆՑ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ԱՄՍԱԳԻՐԸ ԵՒ ՈՐՈՆՔ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ

1. «ԵՐԵՒԱՆ» (օրաթերթ) – Բուլղարիա,
2. «ԼՐԱԲԵՐ» (օրաթերթ) – ԱՄՆ,
3. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ» (շաբաթաթերթ) – ԱՄՆ,
4. «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ ԵԿԵՂԵՑԻ» (ամսագիր) – ԱՄՆ,
5. «ՀԱՅ ԿԵԴՐՈՆ» (ամսագիր) – ԱՄՆ,
6. «ՀԱՍԿ» (ամսագիր) – Լիբանան,
7. «ՍԵՒԱՆ» (շաբաթաթերթ) – Ռումինիա:

¹² Զեկույցագրի ամսաթիվը՝ ըստ բուն վավերագրի տվյալների:

¹³ Ռուսերեն թարգմանությունը տես ՀԱՍ, ֆ. 823, ց. 1, գ. 125, թթ. 9–11:

2. ԹԵՐԹԵՐ ԵՒ ԱՄՍԱԳՐԵՐ, ՈՐՈՆՑ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ԱՄՍԱԳԻՐԸ ԵՒ ՈՐՈՆՔ ԱՆԿԱՆՈՆ ՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ

8. «ԱՆԻ» (ամսագիր) – Լիբանան,
9. «ԱՍՏՂԱԲԵՐԴ» (ամսագիր) – Թյուրքիա,
10. «ՆՈՐ ԳԻՐ» (ամսագիր) – ԱՄՆ:

3. ԹԵՐԹԵՐ ԵՒ ԱՄՍԱԳՐԵՐ, ՈՐՈՆՑ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ԱՄՍԱԳԻՐԸ ԵՒ ՈՐՈՆՑԻՑ ՍՏԱՑՎԵԼ Է ՄԻԱՅՆ ՎԵՐՋԵՐՍ ՄԻ ՔԱՆԻ ՕՐԻՆԱԿ

11. «ԱՐԱՐԱՏ» (օրաթերթ) – Լիբանան,
12. «ԶԱՐԹՈՆՔ» (օրաթերթ) – Լիբանան,
13. «ԿՌՈՒՆԿ» (օրաթերթ) – ԱՄՆ,
14. «ՆՈՐ ԼՈՒՐ» (օրաթերթ) – Թյուրքիա,
15. «ՆՈՐ ՕՐ» (շաբաթաթերթ) – ԱՄՆ:

4. ԹԵՐԹԵՐ ԵՒ ԱՄՍԱԳՐԵՐ, ՈՐՈՆՑ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ԱՄՍԱԳԻՐԸ ԵՒ ՈՐՈՆՔ ՉԵՆ ՍՏԱՑՎՈՒՄ

16. «ԱՐԵԻ» (օրաթերթ) – Եգիպտոս,
17. «ԵՐԻՏԱՍՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ» (օրաթերթ) – ԱՄՆ,
18. «ԺԱՄԱՆԱԿ» (օրաթերթ) – Թյուրքիա,
19. «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐՅԱ» (ամսագիր) – Ավստրիա,
20. «ՊԱՅՔԱՐ» (օրաթերթ) – ԱՄՆ,
21. «ՍԻՈՆ» (ամսագիր) – Իսրայել,
22. «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» (շաբաթաթերթ) – Իրան:

5. ԹԵՐԹԵՐ ԵՒ ԱՄՍԱԳՐԵՐ, ՈՐՈՆՑ ԱՄՍԱԳԻՐԸ ՉԻ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ, ԲԱՅՑ ՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ

23. «ԱՐԾԻՎ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ» (ամսագիր) – ԱՄՆ,
24. «ԲԱԶՄԱՎԵՊ» (ամսագիր) – Իտալիա,
25. «ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ» (պարբերաթերթ) – Ֆրանսիա,
26. «ՀՈՒՇԱՐԱՐ» (ամսագիր) – ԱՄՆ,
27. «ՆՈՐ ՀԱՋԸՆ» (ամսագիր) – ԱՄՆ,
28. «ՎԵՐԱՊՐՈՂ» (պարբերաթերթ) – Ֆրանսիա:

6. Թերթեր եւ ԱՄՍԱԳԻՆԸ, ՈՐՈՆՑ ԶԻ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԱՄՍԱԳԻՐԸ, ԲԱՅՑ ՑԱՆԿԱԼԻ Է ՍՏԱՆԱԼ

29. «ԱՐԱՔՍ» (օրաթերթ) – Եգիպտոս,
30. «ԺՈՂՈՎՈՒՐԴ» (օրաթերթ) – Թյուրքիա,
31. «ԱՐԵՒՄՈՒՏՔ» (շաբաթաթերթ) – Ֆրանսիա,
32. «ՍԱՎԱՌՆԱԿ» (շաբաթաթերթ) – Եգիպտոս,
33. «ՍՈՒՐԻԱ» (օրաթերթ) – Սիրիա:

7. ՑՈՒՑԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ԵՒ ԱՄՍԱԳՐԵՐԻ

1. «Հայրենիք» (օրաթերթ) – Բոստոն (ԱՄՆ),
2. «Հայրենիք» (շաբաթաթերթ անգլերեն լեզվով) – Բոստոն (ԱՄՆ),
3. «Հայրենիք» (ամսագիր) – Բոստոն (ԱՄՆ),
4. «Յուսաբեր» (օրաթերթ) – Կահիրէ (Եգիպտոս),
5. «Ազդակ» (օրաթերթ) – Բէյրութ (Լիբանան),
6. «Արեւելք» (օրաթերթ) – Փարիզ (Ֆրանսիա),
7. «Յառաջ» (օրաթերթ) – Փարիզ (Ֆրանսիա),
8. «Ալիք» (օրաթերթ) – Թեհրան (Իրան),
9. «Մարմարա» (օրաթերթ) – Կոստանդնուպոլիս (Թիւրքիա),
10. «Վէմ» (ամսագիր) – Նիւ-Եորք (ԱՄՆ),
11. «Անահիտ» (ամսագիր) – Փարիզ (Ֆրանսիա),
12. «Նաիրի» (ամսագիր) – Բէյրութ (Լիբանան),
13. «Աւետիք» (ամսագիր) – Բէյրութ (Լիբանան),
14. «Ազդարար» (շաբաթաթերթ) – Բէյրութ (Լիբանան),
15. «Ասպարէզ» (օրաթերթ) – (ԱՄՆ):
16. Բաղդատում տպագրուող հայկական թերթը, որի անունը մեզ հայտնի չէ:

ԴԻԻԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ


Էջմիածին

7 ապրիլի 1954 թ.

ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 125, թ. 3–5: Մեքենագիր: Բնագիր:

Շարունակությունը՝ հաջորդիվ





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՒՈՐԳ Ե. ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԱԶԳԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ¹

Հայ եկեղեցու պատմության մեջ շատ են նվիրյալ ու հայրենասեր կաթողիկոսները: Նրանցից շատերը դասվել են սրբերի շարքը, նվաճել հայ ժողովրդի սերն ու համակրանքը²: Նրանց շարքում է երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցը, որի դերը մեծ է եղել ոչ միայն Եկեղեցու, այլև հայ ժողովրդի պատմության մեջ առհասարակ: Նրան վիճակված էր տեսնել իր ազգի եղեռնը, 1918 թ. մայիսյան հերոսամարտերը, ՀԱՀ հռչակումը եւ անկումը, Հայաստանի խորհրդայնացումը: Կաթողիկոս, որը, հավանաբար վհատ պահերին, իր գրությունների տակ ստորագրել է «Գէորգ վշտալի կաթողիկոս»³:

Մեր օրերում լսելով Գեւորգ Ե. Սուրենյանցի մասին՝ ակամայից հիշում ենք 1918 թ. մայիսը, երբ Կաթողիկոսը մերժում է բարձրաստիճան հրամանատարության առաջարկը՝ հեռանալ էջմիածնից, իր անձի անվտանգությունը պահպանելու նպատակով, հնչեցնել է տալիս հայոց եկեղեցիների զանգերը եւ ժողովրդին օրհնելով՝ մարտադաշտ է ճանապարհում:

Գեւորգ Ե. Սուրենյանցը (Տփղիսեցի) ծնվել է 1847 թ. օգոստոսի 8-ին Թիֆլիսում: Սովորել է տեղի ռուսական դասական գիմնազիայում, ապա՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հովանու ներքո գործող Ժառանգավո-

¹ Ստացվել է՝ 22.04.2024, գրախոսվել է՝ 24.04.2024: Էլ. հասցե՝ arevikmeliqyan@gmail.com:

² Հայ Եկեղեցու գահակալների գավազանագիրքը ներառում է 132 կաթողիկոսի, որոնցից 12-ը սրբացվել են Հայ Եկեղեցում: Տես Հայ Եկեղեցու սուրբ կաթողիկոսները, Վաղարշապատ, 2017, էջ 9:

³ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք ԺԳ., Գէորգ Ե. Սուրենյանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847–1930), փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, Երեւան, 2005, էջ 11:

րաց վարժարանում: 1868 թ. Գեւորգ Ե. Սուրենյանցը⁴ մտնում է Մայր Աթոռի միաբանություն: Նա այն կաթողիկոսներից է, որոնք նախաձեռնել են իրականացրել են ազգանպաստ կարեւոր մի շարք գործեր թե՛ հայրենիքում եւ թե՛ նրա սահմաններից դուրս: Գեւորգ Ե. Սուրենյանցն Ալեքսանդրապոլի առաջնորդական փոխանորդ եղած տարիներին (10. 12. 1878 թ. մինչեւ 01.05. 1881 թ.) ծավալում է բազմաբնույթ գործունեություն՝ վերականգնելով քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցին, բացելով Սբ. Փրկիչ եկեղեցուն կից վարժարանը, իսկ Երեւանի թեմի առաջնորդ (01. 06. 1881 թ. մինչեւ 22. 05. 1887 թ.) եղած ժամանակ հիմնովին նորոգում է Երեւանի բոլոր եկեղեցիները, առաջնորդարանն ու հոգեւոր ատյանը: Երեւանի եկեղեցիներն իրենց արտաքին եւ ներքին բարեկարգ տեսքով, պաշտոնյաների կարգապահությամբ ու նյութական հաշիվների կանոնավորությամբ, դպրոցներն իրենց առաջադիմությամբ եւ բարեկարգությամբ պարտական էին Սուրենյանցի խստապահանջությանը⁵:

Գեւորգ Ե. Սուրենյանցը գործունեություն է ծավալում ոչ միայն եկեղեցական, այլեւ աշխարհիկ կյանքում՝ հատկապես կրթության ոլորտում: Այն տարիներին, երբ Աստրախանի հայ-լուսավորչական թեմի առաջնորդն էր (22. 05. 1887 թ. մինչեւ 03. 02. 1894 թ.), նա վերաբացում է տեղի փակված հայկական ծխական դպրոցը, հայ կրոնի եւ լեզվի ուսուցումը պարտադիր է դարձնում ուսական ուսումնարանում: Եկեղեցական երգչախմբերի որակը բարձրացնելու նպատակով Բաքվից հրավիրում է Կարա-Մուրզային, կազմում է քառաձայն երգչախմբեր, կանոնավորում թեմական-եկեղեցական գործերը եւ կազմակերպում դրամական հանգանակություն Սբ. Էջմիածնի տաճարը նորոգելու նպատակով⁶:

Վրաց-իմերեթյան հայ-լուսավորչական թեմի առաջնորդ (03.02.1894 թ. մինչեւ 08. 01. 1904 թ.) եղած տարիներին կրթական ու դաստիարակչական մեծ հետաքրքրություն է առաջացնում Սուրենյանցի ներկայացրած

⁴ Գեւորգ Ե. Սուրենյանցը վարդապետ է ձեռնադրվում 1872 թ., եպիսկոպոս՝ 1882 թ.: 1874 թ. նշանակվում է Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի ուսուցիչ, 1875 թ.՝ Արցախի թեմի առաջնորդ եւ դպրոցների տեսուչ: 1877 թ. ստանձնում է Ագուլիսի Սբ. Թովմա առաքյալ վանքի վանահայրությունը:

⁵ Տ. Ա. քչն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գեւորգ Ե. Տփղիսեցի Սուրենյանց, Նշանավոր ճեմարանականներ, Սբ. Էջմիածին, 2009, էջ 70:

⁶ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 506, թ. 1–12 (ոուսերեն ծառայացուցակից):

«Առաջադրությունը», որտեղ ուշադրության կենտրոնում է հոգեւորականների գործունեությանը: Կարելոր են հոգեւորականներին ուղղված հորդորները. «...Մի շրջիլ ի հրապարակա եւ ի փողոցս առանց կարելոր պատճառի, յօրինակ շար ժողովրդեան եւ հոտին եւ յառիթ բամբասանց, ալլ զազատ ժամս նուիրի ընթերցման գրոց եւ ալլ հոգեպարար գրոց»⁷: Գեւորգ եպս. Սուրենյանցի միջնորդությամբ է, որ Մկրտիչ Ա. Վանեցին հայրապետական կոնդակով պաշտոնապես ընդունում է Մակար Եկմալյանի երաժշտական ժառանգության գլուխգործոց համարվող «Պատարագը», որով հիմնավորվում է նրա բազմաձայն կատարումը Հայոց Եկեղեցում:

1906 թ. Գեւորգ Ե. Սուրենյանցը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանատան գործերի կառավարիչն էր: Պաշտոնավարելիս նա կարգավորում է ճեմարանի գործերը, ծխական դպրոցների կանոնադրությունը, զբաղվում է թարգմանչական աշխատանքով, աշխատակցում «Արարատ» ամսագրին:

1911 թ. դեկտեմբերի 11–13-ը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում տեղի են ունենում կաթողիկոսական ընտրություններ: Ընտրված երկու թեկնածուներից Նիկողայ 2-ը Գեւորգ արք. Սուրենյանցին հաստատում է Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ հրավիրում արքունիք: Նորընտիր Կաթողիկոսը 1912 թ. մայիսի 2-րդ կեսին մեկնում է Ս. Պետերբուրգ՝ ռուսական գահակալին հավատարմության երդում տալու եւ «Բարձրագույն հրովարտակն» ու վեղարի ազամանդե խաչն ստանալու⁸: 1912 թ. հունիսի 26-ին նա վերադառնում է Մայր Աթոռ, իսկ հուլիսի 1-ին՝ Վարդավառի տոնին, Մայր տաճարում տեղի է ունենում օծման արարողությունը, որը վերածվում է ազգային մեծ տոնախմբության:

Գեւորգ Ե. Կաթողիկոսի ազգանպաստ գործերի թվում է նաեւ հայ գրերի 1500 եւ հայ տպագրության 400-ամյակը նշելու գործը: Այս կարելոր իրադարձությունը նշելու նախաձեռնությունն իրենց վրա են վերցնում հայ մտավորականները եւ հոգեւոր դասը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե.-ի գլխավորությամբ: Ստեղծվում է տոնակատարությունը նախապատրաստող հանձնաժողով, մշակվում է միջոցառումների ծրագիր: 1912 թ. ապրիլի 25-ի Կաթողիկոսի կոնդակով հաստատվում է հայ տպագրության

⁷ ՀԱԱ ֆ. 53, ց. 1, գ. 541, թ. 17 եւ շրջ.:

⁸ ՀԱԱ ֆ. 57, ց. 2, գ. 257, թ. 2 եւ շրջ.:

400-ամյակի հոբելյանական հանձնաժողովի կազմը⁹, եւ նշվում տարելիցի մեծ կարեւորությունը. «Բերկրութեամբ սրտի տեսանեմք, զի յամենայն կողմանց մտաւորականք մեր եւ մամուլն փափագին տօնել զ 400-ամեակն հայ տպագրութեան, որ լրանայ յայսմ ամի: Յընթացս շորից դարուց, արդարեւ, ի շնորհս տպագրութեան եւ տպարանաց մերոց ծաղկեցաւ եւ ճոխացաւ մայրենի գրականութիւնը, եւ յառաջադիմեցաւ համայն սիրելի ազգն մեր ըստ մտաւորականի եւ ըստ բարոյականի: 400-ամեայ յոբելեան է տօն համազգային, ուստի եւ ամենեքեան պարտին մասնակից լինել յոբելեանի եւ խորհել վասն յաւերժացունելոյ զայս տօն քաղաքակրթութեան մերոյ՝ ազգօգուտ գործովք եւ ձեռնարկութեամբք...»¹⁰: Հանձնաժողովը քննարկում եւ որոշում է տպագրութեան 400-ամյակի տոնակատարութեանը միացնել նաեւ հայ գրերի գյուտի 1500-ամյակը¹¹: Ժողովրդական մեծ հանդիսության բնույթ կրող տոնակատարութեան նախատոնակն սկսվում է էջմիածնում հոկտեմբերի 12-ի երեկոյան, իսկ հաջորդ օրը միջոցառումը շարունակվում է Օշականում՝ Մեսրոպ Մաշտոցի շիրիմի մոտ¹²: Պատարագից հետո կատարվում է հայրապետական մաղթանք: Այնուհետեւ եկեղեցու բակում՝ դպրոցի շինության առջեւ, Ս. Թարգմանչաց շարականը՝ «Նմանեալ Մովսէսի» երգելուց հետո Կաթողիկոսը դիմում է ժողովրդին. «...Այսօր տօնում ենք մի ազգային-եկեղեցական տօն՝ Հայոց տառերի գիւտի 1500-ամեայ եւ տպագրութեան 400-ամեայ միացեալ յոբելեանը: Այդ գիւտերով ս. Մեսրոպը եւ տպագրութեան մեր մէջ սկիզբ դնողը վերածնեցին մեզ հոգեպէս եւ մտաւորապէս. եւ մեր ինքնուրոյն հոգեւոր մտաւոր կեանքի հիմնաքարը դրեցին. մինչ այդ մենք օտար գրերով եւ լեզուով էինք կատարում մեր եկեղեցու պաշտամունքը, որովհետեւ մենք սեփական գիր չունէինք, ուրեմն տեսէք ինչպիսի մեծ բարիքի են մասնակից արել մեզ մեր սուրբ հայրերը. մենք միշտ երախտապարտ պիտի մնանք մեր մեծ վարդապետներին, քանի որ նրանց շնորհիւ է, որ ունինք գրականութիւն եւ ազգային մտքի ու հոգու զանազանատեսակ գանձեր: Խո-

⁹ Հայ տպագրութեան 400-ամյակի հոբելյանական հանձնաժողովի նախագահն էր դպիր Գալուստ Տեր-Մկրտչյանը, տէս ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 614, թ. 28:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 614, թ. 27 եւ շրջ.: Բնագիր: Զեռագիր:

¹¹ Տպագրութեան 400-ամյակի եւ հայ գրերի գյուտի 1500-ամյակի տոնակատարությունների առթիվ թողարկվել է բացիկ՝ հետեւյալ գրությամբ. «ՅԻՇԱՏԱԿ ՀԱՅ ԳԻՐԵՐՈՒ ԳԻՒՏԻ 1500-ԱՄԵԱՅ ԵՎ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱՅ ՅՈՐԴԵԼԵԱՆՆԵՐՈՒ, Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՎԱՆՔԻՆ ՄԵՋ ՅԵՒԴՈՎԻՍ, 1915 ՍԵՊՏԵՄԲԵՐ 15», տէս ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 614, թ. 13:

¹² «Արարատ», 1912, Ժ.—ԺԱ., էջ 896:

նարհուելով նրանց մեծ գործի առաջ, խոնարհուելով նրանց ս. շիրիմների եւ անունների առաջ միահամուռ կատարենք այս մեծ տօնը»: Շարունակելով խոսքը՝ Կաթողիկոսը դիմում է օշականցիներին, որ «յուշարձան-դպրոց կանգնեցնեն ս. Մաշտոցի գերեզմանից ոչ հեռու այս խարխուլ շինութեան փոխարէն»¹³, եւ խոստանում է ինքը եւս աջակից լինել: Ընդառաջելով հայ մտավորականության որոշ շրջանակների ցանկությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը որոշում է տոնակատարության ժամանակացույցը երկարացնել, այն է՝ հոբելյանական տարի համարել 1912 թ. հոկտեմբերի 13-ից մինչեւ 1913 թ. հոկտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածը¹⁴:

Գեւորգ Ե. Կաթողիկոսի գործունեության մեջ շրջադարձային էր 1912 թ., երբ նա գործուն մասնակցություն է ունենում Հայկական հարցի եւ բարենորոգումների առնչությամբ տարվող աշխատանքները համակարգելու գործին: 1912 թ. Բալկանյան պատերազմում թուրքիայի պարտությունը Հայկական հարցի լուծման նոր հույսեր էր արթնացրել: Հայերի շրջանում տիրապետող էր դարձել ռուսական կողմնորոշումը:

Թուրքական կառավարությունը չի ընդառաջում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի՝ հայերի նկատմամբ բռնություններին վերջ տալու խնդրագրին: Պատրիարքարանն ստիպված էր դիմել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Կոստանդնուպոլսի պատրիարք Հովհաննես արք. Արշարունին Կաթողիկոսին խնդրում է դիմել ռուսական կառավարությանը՝ նրանից օգնություն հայցելու նպատակով:

Նույն խնդրանքով Գեւորգ Ե. Կաթողիկոսին է դիմում նաեւ 1912 թ. սեպտեմբերի 19-ին Թիֆլիսում գումարված եկեղեցական եւ առաջնորդական ժողովը:

Գեւորգ Ե. Կաթողիկոսը 1912 թ. հոկտեմբերի 2-ին հայ ժողովրդի անունից դիմում է Կովկասի փոխարքա կոմս Ի. Վորոնցով-Դաշկովին, որ վերջինս բանակցություններ սկսի ռուսական կայսեր հետ՝ հայերին թուրքական բռնություններից պաշտպանելու խնդրանքով:

Կաթողիկոսի հանձնարարությամբ Սանկտ-Պետերբուրգ մեկնող Հայ Եկեղեցու սինոդի անդամ Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանի, Կով-

¹³ Տէս նույն տեղում, էջ 899:

¹⁴ Է. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Հայ գրերի գյուտի 1500 եւ տպագրության 400-ամյակների տոնակատարության արձագանքները ցարական Ռուսաստանի ոստիկանական ղեկարտամենտի փաստաթղթերում, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1–2, 2012, էջ 17:

կասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովի եւ նախարարների խորհրդի նախագահ Վ. Կոկովցեւի հետ հանդիպումներից պարզ է դառնում, որ Ռուսաստանը մտադիր չէ պատերազմել Օսմանյան կայսրության դեմ, բայց պատրաստ է Բալկանյան թնջուկը հարթելու նպատակով Լոնդոնում հրավիրվող տերությունների համաժողովում պաշտպանել Հայկական հարցը¹⁵:

Գեւորգ Ե. Կաթողիկոսը, հետեւելով Եւրոպայում հատուկ պատվիրակություն ունենալու ռուսական կառավարության խորհրդին, 1912 թ. նոյեմբերի 10-ի 1482 թվակիր կոնդակով եզրպատահայ հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, մեծահարուստ Պողոս Նուբար փաշային (նա այդ ժամանակ գտնվել է Փարիզում) նշանակում է իր լիազոր՝ Բեռլինի դաշնագիրն ստորագրած պետությունների հետ բանակցություններ վարելու համար¹⁶: Վերջինս սիրով տալիս է իր համաձայնությունը՝ անձամբ ընտրելով Ազգային պատվիրակության կազմը:

1912 թ. դեկտեմբերի 21-ին Կ. Պոլսում Հայոց Ազգային ժողովի դռնփակ նիստում որոշվում է պահանջել վեց վիլայեթների ինքնավարության հարցը եւրոպական պետությունների անմիջական վերահսկողության մեջ եւ երաշխիքներով: Գործի ձեռնարկումը վստահվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

1912 թ. դեկտեմբերի 22-ին փոխարքա Վորոնցով-Դաշկովը Գեւորգ Ե. Կաթողիկոսի գրությունը պատասխանում է, որ տվյալ պահին նպատակահարմար չէ կայսերական կառավարության միջամտությունը թուրքահայերի վիճակի բարելավման խնդրին:

Կաթողիկոսը 1912 թ. դեկտեմբերի 24-ին կրկին դիմում է Նիկոլայ 2-րդին՝ խնդրելով, որ Լոնդոնում կայացող դեսպանաժողովում բալկանյան խնդիրների հետ միասին քննության առնվի նաեւ Հայկական հարցը՝ հայկական վեց վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ՝ նշելով, որ «եթե հայերը այս անգամ էլ շրջանցվեն, ապա դա հավասարազոր կլինի նրանց վերջնական բնաջնջմանը»¹⁷:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 6: Տէս նաեւ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Պողոս Նուբար փաշան Հայ Ազգային Պատվիրակության նախագահ: Տէս <https://arar.sci.am/dlibra/publication/193120/edition/175466?language=en>:

¹⁶ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 53:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 17:

Կաթողիկոսի խնդրագիրը Նիկոլայ 2-րդին է հանձնվում 1913 թ. հունվարի 18-ին Ցարսկոյե Սելյուում: Դիմումի ընթերցումից ու Հայկական հարցի մասին Ն. Կոկովցեի զեկուցումը լսելուց հետո կայսրը Կաթողիկոսի խնդրագրի վրա մակագրում է. «Բալկանյան թերակղզում պատերազմի ավարտից հետո», իսկ այնուհետեւ իր ձեռքով ընդգծում. «Թուրքիայի հայերի դրուժյունը բարելավելու համար միջոցներ ձեռնարկելու մասին» բառերը¹⁸: Պարզ էր Ռուսաստանի դիրքորոշումը. «Հայկական հարցը կբարձրացվի ավելի ուշ՝ Բալկանյան պատերազմի առթիվ կայանալիք համաժողովից հետո, առանձին կոնֆերանսում»¹⁹:

Հայկական հարցի լուծման համար միջազգային պայմաններն անբարենպաստ են դառնում, քանի որ դրա քննարկումը ժամանակագրական առումով համընկնում է Բալկանյան երկրորդ պատերազմի հետ: Սկսված Առաջին համաշխարհային պատերազմը վերջ է դնում բարենորոգումների իրականացման ծրագրերին:

Գեորգ Ե. Կաթողիկոսն աշխույժ գործունեություն է ծավալում՝ ՀՅԴ կուսակցության դեմ սկսված «Դաշնակցության գործի»²⁰ դատավարությունը մեղմելու համար: Կաթողիկոս ընտրվելուց հետո՝ 1912 թ. հունիսին, նա մեկնում է Սանկտ-Պետերբուրգ, տեսակցում Նիկոլայ 2-րդին, հանդիպում արդարագատության նախարար Ի. Շչեգլովիչովին: Կաթողիկոսը նախարարին խնդրում է «...զիջողաբար վերաբերվել» «Դաշնակցության գործով» բանտարկվածներին, հնարավորինս թեթեւացնել նրանց պատիժները կամ ազատել: Նախարարը խոստանում է որոշ ժամանակ անց ներում շնորհել բանտարկվածներին: 1914 թ. կրկին բարձրացվում է «Դաշնակցության գործով» դատապարտվածների ազատման խնդիրը: Կաթողիկոսը ջանքեր չի խնայում մինչեւ վերջին բանտարկյալին ազատելու համար:

1914 թ. ապրիլի 19-ին նա ուղերձով դիմում է արդարագատության նախարարին՝ նախ հիշեցնելով իր նախորդ ուղերձի մասին, այնուհետեւ ավելացնելով, որ «Դաշնակցություն կուսակցության գործունեության մեջ որեւէ հակապետական գործողություն չի եղել, եւ այն ուղղված է եղել

¹⁸ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 52:

¹⁹ ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 12:

²⁰ Ցարական իշխանությունները կեղծ մեղադրանքների հիման վրա ՀՅԴ-ի նկատմամբ հարուցել էին դատական գործ՝ հակացարական քաղաքականություն վարելու, բռնի ուժի գործադրմամբ գոյություն ունեցող կարգերը տապալելու, Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու եւ շինծու այլ մեղադրանքներով:

թուրքերի դեմ»։ Կաթողիկոսը ներկայացնում է «Դաշնակցության գործով» դատապարտվածների ցուցակը, որոնք դեռ չէին ստացել բարձրագույններում։ 1914 թ. հունիսին 15-ին Մ. Պապաջանյանը²¹ հեռագրով հայտնում է Կաթողիկոսին, որ «Բարձրագույններում է շնորհվել եւս 14 հոգու, իսկ մնացածների գործը հետաձգվել է մինչեւ աշուն»²²։ Վեհափառ Հայրապետը պատասխան հեռագրում խնդրում է Միքայել Պապաջանյանին միջնորդել կայսեր առջեւ՝ ներում շնորհել նաեւ դատից խուսափած գրող Ավետիս Ահարոնյանին, բանաստեղծ Ավետիք Իսահակյանին, ճարտարապետ Հովհաննես Քաջազնունուն, ինչպես նաեւ փախուստի մեջ գտնվող Սիմոն Գրուզինյանին (Վրացյան), Դրաստամատ Կանայանին, աքսորի դատապարտված Համազասպ Սրվանձտյանին, Համազասպ Օհանջանյանին, հայ հոգեւորականներ Կորյուն վարդապետ Սահակյանին եւ Գրիգոր քհն. Առաքելյանին²³։

1914 թ. հուլիսի 16-ին Գեւորգ Ե. Կաթողիկոսն իր թիվ 1056 կոնդակով շնորհակալություն է հայտնում Վորոնցով-Դաշկովին, որն այդքան ջանացել էր ազատազրկված հայերին ազատ արձակելու համար եւ հույս է հայտնում, որ «իր բարձրագույն շնորհը բերելով՝ գործը կհասցնի ամբողջական լուծմանը»²⁴։ Կաթողիկոսի համառ ջանքերը պսակվում են հաջողությամբ։ Նրա հետեւողականությունը եւ հասունացող պատերազմը Նիկոլայ Զ-րդին ստիպում են ազատ արձակել բանտարկված առաջնորդներին։ Առաջիկա պատերազմում հայերն էին լինելու Ռուսաստանի դաշնակիցը, եւ ուռնները հենվելու էին այդ առաջնորդների վրա։

Հայ Առաքելական Եկեղեցին Առաջին աշխարհամարտի ժամանակ մեծ ներդրում է ունենում հայկական ազգային կամավորական զորամիավորումների ստեղծման գործում։ Հայկական կամավորական ջոկատները գործելու էին ռուսական Կովկասյան բանակի կազմում։ Դրանք կազմավորվում են Գեւորգ Ե. Կաթողիկոսի օրհնությամբ եւ վիրահայության առաջնորդ Մեսրոպ եպոս. Տեր-Մովսիսյանի նախաձեռնությամբ։ Կաթողիկոսն օրհնում է կազմավորված եւ ռազմաճակատ մեկնող հայ-

²¹ Մ. Պապաջանյանը 1912–1917 թթ. եղել է Ռուսաստանի 4-րդ Պետական դումայի հայ ազգային պատվիրակության անդամ։

²² Ս. ԿԵՐՏՈՂ, Հայ Առաքելական Եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003, էջ 70։

²³ Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆՑ, Հայ Եկեղեցին 1914 թվականին, «Էջմիածին», 1996, Դ., էջ 54։

²⁴ Ս. ԿԵՐՏՈՂ, նշաշխ., էջ 55։

կական ջոկատներին եւ հրամայում «վրեժխնդիր լինել թուրքերից»²⁵: 1914 թ. հոկտեմբերի 15-ին Գեւորգ Ե. Կաթողիկոսը երկու կոնդակով հանձնարարում է վիրահայուծյան առաջնորդ Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանին եւ Երեւանի փոխթեմակալ Խորեն Մուրադբեկյանին այցելել պատերազմադաշտ եւ մանրամասն տեղեկություններ ներկայացնել զինվորականության, ժողովրդի եւ այնտեղ տիրող իրավիճակի մասին: Պատվիրակությունը մեկնում է մի շարք բնակավայրեր, բայց պատերազմական գործողությունների պատճառով նրանց ավելի առաջ գնալ չի հաջողվում²⁶:

Հայրենասեր Կաթողիկոսը 1717 թվակիր կոնդակով դիմում է Կովկասի փոխարքային. «Որպես հայ ժողովրդի հոգեւոր Պետ՝ իմ հովվապետական պարտքն եմ համարում արձագանքել իմ սովյալ զավակների ողբին եւ խնդրում եմ ձերդ պայծառափայլությանը թույլատրել կամավոր նվիրատվությանց ժողովարանքը՝ հօգուտ սովյալ հայ փախստականների»: Նոյեմբերի 12-ին թույլատրվում է Ռուսաստանի ողջ տարածքում կազմակերպել հանգանակություն: Բացի այդ՝ Վեհափառ Հայրապետը կոնդակով դիմում է Կալկաթայի, Ռանգունի եւ Սինգապուրի հայությանը՝ ռազմաճակատում գտնվող հայերին օգնելու համար²⁷:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողություններ սկսվելու հենց առաջին օրերից թուրքական բանակի հայ զինվորները կանխամտածված գերի են հանձնվում, որպեսզի ընդգրկվեն ռուսական բանակի հրամանատարության տակ մարտնչող հայկական մարտական ջոկատների մեջ եւ կռվեն թուրքերի դեմ: Հայ զինվորների այս հայրենասիրական քայլը ռուս հրամանատարությունը չի ընդունում այնպես, ինչպես հարկն է: Դա խիստ մտահոգում է Կաթողիկոսին: Այս եւ այլ հարցեր քննարկելու համար Վորոնցով-Դաշկովի առաջարկով 1914 թ. նոյեմբերի 24-ին Կաթողիկոսը ժամանում է Թիֆլիս՝ հանգիպելու Նիկոլայ 2-րդին: Նոյեմբերի 29-ին Կովկասյան փոխարքայի պալատում Կաթողիկոսին ընդունում է Նիկոլայ 2-րդը: Կաթողիկոսը խնդրում է ցարին թույլատրել, որ թուրքական բանակում ծառայած եւ ռուսներին գերի հանձնված հայ զինվոր-

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 188:

²⁶ Ա. ԲԱՆԱՆ, էջմիածնի եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի գործունեությունը: Տե՛ս ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, 2015, Ժ., էջ 137:

²⁷ Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆՑ, նշ. աշխ., էջ 58:

ներն ու բժիշկներին հնարավորություն ընձեռվի կռվելու թուրքերի դեմ: Նիկոլայ Զ-րդը խոստանում է բավարարել Կաթողիկոսի խնդրանքը, ինչպես նաև հայտարարում է, որ «հայկական հարցը կլուծվի սպասումների համաձայն»²⁸:

Գերիներին ազատելու գործը հետաձգվում է մինչև 1917 թ.: Նույն թվի մարտի 23-ին Կաթողիկոսը Ռուսաստանում իշխանության եկած Ժամանակավոր կառավարությունից պահանջում է ազատ արձակել հայ գերիներին: 1917 թ. կեսերին Ժամանակավոր կառավարությունն ընդունում է «Գերեվարված թուրքահայերին գերությունից ազատելու մասին օրենք», որով բոլոր ռազմագերիներն ազատվում են²⁹:

Գեւորգ Ե. Կաթողիկոսի թիվ 1990 կոնդակով եւ նրա անմիջական նախագահությամբ 1914-ի դեկտեմբերի 28-ին ստեղծվում է «Սբ. Էջմիածնի եղբայրական օգնության գլխավոր կարգադիր կազմակերպությունը», որն զբաղվում էր վիրավոր հայ կամավորներին եւ տասնյակ հազարավոր փախստական հայերին օգնություն ցուցաբերելու խնդիրներով: Այդ կազմակերպության բաժանմունքներ են ստեղծվում Երեւանում, Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում, Պետրոգրադում, Մոսկվայում եւ այլուր: Էջմիածնի եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովը գործում է մինչև 1919 թ. մայիսը եւ հսկայական գործ է կատարում աղետյալ փախստականներին փրկելու հարցում³⁰:

1918 թ. հայ ժողովուրդը կանգնում է նոր փորձության, նոր արհավիրքի շեմին: Թուրքերը վերագրավում են Արեւմտյան Հայաստանը, ներխուժում Արեւելյան Հայաստան, զավթում Ալեքսանդրապոլը, Սարդարապատը եւ շարժվում դեպի Էջմիածին եւ Երեւան:

Սկսվում է հայերի լինել-չլինելու գոյամարտը: Ժողովուրդը ոտքի է կանգնում «Մահ կամ Ազատություն» կարգախոսով: Նրան ուժ ու կորով էր տալիս Հայոց Եկեղեցին, հայրենասեր Հովվապետը: Նա քաջ հայորդիներին ոգևորում է իր անձնական օրինակով. «Հայոց Կաթողիկոսը նահանջողը չէ... Ասացեք հայ բանակին, որ ես տեղիցս չեմ շարժվում: Ես չեմ թողնում Սբ. Էջմիածինը: Եթե մեր զինվորները չեն կարողանում այն պաշտպանել, եւ թուրքերը մտնելու են Էջմիածին, իմ դիակը պետք է

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 60:

²⁹ Ս. ԿԵՐՏՈՂ, նշ. աշխ., էջ 115:

³⁰ Ս. ԿԵՐՏՈՂ, նշ. աշխ., էջ 143, ՀԱՍ Ֆ. 472, ց. 1, գ. 15, թ. 1:

գտնեն Սբ. Իջման վայրում»³¹։ Հայկական բանակի հաջողության համար աղոթքի արարողությունից հետո ռազմի դաշտ մեկնող Գարեգին եւ Զավեն եպիսկոպոսներին օրհնելով՝ Կաթողիկոսն ապսպրում է. «Գնացեք, ասացեք հայ զինվորներին, որ նրանք պատասխանատու են ժողովրդի կյանքի համար։ Ասացեք, որ մենք ոչ ոք չունենք մեր կողքին՝ բացի Քրիստոսից, որը մեր միակ ուժն է»³²։ Այս էր նրա պատասխանը էջմիածնից հեռանալու առաջարկին։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ա. Շահխաթունու «Խալիլ փաշայի հանդիպումները Արամի հետ» հուշագրությունը, որտեղ նկատելի է Գեւորգ Ե. Սուրենյանցի ապրած ցավը իր հայրենակիցների ողբերգական ճակատագրի հանդեպ։ Թուրքիայի արեւմտյան ռազմաճակատի հրամանատար Խալիլ փաշայի հետ Արամ Մանուկյանի եւ Քաջազնունու՝ 1918 թ. օգոստոսի 31-ին Երեւանում տեղի ունեցած հանդիպումից հետո բանակցողները մեկնում են էջմիածին՝ Կաթողիկոսի մոտ։ Հյուրերին ընդունում եւ նրանց Վեհափառի մոտ է ուղեկցում բազմաթիվ լեզուների գիտակ, Կաթողիկոսի դիվանապետ Տիրայր սրբազանը։ Կաթողիկոսը նրանց առաջարկում է մնալ ճաշելու։ Մինչ ճաշը նրանք այցելում են տաճար, թանգարան, շրջում նաեւ լճի շուրջը, ուր կային մեծ թվով գաղթականներ։ Ճաշի ընթացքում Կաթողիկոսը նստում է կենտրոնում, նրանից աջ՝ գերմանացի զորավարը եւ ավստրիական զորքերի ներկայացուցիչը, իսկ ձախ կողմում՝ Խալիլը եւ Արամը։ Ընդհանուր խոսակցությունը վարում է Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյանը։ Հայրենասեր Կաթողիկոսը հարցնում է Խալիլին. «Ինչպե՞ս Ձեզ դուր եկավ էջմիածնի շրջակայքը՝ մանավանդ լճի (նկ. 1) տեսարանը։ Տեսա՞ք անթիվ հայ գաղթականներին, որոնք Ձեր քաղաքացիներն են եղել։ Շնորհակալ եմ, որ այսքանն էլ մնացել են»։ Կաթողիկոսը հրամայում է Տիրայր սրբազանին թարգմանել իր ասածը։ Լսելով թարգմանությունը՝ Խալիլը խոսակցությունը փոխելու համար առաջարկում է խմել Վեհափառի կենացը, իսկ հրաժեշտին ասում է. «Աստված տա, որ հայ ժողովուրդը վերականգնվի, որովհետեւ ձեր ժողովուրդը ես մոտիկից եմ ճանաչում, իբրեւ շինարար եւ աշխատավոր տարր»³³։

³¹ Ա. ՇԱՀԽԱԹՈՒՆԻ, Սարգարաբաղի հերոսամարտը եւ մահափորձ Արամ փաշայի դէմ (Իմ յուշերից), «Հայրենիք», Բոստոն, 1959, օգոստոս, էջ 26։

³² Ա. ՇԱՀԽԱԹՈՒՆԻ, նշ. աշխ., էջ 27։

³³ Ա. ՇԱՀԽԱԹՈՒՆԻ, Խալիլ փաշայի հանդիպումները Արամի հետ, Արամը. մահվան հիսնամյակի առթիվ, Երեւան, 1991, էջ 501–503։

1918 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, պետք էր կարգավորել քաղաքական ու հոգեւոր իշխանությունների հարաբերությունները: Այդ նպատակով կազմվում է ժամանակավոր մի «դաշնագիր», որը պիտի լուծեր հիշյալ խնդիրները եւ պահպանվեր մինչեւ ՀԱՀ «Համազգային հիմնագիր եւ ազգային-եկեղեցական ժողովների վերջնական որոշումը»: Այդ «դաշնագիրը» պատմական մեծ ու բացառիկ նշանակություն ունեցող վավերագիր էր, որով եկեղեցին օրհնում էր հայրենի իշխանությունը, իսկ կառավարությունն իր հերթին երաշխավորում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հայոց Հայրապետի «նախամեծար եւ գերիշխան իրավունքները ազգային-եկեղեցական եւ կրոնաբարոյական խնդիրներում»³⁴:

Գեւորգ Ե. Սուրենյանցը լուծում է կյանքի համար կարեւոր եւ հրատապ հարցեր. 1919 թ. օգոստոսի 28-ի կոնդակով թույլատրվում է 6-րդ աստիճանի ամուսնությունը³⁵:

Կաթողիկոսը ուշադիր էր ու հոգատար կրթության գործի նկատմամբ: Նրան հուզում էր հայոց դպրոցը ոտքի կանգնեցնելու խնդիրը, ինչպես նաեւ հոգեւոր ճեմարանի աշխատանքները³⁶:

1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում հայոց համալսարանի հանդիսավոր բացման առթիվ Վեհափառ հայրապետը կոնդակ է արձակում (Թ. 26, 1920 թ. հունվարի 8—21), որով ջերմորեն շնորհավորում է այդ հաստատության «մեծարգոյ վերատեսչին, պատուարժան ուսուցչապետերին, դասախօսներին, բոլոր ուսանողներին եւ ուսանողուհիներին»: Նա օրհնում է համալսարանի ուսանողներին՝ մաղթելով լինել ջանասեր, սիրելի հայոց լեզուն, դպրությունն ու պատմությունը, ավարտելուց հետո լինել Հայոց Հանրապետության եւ հայրենիքի ազնիվ ու բարի քաղաքացիներ³⁷:

Կաթողիկոսը նպատակասլաց էր նաեւ բարենորոգումների հարցում. նա դադարեցնում է «Պոլոժենիեի» գործառույթությունը, լուծարում է սինոդը, կազմավորում է Գերագույն հոգեւոր խորհուրդ, վերանայում «Հիասու-

³⁴ Տ. Ե. ՎՐԳ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Հայ եկեղեցին ՀԱՀ տարիներին, «Մենք մեր մասին» (ՀԱՀ 95-ամյակը), 2013, 2/22, էջ 109:

³⁵ ՀԱԱ ֆ. 57, ց. 2, գ. 1469, թ. 24:

³⁶ «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», գիրք Ե., Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետության տարիներին (1918—1920 թթ.), Երեւան, 1999, էջ 9:

³⁷ «Հայաստանի համալսարան» (օրաթերթ), Ալեքսանդրապոլ, 31-ը հունվարի, 1920: ՏՆՏ նաեւ «Երեւանի համալսարան» 1918—1920 թթ., վավերագրերի ժողովածու, կազմողներ՝ Ֆ. Մամիկոնյան, Ս. Միրզոյան, Երեւան, 1985, էջ 310:

թյան» թույլատրելի սահմանները, արտոնում է երգեհոնի կիրառությունը, նպաստում նոր տոմարի գործածությունը:

Գեւորգ Ե. Սուրենյանցի կաթողիկոսության տարիներին է հայոց տոնացույցում ամրագրվում ապրիլի 11 (24)-ը որպես սգո օր: 1920 թ. մարտի 25-ի նամակով նշանավոր գրող Վրթանես Փափազյանը, որը Վաղարշապատի դպրոցի տեսուչ-տնօրենն էր, Վեհափառին առաջարկում է ապրիլի 11-ը (24) տոնացույց մտցնել՝ «իբրեւ յիշատակ 760 հայ նահատակ մտաւորականների, որոնք ընկան համաշխարհային մեծ պատերազմի օրերին՝ թրքական վայրագ սրից»: Հայրապետական դիվանը հաջորդ օրն իսկ N^o187 շրջաբերականով Երեւանի, Բաքվի, Թիֆլիսի վիճակային հոգեւոր ատյաններին եւ Ղարաբաղի կառավարչին հանձնարարում է հանդիսավոր հոգեհանգիստ կատարել՝ «ի հիշատակ 1915 թ. ապրիլի 11-ին Կ. Պոլսի եւ Հայաստանի բոլոր գավառներում նահատակված թվով մոտ 760 մտավորականների եւ հոգեւորականների»³⁸:

Փորձությունները շարունակվում են: Սկսվում է 1920 թ. թուրքական նոր արշավանքը: Գեւորգ Ե. Կաթողիկոսը, որն Առաջին աշխարհամարտի ժամանակ հույսեր էր կապում օտարի օգնության հետ, հիմա արդեն ապավինում է միայն սեփական ուժերին. «Երկու տարվա կյանքը մեզ սովորեցրեց, որ մենք պետք է պաշտպանենք մեր հայրենիքը, օտարը մեզ չօգնեց եւ չի օգնելու»³⁹:

Հոկտեմբերի 12-ի կոնգակով նա հայ ժողովրդին հորդորում է հայրենիքի պաշտպանության համար ոտքի կանգնել եւ մարտնչել թշնամու դեմ. «...Հայրենիքի պայծառ հորիզոնը նորից մթնեց: Մեր սահմանների վրա նորից գոռում են թնդանոթները, ...ամենքի բերանից լսվում է «գալիս է թշնամին»: Այո, Հայոց ժողովուրդ, գալիս է թշնամին... ի՞նչ ես մտածում դու անել, կովել քաջաբար ու մեռնել հերոսաբար, թե՛ հավիտենական ստրուկ դառնալ կամ պարանոցդ թշնամու սրի առաջ պարզել եւ ոչնչացնել: Հեռու, հեռու քեզանից այդ ինքնակործան միտքը... Ժամանակն է, որ դու զենքը ձեռքիդ պաշտպան հանդիսանաս վտանգված հայրենիքիդ:

³⁸ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Ե., Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետութեան տարիներին (1918–1920 թթ.), Երեւան, 1999, էջ 9:

³⁹ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան». գիրք ԺԳ., Գեւորգ Ե. Սուրենյանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847–1930), փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, Երեւան, 2005, էջ 525, թիվ 340:

Հայ զորապետներ, հիշեցեք հայրենիքի եւ եկեղեցու պաշտպան Ս. Վարդանին... խաչակնքեցեք ձեզ հանուն հայրենիքի եւ սուրը ձեռքին խոյացեք արծվորեն թշնամու վրա, եւ թող ձեր սպայակույտը եւ քաջարի զինվորները ձեր հետեւից բազենների նման հետեւին ձեզ... Գնա հայ ժողովուրդ, գնա հավատով դեպի մարտի դաշտ, քեզ օգնական Փրկչի սուրբ խաչը, քեզ պահպան մեր ս. Լուսավորչի հզոր Աջը, եւ քեզ ուղեկից Հայոց Հայրապետի աղոթքն ու արտասուքը»⁴⁰:

Կարսի շրջանում տեղի ունեցող կռիվների կապակցությամբ Կաթողիկոսը քաջալերական նամակ է ուղարկում Դանիել Բեկ-Փիրումյանին: Այնտեղ մասնավորապես ասվում է. «Գովում եմ Ձեր տաղանդը, շնորհքը եւ քաջությունը: Օրհնյալ լինեք դուք եւ Ձեր քաջարի սպայակույտը եւ զորքը: Միշտ այդպես քոթկեցեք եւ լավ քոթկեցեք, որ անհետ կորչեն մեր սահմաններից այդ գարշելիները»⁴¹:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր: Այդ տարիներին Հայոց Եկեղեցին կրում է բավական լուրջ հարվածներ: Սկսվում են աննախագիշտ բռնություններ. ձերբակալվում են հոգեւորականներ, բռնագրավվում են Հայոց Եկեղեցու շինական կառույցները, եկեղեցապատկան ու վանքապատկան կալվածքները, եկեղեցական գանձերը, ձեռագրերը, քանդվում են եկեղեցիներ: Այս ամենն անհանգստացնում էր Գեորգ Ե. Սուենյանցին եւ նա լիազոր բանազնացներ է ուղարկում բոլշեւիկյան կառավարություն՝ տիրող լարվածությունը վերացնելու, Հայոց Եկեղեցու ոտնահարված իրավունքները վերականգնելու եւ առգրավվածը վերադարձնելու համար: Զհասնելով որեւէ հաջողության՝ Կաթողիկոսն այնուամենայնիվ շարունակում է հմտորեն վարել իր գործերը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Կոստանդնուպոլսի պատրիարքարանի հետ կապը չի ընդհատվում նաեւ խորհրդային շրջանում: Կաթողիկոսի ուշադրության կենտրոնում են Կոստանդնուպոլսի պատրիարքարանում տեղի ունեցող իրադարձությունները: Սարգարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի «Փաստաթուղթ» ֆոնդում (այսու-

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 525, թիվ 340:

⁴¹ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Ե., Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետության տարիներին (1918–1920 թթ.), Երեւան, 1999, էջ 478, թիվ 362, տե՛ս նաեւ ՀԱՍ Ֆ. 57, ց. 5, գ. 222, թ. 18:

հետ՝ թանգարան) պահպանվող թուրքահայ բանասեր, բառագիր Բարսեղ Թուղլաջյանի (գրական անունը՝ Փարս Թուղլաչի (1933–2016) հավաքածուում⁴² պահպանվող Գեւորգ Ե. Սուրենյանցի հինգ բնօրինակ կոնդակները վկայում են այդ մասին: Կոնդակները գրվել են 1922–1923 թթ.: 1922 թ. գրված կոնդակները երեքն են՝ թիվ 591 (1922 թ. հոկտեմբերի 16), թիվ 601 (1922 թ. հոկտեմբերի 23), թիվ 602 (1922 թ. հոկտեմբերի 23): 1923 թ. գրված կոնդակները երկուսն են՝ թիվ 343 (1923 թ. նոյեմբերի 1), թիվ 347 (նոյեմբերի 3): Դրանց բովանդակությունները տարբեր են. հոգեւորականներին լանջախաչով պարգեւատրելու, պանակե կրելու, արքեպիսկոպոսություն շնորհելու, խորհրդային Հայաստանի կառավարությանը սատար կանգնելու եւ այլ հարցերի շուրջ:

Գեւորգ Սուրենյանցի թիվ 591 կոնդակը (նկ. 2) Կ. Պոլսի Հայոց Եկեղեցու քարոզիչ Բարձրապատիվ Տ. Գեւորգ վրդ. Արսլանյանին⁴³ լանջախաչով պարգեւատրելու մասին է: Կաթողիկոսն իր հայրապետական ողջույնն ու օրհնությունն է հղում նրան՝ իրավունք շնորհելով կրծքին կրել վարդապետական ականակուռ լանջախաչը: Կաթողիկոսը լիահույս է, որ Տ. Գեւորգ վրդ. Արսլանյանը «հավատարիմ կմնա Մայր Աթոռին եւ արիաշանությամբ, անձնասիրությամբ կծառայի հայ ժողովրդին»: Կոնդակի վերջում նա մաղթում է ողջություն. «Ողջ լեւր, զօրացեալ ի Տեր եւ յաւետ օրհնեալ ի մենջ. ամէն»⁴⁴: Թիվ 601 կոնդակով (նկ. 3) Վեհափառ պարտավորեցնում է «լուսաւոր եւ ուղղափառ վարդապետութեամբ ուսուցանել ժողովուրդն Աստուծոյ եւ հրահանգելի սէր եւ յերկիր Տեառն Աստուծոյ եւ հաստատուն եւ անխաթար պահել եւ պահպանել զդաւանութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեց-

⁴² Բարսեղ Միքայելի Թուղլաջյանի հավաքածուն թանգարան է բերվել 2013 թ.:

⁴³ Գ. Արսլանյանը եղել է Հայ Եկեղեցու շահերի եւ նրա ավանդական իրավունքների աննկուն պաշտպաններից մեկը: Ծնվել է 1865-ին Ակնի Բինկյան գյուղում՝ մեծահարուստի ընտանիքում: 1895 թ. ջարդերի ժամանակ կորցրել է կնոջը, որից հետո նվիրվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն եւ ծառայել իր ժողովրդին: Մասնակցել է որբահավաքման գործին՝ խնամելով ու դաստիարակելով շուրջ 200 որբերի Տիվրիկից եւ Սեբաստիայից: 1901 թ. ստացել է վարդապետական աստիճան, 1922–1927 թթ. եւ 1944–1951 թթ. պաշտոնավարել է որպես թրքահայոց պատրիարքական տեղապահ: Արսլանյանին հաջողվել է մեծ դժվարությամբ ու երկարամյա պայքարով տնտեսական և դրամական տեսանկյունից ամրապնդել Կոստանդնուպոլսի Պատրիարքարանը: Տե՛ս Ա. ՄԻՆԱՍՅԱՆ, Կոստանդնուպոլսի հանգուցյալ պատրիարքական տեղապահ երջանկահիշատակ Տ. Գեւորգ արքեպիսկոպոս Արսլանյանը եւ նրա կտակը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, «Էջմիածին», 1955, է., էջ 7:

⁴⁴ ՀԱՊԹ՝ 881/13:

ւոյ»։ Այնուհետեւ շարունակում է պատգամների շարքը։ Իսկ վերջում մաղթում է. «Ազնիւ ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւառատ հաւատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զ Քեզ, մուտ յուրախութեան Տեառն Քո»⁴⁵։

Թիվ 602 կոնդակով (նկ. 4) Գ. Արսլանյանին եպիսկոպոսական օծման արժանացնելուց հետո, որպէս խրախուսանք ապագա գործողությունների համար, նրան շնորհվում է պանակե կրելու իրավունք⁴⁶։

Թիվ 343 (1923 թ. նոյեմբերի 1) կոնդակով (նկ. 5) Սուրենյանցը կոչ է անում սատար կանգնել Խորհրդային Հայաստանին, շենացնել երկիրը, բարելավել տնտեսական վիճակը⁴⁷։ Թիվ 347 (1923 թ. նոյեմբերի 3) կոնդակը (նկ. 6) դարձյալ ուղղված է Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ Տ. Գէորգ Արսլանյանին. «...Արդ՝ այսու Հայրապետական կոնդակաւ շնորհեմք Ձեզ զպատիւս Արքեպիսկոպոսութեան հաւատալով, զի վարձատրութեամբս այսու առաւել եւս ջանասցիս արդարացուցանել զյոյս մեր գործելով յօգուտ եկեղեցւոյս եւ քեզ հաւատացեալ հօտի, որ ի Թուրքիա»⁴⁸։

1923 թ. նա նախաձեռնում է Սբ. Էջմիածնի Մայր տաճարի հարավային զանգագատուն-գմբեթի վերականգնումը, իր տեղակալ Խորեն արք. Մուրադբեկյանին հանձնարարում է բանակցություններ սկսել կառավարության հետ՝ Մայր Աթոռում հոգեւոր բարձր դպրոցը վերաբացնելու նպատակով։

Գեւորգ Ե. Սուրենյանցի առողջական վիճակը վատանում է 1930 թ. ապրիլի 21-ից։ Այս մասին Էջմիածնի հոգեւոր խորհուրդը շրջաբերական է ուղարկում թեմերի առաջնորդներին՝ խնդրելով աղոթել Վեհափառ Հայրապետի առողջության եւ արեւշատության համար։ Նրան փրկելու բժիշկ Ազիզյանի ջանքերն ապարդյուն են անցնում։ Կաթողիկոսը կնքում է իր մահկանացուն 1930 թ. մայիսի 8-ին՝ ժամը 11-ին։ Գեւորգ Ե. Սուրենյանցին, համաձայն իր ցանկության, հուղարկավորում են Մայր տաճարի մուտքի մոտ՝ հարավային կողմում, Մակար Կաթողիկոսի շիրիմին կից։

Այսօր, երբ հայ ժողովուրդն ապրում է ծանր ժամանակներ, կորցրել ենք Արցախը, վտանգված է Հայաստանի պետականությունը, առա-

⁴⁵ ՀԱՊԹ 8819/14։

⁴⁶ ՀԱՊԹ 8819/15։

⁴⁷ ՀԱՊԹ 8819/16։

⁴⁸ ՀԱՊԹ 8819/17։

վել արդիական են դառնում մեր հայրենասեր ու հայրենավեր հոգեւոր գործչին անդրադառնալը եւ նրա միջոցով ժողովրդի ոգին բարձրացնելն ու գալիքի հանդեպ հույս ներշնչելը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Գեորգ Ե. Սուրենյանց, կաթողիկոս, հայրապետ, ազգանպաստ:

РЕЗЮМЕ

В статье представлена деятельность католикоса Геворга Суренянца на благо армянского народа. Она преимущественно основана на архивных документах, воспоминаниях и впечатлениях современников, оригинальных кондаках Геворга V Суренянца, хранящихся в фонде «Документ» Музея этнографии армян.


Цель статьи – восстановить историческую память армянского народа, обратившись к событиям первой половины XX века, в которых Верховный Патриарх сыграл значительную роль.

Своими делами Геворг Суренянец завоевал любовь и сочувствие армянского народа. Его деятельность важна не только для Апостольской Церкви, но и для истории армянского народа в целом. Геворгу V Суренянцу было суждено увидеть геноцид своего народа, героические майские сражения 1918 года, провозглашение и падение Первой республики Армения, советизацию Армении. Он также был Католикосом в советское время, когда церковь подвергалась серьезным преследованиям. Имело огромное значение его обращение к армянам всего мира, в котором он призывал поддержать Советскую Армению и улучшить ее экономическое положение.


Сегодня, когда армянский народ переживает трудные времена: мы потеряли Арцах, наша государственность находится под угрозой, более уместно обратиться к нашему патриотическому духовному деятелю и поднять дух народа через его образ с намерением вселить надежду на будущее.




Նկ. 1. Ա. Էջմիածինը եւ Ներսիսյան լիճը: Նկարը՝ Ա. Վրույրի: ԺԹ. դարի վերջ:




Նկ. 2. Կոնդակ 591, ՀԱՊԹ 8819/13




Նկ. 3ա. Կոնդակ 601 ա, ՀԱՊԹ 8819/14



Նկ. 3բ. Կոնդակ 601



Նկ. 3գ. Կոնդակ 601



Նկ. 4. Կոնդակ 602, ՀԱՊԹ 8819/15,8819/14



ԳԵՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ

ԱՆՃԱՄԱՆԵԼԻ ԿԱՍՓԵՆ ԱՏՈՒԻԹՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ԱՏԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՎԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒԹՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՄԱՅՐ ԵԿԵԼԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԼԻԿԷ **ԷԶՄԻԱՇՆԻ** Կ. ԵԿՕԼԿԻ ԵԿԱՅՐԻՅԱՐ
ՔԱՆԿԱՆ ԱՌԴԱՊԱՅԱՆ ԳԵՐԱՐՆԱՐԿԻ ԱՌ. ԳԵՐԱՐԺ ԵՂԵՐԵԿԱՅԱՆ, ԵՐ
ԵՄՊԱՅԱՅՐԻ ԱՅՐ ԵԼՐԱՍՏՅԱՆ ԵՒ ԵՄՓԵՆՈՐ ՊՐԵՍԿԱՅ ԱՒՐԱՅ,
ՈՂԳՅԱՅ ԵՒ ՕՐԵՆԵԱՒԻՆ ԴԱՅՐԱՅԵՐ ԱՅԵՐԱԿԱՆ.

ԵՐ ԶԵՐԱՅ ԱՄԵԼԱՅ ՎԱՆԵՐԱՅ ՓՈՐԾԱՆԵՐԱԹՅԱՆ ԵՒ ԵՂԵՐԵԿԱՅ
ԿԱՆ ԱՅՐԱՐԿԻ ԵՒ ԶԵՐԵՅԱՅ ՎԱՄԱՅՐԱՅԱՐՈՒՄԵՐ, ՈՐ ՎԱՆԵՐԱՅ
ԵՒ ՄԵԾԱՆ ԵՐԵՒՆԱՒԱՄԸ ԶԵՐԱՅ, ԻՆԴԱՅՐԱՅԻՆ ԵՂԵՐԵԿԱՅԱՆ
ՓՈՐԾԱՆ ԵՒ ԻՆԴԱՅՐԱՅ ԿԱՄԱՅՐԱՅԱՐՈՒՄԵՐ ՓԱՏՆԵԼԱՆ ԵՂԵՐԱ
ՌԱՆ ՄՐԱՆՓԱՏԱՅԻ ԱՐԾԱՆԻ ՎԱՅՐԵՐԱՅ ՓԱՏՆԱՅԻՑ ԿԱՅՐԱՆԻՑԻՑ:

ԱՅՐԻՑ ԱՅԵՐԱՅ ԴԱՅՐԱՅԵՐ ԱՅԵՐԱՅ ԿԱՆԿԱՆ ԶԵՐԱՆԻՑ
ԶԵՐ ՎԱՅՐԱՅԻՆ ԱՅՐԻՑ ԵՂԵՐԵԿԱՅԱՐՈՒՄԵՐ, ԿԱՄԱՅՐԱՅԻՑ, ՎԵՐ ՎԱՅՐ
ՅԱՅՐԱՐՈՒՄԸ ԱՅԵՐԱՅ ԱՄԱՆԻՑ ԵՒ ՎԱՆԿԱՅԻՆ ԱՐԾԱՅՐԱՅԱՐՈՒ
ՄԱՆԻՑ ՎՃՅԱՆ ԱՒՐ, ՓՈՐԾԵՐԱՅ ԳՈՐԾԱՅ ԵՂԵՐԵԿԱՅԱՆ ԵՒ ՔԵՐ
ԿԱՄԱՅՐԱՅԵՐԱՅ ԵՐԵՐԻ, ՈՐ ԵՒ ՐԱՆՐԻՑԱՆ:

ՈՂԳ ԵՐԱՆԻՑ ԿՈՐԱՅԵՐԱՅ Ի ԱՌԻՐ ԵՒ ՕՐԵՆԵԱՅ Ի ԱՒԵՐԱՅԻՑ:

ՅՅ ԶԵՐԱՅԻՑԻ 1993 ՄԵՐ ԴԱՅՐԱՅԻՑԻ ԶԱՅՐԱՅԻՑԻ
ՐԱՅ ԱՌՇԱՅԻՐԱ ՆՅՅԳ
ԵՒ ԴԱՅՐԱՅԻՑԱՅԱՐՈՒՄԸ ԱՒՐԱՅ ԼՔ. ԱՅԻՑ
ԱՅՐԱՅԻՑԱՆ ԱՅՐ ԱՅՐԱՅ Ա. ԵՂԵՐԱՅԻՑԻ
Ի ՎԱՅՐԱՅԻՑԱՅԱՐՈՒՄԸ
ՍՊ. 347



Նկ. 7. Խմբանկար՝ «Նորին վեհափառություն Գեորգ Ե. Կաթողիկոսը բարձրաստիճան հոգեւորականների հետ»։ Լուսանկարն արվել է էջմիածնում, որի դարձերեսի ձեռագիր գրությունը ներկայացնում է պատկերված բոլոր անձանց ինֆնությունը:

Առաջին շարքում. կենտրոնում, գավազանը ձեռքին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Ե-ն է, 2. հորեն արհեստական տեղապահ Ամենայն Հայոց Կաթողիկոս Է Անդամ Գերագույն Հ. խորհրդի, 3. Բագրատ արհեստական, Անդամ Գերագույն Հ. խորհրդի, 4. Մատթեոս արհեստական՝ Առաջնորդ Բաբկի թեմի, 5. Գարեգին արհեստական՝ Անդամ Գերագույն Հ. խորհրդի:

Երկրորդ շարք. ձախից աջ՝ Արտակ եպիսկոպոս՝ առաջնորդ Սյունաց թեմի, բժշկապետ Անդրիաս Սալբիկյան՝ Նոր Նախիջևանի թեմական խորհրդի անդամ և թեմի պատգամավոր, Գեորգ արհեստական՝ Վրաստանի թեմի առաջնորդ, հայկաբան Ստեփանոս Մալխասյան՝ Վրաստանի թեմական խորհրդի անդամ և թեմի պատգամավոր, Գյուտ եպիսկոպոս՝ Գերագույն խորհրդի անդամ, իրավաբան Իսահակ Ամիրջան՝ Բաբկի թեմական խորհրդի անդամ և թեմի պատգամավոր:

Երրորդ շարք. ձախից աջ՝ Պողոս Բաբանյան Բիդիկյան՝ Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական փոխանորդ, Գրիգորիոս վարդապետ՝ Հյուսիսային Կովկասի թեմի կառավարիչ, Ռուբեն Մ. վարդապետ Իրաֆի (Բաղդադի) թեմի կաթողիկոսական պատվիրակ, գործարանատեր Վառդապետ Մանուկյան՝ Շիրակի թեմի Հ. խորհրդի անդամ և թեմի պատգամավոր, Իսահակ Մ. Վարդապետ՝ Շիրակի թեմի առաջնորդ, Հակոբ Բաբանյան իսախանյան՝ Առաջնորդական փոխանորդ Սյունաց թեմի, Վրթանես Մ. Վարդապետ՝ Արցախի (Ղարաբաղի) թեմի առաջնորդ:

Խմբանկարը քանդաւանի «Ֆոտո» ֆոնդի հավաքածուից է՝ ՀԱՊԹ 8819/1:

SUMMARY


The article aims to present the activities of Catholicos Gevorg V Surenyants for the benefit of the Armenian people. It is based mainly on archival documents, memoirs and impressions of contemporaries, the original encyclicals of Gevorg V Surenyants stored in the “Document” storage of the Museum of Armenian Ethnography.

The purpose of the article is to restore the historical memory of the Armenian people by referring to the events of the first half of the XX century, in which the Supreme Patriarch played a significant role.

Gevorg V Surenyants won the love and sympathy of the Armenian people by his deeds. The work he has done was important not only for the Armenian Apostolic Church, but for the history of the Armenian people as well. Gevorg V Surenyants was destined to see the genocide of his people, the heroic battles of May 1918, the proclamation and fall of the First Republic of Armenia and its sovietization. He was the Catholicos during the Soviet era, too, when the Church was severely persecuted. His appeal to Armenians all over the world, in which he called for supporting Soviet Armenia and improving its economic condition, was of great significance.

Today, when the Armenian people are going through difficult times – we have lost Artsakh and our statehood is under threat, it is more relevant to turn to this patriotic religious figure and raise the spirit of the people through his image with the intent on inspiring hope for the future.





Doi: 10.56737/2953-7843-2024.09-135

ԽԻԿԱՐ ԻՄԱՍՏՈՒՆ ՈՒ ԻՐ ԽՐԱՏՆԵՐԸ ՆՈՐ ՀԱՅԵԱՅՔՈՎ՝

Մերոպ Մաշտոցի անուան Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ լույս է ընծայուել Մատենադարանի առաջ գիտաշխատող, բ. գ. թ. Ռուզաննա Պողոսեանի ուսումնասիրությունը՝ երկարամեայ պրպտումների արդիւնք: Այս կապակցութեամբ դիտելի է, որ «Խիկարի զրոյցը հայ մատենագրութեան մէջ՝ հինարեւելեան գրականութեան համատեքստում» վերնագրով իր ատենախօսութիւնը հեղինակը փայլուն պաշտպանել է դեռևս 2014-ին, իսկ մինչ հրատարակելը համալրել է նորանոր նիւթերով՝ հարստացնելով ու վերածելով համապարփակ ու կոռւ մի ամբողջութեան, որ արդէն ստացել է «Խիկար Իմաստունի խրատների արտացոլումը ե.—Ժէ. դարերի հայ մատենագրութեան մէջ»² վերտառութիւնը և «նուիրուած է բազմավաստակ հայագէտ Արշակ Մադոյեանի յիշատակին»: Ինչպէս արձանագրուած է գրքի «Ներածական ակնարկում» «Պատմութիւն և խրատք Խիկարայ իմաստնոյ» բնագիրն առ այսօր զբաղեցնում է բանասէրներին, քանի որ նրա ծագման, նախնական տարբերակի, հայրենիքի, լեզուի առանձնայատկութիւնների և այլ հարցերի վերաբերեալ դեռևս կան բազում հակասութիւններ: Խիկարի պատմութիւնը յայտնի է էլէֆանտինեան պապիրուսներից, հինկտակարանեան Տովբիթի գրքից, Եզովպոսի կենսագրութեան երկրորդ մասից, պահպանուել է հին արամէերէն, սիւրիերէն (ասորերէն), հայերէն, յունարէն, արաբերէն, եթովպերէն, ռումիներէն, սլաւոներէն և այլ խմբագրութիւններով: Հին Կտակարանի իմաստութեան գրքերի հետ սերտ աղերսներ ունեցող այս զրոյցը խոր

^{1*} Ստացուել է՝ 3.08.2024, գրախօսուել է՝ 9.09.2024:

էլ. հասցէ՝ ovakimyan1969@mail.ru, akasamanyan@yahoo.com:

² Երևան, 2024, 160 էջ:

հետք է թողել Արևելքի ժողովուրդների գրականության վրայ, որով և բացատրում է նրա հանդէպ դրսևորուած մեծ հետաքրքրութիւնը» (էջ 7): Այնուհետև իմանում ենք, որ մինչև նախաքրիստոսեան 495—399 թթ. աղերսուող էլէֆանտինեան պապիրուսների յայտնաբերումը Գ. Հօֆմանը, Ա. Միլլէրը, Կ. Կրումբախէրը, Մ. Լիցբարսկին և այլք զրոյցին վերագրել են հրէական ծագում՝ վկայակոչելով հինկտակարանեան Տովբիթի գրքի յիշատակութիւնը Աքիաքարոսի մասին: էլէֆանտինեան պապիրուսների յայտնաբերումով զրոյցի ուսումնասիրութեան նոր փուլ է սկսուել: 1898-ին հրատարակուած է անգլիացի երեք գիտնականների՝ Ռ. Հարիսի, Ֆ. Կօնիքէրի և Ա. Սմիթ Լեիսի յայտնի գիրքը (ա. հրատ.), որի առաջաբանում բազմաթիւ զուգահեռներ անցկացնելով զրոյցի և Հին ու Նոր Կտակարանների միջև՝ հեղինակները ենթադրում են, որ զրոյցն ունի հրէական ծագում և սկզբնապէս գրուել է արամէերէն: Դրանից յետոյ բանասիրութեան մէջ մեծ ուշադրութեան է արժանացել Ֆրանսուա Նօի աշխատութիւնը, որտեղ նա պնդում էր, որ արամէերէն պապիրուսները թարգմանութիւն են հին ասորերէնից կամ հին պարսկերէնից, և դրանցում խիստ զգալի է հրէայ խմբագրի միջամտութիւնը: Այսպիսով այլևս վերանում է որևէ լեզուի կամ վաղնջական համայնքի գերակայութեան՝ պարտադրուած կաղապարը՝ մեկնարկ հանդիսանալով գիտական լուրջ ուսումնասիրութիւնների համար, ուր արդէն ամեն տարբերակ կարող էր նախնականութեան յաւակնութիւններ դրսևորել: Այս իսկ պատճառով Պօղոսեանը նշում է, որ Խիկարի հայերէն բնագրին նոր տեսանկիւնից նայելու անհրաժեշտութիւնը թելադրուած է հրէական բանասիրութեան մէջ զրոյցի ծագման, թարգմանութեան և մի շարք այլ հարցերի վերաբերեալ հակասական կարծիքների առկայութեամբ, որոնք, ինչպէս ցոյց է տալիս ուսումնասիրութիւնը, աղերսուած են նաև հայագիտութեանը: Եւ այսու խիստ արդիական է Ռուզան Պօղոսեանի հետազօտութիւնը. հինարևելեան գրաւոր աղբիւրների ուսումնասիրութեան մէջ կարևոր տեղ է զբաղեցնում բանասիրական-գրականագիտական վերլուծութիւնը, որ նաև ժամանակակից գիտութեան պահանջներից է: Հայ բանասիրութեան մէջ Խիկարի զրոյցն այդ առումով համակողմանի, լիարժէք ուսումնասիրութեան չի արժանացել, ուստի հեղինակը ձգտել է լրացնել այդ բացը՝ առաջին անգամ անդրադառնալով միջազգային բանասիրութեան նոր շրջանի որոշ վերլուծութիւնների ու դիտարկումների: Հայ բանասիրութեան պարագային նա կարևորել է այն հանգամանքը, որ Խիկարի ինքնութեան հարցին առաջին

անդրադարձել է Գաբրիել արք. Այվազովսկին (1874 թ.): Խիկարին համարելով հայ ժողովրդական իմաստուն՝ նա յայտնում է չափազանց հետաքրքրական մի տեղեկություն. Խիկարը եղել է ոչ թէ Ասորեստանի Սենեքերիմ արքայի ատենադպիրը, «ինչպէս որ Պղնձէ քաղաքին անհամ ու անժուր պատմութեան հեղինակը հնարեր է»³, այլ Հայոց Սենեքերիմ արքայի օրերին «անուանի եղած զուարճաբան առականութիւն և ժողովրդական իմաստասէր» (էջ 10): Խիկարին հայ ժողովրդական իմաստուն է համարել նաև Վահան վրդ. Տէր-Մինասեանը՝ ԺԱ. դարի ճառընտիրից քաղելով հետևեալ վկայութիւնը. «Խիկարն աւելի քան զՍողոմոն հանճարեղ եղած է»³: Այս համապատկերում Պողոսեանը նկատում է, որ ժողովրդական իմաստունները սովորաբար չեն պատկանում որոշակի ժամանակաշրջանի. նրանք «քայլում են պատմութեան հետ ու կրթում են ժողովրդին»: Հեղինակը նշում է, որ հետագայ գրեթէ բոլոր հայ բանասէրները Խիկարին ընդունել են որպէս հայ ժողովրդական իմաստուն, «սակայն չեն փորձել գտնել այն հեռաւոր կապը, որի միջոցով նա դարձել է հայ ժողովրդի իմաստուն ուղեկիցը»: Միջազգային բանասիրութեան մէջ, ինչպէս կանխաւ նկատուել է, Խիկարին սկզբնապէս վերագրուել է հրէական ծագում, ապա՝ ասորական: Այս կարծիքները ժամանակին տիրապետող են եղել նաև հայ բանասիրութեան մէջ, ուստի Պողոսեանը վեր է հանել այն մերձաւոր առնչութիւնը, որ առկայ է Խիկարեան խրատների և Հայոց Արծրունեաց տոհմի միջև: Հեղինակը փորձել է նորովի դիտարկել հայ մատենագրութեան մէջ այդ խրատների ներթափանցման ուղիները: Ինչպէս կարելի է տեսնել ուսումնասիրութեան հիմնական առարկան «Պատմութիւն և խրատք Խիկարայ իմաստնոյ» բնագիրն է, «որի հայերէն խմբագրութիւնն ամենահինն է բոլոր խմբագրութիւնների մէջ՝ պատկանում է ԺԲ. դարին»: Հայ մատենագրութեան ծիրում Խիկարի խրատների փնտրտուքն սկսել է Օքսֆորդի համալսարանի պրոֆէսոր Ֆրէդէրիկ Կորնուալիս Կոնիքէրը, ապա շարունակել է Կ. Պօլսի Միխիթարեան վանատան մեծաւոր Յակովբոս Տաշեանը: Պողոսեանը յաւուր պատշաճի ներկայացրել է հայագիտութեան ասպարէզի բոլոր անդրադարձները՝ բնականաբար յատուկ տեղ յատկացնելով Արտաշէս Մարտիրոսեանի ուսումնասիրութեանը՝ «Պատմութիւն և խրատք Խիկարայ իմաստնոյ»՝ Ա. և Բ. հատորներ-

³ Տե՛ս էջ 10, հմտ. նաև Պողոսեանի բուն յղումը՝ Վ. Տէր-Մինասեան, անգիր դպրութիւն և առակք, Կ. Պօլիս, 1893, էջ 22.-23.:

րով: Դրանցից առաջինում Մարտիրոսեանն իր ուսումնասիրած հարիւրից աւելի ձեռագրերը խմբաւորել էր վեց տարբերակներով, իսկ երկրորդ հատորն ամբողջապէս նուիրել բանասիրական հարցերին՝ քննելով զրոյցի պատմութիւնը, հայրենիքը, բնագրերի յարաբերութիւնը, այլալեզու խմբագրութիւնները՝ անդրադառնալով նաև հինարևելեան գրականութեան հետ խիկարեան խրատների առնչութիւններին: Արժէ յիշել, որ անցեալում հայագէտները հիմնականում բաւարարուել են խիկարեան մի քանի խրատների զուգահեռ օրինակները հայ մատենագիրների երկերից դուրս բերելով: Ռուզան Պօղոսեանն արդէն հարցը դիտարկել է հետեւելով Ե.—Ժէ. դարերի հայ խրատական գրականութեան վերելքներին ու վայրէջքներին, ինչպէս նաև Հայոց կրթական համակարգում խրատի ժանրի կրթագաստիարակչական նշանակութեանն ու խրատական գործեր թողած մեր մատենագիրների ժառանգութեանը: Հետագօտողը նախ զբաղուել է բնագրի ժանրային առանձնայատկութիւնների քննութեամբ, որի շնորհիւ կարողացել է մատնացոյց անել զրոյցում առկայ գրական երեք սեռերի՝ պատումի, խրատների և առակների առանձին գործածութիւնը՝ ոչ միայն հնամենի աղբիւրներում, այլ նաև հայ ժողովրդական բանահիւսութեան և հայ միջնադարեան արձակի էջերում: Իր նախորդների համեմատ Պօղոսեանն առատօրէն օգտուել է սեմական լեզուների ընձեռած նիւթից, իսկ լրացուցիչ լեզուների կիրառութիւնը, ինչպէս գիտենք, յաջողութեան կարևոր գրաւական է գիտական մի ասպարէզում, ուր ամբողջական խճապատկերը հաւաքւում է մանրագոյն, իսկ երբեմն անգամ արտաքուստ իրար հետ կապ չունեցող դրուագ-հատիկները զուգադրելով: Օրինակ՝ վաղնջական պատումների ծագման մասին կարևոր յուշումներ կրող են պարունակել դրանցում հանդիպող յատուկ անունները, ինչպէս, ասենք խիկարի՝ սկզբնական պատումներում 60 թուով սահմանուած, իսկ աւելի ուշ միակ դարձած կնոջ անունը: Հայերէնում այն երկու տարբերակով է՝ Աբէստան և Արփէստան⁴, որտեղ գրեթէ լիակատար վստահութեամբ վերջինն Արփի անուան տարբերակ է, իսկ առաջինը նոյնի աղաւաղումը: Սակայն նոյնիսկ աղաւաղուած ձևի առկայութեամբ տարբերակները յուշում են հայերէնի էական ինքնուրոյնութիւնը, որովհետև այն ամբողջովին անկախ է արտաքին օրինակներից: Յատուկ անունների քննութիւնը՝

⁴ ՏՃՍ «The story of Ahikar» by F. C. Conybeare, J. R. Harris and A. S. Lewis, Second edition enlarged and corrected, Cambridge, էջ XXXV:

«խճանկարի» այս հատիկը, այնքան կարևոր է, որ արամեերեն, ասորերեն, արաբերեն, հայերեն, եթովպական, հին թուրքական, յունական և սլավոնական բնագրերը հրատարակելիս Կօնիբէրն ու կազմողների խումբը յատուկ անդրադարձել են անձնանունների քննութեանը⁵: Եւ բերելով գլխաւոր գործող անձի անունն՝ տարբեր լեզուներում հանդիպող՝ Ահիկար, Ախիակարոս (Աքիաքարոս), Հէյկար (Հէյքար), Հայքար (Հայկար), Հիկար (Հիքար) ձևերը հրապարակողներն ընդգծել են՝ «Հայերէն բնագրում Խիկար է, որ չի համընկնում բերուած օրինակներին»⁶ ինքնուրոյնութեան ևս մէկ ականարկ: Սակայն ի սէր ճշմարտութեան պէտք է նկատենք, որ իրականում, ասենք, արաբ. Հիկարն ամենեւին խորթ չէ հայերէնին, երբ ի նկատ ենք առնում՝ հաց—խաց, նախավկայ—նահավկայ (խ—հ) անցումները, իսկ Հայքար-ն ու Հայկար-ը արմատական հարազատութիւն են դրսևորում Հայկ և Հայք անուններին: Խիկար կազմութեան պարագային ուշագրաւ է Աճառեանի տեսակէտը, թէ անունը ծագում է «նշանաւոր Խիկար իմաստունի անունից, որ մեր մէջ հասարակ անուն է դարձել «իմաստուն, իմաստակ» նշանակութեամբ»⁷: Առաւել հետաքրքիր է Աճառեանի տրամադրած այն տեղեկութիւնը, որ պատումներում արական հանդիսացող Խիկար անունը Հայոց մէջ գործ է ածուել որպէս իգական: Սրան թերեւս հարկ է յարել իր իսկ վկայած Իմաստունի անձնանունը, որ կիրառուել է «իբրև թարգմանութիւն Սոփիա անուան»: Ինչպէս նշում է Պօղոսեանը՝ «Ուշադրութեան է արժանի նաեւ այն, որ ԺԱ. դարի հայերէն Ճառընտիրում Խիկար անձնանունն ստուգաբանւում է Խոկ-այր՝ իմաստուն այր. իսկ հայ մատենագրութեան մէջ գործածւում է որպէս իմաստուն բառի հոմանիշ: Ասորերէնում եւ եբրայեցերէնում՝ Ախիկար — ախիյակար — Ahikar-Ahi-Jaqar, թարգմանաբար նշանակում է «իմ եղբայրը յարգարժան է», իսկ արաբերէնում Խիկարը հանդէս է գալիս Հայկար անունով, որը չի ստուգաբանւում: Հետաքրքրական է, որ Խիկար բառը Higar ձևով յայտնաբերուել է նաեւ շումերական գրաւոր աղբիւրներում եւ իր իմաստով կապւում է մարդու գործունէութեան հետ» (էջ 11): Այստեղ մնում է ի մի հաւաքել «մանր ակնեղէնը» և տեսնել, որ երկու հիմնական խմբերի տրոհուող անուններն իրականում հնչիւնաբանօրէն նոյնական են՝

⁵ Անդ:

⁶ Անդ, էջ XXVIII:

⁷ Տէս «Անձնանունների բառարան», հմմտ Հայկազեան:

փոփոխում են միայն խ-ք-հ բաղաձայնները: Ուստի այստեղ առաջնային են դառնում յարակից հանգամանքները, ասենք անունը պահպանած լեզուներից ո՞րն է տալիս բառի տրամաբանական-իմաստային, պատումին առաել հարազատ ստուգաբանություն («իմ եղբայրը յարգարժան է», թէ՛ «խոկ-այր», հարց, որին ամեն ոք կարող է ինքնուրույն պատասխանել), ո՞ր տարբերակներում են պատումներն առաել ամբողջական, հարուստ, ընդգրկուն և այլն: Բայց տակաւին անպատասխան է մնում այն հարցը, թէ բազումների մէջ ո՞ր խմբագրությունն է առաջնային ու գերակայ: Դրա վերաբերեալ գիտական հանրոյթի ներկայիս վերաբերմունքը Պօղոսեանն այսպէս է բնորոշում. «Խիկարեան աւանդութեամբ զբաղուած գրեթէ բոլոր բանասէրները մի կողմից ընդունում են, որ հայերէն խմբագրությունը բաւականին ինքնատիպ է, ինքնուրույն եւ անկախ, միւս կողմից թարգմանութեան սկզբնաղբիւրը համարում են նոր ասորերէնը» (էջ 11): Խնդրի կապակցութեամբ լիակատար վստահութիւն չկայ, չի եղել, բայց նուազագոյնը մշտապէս շեշտուել է հայերէնի առանձնակիութիւնը. «Հայերէնում ասորական կապակցութիւնների առկայութիւնը, օրինակ՝ «աղքատ մարդու որդի»՝ ընդամենն «աղքատ մարդ» կամ պարզապէս «աղքատ» ասելու փոխարէն, համոզում է, թէ առաջնութիւնն ասորերէնինն է: Միևնոյն ժամանակ հայերէն բնագիրն անփոխարինելի է ասորականի վերականգնման համար»⁸: Ուրիշ պնդումների ժամանակ ընդգծում է, որ հայերէն խիկարը իշխող դիրք է զբաղեցնում միւսների հանդէպ. «Յիրաւի հայերէնի և ասորերէնի հարազատութիւնն այն աստիճանի է, որ կարելի է կարծել, թէ մէկը միւսի թարգմանութիւնն է: Այսուհանդերձ, ամենեւին դիւրին չէ պարզելը, թէ որին է պատկանում առաջնութիւնը: Եթէ իր նախնական ձևով 9-րդ խրատը, հայերէն Ա. խմբագրութեան մէջ աւարտուում է առա՛նապարհ որդւոցդ ոտից ձևով, ապա ասորականում առա՛նապարհ որդւոց որդիս է, որ ծագել հայկական աւանդութիւնից և առկայ է Բ. խմբագրութեան մէջ: Հայերէն Ա. խմբագրութեան մէջ դրոշմուած ոտից ընթերցումն անշուշտ աւելի ճիշտ վերծանութիւն է, որովհետև ոտնամանների բացակայութեան պարագային հէնց ոտքերին է վիճակուելու փշերը ճմլելը և արահետ հարթելը որդւոց ոտքերի, այլ ոչ թէ որդւոց որդիների համար, ինչպէս ասորերէնում է. շփոթ, որ առաջացել է հայերէնի ազդեցութեամբ՝ ոտից և որդիս խճողումից: Եւ դարձեալ. կասկածից վեր է, որ

⁸ Տէս «The story of Ahikar» էջ 184:

հայերէնը լաւագոյնս պահպանել է նախօրինակի կարգը, և այն միակ բնագիրն է (ընդգծումը մերն է. — Ա. Յ., Ա. Կ.), որ հարազատ է մնացել էլէֆանտինեան բնագրի արամէերէն շարադրանքին»⁹. Լս մէկ խճաքար ընդհանուր պատկերին:

Մատենադարանի յոյժ արժէքաւոր այս հրատարակութեան կառուցուածքը հետեւեալն է՝ «Ներածական ակնարկ», Գլուխ Ա. «Խիկարեան խրատների ակունքները», Գլուխ Բ. «Խիկարեան բնագրերի քննութիւնը բանասիրութեան մէջ», Գլուխ Գ. «Խիկար Իմաստունի խրատները հայ մատենագրութեան մէջ», որին յաջորդում է «Խրատի Խիկարայ իմաստնոյ, զոր պարտ է, զի ամենայն հարկ այսպէս խրատեն զորդիս եւ վարդապետ զաշակերտեալսն» բնագիրը: Սրան հետևում է անգլերէն ամփոփումը՝ «The Manifestations of the Proverbs of Ahikar the Wise in Medieval Armenian Literature (5th — 17th cc.)» (Summary): Կարևոր է նաև գրքի Յաւելումը, որում ընդգրկուած են՝ «Սեմական Արամի ծննդաբանութեան հակասութիւնները ս. Գրոց թարգմանական տէքստերում», «Հին Կտակարանում «արամէերէն» եզրի գործածութեան շուրջ», «Ասորատառ հայերէն Բառգրքի, Աւետարանի եւ արձանագրութեան շուրջ» բաժինները: Գիրքը եզրափակում է Օգտագործուած գրականութեան ցանկը¹⁰: Եւ բերուած բաժիններից իւրա-

⁹ Անդ, էջ 182:

¹⁰ Յաւել պէտք է նկատել, որ ինչպէս թեկնածուական ատենախօսութեան, այնպէս և հեղինակային սեղմագրում (Երևան, 2014, էջ 17–18, տե՛ս <https://dspace.nla.am/items/063e85af-942a-4625-a433-c6232716887a/full>) տեղ գտած «եզրակացութիւնները» չկան այս հրատարակութեան մէջ, ուստի մեր կարծիքով՝ որոշ կարևորները բերում ենք ստորև.

«ա. Խիկարի զրոյցի հնագոյն շերտը կազմում են ոչ թէ սուրբգրային, այլ շումերական խրատները և առակները, որ տարածում են գտել շումերական սեպագիր գրականութեան միջոցով:

բ. Եգիպտական փարաւոնները Նահարայիմ են կոչել Հալոց Միտանի պետութեան տարածքը, որը Սուրբ Գրքում կոչւում է Արամ Նահարայիմ: Այդ տարածքը, ըստ պարականոն Յոբելենից գրքի (Թ. 5), հետագայում նուիրուել է Նոյի յետնորդներից Արամին: Պատմական աղբիւրները վկայում են, որ այնտեղ ապրել են միտանի-ուրարտացիները, հետեւեալ կարելի է առաջ քաշել այն վարկածը, որ Խիկարեան խրատների և առակների նախահայրենիքը համարուող Գոգան/Գուսան կենտրոնը Ք. ա. ժ. Գ. դարում եղել է միտանի-ուրարտացիների մշակութային կենտրոնը՝ Միտանիի Վաշշուգանէ մայրաքաղաքից արևմուտք ընկած հատուածում....

դ. Զրոյցի արամէական պապիրուսները յայտնաբերուել են Եգիպտոսի Եւ կոչուող հնագոյն բնակավայրում, որտեղ Աքեմէնեան տիրապետութեան օրօք տեղաբաշխուած զօրքերի մէջ, հնարաւոր է, եղած լինեն արմէններ/հայեր, որոնց մասին յիշատակում է Բեհիսթունեան արձանագրութեան մէջ....

ժ. Աղձնիք աշխարհի Խերհէթ կամ Սերիսէթ գաւառում՝ Սղերդում, պահպանուած ասորերէն ձեռագրում կատարուած կեղծ յաւելումները տեղիք են տալիս մտածելու, որ ասորի

քանչիւրում Պօղոսեանը բազմաթիւ «խճաքարեր» է իրար յօդել՝ առանձին ազնիւ ակնեղէնը դարձնելով միակուռ ապիզակ խիկարագիտութեան կրծքին: Ահա 35—36-րդ էջերում Պօղոսեանն իրար է ագուցում Ա. Աբրահամեանի, Ա. Փերիխանեանի և Հր. Աճառեանի մտքերը, որ տարբեր առիթներով և տարբեր խնդիրների ընծայուելով հանդերձ փաստօրէն միևնոյն խճանկարի մաս են կազմել: Նախ Աշոտ Աբրահամեանի խօսքն է՝ Աքեմէնեան թագաւորներից մեզ հասած արձանագրութիւնների մասին, որոնցում «Հայկական լեռնաշխարհը հանդէս է գալիս միասնաբար Արմինա և Ուրաշտու անուան տակ: Այստեղից հետևում է, որ պարսկական տիրապետութեան օրօք Հայկական լեռնաշխարհի երկու վարչական միւլտրոները, այնուամենայնիւ ընկալւում էին որպէս մի երկիր՝ Հայաստան, որը նախկին Ուրարտական պետութեան ժառանգորդն էր դարձել»: Սրանից յետոյ Պօղոսեանն անդրադառնում է «վաւերագրերի լեզուին, որը... բաւականին տարբեր է Եզրասի արամէերէնից եւ աւելի մօտ է հնագոյն արամէերէնին..., սուրբգրայինից հին է աւելի քան հինգ դարով եւ գործածուել է հիմնականում արամէատառ գրութիւններով, որոնցից են նաեւ Հայաստանում յայտնաբերուած Արտաշիսեան արձանագրութիւնները»: Այստեղ յղելով Անահիտ Փերիխանեանի յօդուածը՝ Պօղոսեանը շարունակում է. «Խիկարի արամէերէն պատառիկների լեզուն համարւում է ինքնատիպ, քանի որ այնտեղ առկայ որոշ բառեր, ինչպէս օրինակ՝ զի, զնա եւ այլն, գործածական չեն միւս վաւերագրերում: Միանգամայն հասկանալի է, որ այստեղ գործ ունենք հայերէն զի շաղկապի, զ նախդրի եւ նա անձնական կամ ցուցական դերանուան հայցական հոլովածէի հետ: Սա պարզորոշ վկայում է զ նախդրի գործածութիւնը, որի ծագման վերաբերեալ Հրաչեայ Աճառեանը գրում է. «Իր շատ ճոխ գործածութիւնից դատելով, պէտք է լինի բնիկ հայ» (էջ 36): Անշուշտ հարցին նախատրամադրուածները հայկական աղբիւրների և հայ գիտնականների հաղորդումներին կասկածանքով կվերաբերուեն, ուստի Պօղոսեանի գրքում շատ են օտար յուշարձանների և հեղինակների տուեալները: Ի թիւս այլոց յիշատակելի է պայմանական Արամ-Առամ-Առամիմ, Արամ Նահարայիմ հատուածը, ուր խօսւում է «ախլամու յորջորջուած ցեղախմբերի մասին

եկեղեցականներն իմացել են Արծրունիների, Խիկարի խրատների և առակների հնագոյն շերտի մասին, ուստի այդ ձեռագիրը շրջանառութեան մէջ դնելուց առաջ Խիկարին հրէացրել են, իսկ Սենեքերիմին համարել են «Սարհադօնի որդի»:

(Ք. ա. ժԱ. դար), որոնք կոչուել են Արամ անունով... Նրանց լեզուն եղել է արամեերէնը (առամիտ), գրականութիւնը խիկարի առակաները, կենտրոնը Գուգանը¹¹» (էջ 130): Ուսումնասիրութեան մէջ մանրամասն և համակողմանիօրէն դիտարկուած է Գուգան անունը, հիմնաւորում, թէ ինչ բնակչութեան, ազգի կամ համայնքի կենտրոնը կարող էր լինել այն, իսկ լիապէս սպառիչ լինելու համար բերում է նաև բացառապէս հրէայ ուսումնականների կազմած քարտէզը, որն ամբողջացնում է խճանկարը՝ բացառելով ցանկացած կասկած գուգանցիների և խիկարեան խրատների նախահայրենիքի մասին:

ԱՐՄԷՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԱՐՄԷՆ ԿԱՍԱՄԱՆԵԱՆ
(Գերմանիայի ֆեդերատիւ հանրապետութիւն)

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Խիկար, իմաստուն, խրատ, քարտէզ, հայկական բնագիր:

РЕЗЮМЕ


Авторы представили исследование Погосян максимально подробно, отметив, что в нём всесторонне сопоставлены научные мнения об учении мудреца Ахикара.

SUMMARY

The authors presented Poghossian's study in as much detail as possible, mentioning that it comprehensively juxtaposes the views of scholars on the teachings of the sage Ahikar.

¹¹ Հմմտ. Գուգանա, Գիլգան, Զարանդա, Զարեանդ. «Հայաստանի և յարակից շրջանների տեղանունների բառարան»:





ԱՐԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ (ծննդյան 85-ամյակի առթիվ)

Վաստակաշատ հայագետ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի եւ հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող, ԳԱԱ «Բանբեր հայագիտության» միջազգային գիտական հանդեսի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արբերտ Արմենակի Խառատյանը 85 տարեկան է:

Ա. Խառատյանը ծնվել է 1939 թ. օգոստոսի 24-ին (անձնագրով՝ սեպտեմբերի 24-ին), Երեւանում, ծառայողի ընտանիքում: Երեկոյան (բաներիտ) դպրոցն ավարտելուց հետո, 1959 թ. ընդունվել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ: Այն ավարտել է 1964 թ., մասնագիտանալով արեւմտահայ գրականության պատմության մեջ, որը նախախնամությամբ նախանշեցին նրա գիտահետազոտական հետագա գործունեությունն արդեն որպես արեւմտահայ մամուլի պատմության առաջատար հետազոտողի: Ա. Խառատյանը 1966 թ. աշխատել է Ապարանի շրջանի Ծաղկահովիտ, այնուհետեւ էջմիածնի շրջանի Լենուղի գյուղերում՝ որպես միջնակարգ դպրոցի գրականության եւ հայոց լեզվի ուսուցիչ:

Գրեթե վեց տասնամյակ Ա. Խառատյանն աշխատում է ԳԱԱ համակարգում, որից 39 տարի՝ Պատմության ինստիտուտում: 1967–1973 թթ. աշխատել է «Հայկական Սովետական Հանրագիտարանի» հատուկ գիտական խմբագրությունում, նախ, իբրեւ սրբագրիչ, ապա խմբագիր, 1973–1985 թթ.՝ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնում որպես ավագ գիտաշխատող, գիտական խմբի ղեկավար: 1985 թ. աշխատանքի է անցել Պատմության ինստիտուտում մամուլի եւ հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնում՝ նախ որպես ավագ գիտաշխատող, ապա 1992-ից ցորս բաժնի վարիչ:

Խառատյանի առաջին հոդվածը հրապարակվել է 1969 թվականին՝ «Գր. Զիլինկիրյանը եւ Զմյուռնիայի «Ծաղիկ» հանդեսը» վերնագրով («Բանբեր Երեւանի համալսարանի» № 3, էջ 212—216):

1972 թ. Ա. Խառատյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Զմյուռնիայի հայ պարբերական մամուլը (XIX դ. 60-ական թթ.)» թեմայով ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1982 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840—1900)» թեմայով եւ ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2009-ից պրոֆեսոր է: Իսկ 2010 թ. հայագիտության բնագավառում ունեցած ծանրակշիռ ներդրման համար ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ա. Խառատյանը 1988—2017 թթ. ստանձնել է նաեւ Գիտությունների ազգային ակադեմիայի ավագագույն, արտերկրում եւս մեծ հեղինակություն ունեցող պարբերականի՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագրի պարտականությունը: Հարկ է ասել, որ նրա նշանակումը զուգահեռաց Արցախյան շարժման զարթոնքի հետ: Այդ տարիներին «Լրաբերը» (ամենամսյա պարբերական էր՝ տպագրվում էր 12 համար, իսկ այսօր՝ ընդամենը 3) զգալի դեր կատարեց Արցախի հարցի վերաբերյալ գիտականորեն հիմնավորված բազում հոդվածներ տպագրելով, եւ դարձավ այդ շարժման առաջամարտիկներից մեկը հայ խորհրդային մամուլում: Կարելի է անվարան ասել, որ Ա. Խառատյան պատմաբանի սկզբունքայնությունը, անկողմնակալությունը, քաղաքացիական եւ գիտական համարձակությունը իրենց դերը խաղացին այդ գործում: Դրանում կարող է յուրաքանչյուրը համոզվել, եթե թերթի այդ տարիներին լույս տեսած պարբերականի՝ ձեռքից ձեռք անցնող համարները: Հավելենք, որ ամսագրի ամեն մի համարի բովանդակությունը «Ազատություն» ռադիոկայանի մեկնաբան, երջանկահիշատակ էդ. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ հասու էր դառնում նաեւ սփյուռքահայությունը: Ա. Խառատյանի ջանքերով «Լրաբերը» լուրջ ներդրում է ունեցել արտերկրի հայ եւ օտարազգի հեղինակներին Հայաստանի գիտական հանրությանը ծանոթացնելու գործում՝ օտար լեզուներով տպագրելով նրանց հոդվածները:

2017 թ. հայագետը «Բանբեր հայագիտության» միջազգային գիտական հանդեսի գլխավոր խմբագիրն է: Նշենք նաեւ, որ Ա. Ա. Խառատյանը «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի հիմնադրման

օրից՝ 2005 թ. մինչև 2024 թ. գլխավորել է դրա հասարակագիտական բաժինը:

Անվանի պատմաբանը հայ պարբերական մամուլի գրաքննության եւ հասարակական մտքի, հայ գաղթավայրերի պատմության ճանաչված մասնագետ է՝ գիտահետազոտական աշխատանքների լայն շրջագծով: Նա իր լուծման ունի հայ պատմագրության մեջ՝ գիտական առաջնակարգ արժեք ունեցող եւ միջազգային ճանաչում ստացած ուսումնասիրություններով: Ա. Խառատյանի աշխատությունները վերաբերում են տեսական կարեւորություն ունեցող այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են՝ արեւմտահայերի լուսավորական շարժումը XIX դարում, նրանց Ազգային սահմանադրությունը, հասարակական-քաղաքական հոսանքները հայ իրականության մեջ, արեւմտահայ մամուլի մտավոր ու մշակութային արժեքը 1840–1922 թթ., Օսմանյան Թուրքիայի խոշորագույն հայ գաղթավայրերի՝ Կոստանդնուպոլսի եւ Զմյուռնիայի համազգային նշանակությունը: Այս ոլորտներին վերաբերող 9 գրքի եւ ավելի քան 200 հոդվածի հեղինակ է:

Ա. Խառատյանը լայն ճանաչում ունի ոչ միայն Հայաստանում, այլեւ արտասահմանի հայագիտական շրջաններում. ԱՄՆ-ում, Իտալիայում, Թուրքիայում, Եգիպտոսում, Լիբանանում, Ուկրաինայում տպագրվել են նրա աշխատություններից, ինչպես եւ գրախոսականներ՝ դրանց վերաբերյալ:

Անուրանալի է Ա. Խառատյանի ներդրումը արեւմտահայ հասարակական մտքի եւ մամուլի ուսումնասիրության բնագավառում: «Արեւմտահայ հասարակական մտքի եւ հրապարակախոսության պատմությունից» (1980) եւ «Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840–1900)» (1995) աշխատություններն ասվածի խոսուն վկայությունն են: Մասնավորապես, երկրորդ գրքում բնութագրվել են Զմյուռնիայի հայ պարբերական մամուլը եւ նրա էջերում դրսևորված հասարակական միտքն ու դրա ներկայացուցիչները, տրվել է XIX դ. երկրորդ կեսի արեւմտահայ իրականության մի շարք հանգուցային խնդիրների վերլուծությունը: Ներկայացվել է Կ. Պոլսից հետո արեւմտահայ երկրորդ խոշոր գաղթավայրի՝ Զմյուռնիայի մամուլի ու հասարակական կյանքի շուրջ 60-ամյա պատմությունը, արժեւորվել նրա գաղափարական ու մշակութային նշանակությունը ազգային զարթոնքի, լուսավորության, դեմոկրատական եւ պահպանողական մտքի ծավալման գործում: Հայ հասարակական մտքի զարգացման իրողությունների հիման վրա

բացահայտվել են արեւմտահայ մի խումբ մտավորականների՝ Ղ. Պալղա-
զարյանի, Ստ. Ոսկանյանի, Գր. Զիլինկիրյանի, Մ. Մամուրյանի, Ա. Հայ-
կունու, Գ. Կոստանդյանի, Գր. Մսերյանի, Հ. Կ. Սվաճյանի հայացքնե-
րը եւ նրանց հրապարակախոսական ու խմբագրական գործունեության
հատկանշական կողմերը:

Արեւմտահայ մամուլի եւ հասարակական մտքի պատմությունը սեր-
տորեն աղերսվում է օսմանյան գրաքննության գիտական եւ իրավական
բովանդակությանը, մի հիմնահարց, որի առաջին հետազոտողը մեզա-
նում Ա. Խառատյանն է՝ իր բազմաթիվ հրապարակումներով: 1984 թ. նա
հրատարակել է «Օսմանյան գրաքննությունը եւ արեւմտահայ մամուլը
1858—1896» (վավերագրական նյութեր եւ ծանոթագրություններ) ժողո-
վածուն, 1989 թ.՝ «Արեւմտահայ պարբերական մամուլը եւ գրաքննությու-
նը Օսմանյան Թուրքիայում (1857—1908)» աշխատությունը: Առաջինում
փաստական նյութի հիման վրա ցույց է տրված արեւմտահայ մամուլի
հասարակական որոշակի միտումները եւ դրանց նկատմամբ օսմանյան
իշխանությունների կամայական, ոչ մի օրենքով (այդ թվում՝ թուրքա-
կան տպագրական օրենքով) չկարգավորված վերաբերմունքը: Երկրորդ
գրքում հետազոտվել են արեւմտահայ պարբերական մամուլի հասա-
րակական-քաղաքական բովանդակությունը, նրա դերն ու առանձնա-
հատկությունները հայ մտավոր մշակույթի պատմության մեջ: Մամուլի
պաշտոնական կարգավիճակն ու իրական կացությունը ներկայացվել են
հայ, ինչպես եւ Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդների (թուրքե-
րի, հույների), Կ. Պոլսում եւրոպական լեզուներով հրատարակված մա-
մուլի օրինակով: Հանգամանորեն լուսաբանվել են արեւմտահայ մամու-
լի իրավական դրության հետ առնչվող հարցեր, այդ թվում եւ օսմանյան
գրաքննության աստիճանական ընթացքը դեպի ոստիկանական վայրագ
վերահսկողություն՝ նախնական գրաքննության հաստատումով:

Ա. Խառատյանի աշխատություններն մի զգալի մասը նվիրված է
արեւմտահայերի իրավական, տնտեսական ու մշակութային դրությանը՝
հատկապես հայ գաղթավայրերի պատմության կտրվածքով (Կոստանդ-
նուպոլիս, Զմյուռնիա), որի ժամանակագրական սահմաններն ընդգր-
կում են XIV—XIX դարերը:

Գիտական երկարատեւ ուսումնասիրությունների արգասիք է Գա-
լուստ Կյուլպենկյան հիմնարկության մատենաշարով 2007 թ. տպագր-
ված Ա. Խառատյանի «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV—XVII

դարեր)» աշխատությունը: Մենագրության մեջ լուսաբանվել են Կ. Պոլսի գաղթավայրի պատմության հանգուցային մի շարք հարցեր, ինչպիսիք են՝ գաղութի կազմավորումն օսմանյան մայրաքաղաքում, Կ. Պոլսի հայ պատրիարքության հոգեւոր-վարչական նկարագիրը, հայ համայնքի տեղը օսմանյան ավանդական հասարակության մեջ: Մասնավորապես, քննարկվել են բնակչության թվաքանակի, եկեղեցիների պատմության, պատրիարքական իրավասությունների, հայ համայնքի ընկերային-տնտեսական կյանքի, հարկային համակարգի եւ այլ հիմնահարցեր: Աշխատության մեջ լուսաբանվել են նաեւ հայ կրոնական-հոգեւոր կենտրոնների՝ էջմիածնի ու Կիլիկիայի կաթողիկոսությունների եւ Երուսաղեմի պատրիարքության հետ Կ. Պոլսի պատրիարքության փոխհարաբերությունների ու այդ հենքի վրա վերջինիս համագգային նշանակությունը բնութագրող խնդիրներ: Ուսումնասիրությունը լայն արձագանք գտավ հայրենական եւ արտերկրի գիտական հասարակայնության շրջաններում: Այսպես, Երեւանի «Ազգը», Ստամբուլի «Փամանակն» ու «Մարմարան», Հունգարիայի «Արմենիան» ծավալուն գրախոսականներով արժեւորել են մենագրությունը, իսկ 2009 թ. այն արժանացավ ՀՀ ԳԱԱ, Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության սահմանած «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակին:

Ա. Խառատյանը հատուկ ուշադրություն է դարձրել Կ. Պոլսի եւ Երուսաղեմի Հայոց պատրիարքությունների սերտ փոխհարաբերություններին եւ մասնավորապես՝ Ս. Տեղյաց մեջ հայերի սեփականատիրական իրավունքների պահպանության գործում Սբց. Հակոբյանց միաբանության բացառիկ կարեւորությանը: Իր վերջին հոգվածներում եւս, հոբելյարը վերստին անդրադարձել է այս հիմնահարցին՝ ընդլայնելով դրա շրջանակները:

2006 թ. Կահիրեում Ա. Խառատյանի հեղինակակցությամբ, առաջաբանով ու խմբագրությամբ (խմբագրակցությամբ պ.գ.դ. Լիդա Գեւորգյանի) լույս տեսավ հայ մամուլի պատմության մեջ իր ընդգրկումներով եւ գիտավերլուծական խորությամբ աննախադեպ «Հայ պարբերական մամուլի պատմություն» երկհատորյակի I հատորը (XVIII–XIX), իսկ 2017 թ. Երեւանում՝ դրա II հատորը (1900–1922 թթ. խմբագրակցությամբ Լ. Գեւորգյանի): Տարիներ շարունակ այս երկհատորյակը փնտրված դասագիրք է եղել հանրապետության լրագրության բաժին ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություններում:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատարակության պատրաստած «Հայոց պատմություն» բազմահատորյակի տարբեր գրքում իրենց տեղն են գտել անվանի պատմաբանի շարադրանքները:

Դիտելի է նաեւ, որ Ա. Խառատյանը կազմել է «Արեւելյան մամուլ» (1871–1909)» (20 մամուլ, Երեւան թ.) եւ «Մեղու» (1856–1865)» հանդեսների մատենագիտությունները (10 մամուլ, Երեւան, 2003 թ.)՝ ծանոթագրություններով ու ցանկերով: Չափազանց աշխատատար, սակայն շնորհակալ աշխատանք է արեւմտահայ մամուլի պատմությամբ զբաղվող հետազոտողների համար:

Նշենք նաեւ, որ «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռահատորի II հատորում (2003) տպագրվել են Ա. Խառատյանի «Կոստանդնուպոլիս (15–17-րդ դարեր) եւ «Զմյուռնիա» ստվար հատվածները:

Ա. Խառատյանի վերջին ծավալուն մենագրությունն է «Զմյուռնիայի եւ էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI–XIX դ. I կես)» (Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, 534 էջ): Բազմաթիվ անտիպ եւ տպագիր աղբյուրներ՝ հիշատակարաններ, վավերագրեր, ձեռագիր մատյաններ, մամուլի եւ հայկական ու օտար բազմաբնույթ աշխատությունների հիման վրա շարադրված այս մենագրությունն առաջին անգամ լայն ընդգրկմամբ ներկայացնում է Զմյուռնիայի եւ էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթավայրերի պատմությունը XVI դ. մինչեւ XIX դարի առաջին կեսը: Հետաքրքրական է, որ ինչպես հատուկ է հայագետ Ա. Խառատյանին, այս աշխատությունը շարադրելիս ներկայացրել է նախորդ ուսումնասիրողների արտահայտած կարծիքներն ու մոտեցումները, նա իր քննական մոտեցում է արտահայտել դրանց հանդեպ՝ երբեմն վերապահորեն, հերքելով կամ հաստատելով ծանրակշիռ հիմնավորումներով: Նկատենք, որ հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված մեծարժեք այս մենագրությամբ մասնագիտական գրականությունը համալրվեց նոր ուսումնասիրությամբ:

Անվանի պատմաբանն ավելի քան 200 գիտական հոդվածների, հրապարակումների, գրախոսականների հեղինակ է, ունի նաեւ շուրջ 100 հանրագիտարանային հոդվածներ:

Ա. Խառատյանն գործուն մասնակցություն է ունեցել նաեւ միջնակարգ դպրոցի VIII դասարանի «Հայոց պատմություն» դասագրքի ստեղծման ընթացքին:

Վերոգրյալին հավելենք, որ անվանի հայագետը գիտական, հասարակական-քաղաքական տասնյակ մենագրությունների ու ժողովածուների սկզբունքային ու պահանջված խմբագիր է:

Մեր հոբելյարը մանկավարժական-դասախոսական աշխատանքի ավելի քան 50-ամյա կենսագրություն ունի. դասախոսել է հանրապետության բուհերում: 1986—1999 թթ. դասավանդել է Երեւանի պետական համալսարանի լրագրության ֆակուլտետում, 2002—2021 թթ.՝ նաեւ Արեւելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժնում: Երկար տարիներ դասախոսել է Երեւանի «Գալիք» համալսարանում, կատարել վարչական աշխատանք (լրագրության ամբիոնի վարիչ, պրոռեկտոր): Վերջին տարիներին ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի լրագրության ամբիոնի վարիչն էր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում էլ կարգում է «Հայ գաղթօջախներ» ու «Հայ մամուլի եւ հասարակական մտքի պատմության» դասընթացները:

Ա. Խառատյանը տարիներ շարունակ եղել է գիտական մի շարք խորհուրդների անդամ (ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի, Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների, ԳԱԱ ցեղասպանության թանգարան-ինստիտուտի խորհրդի, ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի գիտխորհրդի): Եղել է նաեւ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի գիտխորհրդի լրագրության մասնախմբի նախագահ:

Նկատենք, որ մեր երկրի բարձրագույն ուսումնական մի շարք հաստատություններից (ԳԱԱ պատմության ինստիտուտից, Երեւանի պետական համալսարանից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան մանկավարժական համալսարանից), նաեւ՝ արտերկրից բազմաթիվ ասպիրանտներ ու հայցորդներ ցօրս նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանում:

Ա. Խառատյանը մասնակցել է հայագիտական միջազգային մի շարք գիտաժողովների՝ Երեւանում, Թուրին-Ջենովա-Լիվոռնո-Պիզայում, Լոս Անջելեսում եւ այլն:

Ա. Խառատյանն իր քաղաքացիական, մարդկային ու բարոյական անուրանալի արժանիքներով՝ բարոթյամբ, կամեցողությամբ, ձեռք մեկնելու պատրաստակամությամբ, սրտացավ վերաբերմունքով,

անմիջականությունը մեծ հեղինակություն է վայելում գիտական-մտավորական եւ ընկերական միջավայրում:

Անվանի հայագետն իր հոբելյանը դիմավորում է երիտասարդական ավյունով, սթափ եւ առույգ մտքով: Մեր ավագ գործընկերոջը՝ գիտության անխոնջ մշակ Ա. Խառատյանին, ցանկանանք արեւշատություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր,

ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական» հանդեսի գլխավոր խմբագիր,


ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու,

ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական» հանդեսի պատասխանատու քարտուղար,

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող



СОДЕРЖАНИЕ

От редакции 5

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО
ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН**, по случаю Освящения
Святого Мира 7

Послание **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО
ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН**, по случаю переосвящения
Кафедрального собора Святого Эчмиадзина 12

ПРОПОВЕДИ

Проповедь **АРХИЕПИСКОПА АРШАКА ХАЧАТРЯНА**, произнесенная
во время Св. Литургии в монастыре Св. Гаяне в честь праздника Воздвижения
Честного и Животворящего Креста 16

РЕЛИГИОВЕДЕНИЕ

КАТОЛИКОС СИМЕОН ЕРЕВАНЦИ — Возвращенный долг 20

ПАТРИАРХ АКОП НАЛЯН — О простых верованиях всех христиан 38

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

ЛЕЙЛА СТЕПАНЯН — Этимология имени Давит и его связь с прото-айкским
календарем. 50

АВЕТИС АРУТЮНЯН — Ситуация в Ванской провинции в начале апреля
1915 года: резня армянского населения Аканца (Арчеш), Артске (Алджаваз)
и Беркри 66

ЭДГАР ОГАНЕСЯН — Национально-церковное собрание 1932 г. в контексте отношений Католикосата Всех Армян и Католикосата Великого Дома Киликийского.	85
АВАГ А. АРУТЮНЯН — Документы по истории журнала «Эчмиадзин» (1944–1961)	103

СООБЩЕНИЯ


АРЕВИК МЕЛИКЯН — Деятельность Католикоса всех армян Геворга V Суренянца на благо армянского народа	117
---	-----

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

АРМЕН ОВАКИМЯН, АРМЕН КАСАМАНЯН — Мудрец Хикар и его наставления в новом свете	135
---	-----

ЮБИЛЕЙНОЕ

АНУШАВАН ЗАКАРЯН, СТЕПА ПЕТОЯН — Алберт Харатян (по случаю 85-летнего юбилея)	144
--	-----



CONTENTS

<i>Editorial</i>	5
----------------------------	---

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the blessing of the Holy Myron	7
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the re-consecration of the Cathedral of Holy Etchmiadzin	12

SERMONS

Sermon delivered by ARCHBISHOP ARSHAK KHACHATRYAN during the Divine Liturgy celebrated at the Feast of the Exaltation of the Holy Cross at St. Gayane Monastery	16
--	----

RELIGIOUS STUDIES

CATHOLICOS SIMEON OF YEREVAN — Debt repayment	20
PATRIARCH HAGOP NALIAN — On the simple beliefs of all Christians	38

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

LEYLA STEPANYAN — Etymology of the name Davit' and its connection to the Proto-Haykian calendar	50
AVETIS HARUTYUNYAN — Situation in Van province at the beginning of April 1915: massacre of the Armenian population of Akants (Arches), Artske (Aljavaz), and Berkri	66

EDGAR HOVHANNISYAN — The National Ecclesiastical Assembly of 1932 in the context of relations between the Catholicosate of All Armenians and the Catholicosate of the Great House of Cilicia.	85
AVAG A. HARUTYUNYAN — Documents on the history of “Etchmiadzin” journal (1944–1961)	103

ESSAYS


AREVIK MELIKYAN — Pro-national activities of Gevorg V Surenyants, Catholicos of All Armenians	117
---	-----

LITERARY REVIEW

ARMEN HOVAKIMYAN, ARMEN KASAMANYAN — Sage Ahikar and his exhortations from a new perspective	135
--	-----

JUBILEE

ANUSHAVAN ZAKARYAN, STYOPA PETOYAN — Albert Kharatyan (on the occasion of the 85 th anniversary of his birth)	144
--	-----



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իբրև խմբագրական 5

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

պատգամը Միւռնոսիոյի թեման արարողութեան առիթով 7

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

պատգամը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի վերածման առիթով. 12

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ԱՐԾԱԿ ԱՐՔ. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Խաչվերացի տօնին

Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին. 16

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ — Պարտավճար 20

ՅԱԿՈԲ ՊԱՏՐԻԱՐԺ ՆԱԼԵԱՆ — Համայն քրիստոնեաների պարզ

հաւատալիքների մասին 38

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԷՅԼԱ ՍՏԵՓԱՆԵԱՆ — Դաւիթ անուան ստուգաբանութիւնը եւ նրա կապը

Հայոց նախահայկեան օրացոյցի հետ 50

ԱԲԵՏԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ — Իրադրութիւնը Վանի նահանգում 1915 թ.

ապրիլի սկզբին. Ականցի (Արճէշ), Արծկէի (Ալջավազ) եւ Բերկրիի
կոտորածները 66

ԷԴԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ — 1932 թ. Ազգային-եկեղեցական ժողովը Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնների յարաբերութիւնների համապատկերում. 85

ԱԲԱԳ Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ — Վաւերագրեր «Էջմիածին» ամսագրի պատմութեան (1944—1961) 103

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ


ԱՐԵՒԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ — Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենեանցի ազգանպաստ գործունէութիւնը 117

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՄԷՆ ՅՈՎԱԿԻՍԵԱՆ, ԱՐՄԷՆ ԿԱՍԱՄԱՆԵԱՆ — Խիկար իմաստունն ու իր խրատները նոր հայեացքով 135

ՅՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ

ԱՆՈՒԾԱԲԱՆ ԶԱՔԱՐԵԱՆ, ՍՏԵՈՊԱ ՊԵՏՈՅԵԱՆ — Ալբերտ Խառատեան (ծննդյան 85-ամյակի առթիւ) 144



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ալգերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՖՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՃ** - Գեղորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեսյան), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյան, Կ. Կոտանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Մարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Սո. Մալխասյան), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Սո. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բաբսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՑՀԶ** - Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէժ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, ИАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племен Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- CAH** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատույթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
«ԷԶՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374 10) 517 276

Ստորագրուած է տպագրութեան՝ 5.03.2025 թ.



ՄԱՍԻՍ ԵՔԵՄԻԱԾԻՆ
ԷԶՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ